



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 9 1896

Ս Ե Պ Տ Ե Մ Բ Ե Ր

1896 № 9

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

երես

1 ԱԴԵԼԵԱՆ, Ա.	1095	Տգիտութեան զոհեր (վէպ, չարուն.)
2 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ . . .	1113	Եւ հանգչում էի... (բանաստ.)
3 ԲԱՔԿԵՆՅ, Գ.	1114	Նորիկ (վէպ, չարունակ.)
4 ԼՈՆԴՅԵԼԼՈ ԻՅ—ԾԱՏՈՒՐԵԱՆ. . .	1133	Խրախոյս (բանաստ.)
5 Ա. Ա.	1135	Բաքաւ չրջանի հաւթալին գործը
6 ԴԵՄԻՐՃԵԱՆ, ԴԵՐԵՆԻԿ. . .	1146	Վարդի սէր (բանաստ.)
7 ՖԻԲԵՐԴԻԿ ՎԱՆՅԵԱՆ.	1147	Գիւղական համարարաններ
8 ԱԹԱՅԵԱՆ, ԱՐՇԱԿ.	1155	Տանջեցէք մտքեր!... (բանաստ.)
9 ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆՅ, ՅՈՎՀ.	1157	Ժողովրդի ընթերցանութիւնը
10 ԱՂԲԱԼԵԱՆ, Ն.	1172	«Երակ» Նիւլանդադէի
11 ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆՅ, ՅՈՎՀ.	1174	«Տաքութիւն և օդ»
12 " "	1176	«Աղքատի բաղդը»
13 " "	1178	«Փոքրիկ Հեղինէի երազը»
14 Ա. Ա.	1180	Ժաման. Տես.—Հալկական խնդիր
15 ՊԵՏՐՈՍԵԱՆ, ՄԱԴԱԹ.	1196	Գաւառական համակներ
16 ՍԵԻԵԱՆ, Հ.	1205	Թատրոնի շուրջը, VIII
17 ՓԱՓԱԶԵԱՆ, Վ.	1209	Արտասահմանեան քրոնիկ
18 ԽՄԲ.	1221	Զանազան լուրեր

Տեղեկատու և Յայտարարութիւններ

Թ Ի Ֆ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՍԻ

Типография М. Д. Ротинянова, Гол. пр., д. № 41.

1896



Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 9 1896

Ս Ե Պ Տ Ե Մ Բ Ե Ր

1896 № 9

ՈՐԹԵՐԱՐԴ ՏԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Ս. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

Типографія М. Д. Ротиніанца, Гол пр. д. № 1.

1896

Дозволено цензурою. Тифлисъ, 24-го Сентября 1896 г.

ՏԳԻՏՈՒԹԵԱՆ ԶՈՅԵՐ

Վէպ գիւղական կեանքից

Ա. ԱԴԵԼԵԱՆԻ

(Շարունակութիւն) ¹⁾

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Տգիտութիւնն է, որի պատճառով մարդը իր համար կորստաբեր հանգամանքներ է ստեղծում և դառնում դոցա գերին: Վերջը թակարդի մէջ ընկած թռչունի պէս թըր-պըրտալով՝ նա լինում է ալդ հանգամանք-ների զոհը:

Ա. Դլուխ

Համբարձումը շատ էր փոխուել այն օրից, երբ յանկարծակի գրկեց իւր կարողութեան մեծագոյն մասից: Այժմ նա ընդհանրապէս լուռ էր, մոտխոհ և խեղճացած: Փողոց դուրս գալուց չլուխը միշտ քարշ կը պահէր և շարունակ կը մտածէր իւր զրութեան մասին: Գիւղացիների հետ կը խօսէր քաղաքավարի կերպով և համեստ եղանակով: Տարիների ընթացքում ժողոված հարստութեան յանկարծակի կորուստը նրան ուշքը կորցրածի նման էր զարձրել: Աշխատանքի էր Համբարձումը, թէ պարապ, քնած էր, թէ ար-

¹⁾ Տես «Սուրճ» 1896 թ. № 5, 6, 7—8:

Թուն, խօսում էր, թէ լուռ, ուտում էր, թէ խմում, բայց նրա մտքից երբէք չէր հեռանում այն անիծւած դէպքը, որը Համբարձումին հարստութեան գազաթնակէտից գլորեց մինչև աղքատութեան շէմքը: Մի կողմից հոգեկան այդ անհանգիստ դրութիւնը, միւս կողմից նամուսը բաւականին ճնշել, գցել էր նրան, և այժմ ամեն մի դեպքի համարձակում էր նրա երեսին կանգնել, աղատահարձակ խօսել և մինչև անգամ վրան բղաւել: Սկզբներում Համբարձումը չէր հաւատում իւր աչքերին, տեսնելով այդ ամենը, և դժարութեամբ էր հաշուում իւր նոր դրութեան հետ: Յետոյ կամաց-կամաց նա հոգեպէս հանդարտեց, տեսաւ, որ էլ իզուր են այդքան մտատանջութիւնները, որ անօգուտ է անցածի մասին այդքան մտածելն ու ախ ու վախ անելը և որ, ընդհակառակը, անհրաժեշտ է այժմ սառնութեամբ ու լրջօրէն մտածել, կրկին հուանդով աշխատանքի կոչել ու նորից բարձրանալ:

«Ել բաւական է, որքան խեղճ մնացի, մտածում էր Համբարձումը, էլ բաւական է, որքան գլուխս քարշ պահեցի: Քարատակ գիւղումը թափւելս և ձախորդութեան պատահելը ինձ պատւից, ճշմարիտ է, շատ է գցել, բայց դէ հիմա պիտի ամեն բան էլ մոռանալ: Ինչ պատահել է, պատահել է: Առջադ տղի բան է նորից հարստութիւն ձեռք բերելը»:

Այսպէս ինքն իրան մխիթարելով ու սփոփելով՝ Համբարձումը մի անգամ խօսք բացեց Գալուստի մօտ:

— Եղբայր, ասաց նա, մինչև հիմա որ մեր ողորմած հոգի հայրը կենդանի էր, ես նրա հետ էի խորհուրդ անում ամեն մի դործի համար: Նթէ նա փնում լինէր, ի հարկէ, մեզ շատ օգուտներ տւած կը լինէր իւր խորհուրդներովը: Ես էլ մեր անբախտութիւնիցն է, որ նա մեր էս վատ ժամանակին մեռաւ: Հիմա մենք միասին, ձեռք ձեռքի տւած պիտի աշխատենք, որ կարողանանք կորցրածներս նորից ձեռք բերել:

Դու իմ խորհրդակիցը պիտի լինես: Պիտի սիրով լինենք, դատարկ բաների համար կռիւ չսարքենք, որ կարողանանք աշխատանք անել: Ի հարկէ, ես, իբրև քո մեծ եղբայրը, քեզ վրա իրաւունքներ ունիմ, և դու, ի հարկէ, միշտ ինձ հնազանդ պիտի լինես: Նս հիմա մոռանում եմ էն բանը, որ դու օտարութիւնից

էս տան համար ոչինչ չես բերել: Միշտ ինձ լսիր և քո գլխի ոչ մի ժամանակ ոչ մի բան մի բռնիր: Դու գեռ ջահիլ ես և կարող ես ֆլաաներ անել: Երբ որ մի եղբայր միւսին հնազանդ եղաւ, էն ժամանակ նրանց մէջ սէր էլ կը լինի: Երբ որ սէրը եղաւ, էն ժամանակ նրանք կարող են կարգին աշխատանքի կաշել ու տունը շատ բան բերել: Մի բան էլ կայ, որ մինչև հիմա քեզ չեմ տեսել. դու արդէն հասած տղայ ես և նշանեւորդ ժամանակն է, բացց մինչև օրս դրա մասին հալա խօսք չեմ բացել: Ես գիտեմ, որ մտքովդ անցնում կը լինի կնիկ տանելը, կ'ուզես նշանած ունենալ. քէյֆ անել. ես էդ գիտեմ, էն հասակդ է, էն ժամանակդ է: Մի նեղանար, որ մինչև օրս չեմ կամեցել քեզ նշանել: Զեղանաս էլ, որ հալա հիմա էլ չեմ ուզում: Մի քիչ էլ համբերիր, մինչև որ մի կողմից իմ ուզած հարսնացուն դուրս կը գայ, միւս կողմից էլ մէջքներս փոքր ինչ կը դրսուտի: Պէտք է էնպէս աղջիկ գտնեմ քեզ համար, որ վրան մի բան լինի: Հարուստ տնից լինելը կամ գեղեցիկութիւնը մեզ ինչ օգուտ: Թող աղքատի աղջիկ լինի, մի քիչ էլ տգեղ, միայն թէ վրան հող, տուն-տեղ լինի: Դու գիտես, որ մեր հայրը տան վրա է եկել, ես — նոյնպէս, և հէնց դրա պատճառով ենք մենք մարդկանց շարք ընկել: Հիմա էլ վատ օրներումս որ դու էլ տան վրա գնաս, էն ժամանակ մենք շուտով կարող ենք նորից գլուխներս բարձրացնել:

Գալուստը, որին այնքան էլ ցանկալի չէր ամուսնանալու համար դեռ էլի սպասել, պատասխանեց.

— Ի հարկէ, եղբայր, էդպէս է, որ ասում ես, շնորհակալ եմ, որ էդ խրատները հիմիկւանից ինձ տալիս ես: Դէ ես միշտ օտարութիւնումս եմ եղել. պիտի իմանամ, թէ ես էստեղ ինչպէս պիտի վարւեմ: Ի հարկէ, մեր սրբազան պարտականութիւնն է սիրով լինելը: Եղբայր եղբօր հետ որ սիրով չեղաւ, էլ ինչ եղբայր. մեծը փոքրին որ հնազանդ չեղաւ, էլ ինչ սէր:

— Դէ ապրես, իմ խօսքն էլ հէնց դրա մասին է:

Գալուստը ամաչեց եղբօր առաջ ամուսնանալու հարցի մասին իւր կարծիքը յայտնել, չնայած որ նա այլ ևս սպասելու ցանկութիւն չունէր: Իրանց հարեւանի աղջիկը արդէն գրաւել էր նրա ուշադրութիւնը և Գալուստը երազում էր իրան այն հրապուրիչ

օրերն ու ժամերը, երբ նա նշանւած կը լինի ու կը սկսի իւր սիրած աղջկայ հետ ազատ համարձակ խօսել: Լինելով նշանւած, Գալուստը կը յաճախի աներանց տունը, կ'առանձնանայ իւր նշանածի հետ մի սենեակում, միասին կը զրուցեն, հանաքներ կ'անեն և կը զւարճանան: Երեկոները նա տուն չի վերադառնալ, այլ կը մնայ աներանց տանը գիշերելու և կը քնի իւր նշանածի ծոցում: Ո'րսիսի երջանիկ ժամեր մի նորափթիթ և մայիսւան վարդի նման թարմ ու անոյշ աղջկայ ծոցում ննջելը: Ո'րսիսի հաճոյքներ ծաղկահասակ օրիորդի փափկամորթ ու թաւշապատ իրանը զրկել և նրա նռնանման ծծերին սեղմել:

Ահա այսպիսի հեշտալի պատկերներ էին արդէն նկարւում Գալուստի երեակոյցութեան մէջ: Ամեն անգամ, երբ նա կ'ը պառկէր քնելու, երկար ժամանակ անքուն կը մնար: Սիրած աղջկայ պատկերը նրան հանգստութիւն չէր տալիս:

Լսելով եղբօր խօսքերը, Գալուստը մի խուլ տրտունջ անցկացրեց իւր հոգով, բայց յետոյ տեսաւ, որ կամայ ակամայ դեռ պիտի սպասէր, որ ուզես-չուզես պիտի հաշուէր այդ զրույթեան հետ:

— Հիմա, Գալուստ, խօսաց կրկին Համբարձումը, մենք էսպէս կը կաշենք աշխատանքի. դու կը կառավարես հողերն ու տունը, գիւղերից կը հաւաքես մեր մնացած նիւսիաները, իսկ ես կը գնամ Բաքու: Ել չեմ ուղում քեզ քաղաք ուղարկել, որովհետեւ տեսաւ, որ դու քաղաքում բան չես կարողանում շինել: Բաքու գնալով ես մի ծառայութեան կը մտնեմ և փող յետ կը գցեմ: Համ էլ կ'աշխատեմ քո էն շան որդի ընկերից գողացած փողերը առնել: Ձապաստիցսիկ կրայ, էլ կը գնամ, միայն թէ կարողանամ էդ փողերը ձեռքս գցել: Երեւի վկաներ կը գտնուեն, որ էն տղան ձեր խանութի ապրանքը տարել մի ուրիշ վաճառականի վրա ծախել է: Դէ դա հէնց հերիք է էլի: Դու ինձ էդ գործի համար հաւատարմութուղի տուր, ես կ'իմանամ, թէ ինչպէս գործ կը սկսեմ:

— Շատ լաւ կը լինի, այսիւր, շատ լաւ, եթէ կարողանաս էն փողը առնել: Սարգսի տարածի կէսը 350 մանէթ է անում. դա քիչ փող է:

— Տեսնենք էլի, տեսնենք թէ Ասուած ինչպէս է յաջողում:

Համբարձումը վճռեց Բաքու գնալ, և երբ նա այդ միտքը յայտնեց կնոջը, Վառվառը նախատինքով պատասխանեց.

—Այ մարդ, դու յիմար ես, թէ ջանիցդ ձեռք ես քաշել: Թաւրիզ գնացիր, մի կարգին չբժշկեցիր եկար, որ հիմա ասեմ: հն, առողջ ես, գնն, ուր որ ուզում ես: Բայց ախր քո երեսին նայել չի լինում, էլի էն մաշւած, էլի էն դեղնած ու չորացած մարդն ես: Մի ոսկորդ է մնացել, մին էլ կաշիդ. դու ո՛ր ես գնում էր առողջութիւնովդ:

—Վնաս չունի, Վառվառ, կը գնամ Բաքու համ աշխատանք կ'անեմ, համ էլ կամաց-կամաց կը բժշկեմ էնտեղ: Ենտեղ էլ ախր լաւ բժիշկներ կը լինեն: Դէ ինչ արած, այ կնիկ, խօս չեմ կարող աւանց աշխատանքի տանը նստել, սիրտս կը ճաքի: Նստանն եմ, բայց ախր ձեռքս ընկածը մի բան չի: Նղբօրս կրկին ուղարկեմ, իզուր է, դու էլ գիտես փառք Աստուծոյ, էլի պիտի ես գնամ, որ կարողանամ մի բան աշխատել:

—Դու գիտես, պատասխանեց Վառվառը բարկացած ու կըտրակի, բայց ես միայն քեզ ասում եմ, որ էդ ջանովդ դու չես կարող քաղաքում ապրել կամ ծառայել, խեղճ ես:

—Զեմ կարող: Յոյս ունեմ. յոյսը մարդուն կը պահի, միամիտ կաց:

Վառվառը, որի վրա տան կրած կորուստը նոյնպէս ճնշող ազդեցութիւն էր արել, այլ ևս չպատասխանեց ամուսնուն. նա գիտէր, որ մարդուն չէր կարողանալու յետ կանգնեցնել այդ մտադրութիւնից, ուստի աւելորդ համարեց երկարել:

Շնորհիւ այն հանգամանքի, որ Համբարձումը Թաւրիզից վերադարձել էր դարձեալ վատառողջ դրութեան մէջ ու զոհ էր դառել իր աղահուլթեանը, Վառվառը մասամբ սառել էր ամուսնուց: Չնայած որ այդ կիւնը յաճախ շատ սիրով էր վերաբերւում դէպի նրան և խնամք էր տանում նրա վրա, բայց և այնպէս յուսահատութեան սերմը, որին կամաց-կամաց միանում էր և անտարբերութիւնը, արդէն պարարտ հող էր դուրս նրա հոգու մէջ:

Մեծ պասի սկզբներին, գարնան մի գեղեցիկ օր, երբ դիւղի բոլոր այգեստանները ներկւել էին ծառերի նորաբաց և երփներանգ ծաղիկներով, Համբարձումը հրաժեշտ տւեց բնութեան այդ գեղե-

ցիկ և հրապուրիչ հարստութեանը ու ճանապարհ ընկաւ զէպի
Բաբուն:

Բ. Գլ.

Գալուստը քնաց մենակ իւր եղբորկնոջ և նրա երեխաների
հետ: Նա առաջժամ կառավարում էր հողերը միայն, իսկ նիսիաներ
ժողովելը դեռ յետաձգում էր: Նրա սրտին չէր տալիս գիւղերը
գնալ, գլուխ գնել գիւղացիների հետ և կուպէկ-կուպէկ նիսիա հա-
ւաքել: Յրտած լինելով առևտրական զբաղմունքից, որի մէջ նա
միայն անյաջողութիւնների էր հանդիպել, Գալուստը մի տեսակ
զգանք էր տածում զէպի նիսիա ժողովելու և գիւղերում առև-
տուր անելու գործը, որը նրա համար շատ տաղտկալի ու ձանձրալի
էր. բացի այդ Գալուստը իսկի ցանկութիւն էլ չունէր թողնել
կամ գէթ ժամանակով հեռանալ գիւղից, որովհետև նրա ուշքն ու
միտքը գլխաւորապէս զբաղւած էր իւր նշանւելու խնդրով: Հարեան
Միրոշի աղջիկ Սաթենիկը մադնիսի նման զէպ իրան էր քաշում
Գալուստին: Չնայած որ սա եղբոր ներկայութեամբ ոչ մի խօսք
այդ հարցի վերաբերեալ չկարողացաւ բերանից հանել, բայց այժմ,
երբ եղբայրը չկար ու տան մեծն ինքն էր, այժմ Գալուստը իրան
ազատ էր զգում: Պարզ և տաք աղբիւրի նման ժայռի ծոցից քըլ-
քըլացող սէրը հմայել էր նրան մի տեսակ քաղցր ու հաճելի զգաց-
մունքով: Գալուստը միայն տանջւում էր այդ զգացմունքների ազ-
դեցութեան տակ: Որպէս զի փոքր ինչ, գոնէ, թեթեւցրած լինի
իր հոգեկան ծանր դրութիւնը և լիութիւն աւած լինի սիրոյ պա-
հանջներին, նա առաջժամ բաւականանում էր միայն նրանով, որ իւր
եղբոր կնոջ ներկայութեամբ յաճախ խօսակցութիւն էր սկսում
ընդհանրապէս նշանադրութեան և աղջկերանց մասին:

— Հարս, սկսում է Գալուստը մեծ մասամբ երեկոները, լսել
եմ Սարգսենց Մինասը նշանւում է, ուղիղ է:

— Այո:

— Ո՞ւմ աղջկաց վրա:

— Բարդուղենց Սիմօնի:

— Ա՛յ չիմար, մէկը լինի քեզ ասի, թէ ո՞ւր ես նշանւում:
Բանդ, գործդ կտրւել է, թողնում ես ազատ կեանքը և կնիկ տա-
նում:

—Գալուստ եղբայր, հիմա զու չես ուզիլ նշանել էլի, ասում էր Վառվառը ժպտաղին և հայեացքը ուղղակի Գալուստի երեսին յառելով:

—Ձէ, յիմար չեմ, որ նշանեմ:

—Դու ասանցիր, ես էլ հաւատացի:

—Ճշմարիտն եմ ասում, ծիծաղելով ասում էր Գալուստը:

—Այ լմա է, լմա է, էդ ես հասկանում եմ, մեղք էլ ես զործում, երդում ուտում: Կարծում ես, ես չեմ իմանում, թէ ուշքդ ու միտքդ հիմա որտեղ է:

—Եթէ դուք նշանէք էլ, ես չեմ նշանելի:

—Ի՞նչու, պատճառը, կէս հեղնական եղանակով հարցնում էր Վառվառը:

—Ել ի՞նչ նշանեմ, սրանից յեւտոյ. բոլորովին պառաւել եմ, ծիծաղելով ասում էր Գալուստը:

—Գիտեմ, գիտեմ. էն տղան, որը նշանելու միտք ունի, միշտ էդպէս չեմ-չեմ կ'անի:

—Կը տեսնես, հարս, ես ասում եմ, որ չեմ նշանելու:

Կրկին խորհրդաւոր կերպով ժպտում էր Գալուստը և քիչ լռութիւնից յետոյ նորից սկսում իւր սրտին մօտիկ խօսակցութիւնը:

—Ասացիր Բարթուղենց Սիմօնի աղջկանն է նշանում Մինասը:

—Այո:

—Անխելք, էլ աղջիկ չկար: Նրա բոյը, զեղեցկութիւնը, շնորհքը որն է:

—Ի՞նչ արած, երեւի էն մարդու սիրտն էլ էդ աղջկան է կըպչել. վրան էլ ախր մի կտոր հող են դրել:

—Էդ ասա էէ... Հողը ինչիս է պէտք, եթէ կնիկս նախշուն չի լինելու: Որ երեկոները արտից տուն գալով կնկանս երեսին նստեմ քէջքս չգալ, էլ ինչ կնիկ:

—Եղբորդ էլ էդ խօսքերը ասա, տես թէ նա իսկի ընդհանում է:

—Ի՞նչ անենք չի ընդունիլ:

—Կը տեսնենք, թէ դու ինչ աղջիկ ես նշանելու: Ուրիշին մասխարա ես անում, քոնն էլ Մինասի նշանածից տգեղ կը լինի:

—Չի լինիլ, չի լինիլ, իմ նշանած աղջիկը գեղեցիկ
կը լինի:

—Լաւ, Գալուստ եղբայր, ասա տեսնեմ, ում կը տանէիր:

—Դու մի քանիսների անունները տուր, ես դրանց միջից
մէկին կը ջոկեմ:

—Լաւ: Ըմմ... Մխիթարի աղջիկը՝ Մարիամը, Ներսէսի աղ-
ջիկը...

—Ո՞ր աղջիկը:

—Սառան. յետոյ... Մկրտչի աղջիկը՝ Սաթենիկը, մէկ էլ Խա-
չիի աղջիկը Սոնան: Էս չորս աղջկերանցից որը որ ասես, իմ հա-
ւանած հարսը կը լինի. դրանցից որին կը նշանէիր:

—Եթէ ես նշանուելու լինեմ, Սաթենիկին կը տանէի: Ի՛նչ որ
իմ ասած աղջիկը. բօցը բարձր, լիքը-լիքը, աչք ունքը գեղե-
ցիկ, շնորհքով:

—Է, դու ձրտեղից գիտես, թէ նա շնորհքով է: Նա ի՛նչ բա-
նում շնորհք ցոյց աւեց, հարցրեց Վառվառը ծաղրալի եղանակով
և կամենալով դիտմամբ բարկացնել Գալուստին:

—Ես գիտեմ, թէ ինչ շնորհք ունի էն աղջիկը, համ տեսել
եմ, համ լսել:

—Ի՞նչ ես տեսել, երբ:

—Չեմ ասիլ, հարկաւոր չի, կնիկ ես՝ կը տարածես ամբողջ
գիւղում:

—Ոչ ոքի չեմ ասիլ. խաչը վկայ, որ բերանիցս չեմ հանիլ:

—Մի օր Սաթենիկի հացը ինձ չաջի հրաւիրեց, գնացի: Են
տունը էնպէս մաքուր, սարքին-կարգին պահում է որ: Խնքն էր չաջ
ածում, չաջ բերում Խնչպէս ժիր շարժում էր: Ճանապարհին էլ
ինձ միշտ զլուխ է տալիս, որ պատահում է. էնքան քաղաքավարի
է: Մի անգամ արտից գալիս էի տուն: Աղբիւրի մօտով էի անց-
նում: Մարաւ էի: Մի քանի աղջկերք եկել էին ջրի: Սաթենիկն էլ
էր: Խնդրեցի, որ ջուր տան խմելու: Սաթենիկը իսկոյն, մի կուլա
ունէր ջրով լիքը, բերաւ տեց ինձ: Պա սա նշանուել աղջիկ չի:

—Երևի խմացել է, որ աչքդ իրան կպել է, հըպէս զօւաղու-
թիւն է արել, ծիծաղելով ասաց Վառվառը:

—Չէ, նա անմեղ է, նա ի՛նչ գիտէ:

—Լաւ, էդ աղջիկը լինի. ես ուրախութեամբ կ'ընդունեմ, միայն թէ դու նշանեսս և եղբայրդ էլ ընդունի:

Այդ խօսքը երկուսին էլ լռեցրեց և մի տեսակ մտատանջութեան մէջ զցեց նրանց:

—Դէ ճիշտ է նշանելու որ:

Այսպիսի խօսակցութիւն շատ էր տեղի ունենում Քալուստի և Վառվառի մէջ. բայց յայտնի է, որ բոլորովին ուրիշ բան էր խօսում Քալուստի սիրաւ: Փողոցով անցնելիս նրա աչքերը յաճախ Սաթենիկին էին որոնում, այդ թխադէմ, սեւաչեաց, կրակոտ և ժիր աղջկան, որը արդէն բոլորել էր իւր տասն և վեց տարին: Երբ Քալուստը երբեմն փողոցում պատահում էր իւր սիրած աղջկան, նա սկսում էր յառած և ագահ հայեացքով նայել նրա վրա: Եւ երբ Սաթենիկը անցնում էր, Քալուստը կանգ էր առնում և մի քանի վայրկեան շարունակ նայում նրա յետևից:

Այդ րոպէներին Քալուստին պատում էր մի տեսակ ջերմ և դուրեկան զգացմունք, որ սրտի արագ և ուժեղ բաբախումն էր առաջացնում:

Քալուստը բոլորովին յափշտակած էր Սաթենիկով: Այժմ նա մի տեսակ պահանջ էր զգում նրան յաճախ տեսնելու: Միակ միջոցը դրա համար այն կը լինէր, երբ Քալուստը կը սկսէր շաբաթական մի քանի անգամ երեկոները յաճախել Սաթենիկենց:

Աղջկատէրը այդ ամենից հոտ էր առել: Գիւղի բոլոր կանանց խօսակցութեան նիւթը այն էր, թէ Քալուստը Սաթենիկին տանում է: Այդ լուրը Սաթենիկի մօր ականջին էլ էր հասել և Նշիսաբէթը բաւականին ուրախացել էր դրանով:

—Դէ մենք Համբարձումից աղքատ տուն ենք, մտածում էր Նշիսաբէթը, եթէ կարողանամ աղջիկս էդ տունը տալ, էլ ես դարձեմ ունենալ: Քալուստը լաւ տղայ է, Վառվառը լաւ կնիկ, Համբարձումն էլ աշխատաւոր: Քաղաք է գնացել, դու տես թէ ինչեր է բերելու: Հազիր աղջկանս լաւ ժամանակն է, կը պառաւել, յետոյ ճիշտ է տանելու: Պիտի աշխատել դրա համար: Ես տղային հաւան եմ:

Նշիսաբէթը կանանց մէջ պտուտող այդ ուրախալի լուրի մասին միանգամ յայտնեց իւր ամուսնուն՝ Մկրտչին:

—Ո՞վ գիտէ, ասաց Մկրտիչը, կնանիք են, մի բան պիտի խօսեն, չէ՞, իրանցից հնարած կը լինեն:

—Ձէ, չեն հնարիլ: Այ մարդ, եթէ մի բան խակապէս չլինի, եթէ մի բան տեսած չլինեն, չեն հնարիլ, չեն խօսիլ: Ուղիղ է, նրանց ասածներն մէջ շատ սարքովի բաներ կան. մէկը ասում է Գալուստը թումանենց հարսանիքին աբասի-աբասի շարաշ էր տալիս, միւսը ասում է. աղջիկս նրան մի փունջ ծաղիկ է տւել, մի ուրիշը՝ թէ ճանապարհին աղջիկս ու Գալուստը փողոցում միմեանց հետ խօսացել են, թէ Աւագի դուստը հարսանիքովը խոնջա էին դուրս բերել. Սաթենիկն ու Գալուստը միասին պար են եկել: Ես տեսակ բաներ շատ են խօսում, բայց, ի հարկէ, զրանք բոլորն էլ սուտ բաներ են: Տղան համարձակ տղաց չի, աղջիկն էլ եթէ իմն է, ես հաստատ գիտեմ, որ նա էդ տեսակ բաներ չի անիլ: Իսկ եթէ, ասում եմ, եթէ էդքան բաներ են խօսում, նշանակում է մի «բան» կայ: Եւ եթէ էդ կայ, ուրեմն մի լաւ դուռ է բացւել մեր աղջկաց համար:

— Ի հարկէ, խօսեց Մկրտիչը, որը հետաքրքրութեամբ լսում էր կնոջը, — Գալուստից լաւ տղաց որտեղից գտնենք: Միայն պիտի հաստատը իմանալ ու յետոյ բան սկսել, թէ չէ՞ համ մենք կը խաջ տառակենք, համ էլ մեր աղջկաց անունը կը խայտառակենք.

— Որ էդպէս է, ասաց Եղիսաբէթը կարճ մտածմունքից յետոյ, — որ էդպէս է, քրոջս ուղարկեմ Վառվառի մօտ, թող մի բան նրանից տեղեկանայ:

— Ահա չէր լինիլ, որ քոյրդ ուղղակի Վառվառի մօտ չգնար, այլ նրա տալոջ մօտ: Սա էլ գնար Վառվառից հարցնէր և մեզ մի լուր բերէր:

— Ձէէ, Վառվառը լաւ հողի է, նա քրոջս ուղիղը կ'ասի, եթէ մի բան լինի:

— Աւա, էդպէս արա:

Մի քանի օրից յետոյ Եղիսաբէթի քոյրը գնաց Վառվառի մօտ և մի քանի անմեղ զրոյցներից յետոյ կանգ առաւ բուն խնդրի վրա:

— Այ Վառվառ, ասում են Գալուստը ուղում է քրոջս աղջկանը տանի, ուղիղ է, թէ հէնց մեր ղիւղի անկարգ կնա-

նիքն են սարքել: Հիմա նրանց բերանումը միայն Գալուստն է և Սաթենիկը:

—Լսել եմ, լսել եմ, Անուշկա:

—Բայց ախր մենք մի հաստատ բան պիտի իմանանք, որ նրա համեմատ էլ շարժենք, ամեն մի խօսողի առաջ խեղճ չմնանք: Էնպէս լինի, որ վերջը մեր աղջկայ սնունդ չխաչտառակւի:

—Անուշկա, Գալուստը շուտ-շուտ ինձ մօտ նշանւելու մասին խօսում է և ամեն անգամ ասում է, թէ կնիկ չեմ տանելու:

—Եթէ մի մարդու մօքումը կայ նշանի, նա առաջ էգլպէս է սկսում գործը, ծիծաղելով ասաց Անուշկան:

—Բայց մի բան է ասում Գալուստը. ասում է եթէ ես նշանւելու լինեմ, Սաթենիկին կը տանեմ:

—Ի՞նչ ես ասում, բացականչեց Անուշկան զարմանքով և մատը կծելով:

—Այո, էգլպէս է ասում: Քրօջդ աղջկանը շատ է հաւանել, ասում է նրա նման աղջիկ չկայ էս գիւղում:

Անուշկան ոչինչ չպատասխանեց: Նա մնացել էր ապշած և մեքով վերացած: Հիացմունք արտայայտող դէմքով նայում էր Վառվառի երեսին և միայն խորհրդաւոր կերպով շարժում զլուխը:

—Այ Վառվառ, քեզ մատաղ, խնդրում եմ, որ էգլպէս բան կայ, դու մի կողմից լաւութիւն արա: Խեղճ է, աղջիկ խիզան է, ինքն էլ հասած: Էնպէս արա, որ տղան չսառչի և էս բանը զլուխ դայ: Քեզ մատաղ: Քրօջս մարդուն կ'ասեմ, որ քեզ տասը մանէ-թանոց մի զլխի շալ տայ, միայն թէ դու էդ լաւութիւնը մեզ անես:

—Վհւյ, այ Անուշկա, էդ ի՞նչ ես ասում. ես կաշառք ուտող չեմ. էգլպէս բաներ մի խօսա, ամօթ է: Միայն ես երբ տեսնեմ, որ մեր տղի սիրտը իսկապէս կ'աչել է ձեր աղջկանը, նրա կողմը կը պահեմ: Սաթենիկին ես էլ եմ հաւան: Միայն թէ մարդս էլ համաձայն լինի էդ բանում:

—Ի՛նչ, նա ի՞նչ պիտի ասի. մենք որ հիմա էստեղ ամեն ինչ կամաց-կամաց սկսենք, Համբարձում եղբայրը ինչ պիտի ասի: Աղջիկն ու տղան որ իրար սիրեցին, բաւական է էլի:

— Ես էլ եմ հղիւս կարծում, բայց դէ զու մեր գիւղի սովորութեանը խամ չես խամ. մեծ եղբայրն է, նրա քեֆով պիտի լինի:

— Համբարձումին էլ համոզիր: Վաւառ, քո ձեռքին չի:

— Եթէ աղի մտքումը լինի անպատճառ ձեր աղջկանը տանելու, ես կ'աշխատեմ:

— Շատ շնորհակալ եմ, ծագկես, Ասուած որդոցդ պինդ ձեռքով պահի: Մի լաւութիւն է, մեզ արա, հասած աղջիկ է, խեղճ է: Մենք մի բանով լաւութեանդ փոխարէնը կը տանք:

Անուշիան վերկացաւ դնալու:

— Անուշիա, սպասիր, մի գնա, գինի բերեմ խմիր:

— Ձէ, չեմ խմում, շնորհակալ եմ:

— Կայ ք, մի գնա ք...

— Ձէ, շատ շնորհակալ եմ, սաղ լինես, Ասուած մարդու պինդ ձեռքով պահի:

Եւ Անուշիան դուրս դնաց: Նա ուրախ սրտով և պայծառ դէմքով ներկայացաւ քրոջը: Պատմեց Վաւառի հետ ունեցած իր ամբողջ խօսակցութիւնը: Եղիսաբէթը ուրախացաւ և միամտեց:

— Փառք Աստուծոյ, որ մեր աղջկայ համար դուռն է բացւել: Գալուստը որ ասել է Սաթենիկին կը տանէի, ուրեմն նա միտք ունի տանելու:

— Իէ, այ քոյր, դուք հիմա ձեր բանին կացէք: Աշխատեցէք մէկ-մէկ էն աղին չալի, հացի կանչել, որ աղջկանը շուս-շուս տեսնի ու սիրաբ քոյրովին կաշի նրան: Թող Մկրտիչ ապերը երեկոները նրան մէկ-մէկ բերի հստեղ զրոյց անելու: Եթէ աղան Սաթենիկին սիրում է, գալու համար մի հղիւսի հրաւերի սպասում կը լինի: Յետոյ կամաց-կամաց ինքինքը կը գայ...

Այդ բոլորից յետոյ անցել էր մօտ մի ամիս: Գալուստը շաբաթը մի անգամ Մկրտչի տանն էր լինում: Նրան աջդեղ էր քաշում Սաթենիկի սէրը: Մկրտչի բացակայութեան ժամանակ յաճախ պատահում էր, որ աղջկայ մայրը մի քանի րոպէով մտառաղ զոյգերին թողնում էր մենակ, իսկ ինքը միւս սենեակը մտնում և կրկին երևում:

Այդպիսի րոպէներին Սաթենիկին ու Գալուստը մի քանի վայրկեան մնում էին լուռ ու մէկ-մէկ խորհրդաւոր հայեացքներով մի-

մեանց երեսի նաչումն Այդ հաշեացքներն արտայայտութեամբ նոքա հասկանում էին միմեանց, պարզ տեսնելով իրանց զգացմունքներն նոյնութիւնը: Այդ զգացմունքները, որ բղխում էին նոցա սրտերի խորքերից, մի անոյշ ներդաշնակութիւն էին կազմում ու մի քաղցր հաճոյքով հմայում էին նրանց հոգին ու մարմինը: Սիրային յուզմունքը ամբողջապէս պատում էր նրանց: Գալուստի և Սաթենիկի զէմքերը ամբողջապէս փաշլում էին: Սիրահարների մոքերով անցնում էր վերկենակ, փարեկ միմեանց ու համբուրել, բայց ամօթխածութեան զգացմունքը պահում էր երկուսին ևս: Նոքա միմեանց հաճոյական խօսքեր էին միայն ասում և դրանով էլ բաւականանում: Մայրը ներս էր գալիս և սիրահարները աշխատում էին աւերել իրանց զէմքերից սիրային յուզմունքի թողած հետքերը:

Մկրտիչն ու Եղիսարէթը Գալուստին իրանց փեսացուն էին համարում: Թէև այդ ամենը, ի հարկէ, աշխատում էին փոքր ի շատէ վարադուրած պահել, բայց և այնպէս լուրեր էին պտտում կա նանց շրջաններում, թէ իբր Գալուստը երբեմն զիշերում է Մկրտչի տանը:

Գ. ԳԼ.

Տասն օրեայ անհանգիստ և անտանելի ճանապարհորդութիւնից յետոյ Համբարձումը հասաւ Բաքու: Հինգ օր շարունակ ջորու վրա նստած՝ նա անցել էր Զանգեզուրի նեղ, քարքարոտ ու ամեն մի քայլափոխում մերթ դէպի անդունդ իջնող և մերթ դէպի լեռան գագաթը բարձրացող ճանապարհներով: Այնուհետև Շուշուց մինչև Եւլախ ֆուրգոն էր նստել: Փուրկոնով ճանապարհ գնալը, որին Համբարձումը մեծ փափագով և անհամբերութեամբ էր սպասում, երևակայելով, թէ այդ ճանապարհը հանգիստ կը լինի, նրան ընդհակառակը, ջարդել, ուժասպառ էր դարձրել:

— Այ տղերք, ասում էր Համբարձումը իւր ուղեկիցներին, Շուշի գալուց ևս ճանապարհներից բոլորովին զգեցի: Փուրգոնի, տրոյկի մասին լսել էի, հէնց էի իմանում շատ լաւ բան է: Բայց, եղբայր, հիմա տեսնում եմ, որ էլի փառք մեր ջորիներին: Նրկու օր էլ ևս ջորով ճանապարհ գնամ, չեմ նեղանալ, բայց էս երկու օրում հնքան յոգնել եմ, որ հինգ օր ջորով գնալուց չէի յոգնիլ:

Էսքան էլ օրօրելի կը լինի: Աողքերս էնքան Ֆուրգոնի կողքերին է հարւել, որ կաշիս պոկւել է: Աղիքներս քիչ է մնում կտրատւեն:

—Ո՛հ, ի հարկէ, ջորու բանը ուրիշ է, պատասխանում է ուղեկիցներէից մէկը. էն ճանապարհներով, որ դու ես եկել, միայն ջորին կարող է հանդիստ և անփորձ տանել՝ էն ճանապարհներն են որ...

—Հա, հա, էլի փառք մեր ջորիներին. Ֆուրգոնը աղիքներս էնքան տակն ու վրա է արել, որ Խորթակս էլ է կտրւել:

Միայն այն ժամանակ Համբարձումը փոքր ինչ թեթեւ զգաց իրան, երբ Եւլախ հասաւ և տեսաւ երկաթուղին: Իսկ երբ նստեց վագոն ու սլացաւ դէպի Բաքու, մոռացաւ ամեն ինչ. և ջորին, և Ֆուրգոնը և մարմնի ջարդւած լինելը: Մի կողմից նա զարմանում և հիանում էր մարդկային խելքի վրա, որը ստեղծագործել էր մի մեքենայ և նրա միջոցով ճանապարհորդական հաղորդակցութիւնը աշխարհի հեշտացրել: Միւս կողմից նա մոքով վերանում էր դէպի փողի, դէպի հարստութեան աշխարհը: Վագոնի պատուհանից դուրսը դուրս հանած՝ Համբարձումը նայում էր հեռում, շատ հեռում անհետացող երկաթուղու վրա, մտքից դուռ չէր հեռանում Քուռի ահագին կամուրջը և ինքն իրեն ասում էր.

—Տունդ չքանդւի, փո՛ղ, էդ ի՞նչ ո՞յժ, էդ ի՞նչ զօրութիւն ունիս դու: Ինչէր ասես չես անում դու: Փող որ կայ, ամեն ինչ էլ կը լինի:

Երբ Համբարձումը հասաւ Բաքու, տեսաւ քաղաքի լայն փողոցները, հսկայաշէն ու գեղեցիկ շինութիւնները և զանազան ապրանքներով լի ու փայլուն մազազիւնները, այն ժամանակ փողը բոլորովին գրաւեց նրա ուշքն ու միտքը: Նա մի րոպէ յիշեց իւր անցեալը, իւր առեւտուրը: Ե՛է, ինչ համեմատութիւն... Նրանի էս մազազիւնների տէրերին, շշնջում էր Համբարձումը ինքն իրան, երբ արծաթեղէններով լի մազազիւնի ահագին պատուհանի առաջ կանգնած՝ երկար ժամանակ զիտում էր իրերը և զեռ. մի բանից չկշտացած՝ անցնում էր մի ուրիշ մազազիւնի առաջը:

—Մի էսպէս մազազիւնս լինէր, ասում էր Համբարձումը իրեն ուղեկցող համագիւղացուն, որը նրան ցոյց էր տալիս քաղաքի հետաքրքիր մասերը, —եթէ մի էսպիսի մազազիւնս լինէր, էլ ես դարձ չէի ունենալ:

Եւ նոյն րոպէին նրա մտքով անցնում էր այն հարցը, որ շարունակ զբաղեցնում էր Համբարձումին.

«Արդեօք մի յաւ տեղ կարգին ոտճիկով կարողանա՞նք եմ գտնել, թէ պարապ եմ մնալու: Որ պարապ մնամ, ես իսկոյն կը հիւանդանամ, հոգիս դուրս կը գաջ: Գալուստի ընկեր Սարգսի գործը դեռ պիտի մնայ: Առաջ մի տեղս պնդացնեմ, յետոյ»:

Համբարձումը իջեանել էր իւր համագիւղացի տղերանց մօտ, որոնք ապրում էին մի քարւանսարայում: Տղերքը ուրախ չէին, որ Համբարձումը իրենց մօտ էր իջեանել. նախ որ այսպէս թէ այնպէս իրանց ծախքը կարող էր նրա պատճառով աւելանալ և երկրորդ՝ իմանալով Համբարձումի անխիղճ գործերով լի անցեալը, ներքուստ առում էին նրան: Համբարձումը հասկանում էր այդ ամենը: Շողոքորթութեամբ ու սիրալիր կերպով խօսելով տղերանց հետ, նա շարունակ ժպտում էր և աշխատում էր դուր գալ տղերանց:

—Տղերք, պա ինձ համար մի գործ չէք գտնելու. ասաց Համբարձումը իւր գալուց մի քանի օր յետոյ,—պարապ նստելով ինչ պիտի անեմ:

—Կը գտնենք, կը գտնենք, միամիտ կաց, ասում էին տղերքը:

Սրանք իսկապէս այդ բանի համար աշխատում էին: Սև թէ կապոյտ—իրանց համագիւղացին էր. հարկաւոր էր նրան օգնել, քանի որ այդպիսով Համբարձումը շուտով կը հեռանար իրանց մօտից և չէր գրգռիլ իրանց ատելութեան զգացմունքը:

Մի շաբթից յետոյ տղերքը Համբարձումի համար տեղ գտան և նա քաղաքից տեղափոխուեց Բալասանի: Այդտեղ նա թահանքերում ամսական 20 ռուբլով ծառայում էր Համբարձումը: Թէև ծառայութիւնը շատ անմաքուր էր և անհանգիստ, բայց դէ ոտճիկը լաւ ոտճիկ էր:

Այսպէս էր մտածում Համբարձումը, երբ շաբաթը երեք կամ չորս անգում գիշերներ էր անցկացնում նաւթանքի կայարանի «նասոս»-ների և կամ «մերնիկ»-ների մօտ:

Աշխատանքի անմաքուրութիւնը և անհանգստութիւնը, իհարկէ, պահանջում էին աւողջարար և կազդուրիչ սնունդ, մանաւանդ Համբարձումի նման վատառողջ մարդու համար: Բայց նա աւելորդ բան էր համարում այդ, ասելով.

— Ինչ լինում է լինի՝ կեր. միայն թէ փորդ կշտանայ:

Համբարձումի կերածը ցամաք հաց էր լինում, երբեմն պանրի հետ, այնպէս որ նրա ամսական ծախքը երեք ուռւբլուց չէր անցնում: Որքան ուրախ էր լինում նա հոգով, երբ ամեն ամսւայ վերջում տասն և եօթ ուռւբլի յետ զցելով՝ տանում և պահ էր տալիս կառավարչին: Ընկերները տեսնում էին նրա վարմունքը, ծիծաղում, արհամարում էին նրան և երբեմն խղճալով ասում:

— Այ մարդ, պա խնդճ չես դու: Ինքդ հիւանդոտ մարդ ես և էգպէս ժլատութիւն ես անում, մարմնիցդ զրկում ես: Ախր պիտի ջանդ առողջ լինի, որ կարողանաս երկար ժամանակ աշխատել: Էսօր մի կերպ եօլա ես գնում, վաղը մէկ էլ տեսար հիւանդացար: Պիտի մի քիչ կարգին ուտես, որ կարողանաս երկար դիմանալ էս տեղի աշխատանքին: Դու հալա չես իմանում, թէ Բալախանին ինչ տեղ է: Ինչքան էլ լաւ ուտում ես, էլի էստեղի ծանր, անմաքուր աշխատանքը, էստեղի խոնաւութիւնը, ծուխը, կեղտը, մեքենաների չախկաչուխկը մարդուն հուպ են տալիս շինում մի կծիկ, թուլացնում, ոյժից զցում են, առողջութիւն է կորչում: Պա որ չուտենք, ինչ օրը կ'ընկնենք:

— Մենք էլ առաջ քեզ նման էինք անում, ասում էր Համբարձումի պաշտօնակիցը, — և մենք շատ էինք վնասում, առաւօտները վաճ էնպէս, որ վեր էինք կենում, վաճ էնպէս որ ոտի վրա կանգնում էինք. դէ ախր փորներումս բան չէր լինում: Յետոյ մեր աւարաւեալւշիւն էդ բանը նկատեց, մեզ շատ նախատեց ու ասաց.

«Մախսներդ միացրէք և ամեն օր չաճ խմեցէք, մտով կերակուր՝ կերէք: Եգպէս էժան կընտի և կարգին ճաշ կ'ունենաք: — Հիմա, իսկպէս, մենք վեց հոգի միասին ենք ճաշում. մեզանից մէկը կերակուր է պատրաստում և ծախսներս միասին է: Ամսի վերջում ամեն մէկիս ինչ է ընկնում ընդամենը. վեց կամ եօթ մանէթ: Միասին համ էժան է նստում, համ էլ դէ կերածներս ախր բանի նման է լինում: Զէ, լաւ չես անում, Համբարձում, յետոյ կը փոշմանես: Քսան մանէթ ուծիկ ես ստանում, տասն և երեքը պահիր, եօթը կեր:

Կերակուր պատրաստող գործակատարը ծիծաղելով՝ նախատում էր Համբարձումին և ասում:

—Տնաշէն, ի՞նչ հարկաւոր է հոգքան ժլատութիւն անելը: Փառք Աստծոյ, բնակարանը ձրի, լոյսը, վառելիքը ձրի, ջուրը ձրի. էլ ուրիշ ի՞նչ ծախս ունիս. մի ուտելիքն է էլի: Շորն է, էն էլ, քէ, պատահում է տարեկան մի էժան բան առնում՝ ես հաքնում, եօլա գնում: Դու խօսմ հետդ երկու ձեռք շոր ունիս հալա տնից բերած: Ել ի՞նչ կայ ուրեմն, որ քեզ հոգքան զրկում ես:

Համբարձումը, որ ժպիտը երեսին ու լուռ լսում էր ծառայողներին նախատինքներն ու նրանց օգտակար խորհուրդները, ոչինչ էէր պատասխանում: Այդ ամենը նրա մէկ ականջով մտնում էր և նոյն րոպէին միւսով դուրս գալիս:

—Հը', ի՞նչ ես ասում. չես ցանկանում մեզ հետ միասին ճաշել, հարցնում էր Համբարձումի պաշտօնակիցը:

—Է՛հ, բան չունես, պատասխանում էր Համբարձումը և երեսը շրջելով գնում իւր գործին:

Վատ և սակաւ սնունդին, Բալախանու հեղձուցիչ ու խեղդող մթնոլորդին Համբարձումը չկարողացաւ երկար դիմանալ: Մառաչութիւն մտնելուց յետոյ նա սաստիկ հիւանդացաւ և շաբաթներով մնաց պառկած:

Տնքում էր Համբարձումը վերմակի տակ և սաստիկ տաքութիւնը նրան հանգիստ չէր տալիս: Երբ նա դուրս էր հանում իւր կոները վերմակի տակից, տարածում էր և ինքն իրեն մտածում.

—Տէր Աստուած, ի՞նչ մեղք եմ գործել ախր, որ ինձ հսքան տանջում ես: Հազիր լաւ գործի էի կաշել, կարգին ռոճիկ էի ստանում: Պա ես խեղճ չեմ: Ձէ, բախտս շուռ է սուել:

Յետոյ նրա միտքը պտոյտներ էր գործում կեանքի ու մահւան սահմաններում:

—Որ յանկարծ մեռնեմ, մտածում էր Համբարձումը, էստեղ, էս օտար երկրում, ոչ բարեկամ ունիմ, ոչ ազգական, ընտանիքից, զիւղից, հողից հեռու... Խեղճ են որդիքս, որք կը մնան հօրեղբօր ձեռքի տակ. ո՞վ զիտէ ինչպէս կ'ապրեն... Հօրեղբայրը ախր միշտ լաւ աչքով չի նայիլ: Աստուած, խղճա ինձ, պահպանիր ինձ, որ առողջմանամ, էլի իմ գործին կենամ, լաւ փող շինեմ և տուն վերադառնամ:

Եւ երբ Համբարձումը մարմնի սաստիկ տաքութեան ձեռքին

այլուում, տապալկուում էր, նրա բերանից յաճախ դուրս էին թռչում հետեւեալ խօսքերը.

—Ախ, ես մեռայ, ինձ տուն տարէք, տո՛ւն, ինձ աղատեցէք էստեղից...

Նաւթահանքի բժիշկը եկաւ այցելեց հիւանդին, դեղեր նշանակեց ու խորհուրդ տւեց Համբարձումին, որ նա վերադառնայ իւր ծննդավայր գիւղը:

—Այստեղ դու երկար չես կարող զիմանալ, ասաց բժիշկը լուրջ դէմքով, — յետոյ կառավարչին դառնալով և ծիծաղերես, — որովհետեւ Բալխանին շարունակ քեզ նման հիւանդներ է արտադրում, էլ մեր մնաց որ հիւանդներին պահի: Դու գիւղ վերադարձիր, այնտեղ քեզ լաւ կը զգաս:

Բժիշկը կառավարչին յայտնեց, որ Համբարձումի հիւանդութիւնը խլացաւ է, որ նրա ծնոտների տակ գտնուող գեղձերը բորբոքւել են արդէն և թարախ են արտադրում:

—Դա, շարունակեց բժիշկը, վտանգաւոր ցաւ է, որին երկար չի զիմանալ այդ հիւանդը, քանի որ նրա առողջութիւնը բոլորովին քայքայւած է: Այս ցաւը համարեա միշտ հետեւանք է լինում չափից դուրս աշխատանքի, անկանոն կեանքի և սակաւ սնունդի: Հիւանդը երկար չի զիմանալ այդ ցաւին, խեղճ է, թող գնաց գիւղը:

Եւ բժիշկը թողեց նաւթահանքը:

Մի ամսից յետոյ հիւանդը դեղերի օգնութեամբ այնքան էր կազդուրւել, որ կարող էր ուրիշների ուղեկցութեամբ և օգնութեամբ ճանապարհ գնալ: Իւր առողջութեան մէջ այդ փոքրիկ փոփոխութիւնը տեսնելով, Համբարձումը դեռ ցանկութիւն չունէր հայրենիք վերադառնալու, այլ մտադիր էր շարունակելու իւր ծառայութիւնը: Բայց կառավարիչը նրան նախատեց և պահանջեց, որ նա շուտով գիւղ վերադառնայ: Կառավարիչը մինչև անգամ սպառնաց, որ եթէ Համբարձումը հակառակելու լինի, կը զրկւի պաշտօնից և ուրիշ տեղ էլ չի ընդունուի: Հիւանդը ստիպւած էր զիջել և տուն վերադառնալ: Նրա բախտից այդ ժամանակ գիւղ գնացող տղայք կային: Համբարձումը յետ ստանալով կառավարչին պահ տւած փողերը և վերջին ամսւոյ ռոճիկը, իւր համագիւղացիների հետ կոտորած սրտով ճանապարհ ընկաւ դէսպ հայրենի գիւղը:

(Շարունակելի)

ԵՍ ՀԱՆԳՉՈՒՄ ԷԻ...

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

Ես հանգչում էի... Վաղուց էր, որ իմ մարած աչքերիս
Ներշնչման արցունք էլ չէր շողշողում.
Խորին կարօտով կանչում էի միշտ ես իմ մոլասցիս
Եւ միշտ յուսահատ՝ գլուխըս կախում:

Հոգիս մըռայլ էր. օրերըս մըթին. և սիրտըս՝ տըխուր.
Մառչում էր արիւն ստեղծագործական.
Անցնում էր կեանքըս տանջանքների մէջ անըսփոփ և լուռ,
Մարում էր կեանքըս—ճըրագի նըման:

Բայց ահա այսօր մոլասցիս շունչը նորից ըզգացի,
Լըսեցի թևի թափահարումը,—
Ահա աչքիցըս հոսում է հեղեղն աղի արցունքի,
Ահա ցընծութիւն հոգուս խորքումը!

Ուրեմն իզուր էր իմ սըրտամաշուկ վըհատութիւնըս,
Իզուր իմ հոգոց և հառաչանքներ.
Նորից բորբոքեց երակներիս մէջ պաղած արիւնըս,
Նորից վառւում են յուսոյ աստղեր!...

Թիֆլիս. 1896 թ. 29 սեպտ.

Ն Ո Ր Ե Կ

Վ Է Պ

Գ. ԲԱՅԵՆՅԻ

(Շարունակութիւն 1)

ԴԼ. ԺԳ.

Զնայելով Ալէքսանդրի բարութեանն ու արդարադատութեանը, վերջին ժամանակները նրա գաւառումսում գողութիւններն օրէցօր բազմանում էին: Մէկը գալիս էր, թէ «էշս են տարել, միւսը՝ թէ «ձիս», երրորդը—թէ «հարսիս ոսկիները», չորրորդը—թէ «գիշեր ժամանակ յարձակել են վրաս», և այլն: Ամենայն օր պատահում էին նոր դէպքեր, և դժբախդաբար միշտ աղքատների հետ: Այս դէպքերի պատճառով Ալէքսանդրը, համարեա, միշտ ձիու վրայ էր: Գաւառումսի այս գիւղից միւսն էր գնում, ամենուրեք սրան, նրան հարցնում, բայց գողերը չէին գտնւում ու չէ: Նա յաճախ ամբողջ գիշերը ձիու վրայ ձորերում, կիրճերում, ճանապարհների վրայ թափառում էր՝ ժողովրդին գողերից ազատելու համար: Յաճախ նա գիշերները անքուն էր անցկացնում, տեղաշորերում մտածելով մարդկանց անգթութեան վրայ: Միթէ կարելի է գողանալ աղքատ գիւղացու արջառը, կամ էշը, որոնք նրա միակ յոյսն են՝ ապրուստ ձարելու: Ի՞նչքան ընկած պէտք է լինի այդ բանն ան-

1) Տես «Մուրճ» 1896 թ. № 5, 6, 7—8:

չու ընդունակ մարդը: Ի՞նչպէս անել, որ մարդիկ այդպէս չլինեն: Ի՞նչն է պատճառը, որ այդպիսի դէպքերը նրա ծառայութեան ժամանակամիջոցում բազմացան: Եւ բազմութիւն այսպիսի հարցեր, որոնք կուտակուած էին նրա գլխում, վրդովում նրա հանդիստը: Վերջին ժամանակները միայն մի շըշուկ տարածւեց ժողովրդի մէջ, սր այդ բոլոր գողութիւններն և յափշտակութիւնները անում է խարճ Մամադը մի թուրքի հետ, որ փախել է Ղարաբաղից և ապրում է Փիր-Մուրադ Սուլթանի մօտ: Սոքա գողացած ապրանքը տանում են հասցնում հովիտները, այնտեղից՝ Գանձակի նահանգը, որտեղ յանձնում են իրենց բարեկամներին, ու նրանց պահպանում է Փիր-Մուրադ Սուլթանը՝ ստանալով մի մասը յափշտակած ապրանքի: Մինչև անգամ եղան այնպիսի կարծիք տարածողներ էլ, իբր թէ նորեկ պրիստաւն էլ սրանից օգուտ ունի: Այս շշուկները հասան խնութիւններին էլ, որոնք յայտնեցին Ալէքսանդրին: Նա չգիտէր՝ ինչ անի, հաւատաց այս լուրերին, թէ ոչ—մի՞թէ այն լեզւի տէր Փիր-Մուրադ Սուլթանը այսպիսի բաներ կ'անի, մի՞թէ նա մի այդպիսի ճիւղ է: Այս հարցը լուծելու համար՝ նա կանչեց իր մօտ Մելիք Շէգօյին:

—Այո, աղա, ասում էր Մելիքը, ես հաւատում եմ, որ այդ բաները անել է տալիս Փիր-Մուրադը. և այլերպ լինել անկարելի է: Սա նորա հին արւեստն է և ոչ թէ միայն նորա, այլ և բոլոր յայտնի թուրք տների, որոնք ապրում են մեր գաւառի զանազան մասերում: Նոքա յաճախ բարեկամանում են պրիստաւների հետ, նրանց ընծաներ տալիս և ամբողջ գաւառամասը թալանում կաշառառութիւնով, գողութիւնով ու աւազակութիւններով: Յաճախ էլ այս բաները անել են տալիս՝ իրենց թշնամի պրիստաւին բարձր վարչութեան աչքում խաչառակելու համար: Ունի՞ արդեօք Փիր-Մուրադ Սուլթանը այս դէպքում վերջին նպատակը՝ — ես չգիտեմ, միայն մի բան հաստատ կ'ասեմ, որ այս անկարգութիւնները առանց նորա մասնակցութեան երևան գալ անկարող էին:

—Բայց ի՞նչպէս սրա առաջն առնել:

—Դա մի շատ դժւար բան է: Սորա համար պէտք է Փիր-Մուրադ Սուլթանին վայր գցել, որին կարելի է հասնել՝ խելով նրանից և նորա ազգակիցներից միաւութիւնը և նրանց հակա-

ռակորդներ պատրաստելով նահանգական և գաւառական, վարչական բարձր շրջաններում: Այս նպատակներին էլ հասնելը շատ դժւար է, որովհետեւ նրան յամենայն դէպս նեղ օրում կը պաշտպանի մեր պաւառամասի բոլոր թիւրք ժողովուրդը, որի մէջ նա կը վառի մոլեռանդութիւն, և երկրորդ՝ նրան կը պաշտպանեն թուրքանիսի խաները, որոնք վարչական շրջաններում մեծ նշանակութիւն ունեն:

Մէլիքի այս բոլոր ասածները Ալէքսանին անմեկնելի երազ էին թուում: Նա կեանքի մէջ առաջին անգամն էր պատահում այսպիսի երևոյթի և դժւարանում էր հաւատալ, որ Փիր-Մուրադ Սուլթանը այս չարագործութիւնների մէջ անմիջապէս մասնակից լինի, և երկրորդը՝ որ նա այնքան ուժեղ լինի, որքան կարծում են: Բայց մի քանի օր չանցած՝ իրար ետեւից եկած դէպքերը լուսաւորեցին նորա աչքերը:

Խնութում Աւանի ժողովրդականութիւնը կամաց կամաց աւելանում էր: Ձուր կիսելու, հողերի վէճի, վնասներ անելու հարցում գիւղացիք միշտ նկատում էին, որ Աւանը արդարամիտ երիտասարդ է: Բացի սրանից, նա համեստ մարդ էր, ծերերին պատուող, միշտ հասարակութեան լաւ խօսեցող, և ասողներ կային, որ նա գիւղի համար իր գլուխը կը դնի:

—Աւանը, Աստուած արեւը բաշխի, ասում էին գիւղացիք, ժամանակին շատ լաւ մարդ կը դառնայ և գիւղի իշխանութիւնը նրա ձեռքը կ'ընկնի:

Շատ լաւ տղայ է, ասում էին միւսները, դրացու նեղ ժամանակին միշտ կը կանգնի, թէ լծկանով, թէ սերմով, թէ սայլով:

Ալէքսանդրի ու Մէլիքի վերը բերած խօսակցութիւնից մի քանի օր հազիւ էր անցել, որ կալերում ձայն բարձրացաւ, թէ գողերը Վարապետի եղները տարան: Խնութի կալերը գիւղից բաւականին հեռու էին և այնտեղ գիշերւայ պահապան էին միայն Աւանը ու երկու գիւղացի: Իմանալով գողերի գալը և երկու եղբ փախցնելը, նոքա սկսեցին հալածել չարագործներին և մօտ երեք վերստ գիւղից հեռեցան սարերի մէջ: Այստեղ գողերը իրենց պատըս պարւած զգալով՝ դարձան դէպի հայերը և մի մի հրացան արձակեցին:

—Հայեր, գողաց մէկը գողերից թուրքերէն լեզւով, ետ դարձէք. դուք հայ լինէք ու այսքան գողի ետեւից գմբ:

—Մեր եզները տւէք, բարեկամներ, մենք հայ լինենք ու թուրքերը մեզնից եղը տանեն!...

Այս խօսակցութիւնների ժամանակ՝ սկսեց հրացանով կռիւը։ Թուրքերը մտել էին քարերի տակ, իսկ հայերը մի թումբի, և գնդակները վժժում էին օդում։ Կռիւը տեւեց մօտ կէս ժամ և մի մարդ թուրքերից սպանեց, և մի մարդ հայերից։ Սպանուողը— Աւանն էր։ Այս սպանութիւններից յետոյ՝ թուրքերը թողեցին դիակը և փախան, իսկ հայերը վերցնելով եզներն ու դիակը, գիւղը վերադարձան։

Կռիւի ժամանակ՝ հայերը ճանաչել էին զարաբաղցուն, կարճ Մամադին և Փիր-Մուրադ Սուլթանի Նեղբօր որդի Խամօ բէկին, որը և սպանւել էր։

Աւանի մարմինը բերելու գնաց ամբողջ գիւղը։ Տղամարդ, կին, ծեր, պառաւ, երիտասարդ, երեխայ—բոլորը գնացին մարմնի առաջ։ Աւանի մայրը, դիակի ետեւից, մանի կանչելով գնում էր. նրա խօսքերը՝ «Ելի ¹⁾ համար մեռած որդի, թշնամու գուլլով խորովւած որդի» և կռուներ ձայնը սարսուռ էին գցում բոլորի սրտերը։ Ոչ մէկի մահաւան համար գիւղը այսպէս չէր լացել։ Ամենից շատ լաց էին լինում երիտասարդները, և մեծամասնութիւնը՝ թասիբից ու բարկութիւնից։

—Թուրքը զայ, մեր տան մէջ մարդ սպանի՞ զարմանում էր մէկը։

—Ոչինչ, փոխարէնը առել ենք, ասում էր միւսը։

Աւանի մահը ամբողջ գիւղը միացրեց և բոլորի մէջ մի հոգի փչեց։ Բոլորն էլ զբաղւած էին, թէ ինչպէս պէտք է վերջանաց այս հարցը և հայերը ինչ պէտք է անեն, որ միւս անգամ այսպիսի դէպքեր չպատահեն։

—Ժողովենք, գնանք թուրքերի վրայ և թուրքերի հետ կռիւ անենք, մի երկու մարդ սպանենք—ասում էր Աւետիսը։

—Ինչպէս կարող ենք ուղիղ նրանց վրայ գնալ, կառավարութիւնը ինչպէս թոյլ կը տան—պատասխանեց Խաչօն։

—Կառավարութիւնը մեր աղէն չէ, ասում էր Աւետիսը, նա էլ թոյլ կը տայ։

¹⁾ Հասարակութիւն։

—Է, եղբայր, ինչպէս կարելի է մեր աղին գործի մէջ մտնելնք, նա ծառայութեան տէր մարդ է:

—Աւետիսը, եղբայր, մեզ ուզում է թուրքերի հետ այնպէս կուսացնի, որ մեր աղին խայտառակի, որ նրա փոխարէն ուրիշ պրիստաւ գայ և ինքն էլ¹⁰ դարձեալ զեղը քանդի:

—Ոչինչ բան հարկաւոր չէ, ասում էր տիրացու Վարդանը, մենք չորս-չորս մարդով մի քանի խմբեր կազմենք և գիշերները ինչքան Կորավանցի պատահի՝ սպանենք, այն ժամանակ նրանք էլ չեն յանդգնի մեզ հետ այսպէս վարւել:

—Ձեր ասածներից ոչ մի բան էլ ընդունել չեմ կարող: Ալէքսանդր աղէն մեր կառավարիչն է և մեր զիւղացին: Աւանի մահի վրայ նա մեր բոլորից շատ կը ցաւի: Թոյլ տւէք ես նրա հետ խօսեմ, ինչպէս խորհուրդ կը տայ, այնպէս վարւենք: Ես ամենայն մի յարձակման և սպանութեանց հակառակ եմ. իմ կարծիքով այս գործը պէտք է դատարանի զցել և ամենայն բան ճշմարտապէս յայտնել: Կառավարութիւնը թող ինքը չարագործին հալածի:

Երկար և բարակ վիճաբանութիւններից յետոյ՝ ամբողջ զիւղ համաձայնեց Մէլիք Շէգօյի հետ և նա գնաց զէպի Ալէքսանդրը, որը նրան նոյն խորհուրդն էր տւել:

ԳԼ. ԺԴ.

Ստէպ-ստէպ երևան եկող գողութիւնները և նրանց ետեից արշաւելը—շատ ազդեւ էին Ալէքսանդրի վրայ, որը վերջին ժամանակ շատ յոգնած էր և ջղային էր դարձել: Նա յաճախ երկար զրոյցներ էր անում թուրք, հայ և քիւրդ ժողովրդի հետ, ուսումնասիրում էր նոցա զգացումները, կիրքերը, հայեացքները և քաղաքակրթութեան աստիճանը: Ո՞րքան տգիտութիւն, նախապաշարում, խորամանկութիւն և կեղծաւորութիւն էր տիրում ամենուրեք: Այս բոլորը ոչինչ, եթէ նոցա հետ չկապէր և այն ետականութիւնը, որը մարդկերանց իրանց գազանային անդթութեան և յափշտակութեան էր հասցնում: Աւելի նրան զրգռում էր, որ ոչ մի տեղից օգնութիւն չկար ժողովրդին: Քաղաքն իր բոլոր բնակիչներով, ուսեալներն իրենց զիբքով, ժողովրդի մարդիկ իրենց գռեհիւթեամբ, հոգևորականութիւնը իր զօշաքաղութեամբ, նիւթա-

պաշտութիւնով և փառասիրութիւնով, հիմնարկութիւններն իրենց անմատչելիութիւնով ու զրաւորութիւնով և այլն, այդ բոլորը միասին կեղեքում էին ամբոխին, զարգացնում նրա վատ բնազդութիւնները: Ամենուրեք պատելէր մութ խաւարը և ոչ մի կողմից լուսոյ ճառագայթ չէր թափանցում՝ պարսկական լծից և ներքին անիշխանութիւնից փչացած ժողովրդի մէջ: Համարեա, ամբողջ օր ու գիշեր Ալէքսանդրը խորասուզած էր այս մտքերի մէջ: Յաճախ նա վհատում էր ու թուլանում, զգում էր իր տկարութիւնը կռիւի համար, շուրջը նայում ու իրեն մենակ ու անօգնական տեսնում, տոչորում իր զրութիւնից, բաց դարձեալ շարունակում իր գործը, որի մէջ միայն նա գտնում էր հանգստութիւն ու ինքնամոռացութիւն: Աւանի սպանելը, որը անասելի վիշտ պատճառեց նորան, աւելի վատացրեց նրա զրութիւնը: Այս մահը Ալէքսանդրի համար ուղիղ որ մի զարկ էր: Երեկոյնութեան օրերից նա Աւանի հետ բաժանել էր իր բոլոր զգացմունքները, մտքերը, բարի ցանկութիւնները և անկեղծ սէրը զէպի մարդն ու նրա առաջադիմութիւնը: Ամենահասարակ ոճով, բերանացի և զրաւոր, նա պատմել և հասկացրել էր նրան իր գաղափարներն ու միտումները և միշտ ու անկեղծ սրտով սիրել էր իր խոհուն, համեստ, բարի և գործնական խելքի սէր ընկերին, որ այսօր դառել էր նորա համար մի անգնահատելի օգնական և աշխատակից: Աւանը իր թարմ մտքով ու զգայուն սրտով աւելի լաւ ըմբռնում էր ընկերական գիտութեան շատ մտքեր, քան բարձրագոյն ուսում ստացողներից շատերը, որոնք չթափանցելով իմաստի մէջ՝ դեգերում են միայն բառերի և նախադասութիւնների շրջանում, և յաճախ գործում են իրենց շռայլած խօսքերին հակառակ: Եւ ո՞վ սպանեց խելք՝ Աւանին, — մտածում էր ինքնիրեն Ալէքսանդրը, — չար մարդիկ, որոնք ուղղում էին աղքատ գիւղացու վերջին յոյսը, նրա երեկոսների ապրուստը, լծկան եղները խլել նրա ձեռքից և այն՝ ամենաաւազակաբարոյ կերպով: Ինչո՞ւ համար գնաց Աւանը գնդակի առաջ. — իր բարեսրտութիւնից և զթասրտութիւնից զրդւած, որ խելք ընտանիքի ամուլները իրենցը դարձնի. ու գնդակահար եղաւ: Զգո՞ւմ նա արդեօք աւազակների ետևից, — ոչ, այդ էլ անկարելի է. եթէ գիւղացին իրենը չպաշտպանի, ոչ մի վարչութիւն աւազակութեան

առաջն առնել չի կարող: Իսկ ինչից դրդւած այդ աւազակները այդ չարութիւններն անում են, անբախդութիւն են մտնում մարդկային հասարակութեան մէջ.— ծուլութիւնից, լրբութիւնից ու անփութութիւնից: Ի՞նչ պէտք է սրա փոխարէն անել,— բռնել նրանց և հեռացնել մարդկային հասարակութիւնից, որին նոքա չկարողանան փնտսել և կրթութիւնով ու վարչական միջոցներով ազդել հասարակութեան միւս անդամների վրայ, որ նոքա էլ այսպիսի չարագործութիւններով չպարապեն: Բայց մի՞թէ այս բոլորը կարելի է իրագործել: Այն ժամանակ պէտք է մարդկանց մեծ մասը հեռացնել հասարակութիւնից և փակ սենեակներում պահած՝ կերակրել միւսների հաշւով, ստեղծել վատերից ճրիակերներ, որոնք ապրեն լաւերի աշխատանքով, որը այդպիսի դէպքում ըսկի վատերին և իրենց երեխաներին չի բաւականացնի: Եւ վերջապէս այս բոլորը ում ձեռքով պէտք է անել: Կա՞ն արդեօք նոյն իսկ սրա համար բաւականի մաքուր ձեռքեր:— Ոչ, այս բոլորն անկարելի է սա ուտուպիա է... 1)

Այս և սոցա նման մտքեր այսօր ամբողջ գիշեր տանջում էին Ալէքսանդրին և նրան քնից հանում: Նրա մոտատանջութիւնն էր մարդկային հասարակութեան մէջ եղած չարութիւնը, որի ոչնչացնելուն, կամ դոնեա մեր երկրում սակաւացնելուն նա նւիրել էր իր կեանքը: Նրան դրդում էր այս ակտը, սովորութիւնը մարդկանց մէջ, նա խղճում էր թէ չարագործութիւն գործողին և թէ ենթակային. վերջը նա չկարողացաւ մի որոշման դալ: Նա միայնակ նստում էր անկողնում, մութը սենեակի մէջ, գլուխը ձեռքի ափի վրայ յենած:

Յանկարծ՝ նրան սթափեցրին գիւղական զանգերը: Նա շտապով մեքենայաբար վերկացաւ, հագնւեց և ուղևորւեց եկեղեցի: Նա չնկատեց եկեղեցում եղած բազմաթիւ հասարակութիւնը. մօտեցաւ սեղանի կողքի մութն անկեանը և չողելով մի պատկերի առաջ սկսեց ջերմ աղօթել, որով և հանգստացաւ, և երբ գլուխը բարձրացրեց՝ տեսաւ, որ նրա առջևի պատկերը ներկայացնում է Քրիստոսին, որը իր խաչը տանում է Գողգոթա: Այս պատկերի առարկան նրա

1) Մտացածին առաջարկութիւն:

Համար շատ խորհրդաւոր էր և ներկայացնում էր նրա գաղափարականը՝ մարդու վերաբերմամբ: Կեանքին նայելուց և ուսումնասիրելուց՝ նա հասել էր այն կէտին, որ ամէն մէկը պէտք է Աստուծամարդոյ ինքնագոհութիւնը իրեն օրինակ վերցնի: Վաղուց Ալէքսանդրը իր մէջ որոշել էր, որ ամենայն բարոյական գործքեր՝ սէր, բարութիւն, քաջութիւն պարունակում են ինքնագոհութեան մէջ և որ մարդուս իսկական մարդ լինելը ապացուցւում է նրա ինքնագոհութիւնով: Քանի անգամ մտածելուց յետոյ Ալէքսանդրը կրկնել էր. «Ըն նոքա առեալ տանէին զնա. և բարձեալ էր ինքնին զխաչափայտն, և ելանէր ի տեղին, որ անանէր Գողգոթա» (սօսքերը և իր մէջ վճռել, որ հետեւի այս ուղղութեան: Այս օրուայ նրա առաջի պատկերը մի հնադարեան հայկական նկար էր, որը Խնութ զիւղը զաղթելուց մի տեղից միւս տեղ էր տանում: Քանի անգամ այս պատկերն ազատելու համար՝ մարդիկ զոհել են իրենց կեանքը և և ազատել նրան մուսուլմանների գերութիւնից: Այսպիսի զիմանկար հայ գեղարւեստի մէջ շատ քիչ է պատահում. այստեղ պատկերի մէջ կար կեանք, հոգի: Խաչակիր Աստուծամարդոյ դէմքի վրայ այստեղ երևում էր խորին տխրութիւն, ամսոսանք և կոծ մարդկանց վրայ: Միւսնոյն ժամանակ՝ կարծես Աստուծամարդն ասում էր. «Տեսէք, մարդիկ, ես տանջւում եմ ձեր փրկութեան համար, բայց ձեզ ներում եմ. կից սրա հետ՝ կարծես նա մտածում էր՝ «զի ոչ գիտեն, զինչ գործեն»: Աստուծամարդոյ դէմքի վրայ երևում էր ոյժ ու վճռականութիւն՝ իրեն զոհելու մարդկութեան համար: Խաչակիր Քրիստոսին իրեն առաջ տեսաւ թէ՛ չէ, իսկոյն Ալէքսանդրը մտաբերեց իր բոլոր մտածածները և զգացածները: «Այսպիսի մի բոլորում» Ալէքսանդրի համար անսպասելի զիսւածքը, իր գաղափարականացրած պատկերը նրա առաջ լինելը՝ նրան ոյժի բերեց, թարմացրեց: Նա մտաբերեց իր հին խոստմունքը, որի իրագործելու համար դէպքը այժմ ներկայացել էր: Նա պէտք է այժմ ցոյց տայ, որ ինքը ընդունակ է ինքնագոհութեան և պէտք է հանդարտութեամբ իր խաչը տանի: Ալէքսանդրը թարմ և ուժեղացած՝ արագ քայլերով գնաց տուն, որտեղ նրա մօտ եկաւ Մելիքը: Նա յայտնեց Ալէքսանդրին հասարակութեան խնդիրը, որ նա գործը արդարագատութեանը յանձնի: Ալէքսանդրը

իր մօտ կանչեց Աւանի երկու ընկերներին, համոզեց, որ միայն ճշմարիտն ասեն, և նրանց խօսքերը ճշտութեամբ արձանագրեց և արձանագրութեան պատճէնն ուղարկեց դատաստանական քննիչին, և որովհետեւ վկաները մեղաւորներին ճանաչել էին, ինքը գնաց Կորաւան՝ մեղաւորներին բանտարկելու:

ԳԼ. ԺԵ.

Կարճ-Մամադի խումբը կազմակերպելուց և գողութեան զցելուց յետոյ՝ Փիր-Մուրադ Սուլթանը Կորաւանից հեռացաւ Պերճաւան, որտեղ ապրում էր իր հեռու ազգական Մուրթուզ-Ալի խանի տանը, իսկ գիւղումը մնաց նրա եղբայր Սամադ բէկը, որին նա ապսպրեց նայել խմբի վրայ և պահպանել նրան: Խամօ բէկի սպանւելը մի անսպասելի բան էր ոչ թէ միայն Ֆաթիխան ուշադու, կամ միայն Կորաւան գիւղի համար, այլ և ամբողջ շահանգի համար: Միթէ Ֆաթիխան ուշադիքը այնքան թուլացել են, որ յանդգնում են նոցանից մարդ էլ սպանել:

Պապից պապ ոչ լսեա՞ծ, ոչ էլ տեսեա՞ծ էր մի այսպիսի դէպք: Խամօ բէկի մարմինը երբ բերին տուն, ամբողջ գիւղը ժողովեց: Հեռու և մօտ բարեկամ, ազգական, կամ թշնամի իսկոյն հաւաքեցին և սկսեցին գլխներին խփելով՝ լաց լինել և մանի երգել: Գիւղի բոլոր պառաւ կանայք շրջապատեցին մեռած մարմինը և իրենց երեսները չանդռելով՝ կուրծքներին խփում էին և մազերը պոկում: Շատերը նոցանից առատ արիւնհոսութիւնից ուշագնաց էին լինում: Ժողովեցին և միւս գիւղերից մարդիկ:

— Խնութիք չպէտքէ այսպէս վարէին, ասում էին շատերը: Նոքա չպիտի ձեռք բարձրացնէին Ֆաթիխան ուշադու վրայ: Միթէ նոքա չգիտեն, որ Ֆաթիխան ուշադիները մեր աղաներն են և ազգապետները, որ նրանց փնասելը՝ մեր բոլոր Խալամին փնասելն է:

— Ոչինչ, ասում էին միւսները, հայերը սրանով աւելի հաստատեցին մեր ու իրենց թշնամութիւնը և ամենայն մի իսլամ պէտք է իր վրայ սրբազան սլարտականութիւն ընդունի, որ մեր մէկը տասը հայ սպանի:

— Մեր ու հայերի թշնամութիւնը միշտ եղել է և հաստատ է: Մեր սուրբ գրքերումը ամենայն տեղ ասեա՞ծ է, որ իսլամականը

պէտք է թշնամութիւն անի ամենայն ազգի հետ, մինչև նրան զարձնի իսլամ: Ոչ-իսլամի ուժեղանալը մեղք է իսլամականի համար:

—Ո՞վ է ասում՝ մենք իսլամականներ ենք: Եթէ մենք մեր հաւատին հետեւէինք, չէինք թողի, որ հայը զօրանայ և այսպէս մեզ կոտորի:

Սամադ-բէկը զիակի մօտ նստել էր և գլուխը յենել ձեռքերի վրայ: Նա ընկած էր խորը մտատանջութեան մէջ, բայց մի կայլակ էլ չէր թափում իր հպարտ աչքերից, որոնց մէջ երևում էր միայն ոցժ և վճռականութիւն: Այլ կերպ նա անկարող էր վարւել: Միթէ նրան՝ Փիր-Մուրադ Սուլթանի բացակայութեան ժամանակ, երբ նա փոխարինում էր նրան՝ մեծին, կը վաշելէր այսպիսի րոպէում լաց լինել և ժողովրդին սիրտ չտալ:

—Մի լացէք, վերջը ասաւ նա հաւաքւածներին: Աստծու հրամանով և Մարգարէի պատուի պատճառով՝ Ֆաթիլիսան ուշադիրները բազմաթիւ են և մէկի կորուստը նրանց համար ոչինչ նշանակութիւն չունի:

Այս խօսքերը արտասանելուց յետոյ՝ Սամադ բէկը սկսեց իր գլխին խփել և մազերը դուրս տալ: Նրան հետեւեց բոլոր հասարակութիւնը: Տղամարդիկ երգում էին իրենց մարգարէի թոռներին կոտորելու երգերը և կուրծքներին խփում, արիւնոտում: Մուլաները բարձրաձայն երգում էին շիաներին կոտորելու պատերազմական երգերը, մինչև որ մեծ ախունդը դնաց մզկիթ. նրան շրջապատեց ամբոխը և նա սկսեց իր կուրծքին խփելը և լացախառն քարոզը:

Այս լացին և սուգին վերջ տւեց մուլաներից մէկը, որը ժողովրդին յայտնեց, որ ուրախալի լուր էլ կայ, որ Խամօ բէկին սպանողին նախ՝ դիպած է եղել Խամօ բէկի գնդակը և այն գետուրը այժմ դժոխքն է գնացել, իսկ Խամօ բէկի հոգին այժմ արքայութեան մէջ է: Ամենայն մի իսլամական եթէ սպանի անհաւատին հակառակութեան կամ կռի մէջ, արիտուր կը ստանայ այն, որ նրա հոգին Աստուծոյ դրախտի ամենաբարձր վայրում տեղ կ'ունենայ: Բայց որովհետև սուրբ գրքերը պարսք են դնում ուղղափառների վրայ, որ նոքա մի ուղղափառի փոխարէն՝ ամենաքիչը տասը անհաւատի դժոխքն ուղարկեն (սպանեն), ուստի դուք Աս-

տուժոյ և մարգարէի առաջ պարտաւոր էք, որ գոնեա մինչև տասն սպանէք. հակառակ դէպքում՝ այս բանը լսող և տեսնողներդ Աստուծոյ զրախտի մէջ զուրկ կը մնաք կենսատու ջրից (Աբսէզէմ)»:

Այս խօսքերն արտասանելուց՝ բոլորը երեսներին «սալաւաթ» քաշեցին և գլուխներով համաձայնութեան նշաններ անելով՝ վեր կացան: Բայց նոցա չթողեց հեռանալու Սամադ բէկը, որը դիմեց ախոռնդին հետեւեալ հարցով.

—Որովհետեւ այս գործը դատաստանի պէտք է ընկնի, իսկ գեաւուրի դատաստանը պահանջում է վկաներ, ուստի թէ մերոնց ազատութեան համար և թէ հակառակորդներին պատժելու համար, եթէ հարկ լինի, որ ուղղահաւատները զուրանի վրայ երդւելով սուտ ասեն, այս բանը մեղք է, թէ ոչ:

—Բոլորովին ոչ—բարձր գրքում ասուած է, որ ուղղահաւատը պարտաւոր է ամէն կերպ փնասել անհաւատներին, անգամ՝ եթէ կարիքը ստիպի՝ նրա անուանը սուտ խօսքերի վրայ չիշել: Այս պատճառով ես ձեզ պարտաւորեցնում եմ Մարգարէի աղօթքով և Աստուծոյ խօսքերով, որ երբ պահանջ լինի, բոլորդ էլ վկայութիւն տաք. և ի հաստատութիւն սրա՝ հրաւիրում եմ ձեզ, որ համբուրէք սուրբ զիւրքը:

Այս խօսքերից յետոյ՝ բոլոր ներկայ եղողները մօտեցան մետաքսեայ աղլուխների մէջ ծրարած սուրբ գրքին և համբուրեցին ու հեռացան. — իսկ մոլլաներից մէկը բարձրացաւ մինարէի վրայ և հի է ալ ալ սալահ, հի է ալ ալ ֆալահ, հի է ալա խ էջը ալ ամալ» երգելով՝ «շտապեցէք աղօթքի, շտապեցէք դէպի փրկութեան ճանապարհը, շտապեցէք դէպի բարեգործութիւն», ետանդ ու հաստատակամութիւն աւետեց ուղղահաւատներին:

Մզկիթից հեռանալուց յետոյ՝ Սամադ բէկը մի քանի պատուաւոր ու դատաստանական գործ իմացող թուրքերի հրաւիրեց իր մօտ և իրենց մէջ վճռեցին, որ Կորաւանի տանուտէրը յայտարարութիւնով յայտնի դաւառապետին, որ երբ Խամօ բէկն ու երկու ուրիշ թուրք անցնելիս են եղել Խնութի մօտից, Խնութցիք, այն է՝ Մէլիք Շէգօջի որդի Մէլիքսէթը, Թիրացու Վարդանը և Աւանը յարձակւել են նոցա վերայ կողոպտելու: Խամօ բէկն ինքնապաշտպանութեան համար սպանել է Աւանին ու ինքն էլ սպանւել է,

խիկ նորա ընկերները ճանաչել են վերոյիշեալ մարդկանց, որոնք խիւղ են Կորաւանցիներին երկու եղը և մի ձի: Մէլիքի տղին և տիրացու Վարդանին ցոյց տւեցին, որովհետեւ Մէլիքն ու Վարդանն էին, որ հայերի մէջ լաւ մարդ ու ազգասէր էին հռչակւած:

Մինչև Ալէքսանդրի Կորաւան դալը՝ այսպիսի մի յայտարարութիւն ուղարկւած էր դաւառապետին. կարճ Մամադը գնացել էր Պերճաւան՝ Սուլթանին լուր տանելու, իսկ Մուրթուզալին փախել էր Պարսկաստան:

Կորաւանցիներին այսպիսի վարմունքը, որ անսպասելի էր Ալէքսանդրի համար, որքան զարմանք, այնքան էլ զայրոյթ պատճառեց: Երկար ժամանակ նա մտածում էր այս սրամիտ ստախոսութեան և չարութեան վրայ ու իրեն թոյլ և տկար էր զգում որոշելու, թէ ինչպէս վարել՝ ապագայում:

Գլ. ԺԶ.

Երանաձորի դաշտը, մօտ 30 մղոն երկարութեամբ և 7—8 մղոն լայնութեամբ, պարփակւած է երկու ձիւնապատ լեռներով՝ Աղմաղանով և Սպզանով, որոնց ստորոտները, իրար մօտենալով՝ կաղմում են այն երանաւէտ երկիրը, անուշիկ օդով և 700 ոտնաչափ բարձր ծովի մակերևութից: Այս լեռները՝ որպէս երկու անշարժ հսկաներ, հանգիստ ու մեղմ նայում են իրենց շուրջը, նոցա լանջերը թեք իջնելով՝ ամեն մէկը մօտ 10 մղոն, պարփակում են ձորը բաղմաթիւ բլրակներով ու ձորակներով, որոնց միջից հոսում են անհամար պարզորակ աղբիւրներ և տաւակներ: Սարալանջի տարածութիւնը ծածկւած է խիտ անտառով, իսկ ձորամիջինը բաղմաթիւ զիւղերով, վարուցանքերով, նանազ մարգագետիններով, և մարդու աչքը մեղմիկ ազարակներից, գեղեցիկ բլրակներով խոկուն ու հանգիստ անտառներով բարձրանում է սարերի ձիւնապատ գագաթները, որոնց պարզ տեսքը նայողին դէպի իրենց են հրաւիրում. և այս բոլոր տարածութիւնը միասին և մաս մաս ահուելի էին, որպէս Մեծ Կովկասեան լեռները, որոնք, սարսափեցնելով մարդու, ջլատում են նրա զգացմունքը. այլ թէ ամբողջութեամբ, թէ մասերով ունի սարալանջը ունի մի գրաւիչ դուրեկանութիւն, որով կ'ստես մարդուն հրաւիրում է գալ իւր մօտ, շրջադայել ծնկահաս

խոտերի մէջ, ուրախանալ, զւարճանալ բնութիւնով, ծիծաղել ծաղկանց հետ, սլաքել, թռչկոտել ծառերի ու կաքաւների հետ և ապրել ամենաբախտաւոր ինքնամոռացութեան մէջ:

Երանաձորում հին ժամանակներից կան բազմաթիւ եկեղեցիներ, խաչքարեր և մատուռներ, և իր բազմաթիւ ձորերից մէկում, որտեղ մի սար իջնելով ձորակը մի փոքր հարթ հրապարակ է կազմում, տեղ է տւել Պերճաւան ամարանոցին, որը ընկած է այդ հրապարակի վրայ, սարալանջում: Պերճաւանը շրջապատւած է գեղեցիկ անտառով, որը սփռւած է սարերի կտրճքերում և մի կողմից միայն իջնում է ձորը, որի մէջ կենտ կենտ միայն ընկած են ծառեր և որը կազմում է Պերճաւանից Թուրքանիս տանող ճանապարհը: Այս կանաչազարդ տեղը հնումը զրաւած է եղել հայ նախարարների ուշադրութիւնը, որոնք այստեղ ապրելիս են եղել շինել են արեւատական պողատու աշգիւներ և կառուցել են մի հոյակապ եկեղեցի, որտեղ մինչև այժմ կաշուն է, թէև երկրաշարժից գոյնէթը խանդարւած է և կենդանի վկայ է հայտնութեան բարեպաշտութեան և ճարտարապետութեան, որոնցով կարող են հպարտանալ հայերը: Այժմ Պերճաւանում բնակւում են մօտ երեսուն տուն Ռուս աղանդաւորներ, շինւած են կառավարութեան ատեաններ, բնակատեղիք և առանձին շէնքեր, որոնք պատկանում են Թուրքանիսից այստեղ ամարանոց եկող հայերին, կամ Թուրքերին:

Հայոց եկեղեցուց մի քանի քայլ հեռու՝ բնակւում է նահանգական պաշտօնեաներից մէկը՝ Մամադ բէկը:

Մահմադ բէկի ծագումը ծածկւած է թանձր խաւարով: Նրան չսիրող Թուրքերը ասում են, որ նա զիւղից քաղաք եկել է նախ իբրեւ հասարակ ծառայ, սովորել է ռուսերէն գրել կարդալ և կամայ կամայ առաջ է գնացել սէտական ատեաններում՝ սկսած անվարձ ծառայող զրազրից հասել է բաւականին բարձր աստիճանի, այնպէս, որ այժմ նահանգապետին մօտ անձն է հաշըւում: Չար լեզուները ասում են, որ նա առաջ է գնացել մի ինչ որ կոչօգնութեամբ, որը նրա, որպէս գեղեցիկ պատանու վրայ, տաճում էր իր տարփանքը. ասում էին ուրիշ բան էլ. բայց այս լուրերին լաւատեսները դժարանում են հաւատալ և նրա առաջադիմութիւնը վերագրում են այն հանգամանքին, որ նա, զիւղական

առողջ ընտանիքից լինելով, դառնութիւնների մէջ զարգացել է, բնաւորութիւնը ամրասցնել և, հակառակ խան և բէկ թուրքերի թուլամորթութեանը՝ սովորել է աշխատասիրութեան և առաջ գնացել:

Ասում են, որ նա կեանքի մէջ մեծ բարիքներ է ստացել հայերից, բայց դարձեալ նա նրանց անհաշտ թշնամի է և կազմում է կենդրոնը տեղական թուրք ազգաբնակչութեան, որը ոչ մի դէպքում չի կարողանում ծածկել իր անզուսպ ատելութիւնը դէպի քրիստոնեաները, մանաւանդ դէպի հայերը: Մահմադ բէկի տունը բաղկացած է երեք սենեակներից, որոնցից երկուսը մեզ անյայտ են, իբրև կանանոցին և ընտանիքին սլատկանոց, իսկ մէկը կազմում է նորա հիւրանոցի սրահը, ուր յաճախ ժողովում են թուրք ազնականները և թէյ խմում ու նարզիլէ ծխում: Սա մի մեծ սրահ է, ծածկւած թանդագին դորգերով, որոնց վերայ պատերին թեք դրած են պարսկական մութաքաները. սոցա վրայ են բազմում իսլամական հիւրերը: Մահմադ բէկը իւր տունը առհասարակ ուռններ կամ հայեր չի ընդունում, բայց երբ անհրաժեշտ է լինում, օրինակ՝ նահանգապետի, դատաստանական նախագահի, գատախազի այցելութեան ժամանակ, նա այս սրահում դնում է և եւրոպական կահ: Նա այսպէս վարւում է միայն Պերճաւանում, որտեղ զանձարանական բնակարանը նեղ է, բայց Թուրքանիստում իր սեփական տներում ունի առանձին սենեակներ՝ ասիական և եւրոպական:

Մահմադ բէկը ճաշւայ քնից նոր էր վերկացել և սկսել էր թէյ խմել, նարզիլէ ծխել, երբ ներս մտաւ ծառան և յայտնեց, որ Փիր-Մուրադ Սուլթանը ցանկանում է ներկայանալ նրան:

—Հրաւիրիր, թող գայ:

—Սալամը պէջքեւմ:

—Ալէյ քեհու սալամ: Բարեւ ես եկել, Սուլթան, ես քեզ քանի անգամ ասել եմ, ինձ հետ, եղբայր, նազ մի՛ անի, ես գեաւուր չեմ, որ իրաւունք խնդրեն՝ յետոյ մտնեն իմ տունը. ընդհակառակը՝ ես սիրում եմ, որ իսլամական կարգով ուղիղ մտնեն իմ սալամլիկը, մանաւանդ՝ երբ եկողը ձեզ նման սիրելի և սրտակից բարեկամ է:

—Շնորհակալ եմ, տաջ երկնքի և երկրի Ասուածը, որ ձեր փառքը աւելի մեծանայ, ու դուք, իբրեւ մուսուլմանական ջահ, երկար վառ մնաք:

—Հրաման արէք նստելու, Սուլթան, ու համեցէք նարգիլէ մեր մուսուլմանութիւնը շատ զեղեցիկ ճարտարապետութիւն է ստեղծել, բաժանելով հարամխանան սալամլիւկից: Այդ յեմար քրիստոնեաները այս հասարակ բանն էլ չեն ուզում հասկանալ, և նրանց հիւրը կամ պէտք է երկար դռանը սպասի, կամ թէ կարող է պատահել, որ տանտիկնոջը Նւալի հազուստով տեսնի:

—Անամօթ ժողովուրդ են:

—Անպայման. թէպէտ զոքա իրենց այսպիսի վարմունքը վերադրում են իրենց կանանց աղատութեան, բայց իմ կարծիքով՝ դա խաչտառակութիւն է: Այ տղա, Սուլթանի համար թէջ բեր:

—«Թաշաք քիւլ էտարամ», ասելով՝ նստեց Սուլթանը և տխուր ձայնով շարունակեց—ես այն պիտի մի բաժակ թէջ եմ խմել, որ յաւիտեան չեմ մոռանալ. ինձ կորցրել եմ և եկել ձեզ մօտ:

—Ի՞նչ է պատահել:

—Մեր Խամօ բէկին սպանել են:

—Վա՛յ, ո՞վ:

—Խնութայ հայերը:

—Ես վաղուց ասել եմ՝ այս անիծած ազգը առաջ է գնում և մեզ կը կոտորի, պէտք է զրանց առաջն առնել:

—Ի՞նչպէս առաջն առնել:

—Ահա ինչպէս. երբ մէկը նրանցից առաջ գնայ, իսկոյն նրա վրայ զանգատներ տալ. ա՛յ, դուք սովորացնէիք՝ ձեր պրիստաւի վրայ տային: Ես ձեզ քանի անգամ ասել եմ, բայց մինչև այժմ՝ դանդաղ չկայ: Որը զրանցից պատահի, ծածուկ տեղերում սպանել ալ, մանաւանդ՝ որոնք ապագայում յառաջադիմութիւն են խոստանում: Հարկաւոր է, որ թուրքը հային բոլորովին կայք չծախի և ամենայն կերպ աշխատի փողեր ձեռք գցել, որ հայից անշարժ կայք առնի: Հարկաւոր է, որ թուրքը միայն թուրքի հետ առուտուր անի և օգուտը հային չտայ: Ասա, գոնեա, Խամօ բէկի փախարէն մի հայ էլ սպանւել է:

—Փնտք Աստուծոյ, մէկ լաւ, քո ասածին սատկացրել են:

Այս խօսակցութեան մէջ ծառան յայտնեց, որ ներս են ուզում գննել Ալիկուլի խանը, Մուրթուզալի խանը, Հուսէյն Սուլթանը և Ռուստամ բէկը։ Սալամ տալով և առնելով նոքա նստեցին մութաքաների վրայ և հարցական հայեացք զցեցին Փիր-Մուրադ Սուլթանի վրայ։

—Սուլթան, հրամայի, պատմի, այս ի՞նչ բան է եղել։

—Ի՞նչ, հայերը մի ինչ որ եղի համար կուէլ են մեր աղէքքի հետ. մերոնք սպանել են նրանց մէկին, իսկ նոքա փոխարէնը մեր հանգուցեալ խամօին։

—Ես համոզուած եմ, որ եթէ Խնուլթի պրիստաւը հայ չլինէր, խնուլթցիք չէին յանդգնի խամօ բէկին սպանել, կտրեց Սուլթանի պատմութիւնը Մահմադ բէկը։

—Անշուշտ, այդպէս է, միջամտեց Մուրթուզալի խանը։

—Բայց ինչ անենք, եղբայր, մեռանք սուտ լուրերով ու հնարովի փաստերով դրանց վայր զցելով, բայց այդ անիծւած հայերից, եթէ մէկը կորչում է, միւսն իսկոյն տեղը բռնում է։ Բացի արանից՝ քիչ է մնում կուղ դառնանք. այնքան կռացել ենք ռուսների առաջ, որ ռուսներին սիրելի դառնալով՝ հայերին առել տանք. իսկ թէ զանազան հիւրասիրութեան վրայ ինչ ենք ծախսում և ինչքան կաշառք ենք տալիս, դա միայն Աստուած գիտէ, ասում էր երիտասարդ Ալի կուլի խանը։

—Բայց մի բան պէտք է խոստովանել. միջամտեց Հուսէյն Սուլթանը, որ դոցա մէջ լաւ մարդիկ էլ կան։ Օրինակ այդ Խնուլթի պրիստաւը շատ լաւ երիտասարդ է, ես նրա հետ ծանօթ եմ։

—Իմ կարծիքով՝ աւելնորդ է դրանց լաւը, կամ վատը հարցնել. այսօր սա լաւ է, վաղը կարող է վատանալ. ինքը լաւ է, աղէն կարող է վատ լինել։ Ամենախելօքն այն է, որ դրանցից, որին կարելի է, պէտք է փնտսել։

—Շատ արգարացի էք դառում, Մահմադ բէկ. մանաւանդ այժմ յարմար է. քանի կարելի է, աշխատենք, որ դրանցից աւելի շատերին վայր զցենք և հայերի ու ռուսների մէջ մի աջնալիսի թշնամութեան վիճ փորենք, որ նոքա այլ ևս չկարողանան միանալ։

—Շատ լաւ էք հրամայում, խան։

—Ցամենայն դէպս՝ պէտք է դոցա դէմ անխոնջ կեր-

պով գործել, մէջ մտաւ Ռուստամ բէկը, և ես մեր կողմի հայ գիւղերը, փառք Աստուծոյ, լաւ եմ փականքի տակ դրել:

—Այս հարցերը, յարգելի խաներ, դեռ պէտք է բաց թողնել և մտածել ներկայ հանգամանքների մասին, կտրեց խօսակցութիւնը Փիր-Մուրադ Սուլթանը:

—Ներկայ հանգամանքների մասին այն պէտք է ասել, ինչ որ հարկաւոր է. պէտք է այս օրւանից ամենայն տեղ տարածել, որ հայերը ուղեւ են թուրքերին կողոպտել և մէկ մարդ էլ սպանել են, իսկ թուրքերն իրենց պաշտպանելու ժամանակ՝ մէկին սպանել են: Եւ ծածուկ շշուկ գցել, թէ պրիստաւի էլ մատը մէջը խառն է. գուցէ պրիստաւին պաշտօնից զրկեն, պատասխանեց Ալի Կուլի խանը:

—Իսկ առ այժմ, կցեց, Մահմադ բէկը, հարկաւոր է, որ, Սուլթան, վկաներ ճարես, որ հայերից մի երկուսին պատժել տաս և գործն այնպէս տանես, որ մերոնցից պատժուող չլինի:

—Աստուծոյ հրամանով այդ բանը կը լինի, որովհետեւ ձեր նման խաները, սուլթաններն ու բէկերը մուսուլմանութեան թաւիբն այսպէս քաշում էք:

—Փառք Աստուծոյ, եթէ այդ էլ չլինէր՝ մենք կորած էինք:

—Եթէ հայերն մեր դրութեան մէջ լինէին՝ արդէն վաղուց ոչնչացել էրն, որովհետեւ անմիաբան են:

—Դրա պատճառը նրանց հաւատն է, որը քարոզում է դէպի ամենայն ազգ միևնույն կերպով վերաբերել: Բաց մեզ շատ օգնում է ղուրանը՝ շարիֆի այն քարոզը, որ ասում է, թէ ուղղահաւատները պարտաւոր են միանալ և ամենայն միջոցներ գործ դնել ընդդէմ անհաւատներին: Այս բանը մեր մէջ կրթել է միութիւն և թշնամութիւն դէպի գեաւուրները և այս հանգամանքներն էլ մեզ պահպանում են:

—Փառք Իրենը, Ղուրանը՝ շարիֆը, ուղիղ որ, երևելի զիրք է և խելօք, որովհետեւ ազգի միութեան համար բաւական չէ միայն քարոզել սէր դէպի ինքը, այլ և հարկաւոր է տարածել թշնամութիւն դէպի ուրիշները:

—Այո, փառք Բարձրեալին:

Այս խօսակցութիւնը վերջացնելուց յետոյ՝ խումբը դուրս եկաւ տանից և բոլորն էլ ուղևորւեցին ամարանոցի ախումբը: Ակումբ

բոլոր արդէն ժողովուրդը էին զանազան տեսակի աստիճանաւորներ և վաճառականներ, որոնց մի մասը արդէն նստած էր կանաչ սեղանի մօտ, իսկ մի քանիսը ընկերներ էին վնտռում: Խաների և բէկերի զաւր շատերին ուրախացրեց և խնայեց մօտ տասն մարդ ժողովուրդին բուժէտի մօտ և սկսեց զրոյց զանազան հարցերի մասին, ի միջի որոց՝ Խնուծի դէպքի մասին: Վերջը խումբը մաս-մաս բաժանեց և սկսեց դատարկաբանութիւն նոյն դէպքի վերաբերմամբ:

Պերճաւանում արդէն զանազան վարիացիներով տարածել էր, որ հայերի և թուրքերի մէջ կռիւ է պատահել և սպանւել են մի հայ և մի թուրք: Ակումբում թուղթ խաղալուց՝ Ալի Կուլի խանը պատմում էր մի հայ փաստաբանի.

—Այսօր մեր զիւղից մարդ է եկել և պատմում է ճշտութիւնը. Խամօ բէկը երկու թուրքի հետ եղն են տանում եղել մեր զիւղից, որտեղ այդ եղները գնել էին: Խնութի սրիկաները, զիւղերը նկատելով այդ բանը և չճանաչելով, որ տանողը Խամօ բէկն է, կամենում են օգուտել հանգամանքից և խլել թուրքերից եղներն. այդպիսի անպիտան մարդիկ ամեն զիւղում էլ, թէ հայ, թէ թուրք շատ կան, և հարկաւոր է որ պատժեն. Խամօ բէկն էլ, զիտէք էլի, թուրքի բէկ է. յիմարը, փոխանակ ասելու՝ «համեցէք տարէք, միայն մարդասպանութիւն չլինի», աղլոր-աղլոր է լինում: Կռիւ է ընկնում, երկու կողմից էլ հրացաններ են պարպում, և երկու մարդ սպանւում է:

Ալի Կուլի խանը այս բանը այնպէս հանգիստ և անվրդով էր պատմում, որ չէր կարելի կարծել անգամ, որ այս պատմութիւնը լիովին նա և իր ընկերներն են հնարել:

Նորա պատմութեան ժամանակ ակնյայտնի երևում էր, որ նա շատ բարձր է այդպիսի դէպքերին ազդային նշանակութիւն տալուց և միակերպ կշտամբումէ երկու սպանւածներին: Նոյնպէս և նոյն ձևերով պատմում էին անցքը և Մուրթուզալի խանը, Հիւսէին Սուլթանը և Ռուստամ բէկը. իսկ Մահմադ բէկը, զարմացած, ականջ էր դնում, հաւատացնելով, որ առաջին անգամն էր լսում այդ դէպքի մասին:

—Ե՛, արժէ, եղբայր, այդպէս բաներով հետաքրքրւել, գնանք մի «խրիբիկա» խաղանք, միջամտեց մի հայ բժիշկ: Իսկ մի հայ

բժիշկ, երկու փաստաբան և երկու աստիճանաւոր նոյնպէս Ֆլէգմով, ինչպէս պատմողները, լսում էին նոր դէպքի մասին:

Այս խօսակցութիւնը լինում էր բարձր: Բայց ծածուկ զրոյց ների մէջ վերոյիշեալ թուրքերն այն կարծիքն էին յայտնում, որ անյարմար է հրիտաւորդ և անփորձ մարդկանց պրիստաւ նշանակել և որ իրենք համոզւած են, որ եթէ մի այլ պրիստաւ լինէր Խնութում, այդպիսի դէպք չէր պատահի:

— Գիտէք, յանկարծ ծածուկ խօսակցութիւնները վեհութեամբ բաց արաւ Մուրթուզալի խանը, այդ պրիստաւի մասին եւ լսել եմ Վլադիմիր Վլադիմիրովիչից, որ դա մի շատ բարի, ճշդապահ և անկեղծ մարդ է:

— Խան, ոչ ոք չի ուրանում, որ այդ պրիստաւը լաւ մարդ է, պատասխանեց Հուսէին Սուլթանը, այլ ասում ենք, որ նա զեռ շատ անփորձ է, հետեւապէս անկարող է այդպիսի մի փափուկ պաշտօն վարել:

— Ի հարկ է, միջամտեց՛մի աստիճանաւոր:

— Այո՛, այսպիսի բաներ..., կիսահոգոց քաշելով՝ վերջացրեց խօսակցութիւնը մի հայ փաստաբան և հրաւիրեց բոլորին դէպի թղթասեղանը:

Խ Ր Ա Խ Ո Յ Ս

ՀՈՆԳՓԵՀՀՕ-ից՝—ԱԼԷՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆԻ

Օ', մի' ասիր, յոյսդ կըտրած,
«Կեանքն է երազ». թող լռեն
Սցդ տրտունջներ. միայն թմրած,
Երկնոս ոգիք կեանք չունեն:

Ո՛չ. մեր կեանքը տեսիլ չէ լոկ,
Թէպէտ ունի և՛ վախճան.
Մեր բաժինը—խինդ չէ անհոգ,
Ո՛չ էլ վիշտ կամ դերեղման:

Եւ ոչ հոգւոյ համար Ասուած—
Տիեզերքի Արարող—
Խոր անցեալում մարդուն ասաց.
«Հոգ էիր և դառնաս հող»:

Հանիր մոքից մահ և դադաղ,
Ճակատագիր ու սև բաղդ.
Մի լինիր դառն—անխօս մատաղ,
Հերոս եղիր քաջալաղթ:

Անշարժ, անգործ մի' երազիր
Գալիք օրեր ըղձալի.

Եւ ոյժերըդ զուր մի՛ թաղիր
Սառն աճիւնում անցեալի:

Ոյժիդ համար այդ աճիւնում
Զըկան երկնից սուրբ կայծեր.
Գործիր սիրով դու ներկայում,
Եւ փայփայիր կեանքի սէր:

Թո՛ղ քո գործից մի հետք մընայ.
Գուցէ, նորից ոյժ առած՝
Այդ թարմ հետքով առաջ գընայ
Քո եղբայրը մոլորւած...

Գուցէ, եռուն ծովում կեանքի
Զեռքըդ ամուր ոյժ պահած՝
Առաջն առնէ շատ փորձանքի,
Մահից փրկէ շատ մարդկանց:

Կեանքը գործ է և ոչ—երազ,
Գործ սեփական և հանուր.
Գործիր ազատ, չը վախենաս,
Գործիր ազնիւ ու մաքուր:

Ազնիւ գործն է—մեր սուրբ դրօշակ!
Պահիր կրծքում վառ, անշէջ
Ոգի, եռանդ, կեանքի կըրակ...
Եւ միշտ յառաջ կեանքի մէջ!

ԲԱՔԻԱՅ ՇՐՋԱՆԻ ՆԱԽԹԱՅԻՆ ԳՈՐԾԸ

Բաքւայ նաւթային շրջանի և նաւթային գործի մասին Մուրճի 1891 թւականի համարներում (№ № 7—8, 9, 10, 11) տպւած էր պ. Գալուստ Գիւլպէնկեանի մի լնդարձակ ուսումնասիրութիւնը, որին յղում ենք մեր ընթերցողներին, եթէ կը կամենան Բաքւի նաւթի սկզբնաւորութեան և դրութեան հետ մինչև 1890 թւականը ծանօթանալ: Գորանից ղէս Մուրճի յաջորդ տարիներում տպւում էին թղթակցութիւններ նաւթի գործի ընթացքի մասին: Ներկայովս մեր ընթերցողների ձեռքը կը տանք մի սիստեմական քաղաածք այն հարուստ ստատիստիկական նիւթերից, որ պարունակւած են «Նաւթագործարանատէրերի ժողովի Խորհուրդ» կոչւած հաստատութեան այս տարւայ հրատարակութեան մէջ, որ կազմում է աւելի քան 300 մեծագիր երեսներ ¹⁾: Այս անգամ մենք առաջ ենք բերում այն ամբողջ ստատիստիկական նիւթը, որ վերաբերում է հորերից սև նաւթ արտադրելու գործին: Թւերը վերաբերում են մանաւանդ 1895 թւականին, բայց գրեթէ ամեն խնդրի մասին բերւած են թւեր նաև նախորդ տարիների համար, եւ գնալով մինչև 1889 թւականը: Կարող ենք աւելցնել որ առաջ բերւած բոլոր թւերը մեծ խնամքով են սրբադրւած, այնպէս որ կարող են ծառայել բնագրի տեղ. աւելի մեծ պարզութեան համար գրքի մէջ զանազան տեղ զանաւած թւերը հաւաքել ենք միասին:

¹⁾ Советъ съѣзда нефтепромышленниковъ. Обзоръ Бакинскоѣ нефтяной промышленности за 1895 г. и свѣденія о нефтяной промышленности въ Грозномъ, Кубанской области, Америкѣ и Австро-Венгрии. Съ приложеніемъ 6-ти графическихъ таблицъ и карты. Баку, тип. Ароръ. 1896.

Հանքատէր Ֆիրմաներ: 1885 թ. վերջը նաւթային գործով պարտաւում Ֆիրմաների թիւն էր 81 (տարւայ սկզբում 88 էր):

Այդ 81 Ֆիրմաներից 74 Ֆիրմաներ նաւթ էին արտադրում, 4-ը ղեռ չէին սկսել արտադրելը, իսկ 3 Ֆիրմաներ անդործ էին մնացել:

Յիշեալ 81 Ֆիրմաներէ ունէին ընդամէնը 113 հանք (պրոմիս), որոնցից Բալախանու հրապարակում 32, Սաբունչիում 56, Ռոմանում 17 և Բիբի-Էյբաթում 8 հանք:

Գործող 74 Ֆիրմաներից 35-ը սկսել են արդիւնաբերութիւնը 1889 թւականից և կամ աւելի վաղ ժամանակից. 9-ը 1890-ից, 14-ը 1892 թ-ից. մնացածները աւելի նոր ժամանակից:

Նաւթահորերի թիւը: Այդ 74 Ֆիրմաները ունեցել են 604 գործող հորեր, որոնցից ստացել են 1895 թւականի 377.426.620 փութ հում (սե) նաւթ: Դոցանից Ե. Խաղուլասեւի 2 հորերից մէկը՝ Ֆոնտան խփելով աւելց 37 միլիոն 600.000 փութ: Նաւթ աւած հորերի թիւը, ասացինք, եղել է 1895 թ-ին 604. համեմատութեան համար աւելցնենք որ նաւթ աւած հորերի թիւը եղել է 1894-ին—532, 1893-ին—458, 1892-ին—448, 1891-ին—458, 1890-ին—356, 1889-ին—278 հոր: (Աւելորդ չէ ճիշատակելը, որ 1892 և 1893 թւականներին նաւթի զինը շատ ընկած էր):

Իսկ ընդամէնը ամեն կարգի հորերի թիւը եղել է 899 Աղշերոնեան թերակղզու վրայ, որոնցից 1895 թ-ի վերջում 145-ը նոր փորւում էին, 181-ը անգործ էին, 12-ը մաքրւում էին, 35-ը նորոգւում էին, 39 ը աւելի խոր էին դարձնւում, 4-ը—փորձի շրջանում էին. այնպէս որ 899-ից 1895 թւականի վերջում դործող հորեր կային 483 հատ. իսկ տարւայ մէջ գործել էին, որպէս տեսանք, 604 հոր:

Ստացւած նաւթի քանակութիւնը: Յիշեալ 377.426.620 փ. նաւթից Բալախանու հրապարակում արտադրւեց 67.558.297 փ. (230 հորից), Սաբունչու հրապարակում 151.331.605 փ. (281 հորից), Ռոմանում 111.408.645 փ. (62 հորից), Բիբի-Էյբաթեան հրապարակում 47.128.073 փութ (31 հորից):

Ընդամէնը 1895 թ-ին ստացւեց 79.875.599 փութ աւելի քան 1895 թւականին:

Ի նկատի ունենալով որ ստացւած նաւթի 50/0-ի չափ նաւթ մնաւում է վառելիքի և անխառնափախ կորուստի վրայ, մանաւանդ ֆոնտան խփելիս, կը ստանանք որ Այշերոնեան թերակղզին 1895 թւականին տւել է խկապէս 396 միլլիոն փութ նաւթ, որից որպէս ասացինք, ազատ ծախու համար մնացել է 377.426.620 փութ:

Փոնտանով ստացւած նաւթը: Նաւթը ստացւում է հորերից կամ դուրս կրելով (тартање) և կամ՝ նա խփում է ֆոնտանով (շաարւան): Ֆոնտանը խփելիս՝ շատ անհաւասար է ստացւում նաւթը. երբեմն ֆոնտանը խփում է ամիսը 2—3 միլլիոն փութ, երբեմն 15—20 միլլիոն փութ մի հորից: Նոր հորեր, պիտի տեսնենք, փորել էին 1895 թւականին 155 հատ. արդ, դոցանից մի միայն 16 հոր խփեցին ֆոնտաններ, որոնք միասին տւին 82.410.000 փութ նաւթ: Վերը յիշած 16 ֆոնտաններից մէկը, Ն. Ասադուլլաւինը (Ռոմանում) տւեց 37.689.000 փութ. ասպա կասպեան-Սևծովեան Ընկերութեան մի ֆոնտանը տւեց 17.480.000 փութ, Մանթաշեան և Ընկեր. մի ֆոնտանը (Ռոմանում) տւեց 5.896.000 փ., Ալ. Մանթաշեանի մի հորը (Ռոման.) 5.330.000 փ., Մաղլիկ ընկերութեան ֆոնտանը (Սաբունչիում)—4.369.000 փ., կասպեան ընկերութ. ֆոնտանը (Ռոմանում) տւեց 2.150.000 փ., Նիբաւ և Ընկ. ֆոնտանը —2.028 000 փութ: Բոլոր մնացած 9 ֆոնտաններից ամեն մէկը տւեց 2 միլ. փութից պակաս, իջնելով մինչև 124.000 փութի:

Ամենանշանաւոր ֆոնտանը յիշեալ Ն. Ասադուլաւինն էր, որը խփեց 19 յունւարից սկսած մինչև 15 մարտի և տւեց 37.6 միլլիոն փութ: Իսկ ընդամենը բոլոր գործող հորերից 1895 թ-ին ֆոնտանով ստացւեց 112.797.000 փութ նաւթ (51 միլլիոն փութով ասելի քան 1894 թ-ին): Ֆոնտանով ստացած նաւթը այդ թ-ին կազմում էր ուրեմն ընդհանուր արտադրութեան 29.70/0-ը:

Ֆոնտանով նաւթ ստացւեց Սաբունչիում, Ռոմանում և Բիբլի-Ելքաթում, մինչդեռ Բալախանու հրապարակում ֆոնտան չխփեց:

Ֆոնտան խփած հորերը ունէին խորութիւն 139 սաժէնից ամենապակասը մինչև 205 սաժէն ամենաշատը՝ (միջին հաշւով 170.4 սաժէն). մինչդեռ օրինակ 1892 թւականի ֆոնտանները ունէին առնւազն 125 և առաւաւելն 164 սաժէն:

Ֆոնտանով ամեն մէկը 2 միլլիոն փութից աւելի նաւթ աւին 1895 թւականին 13 հորեր. այլ Ֆոնտանները աւին 2 միլլիոն փութից պակաս ամեն մէկը:

Քարշելով (тарташе) նաւթ ստացւեց 264.₆ միլլիոն փութ (1894-ին—235.₇ միլլիոն, 1893-ին—215.₅, 1892-ին, խոլերացի տարին—210.₈, 1890-ին—176.₆, 1889-ին—149.₇, միլ. փութ):

Մինչդեռ Ֆոնտանները շատ անհաւասար կերպով են գործում տարւոյ զանազան ամիսներին, դորա հակառակ քարշելով ստացւած նաւթը բաւական հաւասար է տարւոյ զանազան ամիսներում. օրինակ, քարշելով ստացւած 264.₆ միլ. փութ նաւթից ստացւած է կղել ամենաքիչը փետրւարին՝ 20.₄ միլլիոն փութ և ամենաշատը հոկտեմբերին՝ 23 միլ. փութ. Գնացած ամիսներից ամեն միում ստացւել է այդ երկու թւերի միջերքում (-0.₉, 21, 21.₆, 22, 22.₉ միլլիոն փ. և այլն):

Ահա թւեր, որոնք ցոյց են տալիս թէ որ տարում ինչքան հոր է սկսել փորւել:

1890 թ.—157, 1891-ին—147, 1892-ին—59, 1893-ին—60, 1894-ին—102, 1895-ին—155:

Վերջին երկու տարիներում նոր հորեր փորելու ձգտումը շատ աճեց շնորհիւ նաւթի գնի բարձրանալուն. գնի բարձրանալը սկսւեց 1893 թւականի վերջերքից:

Նաւթահորերի տեղերը—Բալախանի, Սալուլնի, Ռոման, Բիբի-Էյրաթ: Որպէս տեսանք՝ թէ Ֆոնտաններով և թէ քարշելով ստացւած էր Բաքւոյ նաւթային շրջանում 377.₄ միլ. 1) փութ: Գորանից Բալախանու և Սաբունչու հրապարակներում ստացւել էր 58⁰/₀, Ռոմանու և Բիբի-Էյրաթի հրապարակներում 42⁰/₀: Նկատելու է որ Ռոմանում նաւթ սկսել է ստացւել միայն 1890 թւականից (1¹/₂ միլլիոն փութ, մինչդեռ նոյն այդտեղ 1895 թ ին ստացւեց 111.₄ միլլիոն փութ). Բիբի-Էյրաթում նաւթ ստացւում էր աւելի առաջ, բայց միայն համեմատապէս նւազ քանակութեամբ, այն է 1889-ին 17.₇ միլ. փութ, մինչդեռ 1895 թ-ին ստացւեց 47.₁ միլ. փութ: Այսպիսով այդ երկու հրապարակներում, մանաւանդ

1) Աւսինքն 3⁶/₁₀ միլլիոն որ նույն է թէ 37 միլլիոն 600.000 փութ:

Ռոմանում, նաւթի արտադրութիւնը վերջին վեց տարիները հակադասան քայլեր է արել: Գոցա հակառակ Բալխանու և Սաբունչու հրապարակներում նաւթի արտադրութիւնը այդպիսի փոփոխութիւններ չի կրել. օրինակ Բալխանում 1889-ին ստացւեց 68.₉ միլ. փութ, 1893-ին (175 հորից) 57.₈ միլ. փ., 1895-ին (230 հորից)—67.₅ միլ. փութ: Սաբունչիում 1889-ին ստացւեց 105.₅ միլ., 1890-ին—143.₃ միլ., 1893-ին (224 հորից)—146.₂ միլ., 1895-ին (281 հորից) 151.₃ միլ. փութ:

Հորերի թիւը բոլոր չորս հրապարակներում աւելացել է այսպէս. 1889 թ-ին 278 հոր, 1890-ին—356 հոր, 1891-ին—458 հոր, 1892 թ-ին կար 448 հոր, 1893-ին—458 հոր, 1894-ին—532 հոր, 1895-ին—604 հոր:

Հորերի զործելու տեսողութիւնը: Նաւթ տաճ հորերի թիւը¹⁾, որպէս ասացինք, 604 էր 1895 թ-ին: Սակայն բոլորը էինզործում մեքողջ տարին: Ամբողջ 12 ամիս զործեցին միայն 295 հոր. 42-ը զործեցին 11 ամիս, 31-ը—11 ամիս, 29-ը—9 ամիս, 33-ը—8 ամիս, 27-ը—7 ամիս, 28-ը—6 ամիս. մնացածները զործեցին աւելի քիչ ժամանակ. օրինակ 27 հոր զործեցին միայն մի ամիս:

Հորերի լոյզերի (արուբա) լայնութիւնը (տրամագիծը, դիամետր) տարբեր է, սխաժ 6"-ից ²⁾ մինչև 24". բայց սովորականը (442 հորերինը) 10—12—14—16 դիւյիմ է. միայն 54 հորերի լոյզերը ունին 6-ից մինչև 10 դիւյիմ, և միայն 5 հորերի լոյզերը 20—24 դիւյիմ տրամագիծ:

Հորերի խորութիւնը: Յայտնի է, որ նաւթահորերը քանի գնում՝ այնքան աւելի մեծ խորութիւն են պահանջում նաւթ տալու համար: 1895 թւականին զործած 604 հորերը ունէին խորութիւն միջին հաշուով 121.₉₇ սաժէն: (1890 թւականին հորերի միջին խորութիւնն էր 94.₇ սաժէն): Բայց այդ միջին խորութիւնը զանազան հրապարակներում տարբեր է. Բալխանու հորերի միջին խորութիւնն է 98.₃₈ սաժէն, Սաբունչիում 131.₂₄ սաժէն, Ռոմանում 154.₆₉ սաժէն, Բիբի-Էյբաթում 147.₆ սաժէն:

¹⁾ Որովհետև կան հորեր, որոնք անզործ էին մնացել ամբողջ տարի:

²⁾ " Նշանը նշանակում է դիւյիմ. մի վերջովում $1\frac{3}{4}$ դիւյիմ է ($22\frac{3}{4}/16$ վերջով=1 մէտր).

Ահա մանրամասնութիւն այդ մասին.

Մինչև 50 սաժէն խորութիւն ունեցող կային	19 հոր
50—75 սաժէն խորութ. ունեցող կային	53 »
75—100 » » » »	96 »
100—110 » » » »	55 »
110—120 » » » »	57 »
120—130 » » » »	69 »
130—140 » » » »	57 »
140—150 » » » »	48 »
150—160 » » » »	82 »
160-ից աւելի » » » »	68 »

Որպէս տեսնում ենք, մինչև 110 սաժէն խորութիւն ունեցող հորերի թիւն էր 223, իսկ 110 սաժէնից աւելի խորութիւն ունեցող կային 381 հոր. մինչդեռ 1890 թւականին, այն ժամանակ զոյութիւն ունեցած 356 հորերից մեծագոյն մասը, այն է 245 հոր ունէին խորութիւն մինչ 110 սաժէն, իսկ աւելի խորութիւն ունեցող կային միայն 111 հոր:

Ամենից շատ նաւթ տւեցին 1895 թւականին այն հորերը, որոնց խորութիւնը 170 սաժէնից անց էր: Իսկ ամբողջ քանակութիւնից այն հորերը, որոնք ունէին 110 սաժէնից աւելի, ընդ 4 անգամ աւելի նաւթ տւին, քան այն հորերը, որոնք 110 սաժէնից պակաս խորութիւն ունէին:

Նաւթահորերի տէրերը: Հորերը, իրենց արտադրութեան համեմատ, բաժանւում են 3 կատեգորիաների. առաջին կատեգորիային պատկանում են այն հորերը, որոնք տարեկան մի միլլիոնից աւելի են տալիս. երկրորդ կատեգորիային են հաշւում այն հորերը, որոնք տալիս են 1 միլլիոնից մինչև 300.000 փութ. իսկ երրորդին են հաշւում նոքա, որոնք 300.000 փութից պակաս են տալիս տարեկան:

1895 թւականին հորեր ունէին¹⁾

¹⁾ Մասնաւոր հետաքրքրութիւն կարող է ներկայացնել տէրերի այդ զութիւնը. մեծ մասամբ այդ իմացում է ազգանուններից և ֆիրմաների անուններից, որոնք մեծագոյն մասամբ հայկական են. աւելորդ չէ լինելը

I կարգի

1. Ասադուլլահե, Շ.	2 հոր	40.7	միլլիոն	փուլթ.
2. Մանթաշեան, Ալ.	2 »	6.6	»	»
3. Զուբալով	6 »	10.6	»	»
4. Պուլով (կամ Պուլովեան)	1 »	1.7	»	»
5. «Արարատ» ընկ.	3 »	5	»	»
6. Ռըլսկի	6 »	9.4	»	»
7. «Ասողիկ» ընկ.	6 »	9.4	»	»
8. «Կասպ.-Սևծով.» ընկ.	36 »	42.8	»	»
9. «Նեւթ» ընկ.	2 »	2.2	»	»

II կարգի

10. Գր-Բուր Բրուհո	6 »	5.9	»	»
11. Թաղիս	11 »	10.4	»	»
12. «Արշալոյս II» ընկ.	1 »	0.8	»	»
13. Արաճեան և ընկ.	18 »	14.4	»	»
14. Մանթաշեան և ընկ.	33 »	24.1	»	»
15. «Սիւնիք» ընկ.	3 »	2.2	»	»
16. «Մասիս» ընկ.	13 »	9.3	»	»
17. Կասպեան ընկ.	30 »	20.8	»	»
18. Շաղիգանեան	1 »	0.6	»	»
19. Թումանյան և ընկ.	11 »	7.3	»	»
20. Ադամեան, Ա.	9 »	5.9	»	»
21. Մելիքեան, Համբ.	9 »	6.6	»	»
22. Մնացականեան և ընկ.	2 »	1.2	»	»
23. Անտոնեան	3 »	1.8	»	»
24. «Արշալոյս I» ընկ.	3 »	1.8	»	»
25. Ղորղանեան եղբ.	2 »	1.1	»	»
26. Շիրաէ և ընկ.	16 »	9.3	»	»
27. «Կաւկազ» ընկ.	9 »	5.1	»	»

որ խոշորագոյն ընկերութիւններէց Տճ-ըդում չիշածը հաշերինն է, որ պէս մի քանի ուրիշները անորոշ անուններով Տճ 3 անունը հաշ-կաթովիկի է: Տճ Տճ 1 և 11, 76 և 78-ում չիշած անունները թուրքերի են: Տճ 40 (Նորէլ եղբ.) չեղացիք են:

28. Միրզոյեան եղբ. և ընկ.	29 հոր	15.6	միլլիոն	փուլթ
29. Աղամեան, Գ.	3 »	1.6	»	»
30. Գազին և Տ.-Յակոբեան Գ.	3 »	1.5	»	»
31. Թումանեանց եղբ.	1 »	0.5	»	»
32. «Արաբա» ընկ.	3 »	1.4	»	»
33. «Արմաւիր»	7 »	3.4	»	»
34. Աւազեան	2 »	0.9	»	»
35. Փիթոյեան	1 »	0.4	»	»
36. Տէր-Յարութիւնեան	3 »	1.2	»	»
37. Տէր-Յակոբեան, Յովհ.	13 »	5.2	»	»
38. Վարդանեան եղբ.	5 »	1.9	»	»
39. «Բաքուացի աւթայ» ընկ.	42 »	15.6	»	»
40. Նորէլ եղբ. ընկ.	80 »	29.4	»	»
41. Թիւնիբէգեան եղբ.	3 »	1	»	»
42. Կրասիլնիկեան, Ն.	5 »	1.7	»	»
43. Կրասիլնիկեան եղբ.	4 »	1.3	»	»
44. «Սոուլասանիկի» ընկ.	5 »	1.7	»	»
45. «Բալթասեան» ընկ.	7 »	2.1	»	»
46. Բենկենդորֆ և ընկ.	24 »	7.2	»	»

III կարգի

47. Աբեանց և ընկ.	3 »	0.8	»	»
48. Ծատուրեան, Առ.	15 »	4.1	»	»
49. Կրասիլնիկեան եղբ.	2 »	0.5	»	»
50. Լազարեան եղբ.	4 »	1	»	»
51. Ծովիւնեան և ընկ.	12 »	3.2	»	»
52. Գաղարինա Ա. Պ.	3 »	0.7	»	»
53. Գաղարինա Ա. Գ.	13 »	3.4	»	»
54. Լիւնսդեան	20 »	5	»	»
55. «Գողթան» ընկ.	5 »	1.1	»	»
56. «Վասպուրական» ընկ.	2 »	0.4	»	»
57. Միրզա-Աւազեան և ընկ.	2 »	0.4	»	»
58. Մելիքեան Աղա-բէկ	1 »	0.18	»	»
59. Տերնտիւկ	1 »	0.18	»	»
60. Շումախեր	1 »	0.16	»	»

61. Նաբաթեան եղբ.	4 հող	0.6	միլիոն	փութ
62. «Լեռնային ընկ.»	4 »	0.58	»	»
63. Ամիլախարի	3 »	0.4	»	»
64. Միրզա-Աւագեան և Կա- րաբէգեան	2 »	0.2	»	»
65. Տարուսով	3 »	0.3	»	»
66. Մալխազեան և ընկ.	7 »	0.7	»	»
67. «Արմենիա» և ընկ.	2 »	0.19	»	»
68. Ռիշար	2 »	0.16	»	»
69. «Գրիգորիս» ընկ.	2 »	0.12	»	»
70. Յակոբեան Ասլան	2 »	0.1	»	»
71. Թումայեան ժառանգներ Գ. Գ.	2 »	0.1	»	»
72. Վելիեւ	1 »	0.05	»	»
73. Տապկէն	1 »	0.08	»	»
74. Ալեկսէեւ և ընկ.	1 »	1.02	»	»

IV կարգի

(հորեր, որոնք չէին գործում)

75. Կիրշկո	2 »
76. Քեաղիմով և ընկ.	1 »
77. Կրասիլնիկ. եղբ. և ընկ.	2 »
78. Նաղիեւ Մուսա	2 »
79. «Նոր-Մասիս»	1 »
80. «Ռուսաց ընկ.»	1 »
81. «Աւան» ընկ.	1 »

Հին հորերը սպառուում են: Հին հորերը տարեցտարի աւելի ու աւելի պակաս նաւթ են տալիս: Ահա թւերը.

1889 թւականին հորեր փորեւեցին 46 հատ. այդ 46 հոր հորերը տւին նոյն 1889 թ-ին 29 միլ. փ. նաւթ, ¹⁾ 1890-ին 51.7

¹⁾ Եթէ առաջին տարին նոր հորերը սովորաբար աւելի պակաս նաւթ են տալիս, հարկաւ այդ նրանից է, որ այդ հորերը առաջին տարում սկսում են ալն ամսից միալն նաւթ արտադրել, երբ նոցա փորելը վերջացրած է լինում, հետեւաբար ոչ տարւաչ սկզբից:

միլ., բայց արդէն 1891 թ-ին 28.⁸ միլ., 1892 թ-ին 14.⁷, 1893 թ-ին 14.³, 1894 թ-ին 9.¹, 1895 թ-ին միայն 5.² միլ. փ. հում նաւթ:

1890 թւականին գործել սկսած 81 նոր հորերը աւին նոյն 1890 թ-ին 29.⁵ միլ. փ., 1891-ին 66.⁷, բայց արդէն 1892 թ-ին 40.⁸, 1893-ին 39.², 1894-ին 24.⁴, 1895 թ-ին 19.⁶ միլ. փ. հում նաւթ:

1891 թւականին նոր գործել սկսած 142 հորերը աւին նոյն 1891 թ-ին 78.⁵ միլ., 1892-ին 95.⁵ միլ., բայց արդէն 1893-ին 66.³ միլ., 1894-ին 51.⁸ միլ., 1895 թ-ին 43.⁶ միլ. փ. հում նաւթ:

1892 թ-ին 80 նոր հորերը նոյն տարում աւին 57 միլ., 1893 թ-ին 54.⁷ միլ., 1894 թ-ին 38.⁸ միլ., 1895 թ-ին 34.⁵ միլ. փ.:

1893 թ-ին 64 նոր հորերը աւին նոյն տարում 63.⁵ միլ., 1894 թ-ին 57.⁴, 1895 թ-ին 28.⁹ միլ. փ.:

1894 թ-ին 87 նոր հորերը աւին նոյն տարում 44.⁶ միլ., 1895 թ-ին նոյն հորերը աւին 74.⁶ միլ.

Կովկասեան հանքային մասի վարչութեան հաշի համաձայն 1888 թ-ին գործում էին ընդամէնը 227 հոր (հին թէ նոր միասին), որոնք այդ տարին աւին 166 միլ., 1895 թ-ին այդ հորերից մնացել էին 133 հոր, որոնք աւին միայն 36 միլ. փ.:

Հում նաւթի գները, նաւթի գները տարւայ ընթացքում չեն մնում միևնոյնը. բացի այդ, այլ և այլ տարիներ գները զգալի չափով տարբերւել են իրարից: 1891 թ-ին հում նաւթի միջին գինը արտադրութեան տեղում էր փութը 2.⁷ կոպ., ¹⁾ 1892 թ-ին 1.¹ կոպ., 1893-ին 1.³ կոպ., 1894-ին 3.¹ կոպ., 1895 թ-ին 6.⁵ կոպէկ:

Ըստ ամիսների 1891 թ-ի յունւարին և փետրւարին փութը 4 կոպէկ էր, մարտ—ապրիլ—մայիսին 3 կամ 3.⁵ կոպ., յունիսից մինչ սեպտեմբեր 2—2.⁷ կոպ., հոկտեմբերից մինչ դեկտեմբեր 1.⁴—1.⁶ կոպէկ:

¹⁾ Ապրիլին 2⁷/₁₀ կոպէկ:

Այդպէս ընկած դները շարունակեցին ամբողջ 1892 թւականի ընթացքում, երբ մայիսին և յունիսին 1892 թ. նա իջաւ մի կողէկից էլ ցած (0.7 կող.): Գրեթէ նոյն դները պահպանեցին նաև 1893 թւականին (միջին դին 1.4 կող.): 1894-ին սովաջն 2.1 կողէկով սկսելով՝ տարւայ վերջը բարձրացաւ մինչ 4.5 կող.: իսկ անցեալ 1895 թւականին ամենապակաս գինը (մարտ ամսին) 4.3 կող. էր, միջինը 6.5 կ., իսկ ամենաբարձրը (սեպտեմբ.) 9 կողէկ:

Գների այդքան բարձրանալու գլխաւոր պատճառը կերոսինի (մաքրած նաւթի) աճած պահանջն է արտասահմանում:

Նաւթանցքներ: Հանքատեղերից դէպի գործարանները (Սև քաղաքում, որ Բաքւին կից է և ուր այդ գործարաններում սև նաւթը զտում են և ստանում մաքրած նաւթ կամ կերոսին և այլ նաւթային արթիւնքներ) անց են կացրած 28 նաւթանցք լոյզերով (трудопрободы), որոնցից 22-ը ծառայում էին նաւթը անցկացնելու դէպի Սև քաղաքը, իսկ 6-ը ծառայում էին ծովի ջուր անցկացնելու շոքու կաթսաների համար: Այդ նաւթ—ու ջրանցքները, կազմում են 286 վերստ 419 սաժէն. իսկ ամէն մէկը առանձին ունի երկարութիւն առնւազն 7 վերստ, առաւաւելն 14 վերստ: Այդ նաւթանցքները մասնաւորների սեփականութիւն են:

Նաւթի ամբարներ: Հանքատեղերում շինւած կան ամբարներ՝ հողից, քարից, փայտից կամ երկաթից, բացօդեայ թէ փակ: Մեծ մասը (275 հատ) երկաթի են, ապա հողի բացօդեայ (175): Ամբարների ընդհանուր թիւն է 719, որոնք կարող են պարունակել 83.5 միլ. փ. հում նաւթ:

Սոքա այն գլխաւոր տեղեկութիւններն են, որ ամփոփւած են վերը յիշած հրատարակութեան առաջին մասի առաջի բաժնում (130 երես). առաջին մասի երկրորդ բաժնում տրւում են մանրամասն տեղեկութիւններ այն գործարանների մասին, որոնք նշանակւած են հում (սև) նաւթից այլ և այլ իւզեր պատրաստելու, որպիսիք են՝ լուսաւորութեան իւզեր, մեքենաներ իւզելու նիւթեր, բենզինային իւզեր և գուդրոն: Այդ գործարանների մասին ամփոփ և մանրամասն տեղեկութիւնները կը տրւին մի այլ անդամ:

ՎԱՅՐԻ ՍԷՐ

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ

Արի ինձ մօտ, սիրուն աղջիկ,
Առանձնանանք հեռու մի տեղ,
Վերև լինի աստղոտ երկինք,
Եւ լուսինը լողաց աջնտեղ:

Իսկ մենք նստած վրանի տակ,
Երգենք սիրուն, օտար մի երգ.
Ոչ մի խոստում իրար չտանք,
Դաւի մասին էլ չխորհնք:

Ո՛չ աստղերին բռնենք վկայ
Մեր յարատեւ սիրոյ համար,
Ո՛չ էլ մեր այս երկրի վերայ
Երգենք յաւէտ սիրել իրար:

Բաժանումը մեզնից հեռի՝
Սիրենք իրար,—անհոգ սիրենք.
Փող մեր սէրը լինի վայրի—
Սկիզբ ու վերջ էլ չիշենք:

ԳԻՒՂԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԸ ՀԻՄՆԱՅԻՆ ԵՐՐՈՂԱՅՈՒՄ

Տիկին ՄԱՅԻԿԻ ՖՐԻԲԵՐԳԻ Թարգմ. Գրիգոր Վանցեանի

(Շարունակութիւն ¹)

Հիմա երևի կը ցանկաք աւելի մօտ տեղեկութիւն ունենալ ալդ հիմ-
նարկութիւններէ կեանքի և ուսուցման մասին. ես կ'աշխատեմ իմ ուժի
ներածին չափ զորա մի պատկերը տալ:

Ժողովրդական կամ գիւղական համալսարանները լինում են գիւղե-
րում, իրանց չափով բնակարաններում. չափ անգամ սկսում են վարձու
բնակարանում, բայց շուտով ձեռք են բերում սեփականը: Գլխաւոր շի-
նութեան մէջ լինում են մի կամ երկու լսարան, մի մարզարան (Turnhaal),
գրադարան, ընթերցարան, մի մեծ ճաշարան և սովորաբար նաև տեսչի
բնակարանը: Ահրին չարկը, որպէս նաև կից շինութիւնները ուսանողների
հասարակ բնակարաններն են: Ամենագլխաւոր սկզբունքներից մինն է,
որ աշակերտները ոչ միայն տեսական գիտութիւններ ձեռք բերեն, այլ և
մի սիրուն ընտանեկան կեանք ձանաչեն և սիրեն ալգպէս ապրել, և զորա
համար էլ զոքա ապրում են համալսարանում, ամեն օր լաւաբերութիւն
ունին վարժապետների հետ. մանաւանդ տեսչի ընտանիքի, որի հետ և
ճաշում են ամենքը. իսկ ազատ ժամերը անցնում են կամ ընթերցարա-
նում և կամ հասարակաց դահլիճում:

Ամեն մի կուրսը տևում է վեց ամիս. սկսում է կամ ապրիլի մէկից
և կամ նոյեմբերի մէկից—տեղական պայմանների համեմատ: Ժամանակը
չափազանց արդիւնաւոր է գործադրում. օրական 5—8 դասախօսութիւն-
ներ են լինում. զորա հետ միասին նաև զանազան գործնական պարապ-

¹) Տես «Մուրճ» 1896 թ. № 7—8:

մունքներ, օրինակ, տղամարդոց համար փառագործութիւն, պարտիզպանութիւն, դիւղատնտեսութիւն, հաշւապահութիւն, նկարչութիւն և այլն. կանանց համար հիւսել, ձեւել, մի քանի համալսարաններում նաև խոհարարութիւն:—Ուսման առարկաներից երկուսը արդէն չիլել եմ՝ մալրենի լիզոն և պատմութիւնը. այս երկուսը անցնում են շատ հիմնովին. միայն պատմութեանը ամեն ձմեռ նւիրւում է 300 ժամ: Բայց դասաւանդման աչդ ճիւղը, բայց հայրենի և ընդհանուր պատմութիւնից, պարունակում է նաև դիցաբանութիւն, տէրութեան սահմանադրութիւնը, կառավարչութիւնը, վիճակագրութիւն, օրէնսդրութիւն և հասարակական զրտութիւններ: Բնական գիտութիւններից չիլելու արժանի են կենդանաբանութիւն, ֆիզիկա, քիմիա, առողջապահութիւն, մաթեմատիկա և, հասկանալի է, նաև աշխարհադրութիւն, որ պատմական և բնական գիտութիւնների միջին կապն է: Մի քանի համալսարաններում դոցա վերաջ աւելանում են նաև աստղաբաշխութիւն, երկրաբանութիւն և հանքաբանութիւն: Ազհովի (Իւթլանդ) զպրոցում, որ աւելի լսոն ծրագիր և մի ակնաւոր տեսչուհի՝ (Ալուդիգ Շուդեր) ունի՝ նաև անգլիերէն:

Բայց արդեօք աղքատը շատ չէ, և աղքատ առարկաների աւանդումից չի ծագում արդեօք մի վերանցիկ բաղմագիտութիւն թերատ և անհաստատ տեղեկութիւններով: Ի հարկէ ոչ! դա վաղուց սպացուցած է փորձով: Պէտք է ի նկատի ունենալ, որ ուսանողները մարմնական աշխատանքի արդէն սովոր են և հոգեկան աշխատանքի էլ աւելի երկար են դիմանում քան սովորական համաբարանի ուսանողները. նոցա ուղեղը չոգնած և անդօրացած չէ. նոցա հոգեկան ուժերը թարմ և հանդիստ են պահած, ուստի և դարմանալի է նոցա տոկունութեան չափն: Աչդ հասարակ մարդկանց զուրիւր լի է մի շարք հարցերով և որովհետև հիմա առիթ ունին պատասխան ստանալու, նոքա սիրտը բարենեւրով են հանդիպում գորան և մի հիանալի փափագ ցուց տալիս ամեն բան սովորելու:

Աչդտեղ աւանդելու կերպն էլ բոլորովին ալ է քան ուշալ և կլասիք գիմնագիտներում, քան նոն իսկ համալսարանում: Աչդ զպրոցներում շատ աւելորդ կողմնակի և երկրորդական բաներ են աւանդու, որոնք կեանքի և բնաւորութեան կազմութեան համար ոչ մի նշանակութիւն չունին: Դոքա միայն հարցաքննութեան համար դուրսութիւն ունին, և չնայելով մոռացում են. զորանով, իհարկէ, ուսումը կորցնում է իւր թարմութիւնն ու բնականութիւնը: Ժողովրդական համալսարանը ոչ մի բան չունի հարցաքննութեան համար սովորեցնելու: Ուսման վերջը նորա աշակերտները մինչև անգամ ոչ մի վկայական չեն ստանում: Աչդտեղ ամեն բան կեանքի համար է հաշւած, միմիայն կեանքին ծառայելու, նորան պիտանի լինելու համար: Նոցա ձգտումն է միտքը զարգացնել, դատողութիւնը սրել, սիրտը բարւոքել, ներքին մարդը դաստիարակել, մի

խօսքով նորանից բարոյական, ազնիւ անհատ պատրաստել: Պատմութեան դասերին, օրինակ, շատ քիչ են պտտում պատերազմների, նոցա հերոսների, և տարեթւերի շուրջը, դոցա փոխարէն ուշադրութեան են առնում պատճառը և հետեանքը, պատմական երեւոյթների հիմնաթիւը, զանազան ժամանակաշրջանները միմեանց հետ համեմատում և կանգ են առնում աշխարհի անձնաւորութիւնների վերաջ, որոնք մեծութեան, ճշմարտութեան և վսեմութեան զգացում կարող են զարթեցնել լսողների մէջ և օրինակ դառնալ ապագայ դործունէութեան: Դասախօսութեանը միշտ հետեւում է կրկնութիւնը, ալդտեղ վարժապետը առիթ ունի փորձելու աշակերտների հասկացածը, իսկ վերջինը պարզաբանութիւն ստանալու աշխարհերի մասին, որոնք մութ են մնացել նորա համար: Այդ համալսարաններում մեծ դեր է կատարում երգելը, ոչ միայն բաղձաձայն, այլ և միաձայն երգելը, ամեն մի դաս սկսւում և վերջանում է երգով, ամեն մի երգարան ունի, ալդ երգարանի համար հիւսիսի լաւագոյն տաղանդները չեն խնայել իրանց ստեղծագործութեան զոհարները նւիրելու:

Ամեն անգամ աշխարհի երգ է ընտրւում, որ մօտիկ առնչութիւն ունի աւանդելի դասախօսութեան հետ: Իբրեւ երախտագիտութեան մի արտալատութիւն Վրոնզելիզին, լաճախ երգում են նորա ամենասիրելի երգերից մինը, որ շատ լաւ է արտալատում ալդ հիմնարկութիւնների զաղափարը, դորա առաջին տունը մօտաւորապէս հետեւալն է.

«Արեւի լուսի պէս, որ ծագիկներ է բուցնում,

«Ուսումը ծագիկեցնում է ժողովրդին,

«Նա աւելի արժէքաւոր է քան անարատ ոսկին,

«Նա ուսուցանում է քո ետը և քո Աստծուն ճանաչել».

Շաբաթաւ ալ մէջ մի քանի երեկոյ ընդհանուր վիճաբանութեան է նւիրւում. դորանով աշակերտները սովորում են միմեանց հարցը թէ բաղձաթիւ տեսակետներից զիտել և թէ իրանց մտքերը պարզ ու մեկին արտալատել: Միեւնոյն ժամանակ նոքա վարժւում են ժողովը կառավարել և նորա գործերը վարել, որովհետև նոցանից են ընտրւում ատենապետն ու քարտուղարը: Յաճախ վիճաբանութեան նիւթ են ընտրում զանազան հումանիտական և բարոյական հարցեր, օրինակ, մարմնական աշխատանքի նշանակութիւնը, բարի և ընկերասէր չարաբերութեան նշանակութիւնը, ազատ ժամերի ամենալաւ դործագործութիւնը և ալն... Յաճախ բանակուելիւ են ընտրում աւելի դործական երեւոյթներ, գիւղատնտեսական և հասարակաց կեանքին վերաբերալ հարցեր: Ալդ երեկոյթները ահագին ազդեցութիւն են թողնում աշակերտների վերաջ, ամեն մինը իւր զիտեցածը պնդում է պարզ և համարձակ, որ բանակուելի կենդանութիւն և բաղձալողմանիութիւն է տալիս: Հարեան զիւղերից էլ սովորաբար կողմնակի ալցելուններ են լինում, որոնց ի հարկէ, ուրախութեամբ թող են

տալիս ներկայ լինելու վճերին: Այլ համալսարաններից շատերը մի-մի փոքրիկ լրագիր էլ են ունենում, որ խմբագրում են աշակերտները. աղտեղ զետեղում են նոքա իրանց լողածները, բանաստեղծութիւնները, հարցեր, պատասխաններ, որոնք բանակուի ժամանակ և կամ ընկերական երեկոթներին են կարդացում: Ես չիշեցի, որ աշխատում են կրօնա-բարոյական անհատներ կրթել. սրդ թնչպէս է աղտեղ կրօնի աւանդումը:

Ամեն առաօտ դասը սկսում է մի կարճ աղօթքով. կիւրակի օրերը սովորաբար մի քարոզ է լինում. տեղ-տեղ մեկնաբանում են նաև աւետարանից հատածներ. և այլքան.—կրօնի աւանդումը դասերի մէջ ոչ մի առանձին տեղ չի բռնում, ոչ մի ժամանակ չի խլում, նորա համար առանձին ժամեր չկան նշանակած:

Նրևի սա մի քիչ տարօրինակ կը թւի, որովհետեւ դորա հիմնադիրը ինքը կրօնաւոր էր և մինչև անգամ մի շատ բարեպաշտ անձնաւորութիւն. Գրունդելիզը ոչ մի ծիսակատարութիւն չէր ընդունում. նորա համար էր ասած. «տառը մեռցնում է, միայն հոգին է պահպանում կենդանի».—կարեորը կրօնի մասին շատախօսելը չէ, այլ կրօնի պահանջների համեմատ ապրելը. կրօնը պէտք է ոչ թէ շրթունքների վերաջ ունենալ, այլ սրտի մէջ. քրիստոնէական սէրը պիտի երևալ ամեն մի խօսքի, ամեն մի գործի մէջ. որպէս կարմիր թիւ նա պիտի անցնի կեանքի ամբողջ ընթացքում.—նորա հիմնական գաղափարն էր կրօնը դործնապէս մարմնացնել երիտասարդների սրտի մէջ առանց մանրամասն դասաւանդման եւ առանց շատախօսութեան կրօնի մասին ¹⁾:

Եւ այս հիանալի կերպով իրականացել է ժողովրդակ. համալսարանում, ուսանողների լարաբերութիւնը աչտեղ աչպէս մօտ, ինտիմ և եղբարական է, որ ամեն մի ալցելուի վերաջ ամենախորին տպաւորութիւն է թողնում: Նրբեմն ալք համալսարաններն են դալիս բթացած, կեանքից տառապած և իղէալն ու հաւատը կորցրած երիտասարդներ. և... հեռանում եմ վերականգնած հաւատով դէպի մարդկութիւնը. նոքա կեանք են մոտնում նոր լոյսերով ոգևորած: Մի երիտասարդ բանաստեղծ, որ դանիական գիւղական համալսարաններից մինում մի ամբողջ ձմեռ հիւր էր մնացել պնդում էր, որ նա իրան աղտեղ շատ լաւ էր զգում, որովհետեւ աչտեղ նորա ասելով «ազատ էր լուստեսութեան բացիլից»:

¹⁾ Հայաստանեայց եկեղեցու հաւատարմատարները թող լաւ լսեն և ի միտ առնեն այս խօսքերը. և վերջերս սունկի նման բազմացած հալաստածարանները, որոնք աւետարանի ազամանդալին ճշմարտութիւնները գերման կղերի սովիստութիւններից են ուզում քաղել, նոյն սովիստութիւնները ապագայում հալ ժողովրդին ծախելու համար, թող լաւ հասկանան այս խօսքերը:

Ազտեղ Գերմանիայում չափանի պրոֆեսոր տիկին Սոնիա Կոլպախ-սկին¹⁾ հիւր է եղել մի անգամ Նորեգիայի գիւղ. համալսարանում. որից լետոլ նա դոցա մասին ոգևորած լօղածներ գրեց «Вѣстникъ Европы» ամսաթերթում, որոնք մեծ հետաքրքրութեամբ էին կարդացուած։ Ն. Եթէ ինձ ներելի է իմ տպագրութիւնը չիշել, ապա ես աչնպիսի հաճելի տպագրութիւններն ոչ մի տեղ չեմ վաճել, որպէս Նորեգիայի և Շվեդիայի ժող. համալսարաններում։ Ազտեղ միջոցառողը աչնպէս առողջ և մաքուր է, նա աչնքան լի է սիրով և զարթութեամբ, որ մարդ ազամալ մտածում է. ազտեղ մարդ իսկապէս հասել է իդէալին։ —

Այդ սիրուն, բաղդաւոր համակեցութիւնը, հարկաւ, առաւելապէս կախած է վարժապետներից, ուստի մի քանի խօսք էլ նոցա մասին։ Նոցա թիւը ամեն տեղ նոնք չէ. հասարակ և փոքր հիմնարկութիւններում նոքա 3-4 են. վերեւ վիշած Ազնովի քնդարձակ ժողովրդ. համալսարանում նոքա 10-են. Երեւնի նաեւ 12. հասկանալի է, որ նոցա մէջ կանալք էլ կան, և դոքա կանանց հարցի ամենաջերմ և զօրեղ ճակատամարտիկներից են։ Վարժապետները առանց բացառութեան համալսարանականներ են, լաւնաճաւալ գիտութիւններով։ Առանձնապէս նոցանից պահանջուած է երկու ատկութիւն. առաջին՝ նոքա լաւ ծառայութեան պիտի լինին։ Գրունդգիլը մեծ ուշք էր դարձնում կենդանի խօսքի վերալ. գրքով կարդալը կամ թղթի վերալ գրածը չէ որ ոգևորում և արթնացնում է երիտասարդին, ալ ազատ խօսակցութիւնը, սրտի խորքից բղխած կենդանի բառերի ուժը։ — Զարտար վարժապետներն էլ, որ տարիներով տառեր են աւանդել, ամեն անգամ նախապատրաստում են դասախօսութիւնից առաջ։ Ն. դորա համար է, որ հիւսիսի լաւագոյն ճառաւոյնները գտնուած են ալք վարժապետների թւում։ Զառերի մէջ նոքա ներկաւոյնում են ոչ միայն կարեւոր տեղեկութիւնները, գիտութեան եղբակացութիւնները, ալ և որ կարեւորն է, իրանց անձնատրութիւնը։ — Մարդ զգում է, որ նոցա ոգևորուն սիրտը ամբողջովին մարմնանում է դասախօսութեան մէջ։ — Գորտ համար հայկաւոր է, որ մարդ ժողովրդին սիրել կարողանայ. և չէնց ալք է երկրորդ և ամենագլխաւոր պայմանը։ Գիրք, տեղ և հարստութիւն ձեռք բերելու համար չէ, որ մարդ ալքտեղ վարժապետ է լինում, ալ իդէալին ծառայելու, փալիալած գաղափարները իրացնելու, ժողովրդի բարիքին նպաստելու, նորան բարձրացնելու համար։ — Ն. բարեբաղդարար կան ալդոյիսիները որոնք համալսարանի ամբիւնը մերժում են գիւղացիներին ծառայելու համար։ Ալդալիսի մի անձն է

¹⁾ Խօսքը չափանի ուսու սիկնոջ մասին է, որ Ատոկհոլմում մաթեմատիկալի պրոֆեսոր էր. ալմ հանդուցեալ։

հռչակաւոր բնագէտ և գիւտերով լատինի Պատու լա Կուռը Դանէմարկում և տաղանդաւոր աստուածաբան Փրիտտֆֆեր Բուռնը Նորւեղիալանտ Լվ գէթ մի անգամ ալդ մարդկանց պատահել է, որպէս օրնիկակ ես, ան ժամանակ նա ամբողջ կեանքի համար մի անուշ տպաւորութիւն ունիւ— Հասկանալի է, թէ որքան աղնւացնող, առաջամուղ և թարմացուցիչ պիտի լինի ուսանողները համար նոցա հետ շարունակ լարաբնութիւն ունենալը Ալդ է պատճառը, որ աշակերտների համար ուսման ժամանակամիջոցը իրանց կեանքի ամենալաւ օրերն են: Նորքա երբէք չեն մոռանում ալդ անուշ ժամանակները և ուսումնարանից հեռանալուց չէտոջ էլ շարունակ կատ և լարաբնութիւն են պահպանում նորա հետ Աշակերտների թիւը տարեկան լինում է 40—100. նորքա լինում են սովորաբար 18—30 տարեկան, մեծ մասամբ գիւղացիները և արհեստաւորներ, երկուսեւից զաւակներից: Պատահում են նաեւ երբեմն վաճառականների և ծառայողների զատակներ: Միջոց ունեցողներից շատերը չեն բաւանում մի կուրսով և կըրկին զալիս են հետեւալ ձմեռն էլ լսելու Գասաւանդութիւնն էլ աչնպէս է կազմւած, որ երկու ձմեռ շարունակ նոյնը չի կարդացւում: Չքաւոր ծառաները և գիւղացիները թոշակ են ստանում հարուստներից հաւաքած դրամից: Գարձեալ եղբայրութեան մի իրական արտադրութիւն որ տիրում է ուսանողների մէջ, Կառավարութիւններն էլ բարեկամաբար են վերաբերւում ալդ հիմնարկութիւններին: 1892 թւի սահմանադրական ընդհարումից չէտոջ Գանիան կարդին նպաստներ է տալիս. չքաւոր աշակերտներին տարեկան 120.000 կրմա է բաժանւում որպէս թոշակ. նոյնպէս ուսման ծախսի մէկ երրորդը կառավարութիւնն է վճարում—Սկզբնւում կանանց և ալ մարդկանց կուրսերը ջուկ էին. հիմա շատերը նոցա միացրել են, իսկ Ֆինլանդիալում սկզբից և եթ նոքա միացած են եղել Ալդ երկիրը միացեալ—երկսեւ—համալսարանների աւետեաց երկիրն է. 1882-ին մասնաւոր միջոցներով հիմք դրեց նաեւ մի միացեալ գիմնադիալի: Գաստիարակութեան ալդ ձեւ աչնպիսի արձագանք գտաւ, որ աչնուհետեւ շարունակ նոր «միացեալ»—վարժարաններ են հիմնւում, նոցա թիւը հիմա 12 է. և ծնողներից շատերը դոցա մի աւանձին առաւելութիւն են տալիս՝ քան հին սխտեմի գիմնադիաներին: Ներկալումս առաւելութիւն է գտնում աչն կարծիքը, որ ալջիկներին ու տղալոց, որպէս նաեւ կանանց ու մարդկանց բաժանելը մի անառողջ պրինցիպ է. ¹⁾ Կանաչք և տղամարդիկ իրար պատահում են միմիաչն զարթութեան տեղերում կամ հասարակութեան մէջ, ուր սովորաբար խօսակցութիւնը թեթեւ ու ծանծաղ

¹⁾ Խօսքը վոքբրիկ ֆինլանդիալի մասին է և ոչ Գերմանիալի, որ մինչև այսօր էլ կինը մուտք չունի համալսարանում, (այժմ, կարծում ենք) ունի. խմբ.) ուր ոչ էլ միացեալ գիմնադիաների մասին կարող է խօսք լինել: Ման. թարգմ.

է լինում և շատ հազիւ է պատահում, որ լուրջ բնաւորութիւն կրէ: Հետեւաբար՝ աչդ երկուեւը կանգնած են լինում հոգեպէս ու մտաւորապէս միմեանցից հեռու և ոչ իրար փոխադարձ հասկանալ են կարողանում, ոչ անաչառ զատիւ: Բանւոր զասը աչդ մասում համեմատաբար շատ լաւ է, որովհետեւ նորա մէջ սեւերը համարեա միշտ միասին են և զորա համար էլ ոչ մի հիմք չկար ժողովրդ, համալսարանում նոցա բաժանելու:

Ի՞նչ է դուրս գալու աչդ՝ երկուստեքներից վերջը, կը հարցնեն հարկաւ ոմանք:— չմէն արհամարհի արդեօք նոքա մարմնական աշխատանքը և իրանց անբաղդ չմէն զգալ արդեօք ձգտելով մի աւելի բարձր գրութեան: Քոլորովին օչ. փորձը բոլորովին հակառակին է ցոյց տալիս: Աչտեղ նոյն երեւոյթն է առաջ գալիս, ինչ որ կանանց ուսման հակառակորդներն էին պնդում՝ հոգեպէս կրթւած կինը նոցա կարծիքով ալ ևս հաւաս չի ունենալ տանու հասարակ գործերը կարգի բերելու, երեխաներին հոգալու և հազար ու մի մանր-մուշր բաները կատարելու, որոնք անհրաժեշտ են անարարութեան մէջ: Զանազան երկիրների փորձը ցոյց տուց պարզօրէն, թէ ինչպէս հիմնովին սխալ են աչդ պնդումները: Լաւ զարդացած կինը իւր պարտքը կատարում է ամենաբարեխիղճ կերպով. ոչ մի աշխատանքի առաջ նա իրան ստորացած չի զգում, որովհետեւ նա արդէն ճանաչում է իւր մարդկալին պատիւը: Սթէ նա մարմնով հիւանդ է, ապա նա հաճութեամբ կատարում է աշխատի հասարակ գործեր, որովհետեւ ևս չատակ լաւնալը, պատուհան մաքրելը և ալն... որովհետեւ նա գիտէ կեանքի վերաջ մի քիչ բարձրից նաչել և աչդ մանր-մուշր բաների արմէքը լաւ գնահատել: Աչդպէս են նա կարդացած դիւղացիւն ու բանւորը: Մինը առաջաւազ նման դնում է իւր գործանոցը, միւսը իւր արտը վարելու, միաջն հիմա աւելի զարթ ու կաղզուրած, աւելի ոգեւորուն ու քաջալեր, որովհետեւ ամբողջ աշխարհը նորա համար ալժամ սիրունացել ու լաւացել է: Աշխատանքը նորա համար ալ ևս մի ծանր բեռը չէ, ալ մի հաճելի պարտականութիւն, մի պատիւ: Գորանով նա ծառայել է կարողանում ոչ միաջն իւր ընտանիքին, ալ և հայրենիքին և բովանդակ մարդկութեանը: Գորա համար էլ գիւղացու ընտանեկան կեանքը հիմա աւելի սերտացել աւելի լաւացել է. ոչ միաջն մարդու և կնոջ, ծնողների և զաւակների չարաբերութիւնն է լաւացել, ալ և ծառայի ու աղալի: Զէ որ նոքա գիտութեան միենույն աղբիւրից են չուր խմել և հոգեպէս բարեկամացել իրար հետ: Հէնց գործնական կեանքում մարդ ամենից լաւ կարող է դիտել ժողովրդ. համալսարանի աղղեցութիւնը, Նոքա չեն կրթել փոխտալական ճորտամուշր, ալ ընդհակառակը գործնական, կարգին մարդիկ, որոնք ամեն ասպարիզում ընդհանուրի բարեկամութեանը նպաստ-

տեղ են. Օրինակ Գանգամարկի զիւղացիները միացել և ամեն տեղ մեծ ազարակներ են հիմնել, որի պատճառով «Գիւղական» կոչւած հոսարակ իւրը բոլորովին շուկայից ու գործածութիւնից անջատացել է. իսկ առաջին կարգի իւղի արտահանութիւնը 18 միլիոն ֆունտից հասել է 79 միլիոնի: Այդպէս է նաև խոզի ու խոզենու արտահանութիւնը: Խոսքն տեղերը բուսցնելն և մշակելի դարձնելն ահագին քաշել է անում. հիմա ամեն մի գիւղում գտնուում են մարդական և որսորդական ընկերութիւններ և դրադարաններ՝ ուր մարդ նստում է, սեռնում է արթուն և եռուն գործունէութեան հետքերը:

Ներկայում ամեն մի մարդ որ մի քիչ լզացում ունի, սարսափում է աչն անդունդից, որ գտնուում է հարուստի և աղքատի, կրթւածի և անկիրթի մէջ: Ոմանք ձեռները ծալած չուսահատ հարցնում են. ինչ կարող ենք անել աղքատ մարդկանց օգնելու համար, չորրորդ ¹⁾ դասակարգի կռիւը մարդկային իշաւունքի համար թեթևացնելու: Աս կարծում եմ, որ մարդկանց օգնելու միջոցներից մինն էլ նոցա կրթելն է: Գաստիարակութիւնը միշտ ամենալաւ ղէնքերից մինն է եղել. եթէ մարդիկ ունին կարևոր դիտութիւնը, կարող են իրանք էլ ելք գտնել և իրանց կարիքներն ու պահանջները շատ աւելի պարզ ու հսկանալի ներկայացնել: Այնքապէս կրթութիւն ստալը մի օրհնեալ գործ է. նա բարոյականացնում է ոչ միայն սանիկին այլ և դատաւարակին. գորանով մարդ չի աղքատանում, այլ հարստանում է:

Սորանով ես փակում եմ իմ հասարակ հաղորդութիւնը, որ հարկաւ աչդ մեծ շարժման միայն ընդհանուր և սահմանափակ նկարագրութիւնը կարող էր պարունակել: Նիթէ ես իմ ունկնդիրներին մինի ուշադրութիւնը գրաւեցի հիւսիսի աչդ դպրոցների վերաջ և նա կը ցանկալ աւելի մօտ ծանօթանալ աչդ հիմնարկութիւններին, ապա ես իմ նպատակին լիովին հասած եմ զգում ինձ:

¹⁾ Խօսքը Նորոսյալի բանտրների մասին է:

ՏԱՆՋԵՑԷՔ ՄՏՔԵՐ!...

ԱՐՇԱԿ ԱԹԱՅԵԱՆԻ

Տանջեցէք, մոքեր, սիրոս մաշեցէք,
Այրեցէք նորան, գիտեմ՝ վերջ չունիք.
Դուք ինձ դեռ վաղձուց, վաղձուց ճանօթ էք,
Իմ սիրտը վաղուց տանջել սկսեցիք...

Այն ժամից, երբ ես գերած եմ ձեզնից,
Դեռ չէ ժպտացել բախտն ինձ համար,
Դեռ ինձ չէ նայել երկինքն ամբիծ
Իր ողորմութեան հայեացքով պայծառ.

Եւ Աստուծային մեծ գթութիւնը
Երբէք չէ իջել իմ հոգու վերան,
Դժոխքը միայն իր մահու թոյնը
Թափել է նրա մէջ և այրել նորան.

Եւ այն ժամերին, երբ ծունկ խոնարհած
Ազօթել եմ ես աղի արցունքով,
Որ երկինքն իմ հոգուն որբացած
Հանգիստ պարգևէ իր սուրբ հայեացքով,

Զարթնել էք չորիւյ, հողիս վրդովել
Եւ իմ աղօթքը ամբիծ, անարատ՝

Ձեզ յուզումներով անվերջ, անարգել
Դարձրել ցամառնք տրտունջ ու դանդաղ.

Եւ դէպի երկինք սրտիս խորքերից
Ձայն չէ բարձրացել զոհունակութեան,
Եւ երկինքն իմ հողուց մեղսալից
Երես է դարձրել ընդմիշտ, յաւիտեան...

Տանջեցէք մոքեր, սիրտս մաշեցէք,
Արեցէք նորան, զխոսմ' վերջ չունիք,
Դուք ինձ դեռ վաղձուց, վաղձուց ծանօթ էք,
Իմ սիրտը վաղձուց տանջել սկսեցիք...

1894 թ. 6 փետր.

Էջմիածին

ԺՈՂՈՎՐԴԻ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆԸ

ՅՈՎՀ. ՏԵՐ-ՄԻՐԱՔԵԱՆՅԻ

Ներածութիւն:—Ա. Մատենադրական տեղեկութիւններ:—Բ. Ընթերցող հասարակութեան ուսումնասիրութիւնը:—Գ. Ռուս ժողովրդի ընթերցանութեան դործը:—1. Ի՞նչ պահանջներ ունի նա եւ ո՞րքան հարուստ է գրքերով, 2. Ի՞նչու լաւ գրքերը չեն ընկնում նրա շնորհը, 3. Ո՞րքան հարուստ են ուսաները գրքերով, 4. Լրագիրներն ու հանդէսները ժողովրդական շրջանում, 5. Ո՞ր գրքերը, հանդէսներն ու լրագիրները թոյլ է տրուում ժողովրդին կարդալ, 6. Ռուս ընթերցող հասարակութեան սիրելի հեղինակները, 7. Գոեհիկ (պուրոչնիս) գրականութիւնն ու նրա հեղինակները, 8. Գոեհիկ հրատարակիչներն ու ցրիչները, 9. Ռուս ինտելիգենցիայի ձգտումներն այս ասպարիզում:—Դ. Գրքեր հայ ընթերցող հասարակութեան համար:

Ն Ե Ր Ա Ց Ո Ւ Թ Ի Լ Ն

Անդառնալի կերպով անցան այն «հին ու բարի» ժամանակները, երբ կարդալ-գրելը միայն կղերականի արտօնութիւնն ու պարտականութիւնն էր: Քաղաքակրթութիւնը աւելի ընդարձակեց ուսման ու գիտութեան հորիզոնը, հիմնեցին բազմութիւ կրթական հաստատութիւններ, գրադարաններ և այլն, բայց այս բոլորը դեռ աւելի այսպէս անւանեալ «արտօնեալ» դասակարգերի համար: Ապա քաղաքակրթ երկիրները մասնաւոր ուշադրութիւն դարձրին ժողովրդի համատարած կրթութեանը. մի դար առաջ միայն մի եւրոպական պետութիւն (Վերմանիա), ապա հետզհետէ միւսները հրատարակեցին ընդհանուր պարտադիր ուսուցումը: Գեռ շատ տարիներ չեն անցել, որ Վերմանիան իւր երկաթէ կանցլէրի բերանով ասել տւեց, թէ ժողովրդի ուսուցիչը (ուսումնարանները) յաղթեցին հանդ թշնամուն: Վերմանացիք այս 25 տարիների ընթացքում պարծանքով կրկնում էին նոյն խօսքերը և իրանց լեզուով

ասած՝ կարծես «դադար էին առնում ձեռք բերած դալինիների վրայ», երբ քնաթաթախ նրանք զգացին, որ այս դարում նիրհելու ժամանակ չկայ: Թող չկարծէ ընթերցողը, թէ ներկայ տողերս գրողը «բհամարհել է ձգտում գերմանական վերջին կրթական շարժումը: Քաւ լիցի. նա իւր անցեալի շնորհիւ՝ աւելի տրամադիր պիտի լինէր հակառակ ուղղութեամբ չափազանցութեան հասնելու Ուրեմն պարզենք. Գերմանիայի վերոյիշեալ պարծանքը մի չտեսնուած եւանդ բորբոքեց Ֆրանսայի մէջ. ապա նոյն երևոյթը նկատուեց Անգլիայում ու հեռաւոր Ամերիկայում: Եւ ահա՛ վերջին տարիներս գերմանացիք տեսնում են, որ այլ ևս նոյն համարձակութեամբ չեն կարող պարծենալ, որ իրանք կրթական գործի գազաթնակէտումն են կանգնած: Նրանք տեսան, որ ահաւոր մրցակից Ֆրանսիան շատ բանում հասել է իրանց ետեւից և ձգտում է աւելի համակերպել ժամանակի պահանջներին: Իսկ Անգլիայում ու Ամերիկայում վերոյիշեալ կրթական հաստատութեանց յառաջդիմութիւնից զատ՝ մի նոր, մի դեռ չտեսնուած թարմ հոսանք յառաջ է մղում ժողովրդի կրթական գործը: «Ժողովրդական գրադարան ու ժողովրդական համալսարան»¹⁾ ահա երկու կրթական հաստատութիւններ, որոնք կազմում են այդ անգլիական երկիրների ու մասամբ Ղանեմարքայի պանծայի գործերն այս ասպարիզում: Այսպէս՝ մինչդեռ միւս երկիրները դեռ շարունակում կին իրանց ուշք ու միտքը կենդրոնացնել ուսումնարանների վրայ, այն գործնական ազդութիւններն այդ բաւական չհամարեցին. նրանք ամենից շուտ զգացին, որ նոյն իսկ լրացուցիչ դասերը ընթացաւարտ պատանիների համար բաւական չեն, այլ հարկաւոր է ժողովրդի զանգածը մասնակից անել ընդարձակ կրթութեան: Եւ ահա՛ գերմանացի պրոֆ. Է. Ռայքեր շտապում է իւր «Ժողովրդական գրադարանների զարգացումն ու կազմակերպութիւնը» գրքովում ի միջի այլոց հե-

¹⁾ Առաջին մրցանակը տարել է այս յոսարի քարածուխի հանքերի բանւորը, երկրորդը մի հարուստ գործարանատիրոջ ու պարլամենտի անդամի դուստրը: Յ. Տ. Մ.

Փողովրդ. համալսարանների մասին տես Մ. Ֆրիբերգ, Մուրճի անդեալ և ներկայ համարը: Խմբ.

տեւալ տեղեկութիւնը տալ իւր հայրենակիցներին. «Անգլիայի նոյն իսկ պահպանողական տարրերը խոստովանում են, որ ժողովրդական գրադարաններում կրթութիւն շարունակած բանւորներն աւելի արագ են ըմբռնում և հմտաբար գործում և որ բազմաթիւ արւեստական (տեխնիկական) յառաջագիմութիւններ ու գիւտեր՝ շնորհիւ գրադարանների՝ բանւորների մէջ ծագած մտքերին է, որ տեղի են ունենում: Սակայն Ամերիկայում սրանով էլ չբաւականացան. նորաբաց հազարաւոր գրադարանները, տասնեակ միլիոնաւոր գրքերով ու ընթերցողներով կառավարելու համար՝ նրանք անբուարար համարէցին պատահական գրադարանների գործունէութիւնը, որոնք յանպատրաստից այս գործի մէջ մտնելով՝ կարօտում էին երկար տարիների՝ որոշ աստիճանի տեսական ու գործնական հմտութիւն ձեռք բերելու համար: Ուրեմն պէտք է որ, երկար չմտածելով եզրակացրեց գործնական ամերիկացին, այս մասնագիտութիւնն էլ իւր վարժոյն ունենայ: Եւ ահա արդէն 1889 թ. նրանք հիմնում են Սյլբանի՝ ում «Գրադարանական ուսումնարան», որի նպատակն է հմուտ գրադարանապետներ պատրաստել: Անգլիացիք ու ամերիկացիք ժողովրդի ընթերցանութեանը հետզհետէ աւելի և աւելի կարեւորութիւն են տալիս, քաղաքները նշանաւոր հասոյթներ են կապում գրադարաններին, բազմաթիւ մասնաւոր անհատներ միլիոններ են նւիրաբերում, մինչդեռ նոյն իսկ Ֆերմանիայում տակաւին համեմատաբար աղքատիկ նպատներ են հանում այդ հիմնարկութիւններին: Թէև այս երկրում աւելի գրքի առատութիւն կայ, աւելի գիտական մատենադարաններ, սակայն սրանցից ժողովուրդը քիչ շահ ունի: Ամերիկայում իւրաքանչիւր քաղաքացու տարեկան միջին թւով երեք կարդացած գիրք է գալիս, Անգլիայում՝ երկու, իսկ Ֆերմանիայի նոյն իսկ նշանաւոր քաղաքներում՝ հազիւ մի գիրք ¹⁾: Ֆերմանիայում կան նոյն նպատակին կողմնակի կամ ուղղակի ծառայող տեսակ-տեսակ ընկերութիւններ, որոնցից մին՝ Die Gesell-

¹⁾ Մեծ քաղաքների գործն աւելի ծանր է. մինչդեռ անգլիական ու ամերիկական Մանչեստեր, Էդինբուրգ, Լիդս, Բրիստոլ և Բոստոն քաղաքներում 2—3 գրքի գործածութիւն է գալիս մի բնակչին, Պարիզում՝ հազիւ 1, Բերլինում՝ $\frac{1}{3}$, Վիեննայում՝ $\frac{1}{6}$:

schaft für Verbreitung von Volksbildung միայն այս տարի 150 ժողովրդական գրադարաններ է հիմնել. բայց սա մի կաթիլ ջուր է համարում ծարաւ ժողովրդի ծովում:

Բայց իմ նպատակը չէ այստեղ ժողովրդական գրադարանների վերին աստիճանի հետաքրքրական գործի մօտաւոր անցեալ ու ներկայ վիճակը նկարագրել. այսքան խօսեցի այլ մասին իբրեւ ներածութիւն՝ մեզ զրադեցնող գլխաւոր խնդրի՝ ժողովրդի ընթերցանութեան նիւթերի և սրանց տարածման այլ միջոցների վերաբերեալ: Այսպիսի գրադարանների բացման ու զարգացման պայմանները մեզանում տարբեր են, քաղաքների մեծամասնութիւնը և բոլոր զիւղերը զուրկ են այդ հիմնարկութիւններից և ո՞վ զիտէ թէ մենք երբ կ'ունենանք ժողովրդական գրադարաններ և գրադարանական գործ: Մեր ներկայ յօդաւոր մէջ այս խնդիրը երբեմն երբեմն մէջ կը բերւի այլ հարցեր լուսաբանելու համար: Ուրեմն այժմ դառնանք մեր բուն խնդրին, թէ ինչպիսի ընթերցանութեան նիւթերի պահանջ է զգացւում ժողովրդի մէջ ու ի՞նչ միջոցներով պէտք է սրունք տարածւին նրա բոլոր խաւերում: Այս երկու հիմնական խնդիրները մենք վերածում ենք մի քանի ստորադաս հատւածների և մի առ մի զբաղւում նրանցով: Այլ քաղաքակիրթ երկիրների մասին այստեղ միայն ընդհանուր տեսակէտերից խօսք կը լինի. մեզ ամենից շատ պէտք է զբաղեցնի այս գործի դրութիւնը Ռուսիայում, որովհետեւ կովկասեան հայերիս հրատարակչական գործը սերտ կապերով ու պայմաններով կապւած է լայնածաւալ պետութեան կեանքի հետ: Վերջապէս կը խօսենք նաեւ հայերիս հրատարակչական գործի և սրա արդեանց մասին, որքան որ հանգամանքները մեզ թոյլ են տւել ծանօթանալ նրանց հետ: Սա խկապէս մի սկզբնաւորութիւն, մի փորձ կը լինի՝ ապագայում աւելի ընդարձակ ու հիմնաւոր կերպով այս խնդիրը նորից ձեռք առնելու: Ներկայումս հանգամանքները մեզ թոյլ չեն տալիս աւելի հիմնաւոր կերպով այս խնդիրը ուսումնասիրելու: Թող գործին մօտ և հետաքրքիր անձեր ձեռք առնեն նրան: Այս խորհրդաւոր դարում երբ շողին ու ելեքարականութիւնը ամէն տեսակ նպատակաւորմար ու սրբնթաց չարաբերութեան մէջ են դնում հեռաւոր երկիրների երբ մի կողմից լուսոյ ճառագայթները թափանցում են ցարդ առ.

թափանցիկ համարած մարմինների խորքերը, միևս կողմից մեքենայ են հնարում հոգու խորքերը մանելու, մարդու սիրտը կարգալու (տես Միլենիսնի այս տարւայ հոգեբանական միջազգային ժողովի արձանագրութիւնները) ¹⁾, այլևս չի կարելի ասիական դանդաղութեամբ ու պատահականութեամբ գործել:

Ա. Մատենագրական տեղեկութիւններ

Այս գործով սիստեմատիկաբար ու հիմնաւոր կերպով պարապելու ձգտում ունեցողներին աւելորդ չենք համարում մի քանի գրականական օւղեկութիւններ տալ և այսպիսով նաև յիշած լինել յօդւածիս աղբիւրները:

Ռուսիայում, որքան եւս զոնէ կարողացայ հասկանալ, այս խնդիրներում հեղինակութիւն են համարում. Ռուբակին, Պրուգաւին, օր. Ալէսկայա և Լէզերլէ: Н. А. Рубакинъ, «этюды о русской читающей публикѣ. Факты, цифры и наблюдения. 1895. Петербургъ. Սոյն գրքի վերջում ն. Ռուբակին գրել է նաև իւր՝ այլ առթիւ հրատարակած՝ Краткая программа для собранія свѣдѣній о библиотечномъ дѣлѣ. Սա միևնոյն ժամանակ մի ուսումնասիրութիւն է ընթերցող հասարակութեան: Ռուբակինից աւելի ընդարձակ ու հիմնաւոր կերպով զբաղւել է նոյն վիճակագրութեամբ Ա. Ս. Պրուգաւին (А. С. Пругавинъ), որը ահագին քանակութեամբ հետաքրքրական նիւթեր է հաւաքել, սակայն դեռ չէ հրատարակել մեծ ծախքերի համար միջոցից զուրկ լինելու համար: Օր. Խ. Ալէսկայան արդէն հրատարակել է երկու մեծագիր ու հաստ հատորներ՝ Х. Д. Алчевская, Харьковъ, «Что читать народу». Այստեղ հաւաքւած են աշակերտների և ժողովրդի կարծիքները ընթերցանութեան գրքերի մասին: Միայն թէ նրանք աւելի սահմանափակ շրջանի են վերաբերում և հեղինակին մասամբ սխալ եզրակացութիւնների են բերել այդ կարծիքները, որովհե-

¹⁾ Այդ մեքենան իսկապէս դեռ երեան է հանում մի անխուսափելի ներքին չուզման միջոցով մարդուս միտքը պահած առարկան, երբ նրան նորից ներկայացնում են աչա իրը: Ինչո՞ւ չի կարելի ենթադրել, որ շատ ժամանակ չի անցնիլ, երբ մարդասպանն էլ իւր զո՞ւր տեսնելով՝ պիտի մատնւի անխուս մեքենայի անվրէպ ցուցմունքով:

տե երբ ռամիկի ներկայութեամբ լաւ ընթերցողն է կարգում, նա աւելի կը հասկանայ գիրքը, քան եթէ ինքը կարդար: Ա. Ս. Պրուգաւինի հիմնական հեղինակութիւնն է «Вопросы народа и обязанности интеллигенции въ области просвѣщенія и воспитанія. Изданіе второе, значительно дополненное. 1895 г. Петербургъ. (Առաջին հրատարակութիւնը 1890 թ. վերջին): Այս գրքում հեղինակը իւր գլխաւոր ուշադրութիւնը դարձրել է ժողովրդական գրքերի տարածման խնդրին ու նիւթերին Ռուսիայում: Մանաւոր ուշադրութեան է աւել գուհիկ հեղինակ, հրատարակիչ ու ցրիչների գործունէութիւնը մութիւնների կեանքում, ինտելիգենցիայի աննշան մրցումը այս գործօնների հետ ¹⁾:

Ինչպէս ընթերցողը տեսնում է, վերոյիշեալ հեղինակութիւնները վերջին մի երկու տարիների արտադրութիւններ են: Մենք նրանցով այստեղ մանրամասն կը զբաղւենք:

Յիշենք նաեւ որ եւրոպական, ամերիկական և այլ երկիրների մասին համառօտ տեսութիւն ստացանք գլխաւորապէս հետեւեալ երկերից 1. Prof. Dr, Ed. Reyer. Entwicklung und organisation der Volksbibliotheken 1893. Leipzig.—Wilhelm Bube, «Die Ländliche Volksbibliothek. Ein kritischer Wegweiser und Musterkatalog nebst Grundstöcken und Wirken zur Einrichtung und Leitung. 1896. Berlin.—3. Allgemeine deutsche Lehrerzeitung. 1896 № № 28—31. Այս գերմաներէն երկերից աւելի ընդարձակ տեղեկութիւններ է տալիս առաջինը: Իհարկ է, գերմաներէն ու ֆրանսերէն և անգլիերէն լեզուով արդէն հարուստ գրականութիւն կայ մեզ հետաքրքրող խնդիրների մասն:

Վերջապէս յիշենք Մ. Մ. Լէզերլէի 1895 թ. հրատարակած գիրքը «Мнѣнія русскихъ людей о лучшихъ книгахъ для чтенія. Петербургъ: Սա իսկապէս պարապում է մանուկների և պատանիների ընթերցանութեան նիւթերի խնդրով: Որովհետեւ շատ տեղերում այս կարգի գրքերն արդէն կազմում են ժողովրդական գրադարանի բաղադրիչ մասը, ուստի նրանց վերաբերմամբ կը խօսենք ներքեւ, կապակցութեամբ: Լէզերլէն, հետեւելով անգլիացոյ,

¹⁾ Պրուգաւին մի գրքով էլ ունի. «Что читаетъ нашъ народъ».

Ֆրանսիացոց ու գերմանացոց օրինակին՝ զիմել է ռուս պրոֆէսորներին ու զարգացած անձերին, զրազէտներին ու խնդրել կարծիքներ ու առաջարկութիւններ լաւագոյն զրքերի մասին: Լէզերլէն մասամբ է հասել իւր նպատակին, որովհետեւ ռուս գիտնականները շատերը, գերմանականների նման, մանկական, պատանեկան ու երիտասարդական կեանքի տպաւորութիւնները անհատական հանգամանքներից կախած համարելով, խոչս են տուել հաւցին զրական պատասխաններ տալ: Առաջին անգամ այս խնդրով պաբայեց նշանաւոր հեղինակ Ջոն Լէբոկ իւր, «Կեանքի ուրախութիւնները» գրքի մէջ արած ցուցմունքներով: Նրա այս հեղինակութիւնը Անգլիայում երեք տարւայ ընթացքում 20 անգամ հրատարակեց, իսկ Ռուսիայում մի անգամից երկու թարգմանութիւն ունեցաւ ¹⁾:

Բ. Ընթերցող հասարակութեան ուսումնասիրութիւնը

Այս տարրի ուսումնասիրութիւնն այնքան անհրաժեշտ է՝ արգասաւոր արդիւնք առաջացնելու համար, որքան երկրագործին այն հողի հետազոտութիւնը, ուր պիտի նա ցանէ ու քրտնջան աշխատի: 1887 թ. Հեննէկէն *La critique scientifique* գրքում (ռուս թարգմանութիւն Գ. Սարունինի 1892 թ., Պետերբուրգ) առանձին ուշադրութեամբ քննութեան է տուած եղել այս խնդիրը: Նա ՚ի միջի այլոց ասում է. «Գեղարւեստի, ինչպէս նաեւ զրականութեան ամեն տեսակ արտադրութիւն ոչ միայն նրա հեղինակի հոգեկանի (պսիխիկի) արտայայտութիւն է, այլ և այն մարդկանց հոգեկանի արտայայտութիւն է, որոնց նա զիւր է դալիս... և որ նա «արտայայտում է խմբի բնաւորութիւնը, միտքն ու զգացմունքը»:

¹⁾ Յղաւածս վերջացել էր, որ զրախօսեց ռուս թերթերի մէջ В. П. Вахнерев-ի նոր հրատարակած հետազոտութիւնը. «Внѣшкольное образование. Сельская библиотека, книжные склады, воскресныя школы и повторительные классы. Изданіе Тов. Сытова И. Д. Москва, 1896. գիւնն է 1 ռուբլի»:

Գրախօսութիւնից երևում է որ այս գրքի ²/₃ մասը նւիրւած է կիրախօրեայ ուսումնարաններին և կրկնողական դասերին: Վախներովն էլ իւր գրքի նիւթերը քաղելիս, բուն աղբիւրներին է զիմել զմաստոններին, ուսումնարաններին, ուսուցիչներին և ալլն:

Ռուբակինը թէև անպաշտան չի ընդունում այս կարծիքը, սակայն ասում է, որ «չի կարելի մերժել այս խօսքերի խորութիւնն ու օրի-
ժինալ լինելը»: Նա աւելացնում է իւր կողմից, որ «ընթերցող
հասարակութեան ուսումնասիրութիւնը հետաքրքրական է ոչ միայն
պատմական ու ընկերաբանական (սոցիոլոգիական), այլ և հոգեբա-
նական տեսակէտից: Ընթերցողները՝ ուրիշ ամէն տեսակ երևոյթ-
ների պէս՝ ենթարկւում են դաստորութեան (կլասսիֆիկացիայի)
ըստ իրանց հոգեկան ֆիզիոնոմիայի, որի վրայ իրանց կնիքն են
դնում և՛ ցեղական առանձնացատկութիւնները, և՛ ընկերվարական
միջավայրը, և պատմական մոմէնտը...»: Ռուբակինը մի այլ երե-
սում նկատում է, որ այս ուսումնասիրութիւնը հեղինակներին էլ
հետաքրքրական պէտք է լինի նաև դործնական տեսակէտից. նրանք
պէտք է ականջ դնեն իրանց ընթերցողների ցուցմունքներին ու
դնահատեն նրանց: Այս հեղինակը, Շելզուոնովի կարծիքն յիշելով՝
ձայնակից է լինում նրան, ասելով, որ Գ. Ալեևսկու «Что читает
народъ» երկասիրութիւնը թէև ոչ լիովին, այնու ամենայնիւ պա-
րունակում է նոյն իսկ ժողովրդի խօսքերով արտայայտած շատ
ցուցմունքներ այն մասին, թէ ինչպէս պէտք է գրքոյկներ գրել:

Ռայէր ասում է. «Եթէ ուզում են տեսնել, թէ արդեօք որ
գրքերն են իսկական ժողովրդականութիւն վայելում, թող հետա-
զօտեն ժողովրդական գրադարանների վիճակագրութիւնը»: Ռուբա-
կինն էլ յիշում է հետևեալ վերին աստիճանի ուշադրութեան ար-
ժանի իրողութիւնը. «Ժողովրդական շրջանի ընթերցողի ուսումնա-
սիրութիւնը, օրինակի համար՝ ցոյց տւեց, որ ոչ մի առանձին բե-
լէտրիստիկա նրան հարկւոք չէ և որ մանկական ու ժողովրդական
գրականութեան իրար խառնելը նորանշան (կուրիօզ) և աններելի
սխալմունք է»:

Հետաքրքրական ու շատ հրահանգիչ են նաև մոլժիկների
կարծիքներն այս մասին. նրանք վիրաւորում են, որ գիրք գրող-
ները իրանց երեխաների կամ ոչինչ չհասկացող անգէտների տեղ
են դնում. և երբ նրանք (մոլժիկները) գրքի մակագրութիւնից
այդպիսի հոտ են առնում, արհամարհանքով դէն են շարտում նրան:
Եւ յիրաւի, ժողովրդի կեանքից հեռու մնացած հեղինակները չա-
փից դուրս անտես են առնում այն հանգամանքը, որ հասակաւոր

Թէև անգրագէտ մարդը իրական կեանքի բովում շատ փորձառութիւններ, մտքեր ու զգացմունքներ է ձեռք բերում, որոնցից զորի է տհաս ու անփորձ մանուկը: Օրինակի համար՝ վերոյիշեալ Բուբէն Թէև անմտութիւն է համարում զեռահասների և հասակաւորների գրադարանները իրար հետ խառնելը, այնուամենայնիւ այն կարծիքին է, որ առաջինների համար կազմած համարեա բոլոր գրքերը կը յարմարեն ժողովրդին, իսկ սրա համար կազմածներից՝ շատ քչերը կը յարմարեն զեռահասներին: Աւելի չափաւոր կարծիք ունեցողներ կան բնական գիտութեանց վերաբերեալ նիւթերի մասին. ենթադրում են, որ այստեսակ սարքական գրքերը կարող են անխտիր դործածուել Թէ մէկ և Թէ միւս կարգի ընթերցողների կողմից: Ի հարկէ, երբ խօսքը խրդուկ հանգամանքներին համակերպելու մասին լինի, ինչպէս մեր հայոց կեանքում, ուր այնքան քիչ գիրք գնողներ, գիրք սպառողներ կան, այդ այլ բան է. բայց մի՞թէ առհասարակ կարելի է, օրինակ, միևնոյն գիրքը երկրագործութեան, Ֆիզիկայի մասին տալ և՛ աշակերտի, և՛ անուս պատանու և՛ փորձառու հասակաւորի ձեռքը, մտածելով որ նա բոլորի հասկացողութեանն ու պահանջներին կը համապատասխանի:

Լէզերլէի գրքի յառաջաբանից ես քաղեցի զերմանական գիտնականների կարծիքներն ընտիր գրքերի ցուցակ կազմելու մասին, իսկ նոյն գրքի հիմնական մասից՝ ուստական գրքերի ցուցակ կազմելու մասին: Ինչպէս վերը չիշեցինք, զերմանացիներից շատ քչերն էին դրական պատասխան տուել այդ առաջադիւթիւններն իրանց անողին, իսկ ռսներից համեմատաբար աւելի շատ էին պատասխան գրել: Ամենքը իրանց բացասական պատասխանները հիմնում են այն բանի վրայ Թէ խնդիրը բազմակողմանի պայմաններից կախում ունի: Գերմանացիք նախ մերժեցին անգլիացոց առաջարկած ընտիր գրքերի հարիւր Թիւը, նկատելով որ պէտք չկայ միայն այդ բանակութեամբ գրքեր ընտրել և որ աւելի հեշտ է 200—300—400 լաւ գրքերի վրայ մատնացոյց լինել: Բոլոր հեղինակաւոր կարծիքները հաւաքելով՝ մենք յարմար դատեցինք հետեւեալ կերպով պատուրել այդ բազմակողմանի հանգամանքները. ընթերցողի ազդուութիւնը, նրա ժամանակակից սերնդի պատմական անցեալն ու ներկայ վիճակը, հասարակական ու ընտանեկան կեանքը, ընթերցողի

անհասական զարգացումը, հասակը, ձգտումները, ճաշակը, խառն-
 ւածքը (տեմպերամենտը) և առժամանակեայ տրամադրութիւնը: Եթէ
 այս կէտերի վրայ ընթերցողը մի առ մի կանգ առնելու լինի և
 նրանց խորհրդածութեան ենթարկէ, անշուշտ դիւրաւ պէտք է
 տեսնի, թէ նրանք ինչպիսի ծանրակշիռ նշանակութիւն ունեն: Եւ,
 ի հարկէ, օրինակ՝ միայն ազգայնութեան տեսակէտն ՚ի նկատի առ-
 նելով՝ անգլիական, Ֆրանսիական ու գերմանական ընտիր գրքերի
 ցուցակները բոլորովին տարբեր կազմութիւն ունեցան: Բնականա-
 բար մի կողմից բոլորի մէջն էլ պէտք է գտնւէին համամարդկային
 նշանակութիւն ունեցող գրքերը, ինչպէս Աւետարանը, Հոմերոսը,
 Ռոբինզոնը, հէքիաթները... և միւս կողմից Բայրոն, Բիւէր-Ստու, Վալտէր
 Սկոտ, Դիկէնս, Անդերսէն և այլն չպէտք է բացակայէին
 ընտիր գրքերի ցուցակում: Ար հէքիաթը ստեղծւած է մանկան հա-
 մար, Ռոբինզոնի պէս գիրքը՝ պատանու համար, իսկ պատմական
 ու ժամանակակից հոսանքներ նկարագրող վէպը նամանաւանդ երի-
 տասարդի համար՝ մեզ, ի հարկէ, շատ պարզ է: Իսկ ընդհանուր
 առմամբ դիտական գրքերից ամենահետաքրքրականներն են նոր ճա-
 նապարհներ բացանող հեղինակների երկերը, որոնց մեթոդը, գրո-
 նելու եղանակը, ճիգը ուշագրաւ ու ոգևորիչ է: Սակայն որովհետեւ
 այդպիսի երկասիրութիւնները միայն քչերին են մատչելի, ժողո-
 վըրդի հարցասիրութիւնը կը կտրուկանայ վառ պահել միայն այն
 պոպուլարիզատորը, որ շնորհք կ'ունենայ իւր ընթերցողներին նոյն
 ճանապարհով առաջնորդելու՝ նորա հնարիչի քրտնաջան աշխա-
 տութեանց, տարակոյսների, յուսախաբութեանց ու հրճանքների
 երևակայութեամբ մասնակից անելով:

Լէզերլէի գրքում՝ ռուս գիտնականների մանկական, պատա-
 նեկան ու երիտասարդական չիշողութիւնները այս կամ այն գրքի
 մասին ՚ի հարկէ տարբերում են, որովհետեւ մեծամասնութեան
 համար այդ ընտրութիւնը պատահական է եղել և հետեւաբար են-
 թակայ՝ շատ բազմակողմանի հանգամանքների: Մենք, օրինակի հա-
 մար, առանձին ուշադրութիւն դարձնելով Աւետարանի, Ռոբինզոնի,
 հէքիաթների և Հոմերոսի վերաբերմամբ ասածներին, նկատեցինք,
 որ վերոյիշեալ ռուս ընթերցողներն այնքան չեն խօսում սրանց
 մասին, որքան նոցա մասին կը յիշէր, օրինակ, գերմանացին:

Եթէ հէքիաթների տարածմանը յայտնի նախապաշարմունքն էր արգելք եղել, Հոմերոսի երկերի տարածմանը, ինչպէս երևում է Լէզերլէի գրքում Վ. Պ. Ստորոգորսկու հետեւեալ խօսքերից, նպատակաշարմար թարգմանութեանց բացակայութիւնն է խանգարել:—Խօսելով Հոմերոսի երկերի արժանաւորութեանց մասին, նա աւելացնում է. «Հոմերոսը, որին ցաւօք սրտի մեզանում աչնքան քիչ են ճանաչում, զուցէ այն պատճառով, որ յամօթանս մեր մինչև հիմա էլ դեռ մեզանում չկայ «Ելիականի» ոչ մի թարգմանութիւնը, բացի Գնեդիչի հինցած եկեղեցական սլաւոնականը, ոչ մի թարգմանութիւն «Ողիսականի» բացի գերմաներէնից թարգմանածը Ժուկովսկու»:

Թէ ինչպիսի որոշ օրէնքների է ենթակայ ժողովրդի կողմից ընթերցանելի գրքերի ընտրութիւնը, մենք տեսնում ենք պրոֆէսոր Ռայէրի հետեւեալ վիճակագրական տեղեկութիւններից: Վեր առնենք, ասում է նա, պատահական կերպով գերմանական, անգլիական կամ ամերիկական այս կամ այն քաղաքի ժողովրդական գրադարանի զեկուցումները, կը տեսնենք նախ և առաջ, որ մի անսպասելի զուգակշռութիւն է տիրում գրքերի գործածութեան մէջ: Գրադարանը կարող է շատ կամ նւազ քանակութեամբ ընթերցանութեան թեթեւ նիւթեր ձեռք բերել, բայց կարգացած գրքերի ընդհանուր թւի 70—80% չգրականութիւն, հնարած պատմութիւն (ֆիկցիա) և դեռահասների ընթերցանութեան գրքեր» անւանեալ խմբից դուրս էլ դաջ, իսկ մօտաւորապէս 10% կը վերաբերեն պատմութեան, կենսագրութեան և ճանապարհորդութեանց, և 5% բնական գիտութեանց, արհեստներին ու արհեստաղիտութեանը (տեխնիկային): Եթէ որ և է գրադարան միայն 10 կամ 20% թեթեւ ընթերցանութեան նիւթեր ձեռք բերէր, այնու ամենայնիւ բոլոր կարգացած գրքերից 60—80%-ը գրականութեան խմբից կը լինէր: Կարող էր գրադարանապետը մինչև անգամ 10% կրօնական ու աստուածաբանական գրքեր ՚ի ցոյց դնել, այսու ամենայնիւ նոյն իսկ Անգլիայում և Ամերիկայում հազիւ թէ 0,6—0,9% կրօնական գրքեր կարդացէին: Բուքէն մասամբ այլ կերպ համախմբելով գրքերի տեսակները, համարեա նոյն հաշիւն է դուրս բերել. 100 գրքից միջին թւով 60 վերաբերում են քիլէտրիստիկային, 20 բնական գիտութեանց և երկրագործու-

Թեան, 10 պատմութեան, 5 աշխարհագրութեան և ժողովրդաբանութեան և 5 քաղաքատնտեսութեան, արհեստի և այլն: Ինչ վերաբերում է ուռւս ընթերցողին, նրա մասին Ռուբակին ասում է, որ նա բոլորովին անկարող է զրքեր ընտրել: Մինչդեռ, օրինակ, Պարիզի քաղաքացին գրադարանի խառն ամբօխը (разношерстный людъ) վերին աստիճանի որոշ զիրք է բռնում բելլետրիստիկայի և գիտական բաժանմունքների վերաբերմամբ: Ռուս ընթերցողներն ամենից շատ սիրում են բելլետրիստիկան, ապա պարբերական հանդէսները (ժուրնալները, այսինքն ամսագիրները), և վերջապէս գիտական զրքեր: Գիտական զրքերից ամենից յաճախ պատմութիւն ու գրականութեան պատմութիւն, ապա բնական գիտութիւն, փիլիսոփայութիւն, հասարակական գիտութիւններ և ասուածաբանութիւն: Գիտական զրքերի պահանջը նւազում է: Ամենից շատ քաղաքատնտեսութեան բաժնի զրքերը անբաղդ են ուռւս ընթերցողների շրջանում: Սրանում չի կարելի չտեսնել, ասում է Ռուբակին, ուռւս իրաւէլիգէնա ընթերցողի մի քանի առանձնացատկութիւնները... մերթ նա հետաքրքրւում է էթիկական խնդիրներով, իսկ բոլոր մնացածը նա ոչինչ բանի տեղ է դնում: մերթ՝ տնտեսական խնդիրներով, և այն ժամանակ արդէն քաղաքական խնդիրներ գրեթէ չի ընդունում... Ասուածաբանական զրքերը ուռւս քաղաքակրթւած ընթերցողների մէջ ամենից քիչ են կարդացւում:

Ընդհանրապէս ժողովրդի ճաշակը աջող ուղղութեամբ է զարգանում: Լաւագոյն հեղինակները ժամանակի ընթացքում յաղթանակը տանում են այն գրողների դէմ, որոնք միայն զգացարաններն են գրգռում և կրքեր զարթեցնում: Տանջւած ու թշուառ ժողովուրդը իւր ազատ ժամերում ոչ թէ նիւթական շահ խոտացող զրքերի ետեւից է ընկնում, այլ բանաստեղծութեան, իդէալի: Նա կարօտում է մի այնպիսի զովարար, երևակացական աշխարհի, որ գէթ աւժամանակ մոռանալ կարողանար իրական կեանքի զրկանքները և Թափառէր վերին դաւառներում, մի ձգտում, առանց որի խեղճ բանւորի կեանքը գրաստի վարածից շատ չէր տարբերիլ: Բայց ամեն տեղ էլ, ինչպէս Գերմանիայում, կան անկոչ խնամատարներ, որոնք հէքիաթը մանկան ձեռքից են խլում և վէպը ժողովրդի ձեռքից, մոռածելով որ այդպիսի զրքերից գիտութիւն

ստանալ չի կարելի: Մինչդեռ վիպական ձևով գրեաժ յատմութիւնները, ճանապարհորդութիւններն և այլ գրեաժքները, զրաւիչ եղանակով այնքան զբաղեցնում ու զարգացնում են սահմանափակ ուսման տէր մարդու ներքին աշխարհը: Փորձը ցոյց է տալիս, որ ժողովուրդը, ինչքան էլ նրա գլխին խրատներ խօսէինք, անխըղձի կապերով միացած է լինում իւր սիրելի հեղինակներին, սրանց ստեղծած հերոսների հետ: Նա առաջնորդւում է իւր առողջ մտքով, աջողակ տաքտով, որ առհասարակ «ինստինկտ» են անւանում, թերեւս նրա համար, ու այդ մարդը մշակւած լեզու չունի՝ իւր զգացմունքներն ընտիր ոճով ու բառբառով արտայայտելու համար:

«Եւսպէս այլ նշանակութիւն ունին այն ուէալիստ նկարագրութիւնները, ասում է Ռայէր, որոնք մարդկութեան սոցիալական և բարոյական տանջանքները խոշոր դժերով են մեր աչքերի առջև դնում: Նրանց կարգալուց յետոյ, իհարկէ, ընթերցողին յաճախ վշտակցութիւնից, զղանքից, վրդովմունքից զատ ոչինչ չի մնում, և այսպիսի դիրքը նա դիւրաւ երկրորդ անգամ չի կարդալ: Այնուամենայնիւ ժողովուրդը այս կարգի վէպերը տարբերելով «կիսաշխարհի» (demi-monde) ուսմաններից՝ շատ է կարդում: Բացի նրանից՝ ի նկատի պէտք է ունենալ, որ ժողովուրդը համառօտաժ բելլէտրիստական գրքեր չի սիրում, այլ լիակատարները, որոնք նրան աւելի են հետաքրքրում, աւելի սիրելի են: Խօսելով այս մասին՝ Ռուբակինն ասում է, ի միջի այլոց, որ ռուս ժողովուրդը սատանաներով լեցրած հեքիաթներից ետ է քաշւում, մղւելով այն նախապաշարմունքից, թէ «нечистыхъ нанесутъ въ избу». Զարմանալի է, որ մի այնպիսի հեղինակ, ինչպէս Լ. Տոլստոյն է, ձեռք չէ վերցրել այդ «չէրտովչինա»-ներից: Մի երկու մուժիկ-գրողներ իրանց պարզ ռամկական նկարագրութիւններով մրցում են Տոլստոյի հետ, մանաւանդ որ նրանք սատանաների հետ գործ ունենալու հարկ չեն գդում: Մուժիկ ընթերցողների կարծիքները գրքերի մասին շատ բնորոշ են և ճիշտ է ասում Ռուբակին, թէ նրանք առանց տրտունջի և աւելի մեծ բաւականութեամբ կարդում են «լուբոչնի» (ռամիկ հրատարակիչների) ուսմանները, քան՝ ժողովրդական գրականութեան ծնողների քաղցրարօյր գրեաժքներն ու այլ բարեմիտ հրէշարտադրութիւնները:

Հետաքրքրական է նաև անգլիական քաղաքների գրադարանական վիճակագրութեան այն մասը, որ մեզ թոյլ է տալիս մօտաւոր գաղափար կազմել զանազան հասակներին յատուկ ընթերցման ծարաւի յարաբերական չափը. 5—10 տարեկան մանուկներն սկսում են գրադարանից օգուտ քաղել. հետեւեալ հասակում գործածութեան յաւելումը շատ է, 15—20 հասակը ուղղակի կլանում է գրքերը, և հետեւեալ շրջանում ընթերցւան ծարաւը նոյն արագութեամբ նւազում է:

Այս հատուածում յարուցւած բազմակողմանի հարցերից անշուշտ պարզ է, թէ ինչպիսի մեծ կարևորութիւն ունի ընթերցող հասարակութեան ուսումնասիրութեան խնդիրը հեղինակների, թարգմանիչների, փոխադրողների և հրատարակիչների համար: Եթէ օրինակ՝ մեր շատ թարգմանիչ ու փոխադրիչները հետամնու եղած լինէին դեռահաս ու հասակաւոր հայ ընթերցողների արտայայտած կարծիքներին, նրանք աւելի քննադատական հայեացքով կը վերաբերէին իրանց ձեռքն ընկած գրքերին, մանաւանդ խոյս կը տային այնպիսի գրքեր թարգմանելուց կամ փոխադրելուց, որոնք, արդէն ուսս լեզուով մի անգամ այդ կերպարանափոխութեանն ենթարկւած լինելով՝ առանց այն էլ գրքի կմախքն են ներկայացնում: Միակողմից ուսս ժողովրդական հեղինակութիւններից հազիւ երկուսն են թարգմանել: Իզուր ենք թերթում Թիֆլիսի կենտրոնական գրալաւանարանի հայերէն գրքերի հաւաքական ցուցակը, որ գէթ մինը Ս. Т. Семеновъ մոսկիկի „Наследство“, „Дворникъ“, „Сонъ Максима“, „Не Милая жена“ գրաւածքներից թարգմանած տեսնենք: Ինքնակրթութեամբ հեղինակ դարձած այս ուսմիկն այնքան սիրուն ու պարզ կերպով է նկարագրում մոսկիկների կեանքը, նոցա թշւառութեան և ուրախութեան աղբիւրները, որ կարծես թէ հէնց նրանց մէջ ես նստած, ասորում ես նրանց հետ: Մի՞թէ այսպիսի բուն աղբիւրների թարգմանութիւնը, այն էլ մեզ աւելի մօտ ուսս ուսմիկի կեանքից աւելի հեշտ ու հրահանգիչ չէր լինի: Այս խնդրի ուսումնասիրութեան ընթացքում ներկայ տողերս գրողը կարգալով չխտենի չափ ուսս ժողովրդական գրքոյկներ (հեղինակութիւններ, թարգմանութիւններ, փոխադրութիւններ), քիչ անգամ զգաց այնպիսի սրտսղին հաճոյք, բաւականութիւն, որպիսին նա

Սէմեօնովի բոլոր վերոյիշեալ հեղինակութիւններից անխտիր կերպով ստացաւ:

Բայց ո՞վ և ինչպէս ուսումնասիրէ այս խնդիրը, բնականաբար կը հարցնեն մեզ: Առ ժամանակ մենք չունենալով մի այլ մարմին կամ հաստատութիւն՝ միայն ճանաչում ենք հայոց միակ Հրատարակական ընկերութիւնը, որ կարող էր ձեռնհասութիւն ունենալ այս գործում: Այս ընկերութիւնը կարիք է զգում հիմա պարբերաբար իւր կողմից թարգմանութեան համար ընտիր համարւած գրքերի ցուցակը հրատարակել. ի հարկ է, անհամեմատ աւելի հետաքրքրական ու օգտակար կը լինէր այս գործը, եթէ առաջարկւած գրքերի հետ նախ համառօտ կերպով դրէին նրանց ոէցէնզիաները, որ դժար չէ ձեռք բերել եւրոպական և ռուս հաւաքածոններից. և երկրորդ, եթէ այդ գիրքն արդէն հայերէն թարգմանւել կամ փոխադրւել է, ժողովրդի և այլ գրախօսական կարծիքները նրա մասին: Որովհետեւ մենք ոչ միայն գիւղական, այլև քաղաքային գրադարաններ շատ քիչ ունենք, ուստի ժողովրդի արտայայտութեանց հետամտելու արդիւնքը շատ թերի կարող էր համարւել: Սակայն, ինչպէս վերոյիշեալ վիճակադրական զանազան եղրակացութիւններից տեսանք, այսպիսի խնդիրներում զարմանալի ղուգակշռութիւն են ցոյց տալիս նոյն իսկ հեռաւոր երկիրների ժողովրդների կեանքի երեւոյթները: Հետեաբար մի քանի գրադարաններից հաւաքած տեղեկութիւններն այս կամ այն գրքի շատ կամ քիչ կարդացելու կամ սիրւելու մասին մեզ թոյլ կը տար՝ առանց մեծ սխալներ անելու՝ ընդհանուր եզրակացութիւններ հանել:

(Շարունակելի)

ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ՇԻՐԱՆՁԱՂԷ.—Կրակ. Բաղու. 1896. 85 էջ, գինն է 30 կ.

85 երեսից բաղկացած այս փոքրիկ վէպիկի ոչ նիւթը և ոչ էլ ձևը նոր չեն պ. Շիրաւնդադէի համար Ռեթերցսդները զուցէ վիշելիս լինեն, որանից մի քանի տարի առաջ Տարազում լուս տեսնող, նույն հեղինակի «Շրջանից արտաքսւածը» վերնագրով վէպիկը և կարծեմ 94 թ. լուս տեսած, «Վէպիկներում» «Օրիորդ Նիզան»։ Վերջինս համարեա նույն ձևով է գրւած ինչպէս նոր լուս տեսած «Վրակը»։ միայն անտեղ պատմողն ու լսողը դարեջուր են խմում, ալտեղ՝ թէ՛, անտեղ լսողը մէկն է, ալտեղ՝ երեքը, և ալնու իսկ նիւթի կողմից նա շատ նման է «Շրջանից արտաքսւածին»։ նույն ուսանողական կեանքը, նույն անկախ մտքերի տէր հերոսը ընկերներից հալածւած, նույն ամօթահար հալածողները, և ալնու. մի խօսքով, պ. Շիրաւնդադէն միևնույն նիւթին ալս անգամ ուրիշ չոր է հագցրել, ուրիշ կտորից և մի փոքր ալ ձևի. փոփոխւած է սարք ու կարգը։ Վէպիկը «անհատի և շրջանի փոխադարձ ազդեցութեան», մի նոր վա-

րիացիա է և գրւած է զգացմունքով։

Մի քանի խօսք վէպիկի գեղարւեստական կողմի մասին։ Գրւածքը թողնում է մի շուտափութ կատարւած գործի տպաւորութիւն։ Տեղի ունեցած դէպքերի մեծագոյն մասը սարքովի են և նորա մէջ չի նկատուում անհրաժեշտութեան կապ. դէպքերը մէջ են բերւած հերոսի ալս կամ ալն լատկութիւնը, բնաւորութեան ալս կամ ալն կողմը ցոյց տալու. սակայն, համեմատելով այդ նպատակին, հեղինակը զանց է առել մի ուրիշ բան, այն՝ որ ալդ դէպքերը ներքին կապից զուրկ են։ Գեղարւեստական գրւածքում (փոքր լինի թէ մեծ, ալդ միևնույն է) ամեն մի դէպք, որ պատմում է հեղինակը կամ նրա կողմից մի ուրիշը, պէտք է ունենալ իւր հիմքը անցած դէպքերում և իւր կողմից հիմք կազմի լատալալ դէպքերի, ալապէս նա կը լինի տնտարածների մի արհեստական խմբում։ Գեղարւեստի ալս պահանջին բաւականութիւն չի տալիս պ. Շիրաւնդադէի նոր գրւածքը. սակայն, չնայած գրան, նա տպաւոր-

րութիւնն է անուամբ որովհետեւ, ինչպէս վերն ասացինք, զգացմունքով է գրւած: Ուժեղ տպաւորութիւն արաւ մեզ վերաջ մանաւանդ աչն տեսարանը, երբ Սանթուրեանը (հետը) ուսանողներին ժողովում դնում է աչս հարցը. «Ո՞րն է լաւ. կնոջը ցեխի մէջ գլորելը, թէ ցեխից հանելը», և երբ բոլոր ուսանողները ամօթահար եղած ոչինչ չեն խօսում, որովհետեւ չափերն էին շատ անգամ շատ կանանց ցեխի մէջ գլորել: Արդեօք չէ վիշեցնում սա ձեզ մի ուրիշ ազգային տեսարան. «Ով որ ձեզանից անմեղ է, թող նա առաջին անգամ քար խփի աչս կնոջ»... Այսպէս պապանձեցնող է ամեն մի միտք, որ արդար է և տրամաբանական և որի արտապատուող նույն մտքի կրողն է և իրագործողը:

Կառնանք Սանթուրեանին: Ո՞վ է Սանթուրեանը: Մի մարդ, որ համարձակութիւն ունի ապրել իւր սեպհական համոզմունքների համաձայն և մտածել ալ կերպ, քան մեծամասնութիւնը: Այդպիսի մարդկանց մտքերի հետ կարելի է չհամաձայնել, բայց միշտ պէտք է նրանց լարդել: Համոզմունքի մարդը, ինչ էլ լինեն նրա համոզմունքները, եթէ նա նոցա համաձայն է գործում, արժանի է լարդանքի: Բայց ինչո՞ւ Սանթուրեանը իրան կերպ ինչպէս կրակ, Գրա զլխաւոր պատճառը մեք համարում ենք նրա ջղոտ կազմը և չափազանց տպաւորական լինելը, թէ և հեղինակն ուզում է ցոյց տալ, որ նա հասարակութեան մոլար կարծիքների դոճ էր: Վէպիկից ալ չի երևում: Ան-

հատն ու շրջանը կիսախուփ աչքերով են իրար վրա նայում վէպիկի մէջ, աչնպէս որ լաւ նկատելի է նոցա իրար վրա ունեցած ազդեցութիւնը: Հոգեբանական շատ նուրբ գիտողութեան և գրելու մեծ շնորհ է հարկաւոր ալ զվժար թեման մշակելու համար, և մենք ի հարկէ ալ տեսնելու լուսը չենք կարող ունենալ աչնպիսի մի շուտափութ գրւածքում, որպիսին «Արակն» է:

Սանթուրեանը մի մարդ է, որը երբ համոզւեց թէ մի միտք, մի դադափար ճշմարիտ է, չի թողնում նրան աչնպէս, անմշակ իւր մտքի ամբարում, ալ իւրացնում է, արիւն ու մարմին է դարձնում և զինուր է իւր դործառնութիւնների մոտիւր, զրդիչը: Բոլոր մարդկանց կարելի է երեք տեսակի բաժանել. նրանք, որոնք չգիտեն և չեն անում, որոնք գիտեն և չեն անում, և որոնք գիտեն և անում են: Սանթուրեանը հրորդ տեսակի մարդ է, շրջապատւած, մեծ մասամբ, երկրորդ տեսակի մարդկանցով: Այս վերջինները կազմում են մարդկութեան տականքը. ըստ որում՝ առաջինները մեղաւոր չեն որ չեն անում—չգիտեն. վերջինները իրենց պարտքը կատարում են, ուրեմն, արդար են: Յաւալին աչն է որ կեանքում ամենից լաւը, ամենից քիչը և ամենից դժբախտը Սանթուրեանն է և իւր նմանները...

Ձգւանքից աւել ուրիշ բան չի կարելի զգալ դէպի աչն ճահիճը և ճահիճ կազմող գորտերը, որի մէջ և որոնց շրջանում վիճակւել էր ապրել Սանթուրեանին: Եւ մարդ լցւում է «սրբազան բարկութեամբ», երբ նկատ-

տում է, թէ կեանքում ուժը միշտ մարդ-գորտերի կողմն է և որ կեանքի խնճովքը նրանց համար է սարքած: Իսկ Սանթուրեանները կորչում են անպատուութեան մէջ... Բայց այս Սանթուրեանը կրակ էր և իրան կերաւ, իսկ միւս Սանթուրեանները կարող են ապրել, և ահա՛ ինչ առաջնի համար բաղձանք էր միայն, երկրորդի համար իրականութիւն կը դառնալ,—նա կարող է մտնել հասարակութեան մէջ և գործել: Նրանց չի փոխի կեանքի հոսանքը. նրանք

կը կոտորեն, բայց չեն ծուլի, որովհետեւ նրանք չինւած են պողպատից: Անկախ մտքի, ազնիւ զգացմունքների տէր մարդիկն են որ հասարակութիւնը առաջ են մղում և հասարակութեան հալածանքները նոցա աւելի կոփում, ամրացնում են: Սանթուրեանները հեռուց են միայն վնասակար երեւում. մօտեցէ՛ք նրանց առանց նախապաշարման, և կը տեսնէք թէ ինչ սրտի և հոգու տէր են նոքա:

Ն. Աղբալեան:

ԺԻՎՈՏՈՎՍԿԻ,—«Տաքութիւն և օդ». Թարգմ. ռուսերէնից Ռուբէն Մելիք Մուսեանցի. Պետերբուրգ 1895, 40 էջ. գինն է 12 կոպէկ:

Նորերս Պետերբուրգում սկսեցին լուս տեսնել մի շարք հետաքրքրական չրքովներ, կողերի միենոցն գրաւիչ ու խորհրդաւոր պատկերով, չքնաղ կոյսը հպարտութեամբ ջահը բարձր բռնած լուս է տարածում, իսկ ընթերցասէր մանուկը նրա ոտքերի տակի պատւանդանի մօտ գետնին բերանքսիւմալ պառկած՝ հետաքրքրութեամբ գիրք է կարդում:

Մենք առաջին գրախօսութեան համար վեր առանք Ա. գրքովը վերջիչեալ մակագրութեամբ: Ժիվոտովսկին գիտէ բնական երեւթյունների մասին խօսել ժողովրդի հետ, նրան հետաքրքրել: Քարգմանութիւնն էլ ծանր լեզուով չէ, միայն թէ միշտ խոսք պէտք է տալ երկար պարբերութիւններից, որոնց մասերը հիւսած են լինում մի քանի շաղկապ-

ներով: Հիմա անցնենք մանրամասնութեանց:

Ջուտ գիտական տեսակետից նկատեցինք հետեւալ թերութիւնները:

Առաջ է. «լուսածինը ամենաթիկթիկ չլուսից անգամ իսկույն վառում է» Բայց աւելի է հետաքրքրական և քիմիական տարրերից բացառապէս լուսածնին չատուկ է օդի մէջ անմիջապէս վառւիլը, չնորհիւ թթւածնի հետ ունեցած ամենաբարձր աստիճանի «խնամութեան» (աֆֆինիտէտ): Սրա համար է որ լուսածինը միշտ ջրի տակ են պահում: Կարծում ենք, որ Թարգմանչի պարտականութիւնն էր լրացնել այս թերութիւնները, մանաւանդ որ նա զուտ Թարգմանութիւն չէ արել, այլ իւր կողմից տեղ-տեղ մեր կեանքից

երևութներ է մէջ բերել: Սակաջն կարծում ենք որ աւելի պատշաճ է, երբ թարգմանութիւն և ոչ թէ փոխադրութիւն է մակագրած, չաւելածները ներքեւ՝ իբրև նկատողութիւններ նշանակել:—Ջերմաչափի պատրաստելն ու գործադրութիւնը շատ հարևանցի է նկարագրած. մինչդեռ սրանք աչնպիսի հետաքրքրական բաներ են առողջապահական ու տեխնիկական տեսակետից, որ ամենից շատ կարող էին հարցասիրութիւն առաջացնել ուսումնադուրկ ընթերցողի մէջ: Յանկալի էր, որ մեր թարգմանիչներն ու հեղինակները խնդրի աչ կողմի վրայ առանձին ուշադրութիւն դարձնեն: Առարկաների լաւ կամ վատ հաղորդիչ լինելը, նրանց ընդարձակ ւեին ու սեղմելը ինքն ըստ ինքեան ժողովրդի համար զեռ աչնքան ուշադրաւ բաներ չեն, որքան աչդ երևութների գործնական հետևանքները:—Թերի է նոչնպէս օգհան մեքենայի մասին գրածը. եթէ միանգամ գրեում է նկարը և նկարադրւում, պէտք է նոչնպէս հասկացնել, թէ իսկապէս ինչ կերպ են օղը դուր հանում, աչն ժամանակ կ'երկար ծորակալներից մէկի պակասւնիլը, որ միտցի տակի օղը դուրս պէտք է հանէր և ապա պիտի արգելէր արտաքին օղի ներս մտնելը: Ահնուհետ աչնս զժլար չէր և շատ հետաքրքրական կ'լիիէր օգհան մեքենայի մի քանի չափնի փորձերը նկարագրել:—

Անորոշ են աչս խօսքերը. «...իւրաքանչիւր առարկայ ծանրութիւն ունի. թէ այդ ծանրութեան պատճա-

ռով եւ թէ աչն պատճառով, որ երկիրը ամեն ինչ իրեն է ձգում, մեր վերև զցած առարկան էլ ուղի, չուղի՝ նորից երկրի վրայ պէտք է ընկնի»: Ուրեմն առարկաների ծանրութիւնը երկու պատճառ ունի:—Նոչն թերութիւնն ունեն նաև հետևեալ խօսքերը. «Ջերմաչափը առհասարակ չինում են կամ սպիրտով և կամ սնդիկով, (աւելի որոշ չէր լինիլ ասել, որ Ջերմաչափի մէջ լցնում են...), որոնք տաքութիւնից շատ զօրեղ ու համաչափ են ընդարձակւում կամ լալնանում»: Հստարակ ընթերցողը, կարծում ենք, պարզէ ի պարզ աչնպէս կը հասկանա, որ միևնույն ատոմիանի ջերմութիւնը նոչն չափով է ընդարձակում թէ մի և թէ միւս հեղուկը: Բայց աչսպէս է եղել գրողի նպատակը:—Սնդիկն էլ ջերմաչափի մէջ առանց ալիալութեան չի լցւի. հետաքրքրական ու հարկաւոր էր բացատրել:

Գալով աչժամ հեղինակի մեծողին՝ մի հիմնական սկզբունքի նա միշտ հետևում է. նախ փերձերը, օրինակները, ապա եզրակացութիւնները: Բայց կարծում ենք որ հեղինակը արած փորձերի գործնական հետևանքները կամ իրական կեանքում նրանցից օգուելու կերպերն էլ առանց ալ և ալութեան չպէտք է նկարագրէր. ժողովրդին ինքնուրոյն կերպով երևութները հասկանալ սովորեցնելու համար նա, օրինակ, աչսպիսի հարցումներ պէտք է առաջարկէր. «Բնչու ալւուղ լուծկին բռնելիս՝ նա մեր ձեռքը չի վառում, իսկ կրակի մէջ մի ծալրով դրած ունելին վառւում է. ինչո՞ւ հեշտա-

եռի կտփարիչի բռնելու տեղերը ոսկրեալ են չինում», և այլն: Նոյնը պէտք է նկատել նաև 9—15 էջերում ասածները վերաբերմամբ: Գրքի վերջն էլ կարելի էր սլատասխանները դնել:

Լեզուական Ձի կարելի ասել «օղին» տեսնել, լսել, ալլ օղը (հայցական հոլով):—Նոյնպէս չեն ասում «ոչմիաչն, ալլ», պէտք է... այլ եւ—«Ուժատալառ» պէտք է՝ ուժատալառ.—Միենոյն բարդ նախադասութեան մէջ «պատահում... պատահում» կրկնութիւնը ճաշակի ընդդէմ է: «Մեղ մօտ» դարձածը, որ մի քանի անգամ է կրկնում, հակական է. մենք ասում ենք ալս դէպքում՝ մեղանում, ալլ դէպքերում՝ մեր մէջ:—

Թէև հասարակ ընթերցողի համար ալս գրքովի մէջ դժար հասկանալի բառեր ալլ, քան շատ չկան, ահուամենայնիւ եղածներն էլ՝ «ձողիկ, բորբոքումն, ալսէ, պատանդան, ծխնելոց» և ալլն պէտք էր բացատրել, ինչպէս ալլ շատ անգամ արել է թարգմանիչը: Բայց պէտք կալ արդեօք ժողովրդի համար գրւած գրքերում բացատրել ալլպիսի համեմատաբար հեշտ համարւած բառեր, ինչպէս «ճնշում, խողովակ, հարթ, արտասովոր, քառանկիւնի, ուկիանոս»...: Կարծում ենք որ մեր նոր սերունդից միայն ուսումնարանում մի քանի տարի եղածները կարող են հասկանալ, իսկ մնացածները՝ ոչ:

Յ. Տ. Մ.

ԱՆԴՐԵՅԵՒՆ, Մ.—Աղքատի բախտը: Թարգմ. ռուսերէնից: Թիֆլիս տպ. Յ. Մարտիրոսեանցի. էջ 27. գինն է 5 կոպէկ:

Այս գրքովը թէև ունի ճակատում «Նէր մանուկներին» մակագրութիւնը, սակայն կարծում ենք, որ հատակաւորին էլ կարող էր նրա բովանդակութիւնը խրատական լինել: Նկարագրում է Սաւօլիացի խեղճուկ մանուկի, Հենրիխի կեանքը Պարիզում. մի կողմից մեծափարթամ մալրաքաղաքի քարասրտութիւնը, միւս կողմից միամիտ ու հրեշտակալին զգացմունքներով սողորած փոքրիկ եկեղորի կեանքը, որի նպատակը հեռաւոր ու անտէր մնացած մօր սնուցանելն է: Չարքաշ կեանքի մատնւած, ծխնելոց սրբող Հինրիխը նալն

իսկ առաջին ամենաուսահատական օրում մի թանկագին մէղալիօն գրտնելով՝ միայն մի վալրկեան է մտածում օգուտ քաղել նրանից՝ ծախել ու փողը մօրը ուղարկել, բայց խկոյն մտաբերում է իւր առաքինի ծնողների խօսքերն ու գործքերը և վճռում է պահել դտածը, մինչև որ տիրոջը մի կերպ դանի: Տիրոջն էլ գտնելով նրա առաջարկած նւէրը մինչև անգամ մերժում է ասելով՝ «աղնուութեան համար ես վճար չեմ վերցնում», և երբ իւր նշանածը լանդիմանում է նրան ալս բանի համար, նրանց տանից ու նրանից խտառ

հեռանում է: Վերջն էլ նկարագրում է ծերութեան հասակի բարեգործութիւնը:

Մենք՝ դիտեցինք, որ այս գրքովը կարող էր նաև հասակաւորներին ընթերցման նիւթ ծառայել, որովհետև նրանք կը տեսնէին, թէ ինչպէս մեծ է ծնողի խօսքի և մանաւանդ բարի գործի ազդեցութիւնը մանկան ներքին աշխարհի վրայ, թէ ինչպէս անջինջ կերպով մնում են փոքրիկների չիշողութեան մէջ նրանց կեանքի առաջին տարիների տպաւորութիւնները: Մանուկը կարծես ոչ հետաքրքրուում և ոչ էլ տեսնում է կեանքի բարոյական կամ անբարոյական երևութները, սակայն նա խաղալով դիտում ու գնում է շրջապատողների գործքերը:

Նիւթը թիթև ու գրածքը սահուն է, սակայն կարծում ենք, որ աւելորդ չէր լինի մի անտէր մանուկի գոյութեան կռիւը, նորա չարքաչ կեանքը աւելի ուրիշ կերպով ներկայացնել, աւելի վեր հանել նրա տանջանքները, որպէս զի այդ թշուառ ու խեղճուկ սրտի մեծահոգութիւնն աւելի խոր տպաւորութիւն գործէր:

Մի փոքրիկ նկատողութիւն. 11-դ էջում հեղինակն ասում է, որ մէղալիօնը 500 ֆրանկից էլ աւելի արժէր, իսկ 20-դ էջում՝ թէ 200 ֆրանկ էլ չարժէր: Թէև այս անգամ գտածի

տէրն է խօսողը, սակայն հանգամանքն աչնալէս է, որ պէտք չկար սուտ խօսելու:

Թարգմանութիւնն ընդհանրապէս աչն տպաւորութիւնն է թողնում, որ թարգմանիչը ձգտել է ազատ մնալ օտար լեզւի ազդեցութիւնից: Սակայն ալպիսի դարձածը... «Իսկ երբ գտնում էին, որ այդ զէմքը նրա ազնիւ հոգու արտացոլումն է...» հաւկական չէ: Աչնպէս է երևում, որ Ի ԲԱՅՈՋԻ և սրա նման դարձածները բառ առ բառ թարգմանելը մեղանում հաստատ արմատներ են ձգում. թէ ասում և թէ գրում են:

Կարծում ենք, որ սխալ է նաև չէղոք բացերի մէջ ու կրաւորակերպ մասնիկը գնելը. «զատկավայրերի վրայ, որոնք դարձուած են ¹⁾ դէպի Ժենեւի լիճը»... Ոչ միայն մանուկներից շատ շատերը, այլ և հասարակ ընթերցողը կարող է անծանօթ լինել «փերեղակ, մալթ, արտացոլում, փանդեռ, բաղխից, ծխնելոզ» բառերին: Անչուշտ պէտք է հարստացնել մանաւանդ կովկասեան հաւ մանուկ ընթերցողների բառերի աղքատիկ պաշարը, բայց բացատրելով «Ջանբազ» բառն էլ կարելի էր ուրիշով փոխարինել:

Յ. Տ. Մ.

¹⁾ Ուղիղն է՝ որոնք դարձրած են: Ման. խմբ.

ՀԵՂԻՆԱԿ?—«Փոքրիկ Հեղինէի երազը»։ Փոխադր. ռուսերենից Յովհաննէս Արաբաջեանցի։ Սէքսանդրապոլ, տպ. Գ. Սանոյեանցի 1896 թ., գինն է 5 կոպ.։

Փոքրագիր 58 երեսներից բաղկացած այս գրքիչիլը, ինչպէս երևում է, անձանթի հեղինակը բանաստեղծել է Հեղինէի հասակակիցների համար։ Այս փոքրիկն արդէն պարպել է մինչև դիշերաւ ժամը 10¹/₂, անկողին է մտնում հանգստանալու և ահա հեղինակը նրա մօտ երազի մէջ ուղարկում է մի խորհրդաւոր մարդ, որ առաջարկում է փոքրիկին իրան հետեւել։ Սա առաջ վախենում է, չի ուզում լսել «անձանթի քաղցր ձայնը», սակայն լետու, ինքն էլ չգիտէ թէ ինչպէս, լանկարծ գիշեր ժամանակ փողոցումն է գտնուում։ Ասենք, բանաստեղծութիւնը կարող է շատ բան ստեղծել, բայց չպէտք է ամեն տեսակ բան նկարագրէ, որպէս զի բնականի և բանականի սահմաններից դուրս չգալ։ Այստեղ մեր փոքրիկ հերոսուհին իւր գիշերաւ երազային ուղեորութեան ժամանակ ոչ միայն տեսնում է հացագործի, երկրագործի, կառապանի, դերձակի աշխատանքը, այլ և նա հանդիսատես է լինում թատրոնի և պարահանդէսների շքեղութիւններին, որոնց վերջինի մասին նա «գաղափար անգամ ունեցած չէ եղել»։ Նա այնքան է գրաւում այդ բանով որ այնքա չի ուզում հեռանալ և միևնույն ժամանակ ահա թէ ինչ եղբակացու թեան է դալիս. «բոլոր մարդիկ աշխատում են... ևս չեմ կամենում

քնել»։ (Հապա վաղաւ դասերդ)։ Բայց առաջնորդն այնքան բարի է, որ չի չեցնում է Հեղինէին առողջապահական կանոնը, քնելու անհրաժեշտութիւնը։

Չմոռանալով որ փոքրիկը մինչև ժամը 10¹/₂ դասերն էր պատրաստում, արդ հարցնենք, թէ ինչ է եղել հեղինակի նպատակը. աշխատասիրութեան օրինակ տալը, բայց միթէ թատրոն ու պարահանդէսն էլ երկըրագործութեան պէս բաներ են։ Եթէ ենթադրենք, որ հեղինակը կամեցել է փոքրիկ ընթերցողներին միտքը զարգացնել, մատակարարած նիւթը այնքան խեղճուկ է, որ չարթն գրադեցնել նրանով։ Աւելի լաւ չէր լինիլ փոքրիկների մտքին ու սրտին միայն մօտ բաներ ընտրել ու աւելի նկարագրել, որ հրահանգիչ լինէր։

Գալով փոխադրողին՝ քանի որ նա, պ. Արաբաջեանցը, այս գրքիչիլը ոչ թէ թարգմանել, այլ փոխադրել է, աւելի ազատ պիտի եղած լինէր՝ փոքրիկ ընթերցողների հասկացողութեանը համակերպելու սրբա մէջ գործածւած շատ բառեր՝ մարմաշ, արտեանունք, մառախուղ, սուսեր, «չուներ», ծխնելուղ, որոս, մերթ և ալին նոր սկսողին անհասկանալի են։

Մենք համամիտ ենք Թիֆլիսի Հ. Հր. Ընկ. Ընդհ. ժողովում պ. Սաբոխանեանցի արտապատած այն

կարծիքին, որ «ժողովրդական դժբա-
ղոյնների հրատարակութեան համար
լաւ կ'լինէր գերադասել ազատ թարգ-
մանութիւնը»: Բայց բէլլետրիստի-
կայի փոխադրութեան գործում շատ
զգուշ պէտք է լինել. ալս կարգի
«ժողովրդական կամ պոպուլէր» դժբ-
աւոյնները ինչպէս մեզանում, նոյն-
պէս էլ ալլ երկրներում առհասա-
րակ անհամ ու անզուց բան են դառ-
նում, հիանալի կլասիք գրածքների
ուրականն է ներկայանում ընթեր-
ցողին: Սակայն ալս մասին մենք
չուտով առիթ կ'ունենանք խօսելու:
Քանի որ մենք մանկական և
առհասարակ ժողովրդական ընթեր-
ցանութեան գրքերի համար վերա-

հսկիչ ազատ ընկերութիւններ չու-
նենք, որ իւրաքանչիւրի արժանիքը
սխտեմատիկաբար և անաչառու-
թեամբ գնահատել կարողանալին,
մնում է առաջին հրատ. ընկերու-
թեանը՝ տարին մի երկու անգամ
ընտիր գրքոյկների ցուցակներ հրատարա-
կել համառօտ բովանդակութեամբ: Սա
նամանաւանդ անհրաժեշտ է գաւա-
ռացի թարգմանիչներին, որովհետեւ
սրանք համարեա բոլորովին զուրկ
են ընտրութեան միջոցներից: Մենք
կարծում ենք, որ օր. պ. Արաբա-
ջեանցն էլ իւր ձեռքի տակ եղած
գրքերից լաւագոյնը պէտք է փոխա-
դրած լինէր:

Յ. Տ. Մ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Օգոստ. 14-ի կոտորածի առթիւ:—Գաղթող հայեր:—Սքտրւածներ:—Նոր կոտորածներ:—Դրան գործողութիւններ:—Պետութիւնների գործողութիւններ:—Անգլիայի զիրքը:—Գերմանիա:—Շէքարիա:—Գլադստոն եւ Ռոզքէրի հրաժարականը:—Նպաստների գործը:—Պատրիարքարանի գործողութիւններ:—Պատրիարքի ընտրութեան խնդիրը:—Արտայայտութիւններ:

Օգոստ. 14—16-ի կոտորածը

Թիւրք կառավարութիւնը զէպքի առիթով հրատարակեց այն հեռագիրը, որ նա ուղղել էր մեծ պետութեանց ներկայացուցիչներին.

«Հաջ ցեղափոխականների ձեռքով Կ. Պոլսում կատարւած վերջին անկարգութիւնների ժամանակ վիրաւորել են 236 հոգի թիւրք օֆիցէր զինւորներ ու խաղաղ մահմեդականներ, որոնք մասնակցում էին կարգը վերականգնելու գործին. սպանւածների թիւը նույնքան է: Վաղաքի զանազան հիւանդանոցներում գտնուող վիրաւորների թշուառ վիճակին տեղեկ են նաև Կ. Պոլսի եւրոպական դեսպանատների մի քանի անդամները: Հաջ ցեղափոխականների մօտ գտել են 118 ռումբեր, զինամիտալին փափուկներ և ուրիշ պայթուցիկ նիւթեր»:

Դեսպաններից, օգոստ. օգոստ. 14—16-ի կոտորածների միջոցին ամենից շատ հովանաւորութիւն կարողացաւ ցոյց տալ ռուսաց դեսպանատունը, որը մի յատուկ խանութ տեղաւորեց մինչ 600 հաջ, ռուսաց դրօշակի տակ, տալով նոցա անցագրեր Կ. Պոլսում ազատ շրջելու համար:

Օգոստոսի 14—16-ի կոտորածների ժամանակ զերմանական դեսպանատունը, Բերլինի Նորդորգէշտէ Ալք. Յէյտունգի ասելով, պատասպարել է 30-ից աւելի փախստական հայեր (մի հոգւորական,

կանայք, երեխաներ և երիտասարդներ), և իբր զրանից աւելի չէին մեցին գերմ. զեսպանատուն, որովհետև սա զտնւում է գրեթէ թիւրքաց թաղում, ուր հայերը չէին վստահանում գնալ:

Մարտէլ հասցրած 17 հայերից, որոնք Օտտոմանեան բանկն էին մոել, պարագլուխներ Գարօ և Հրաչեայ ժընեւ ուղարկեցին, մնացածները՝ Հարաւային Ամերիկայի Արգենտինեան հանրապետութեան Բուէնոս-Այրէս մայրաքաղաքը: Այդ կարգադրութեանը դէմ, որ արւած էր Ֆրանսիական կառավարութեան կողմից, բողոքեցին արսորւածները, որոնք սակայն ազդարարեցին, որ եթէ նոքա իրենց հանգիստ չպահեն՝ նորից Մարտէլ բանուը կ'ուղարկեն:

Սեպտեմբերի 7/19-ին ձերբակալեցին հայկական զաղտնի զաշնակցութեան անդամներից 43 հոգի և նոցա մէջ «Աբդուլլա եղբայրներ» պալատական լուսանկարչութեան կառավարչին, որը, ինչպէս թիւրք կառավարութիւնը յայտնեց, զաղտնի կոմիտէի գանձապահն է եղած:

Թիւրք կառավարութիւնը մեծ եռանդով սկսեց խուզարկութիւնների գործը. Ռումբեր և այլ յեղափոխական պատկանելիներ գտնւեցին աներում, եկեղեցիներում, դպրոցում: Մինչև սեպտեմբերի 12-ը զիշերը գտնւած էին 242 ռումբ: Ռումբեր գտնւել են Դալաթիայի մեծ եկեղեցում և նորան կից զտնւող հայոց դպրոցում: Ոստիկանութիւնը դրել է նաև զգեստներ, որոնցով հայ յեղափոխականները ծաղուում էին իբրև թիւրք զինուորական ուսանողներ և մինչև անգամ իբրև թիւրք կանայք:

Գտնւած ռումբերը թիւրք կառավարութիւնը դրեց ի ցոյց հասարակութեան զինարանի շինութեան մէջ: Ինկատի ունենալով այն յուզմունքը, որ առաջացնում էր ցուցահանդէսը, վերջինս փակեց միայն զեսպանների պահանջմամբ, ըստ հեռագրի 17 սեպտեմբերից:

Շաքիր-փաշայի նախագահութեամբ կազմւած աքսորման յանձնաժողովը, որ նշանակւած է հայերին Պալսից աքսորելու խնդրի համար, որպէս հեռագրեցին Ռէյտերի գործակալ. սեպտ. 9-ին (հին տոմար), կաջացրեց հետեւեալ վճիռները. հասարակ կասկածի հիման վրայ այլ ևս չկալանաւորել և չաքսորել հայերին Կ. Պալսից. ոստիկանութեան միջոցով յորդորել հայերին որ սոքա վերադառնան

իրենց զբաղմունքներին. օտարահպատակների մօտ ծառայող հայերին չկալանաւորելու դէպքում՝ տեղեկացնել նախօրօք հիւպատոսներին. հիւպատոսները պէտք է հրահանգ տան իրենց երկրի հպատակներին՝ որ թիւրք ոստիկանութեան պահանջմամբ վկայութիւն տան նոցա մօտ ծառայող հայերի բարեմօտութեան մասին. հարուստ հայերը ազատ պիտի լինեն և. Պոլսից արտասահման գնալ. խնդրել հիւպատոսներին որ սոքա չնպաստեն հայերին արտասահման գնալ առանց անցագրերի:

Օգոստոսի 14—15-ին և. Պոլսում եղած կոտորածների առթիւ մեծ պետութիւնների ներկայացուցիչները նոյն այդ օրերը ուղղեցին Բ. Պրան հետեւեալ հաղորդագրութիւնը:

«Մեծ պետութիւնների ներկայացուցիչները իրենց պարտքն են համարում Բ. Պրան ուշադրութիւնը դարձնել վերջին արեւմտահայ կոտորածների միջոցին ակնաւորի դարձած մի անսովոր լուրջ հանգամանքի վրայ: Այդ աչն է, որ հայերին կոտորող և նոցա տները ու խանութները կողոպտող վալիների հրոսակները պատահական խմբեր և ֆանատիկոս ժողովրդի լանկարծական զումարումներ չէին, այլ չատուկ կազմակերպութեան արդիւնք էին, որոնց մասին գիտէին և որոնց գուցէ ղեկավարում էին կառավարութեան գործակալները:

1) «Հրոսակախմբերը միաժամանակ երևացին մալաքադաքի զանազան կէտերում՝ հէնց որ չալտնի եղաւ հազ փեղափոխականների ձեռքով բանկ գրաւելու լուրը, նախ քան ինքը ոստիկանութիւնը կամ մի որ և է զինւած ուժ երևաց անկարգութեան բեմի վրայ:

2) «Այդ հրոսակախմբերը կազմող ժողովրդի մեծ մասը հագնւած էր և զինւած միևնույն եղանակով:

3) «Նոցա առաջնորդում էին և ուղեկցում սոփթաներ, զինւորներ կամ նոյն իսկ ոստիկանական պաշտօնեաներ, որոնք ոչ միայն հանդիսատես էին լինում խմբերի գործերին, այլ և երբեմն նոյն իսկ մասնակից էին լինում նոցա:

4) «Գաղտնի ոստիկանութեան մի քանի գլխաւորներ նկատու են քաջիբուզուկներին մահակներ և դանակներ բաժանելիս և նոցա չարժման ուղղութիւններ տալիս:

5) «Այդ մարդիկ ընդունակ եղան իրենց չանցաւոր գործունէութիւնը կատարել ազատ և անպատիժ կերպով նոյն իսկ զինւորների և օֆիցերների ներկայութեամբ և նոյն իսկ կալսերական պալատի առաջ:

6) «Գեոպոլիտիկայի մէկի (Ըռւապ) թարգմանի ձեռքով կալանաւորւած մարդասպաններից մէկը չալտնեց, որ զօրքերը նորան չեն համար-

ձակիլ ձերբակալել և երբ նորան տարան իլդիլի պալատը, ահտեղ նա ընդունեց իբրև ծառայողներին ծանօթ անձն։

7) «Ներպագիրների մօտ ծառայող երկու թիւրքեր երկու օր, կոտորածի միջոցին, անհետացան և երբ վերադարձան՝ չալտնեցին, որ նոցա տեւ էին մահակներ և դանակներ և պատուիրել էին սպանել հաւերին։

«Այս ֆակտերը մեկնութիւնների կարօտ չեն։ Նոքա լուսաբանում են Անատոլիայում տեղի ունեցած կոտորածները։

«Պետութիւնների ներկայացուցիչները խոստանում են իրենց կողմից նպաստել քննութեան գործին՝ առաջ բերելով բոլոր չալտնի իրողութիւնները ականատեսների միջոցով։

Օգոստոսի 14 և յաջորդ օրերը եղած կոտորածների պատճառները քննելու համար Կ. Պոլսում սուլթանը կազմեց յանձնաժողով բաղկացած 2 ֆրանսիացիներից, 2 անգլիացիներից, 1 հոլանդացուց և 1 գերմանացուց։

Գ ա ղ թ ո ղ հ ա յ ե ռ

Դեռ ևս սեպտեմբերի 6-ից տւած ռուսաց զործակալութեան հեռագրի համաձայն՝ մինչև այդ օրը Սև-ծովի նաւահանգիստները և Ռուսչուկ եկած էին աւելի քան 2000 հայեր, որոնք արտասահմանեան անցագիրներ ունէին։ Վարնա, Ռուսչուկ և Բուրգասում կազմակերպւում էին նպաստամատոյց յանձնաժողովներ։

Լորդ Սալիսբուրի հաղորդեց Անգլո-հայկական բարեգործական կոմիտէին, թէ նա ստացել է անգլիական դիպլոմատիական գործակալից Սոֆիայում հետեւեալ տեղեկութիւնները Բոլգարիա եկած հայերի մասին. մինչև սեպտ 12 (24) Կ. Պոլսից եկել են Բուրգաս 475 հայ, որոնցից 20-ը այնքան աղքատ, որ քաղաքը նոցա հաց բաժանեց. հաց բաժանելը վերջացաւ սեպտ. 12 (24-ին). Ֆիլիպպոպոլ մինչև նոյն ժամանակ եկան մօտ 150 հայ, որոնք ունեւոր դասակարգից էին. Վարնա եկան Կ. Պոլսից մինչև 14 (26) սեպտ. 5.900 հայ, որոնցից 1.500 ուղարկւեցին Ռուսչուկ. նոցա մէջ շատ կանայք և երեխաներ։ Վարնայում կազմեց օգնութեան յանձնաժողով բոլգարներից և հայերից. յանձնաժողովը՝ միջոցների սղութեան պատճառով՝ զիմեց անգլիական կոմիտէին. փախստականները մեծ մասամբ օրավարձ մշակներ են և ծառաներ։ Բոլգարիայում, ուր քիչ գործ կայ, նոքա մնալ չեն կարող. երկրագործութեան

ծանօթ փախստականներին բոլգարական կառավարութիւնը տալիս է հողի կտորներ և հարկաւոր մթերքներ, բայց սեփական միջոցներով նոքա կարող կը լինեն իրենց պահպանել միայն մի տարուց յետոյ. Վարնայում հիւանդանոցը լիքն է հիւանդներով, և այդ պատճառով հիւանդացած հայերին տեղաւորեցին կարանտինի շինութեան մէջ. Բոլգարիայի ներսի քաղաքներից մի քանիսը արդէն մերժեցին հայերին ընդունել այն հիման վրայ, որ զործ չլինելու պատճառով նոքա միայն բեռը կը լինեն:

Մեծ թւով դաղթականներ գալիս են նաև դէպի Ռուսաստան. աւելի վաղ սկսեց Բաթում, և ապա, օգոստոսի վերջից սկսած, Ղարս, Սարիղամիշ, Իգդիր և Պարսկաստանի վրայով դէպի Հին-Տալիշեան: Սեպտեմբերի 22-ին Վանի ռուսաց հիւպատոս Մաեովու հետ Իկտիր հասան մօտ 400 վանեցիք, գրեթէ բացառապէս տղամարդիկ: Երևանեան նահանգն եկողները գալիս են Արճեշից և Վանից, որի բնակիչներից, ըստ Արարատի, հարիւրաւոր անձինք միանալով ռուսաց հիւպատոսի կարաւանին՝ եկան Ս. Էջմիածինը, որը պատասխարել է օրական 500—600 դաղթական, որոնք միշտ տեղի տալով նորեկներին, ցրւում են դէպի կենտրոնական քաղաքներն ու հայաբնակ գիւղերը: Առանձին զովութեան արժանի են հայ աղքատ գիւղացիք, որ երկար ժամանակով խնամում են բազմաթիւ ընտանիքներ: Գաղթականները, սննդի պակասութեան պատճառով, ենթակա են զանազան հիւանդութեանց, մանաւանդ ճարակում է նոցա մէջ տիֆը: Վեհ. Հայրապետի հրամանով վանքի գիւղի միջի տունը, նախկին տղայոց դպրոցը, փոխարկւել է հիւանդանոցի, ուր տասնեակ հիւանդներ են խնամւում ձեմարանի բժշկի ձեռքով: Գաղթականների մի մասն ևս վանքի գոմանոցում է, որոնց վրայ հոգածութիւն ունին ձեմարանի սարկաւազ աշակերտները:

Մինիստրական արտակարգ խորհուրդը սեպտ. 26-ի հեռագրի համաձայն, քննում էր արտասահման գաղթած հայերի գոյքը գրաւելու ինտիքը: Մինչև որ այդ խնդիրը լուծւի՝ դադարեցրին հայերին պատկանող գոյքերը ցուցակագրել:

Սուլթանի իրադէտով նախ արգելեց հայերին թողնել մայրաքաղաքը:

Հայ գաղթականութիւնը կազմակերպելու և Հայերը Ամերիկա

գաղթեցնելու ծրագիր էր յղացած ամերիկական մի ընկերութեան կողմից, որի ներկայացուցիչն է միսսր Հովարդ: Առաջարկի միտքը այն է որ Տաճկահայերը դորանով ազատեն կոտորածից, սովից և անտէրութիւնից կորչելու վտանգից: Բայց ծրագիրը պիտի մնայ անգործադիր, նախ որովհետեւ գէթ մի կէս միլիոն հոգի գաղթեցնելու համար պէտք է շատ միլիոն դոլլար, պէտք է հող զնել և այլն, և պէտք է կարողանալ ստիպել Թիւրքիային, որ թոյլ տայ այդ գաղթականութիւնը: Այդ մտքով խօսեցին նաեւ ամերիկական լրագիրները:

Կ. Պոլսից Պարիզ են հասել շատ հայեր. նոցա ասելով Աթէնքում և Մարսէլ ամեն մէկում 1500 հայեր են հաւաքւել:

Աքսորւածներ Կ. Պոլսից:

Դեռևս յայտնի չէ թէ Կ. Պոլսից օգոստ. 14-ի դէպքերից յետոյ որքան հայեր կառավարութեան հրամանով քսորւած են ներքին գաւառները. կարծում է թէ դոցա թիւը 16.000 է, չհաշւած արտասահման գաղթածներին. և ոչ էլ ստոյգ յայտնի է թէ ինչ է կատարւում այդ քսորւածների հետ. կարելի է սակայն ամենավասեղծութիւններ անել և կարծել որ նոքա սպանւում են: Գոնէ Վիեննայի կիսապաշտօնական «Պրէսս» լրագրում տպւեց Պոլսից տւած մի հեռագիր սեպտեմբերի 14-ից «Յար Նիկոլա II» գերմանական առևտրական շոգենաւի կապիտանի պաշտօնական զեկուցման մասին, որի համաձայն մի շաբաթ առաջ թիւրքական նաւով Պոլսից Տրապիզոն հասցրած 350 հայերին նոյն օրն և եթ նաւահանգստից մի ժամ հեռաւորութեան վրայ կոտորեցին:

Նոր կոտորածներ

Ալնի (Եգինէ) կոտորածի մասին թիւրք կառավարութիւնը Էւրոպական կաբինէտներին հաղորդեց հետեւեալը.

«Հապըը Էգինէտում, նոր անկարգութիւններ լինելու անհիմն երկիւղների ազդեցութեան տակ, ալրեցին և թողին իրենց ընակարանները և թափնեցին քաղաքին մօտ սարերում: Ջօրքը, որ ուղարկւել էր համոզելու նոցա տուն վերադառնալ, ենթարկւեց բարձակմունքի և ընդունեց հրացանաձգութեամբ: Չնախելով ալը հալերի ցոյց տւած ապստամբական

ողուն, կախերական կառավարութիւնը բոլոր միջոցները ձեռք առաւ ազգային անկարգութիւնների առաջն առնելու համար»:

Այնի (Խարպուտի կամ Խարբերդի վիլայէթում) կոտորածի մասին Ռէյլի Նիւսը առաջինն եղաւ որ հրատարակեց սեպտեմբերի 10-ին (հին տոմար) Պոլսից ստացած տեղեկութիւնը. դորա համեմատ ամերիկական միսսիան զեկուցագիր ստացաւ, թէ Այնում տեղի ունեցաւ մի նոր խիստ մեծ կոտորած: Անկարգութիւնները շարունակուեցին երկու օր ու զիշեր սեպտեմբերի 3-ին և 4-ին. քիւրդերը յարձակումն գործեցին հայոց թաղի վրայ, կոտորելով 600 հայ:

Աւելի կարեւոր են հիւպատոսների զեկուցագրերը, որոնց համաձայն, ըստ ուսու գործակալութեան, Այնում կոտորած եղաւ սեպտ. 3-ին. անկարգութեանց հիմք ծառայել էր Պոլսից հասցրած լուրը թէ հայերը պատրաստուեւ են յարձակելու: Այնում եղած են 1.150 հայ տներ, որոնցից 950-ը բոլորովին կործանւեցին, բոլոր տները կողոպուեցին, և այդ միջոցին 2.000 հայ սպանեց, դոցա մէջ 50 կին և երեխայ:

Սեպտեմբերի 9-ին, համաձայն «Թան» լրագրի տեղեկութեան, Անդորում մահմեդականները վիրաւորեցին տասը հայ-կաթոլիկ և քաղաքը ազատեց նահանգապետի ցոյց տաւ ընդդիմադրութեան շնորհիւ:

Երզնկայում եղած կոտորածում քիւրդերի ձեռքով սպանւած հայերի թիւը 600 է հաշււում:

Ռէյսերի գործակալութիւնը հաղորդեց նաև որ անկարգութիւններ տեղի ունեցան նաև Խարբերդի նահանգի Դիւմիւշմաղան տեղում:

Դրան զործողութիւններ

Սեպտեմբերի սկզբներին, Սուլթանի հրաւերքով, Օղեսայի զինւորական շրջանի զլխաւորը և Աթէնքի ուսսաց զինւորական ազէնոր քննեցին Դարպանել նեղուցի ամրութիւնները, որից յետոյ նոքա զեկուցում տւին սուլթանին նեղուցը պաշտպանելու համար եղած պակասութիւնների մասին:

Այդ դէպքը յամենայն դէպս ցոյց տւեց այն հաւատը որ ունի Թիւրքիան դէպի Ռուսիան, ընդդէմ Անգլիայի:

Սեպտ. 20-ին Ռուսաց գործակալութիւնը հեռազրեց, թէ

սեպտեմբերի 19-ին սպասող խառնակութիւնների առիթով՝ ոստիկանութիւնը և զօրքերը միջոցներ ձեռք առան, բայց հանգստութիւնը մինչև երեկոյ չխախտեց: Ազգաբնակութեան հետզհետէ խաղաղեցում չոյսը աճում է:

Ֆիլիսոփայութիւն հրատարակող «Ղալբէտ» թերթը հակառակական ուղղութեան համար դադարեցւեց:

Հայ ազգեցիկ երեւելիներից մէկը, Ապիկ Եփէնտի, ըստ հեռագրի Ռուս. Գործակ., կանչւած է դատարան, որովհետև կասկած կայ, որ նա պատկանում է հայոց չեղափոխական կոմիտէին:

Դատարանը Ապիկ Եփէնտին դատապարտեց երեք տարի բերդարգելութեան: Նա առաջարկեց մի միլիոն զրուշ գումար իւր ազատելու համար, խոստանալով ետ կանգնել նոյնքան գումարի գանձարանի դէմ ունեցած դատաստանական պահանջից:

Սեպտ. 21-ից Պոլսից հեռագրեց, թէ թիւրքաց կառավարութիւնը կալանաւորեց հայկական շարժման պարագլուխներից մէկին, Ալազեան անունով: Սա մի ամբողջ շաբաթ թաղնւած է եղել Պերայի արւարձանի տներից մէկի ներքնատան մէջ: Միաժամանակ ոստիկանութեանը աջողեց նշանաւոր դոկումէնտներ գտնել: Ձերըւկալութիւնները շարունակուում են Կալանաւորւածներից մէկը՝ Մէր-Էիլեան անունով, որ մի հարուստ հայ է, երբ ոստիկանութիւնը նորա տունն էր մտնել ու գում, ինքնասպանութիւն գործեց. իսկ նորա տան մէջ ապրող հայերը չէին թոյլ տալիս խուզարկութիւն կատարել և զինւած ընդդիմութիւն ցոյց տւին: Այնուամենայնիւ տան մէջ գտնւեցին մի քանի պաշտօնցիկ նիւթեր, որից յետոյ տան բոլոր բնակիչները կալանաւորեցին:

Սեպտեմբերի 5-ն սուլթանը իրադէ հրատարակեց, որով հրամայում է ռեֆորմներ մտցնել ոչ միայն հայկական վեց վիլայէթներում, այլ և թիւրքաց կայսերութեան բոլոր վիլայէթներում!

Արտակարգ ռատարանը իւր կազմակերպւելու օրից առաջին անգամ միայն սեպտեմբերի վերջերքը մահւան պատժի դատապարտեց մի քանի մահմեդականների, որոնք մեղադրուում էին կոտորածների և կողոպտումների անելու համար Կ. Պոլսի խառնակութիւնների ժամանակ: Մինչև այդ ժամանակ մեղադրող մահմեդ. ազատուում կամ թեթեւ պատժի էին ենթարկւում: Սեպտ. 17-ին այդ դատա-

րանը 15 տարեայ տաժանակիր աշխատանքների դատապարտեց 2 մահմեդականների: Իսկ Սամ. բանկի վրայ չարձակմանը մասնակցելու համար կասկածւող բոլոր հայերը մահւան պատժի են դատապարտւած. նոցա թւումն է և մի հայ, որին բելգիական կառավարութիւնը այն պայմանով յանձնեց Թիւրքիային, որ նա դատարանում հարցութորձերի ենթարկւի լոկ որպէս վկայ. բելգիական դեսպանութիւնը բողոքեց Բ. Դրանը, պահանջելով որ դատապարտւածը, որի յանցանքը ապացուցւած չէ, ազատւի:

Շաքիր փաշայի նախագահութեամբ կազմւած յանձնաժողովը ազատութիւն տւեց 580 հայերի, ըստ տեղեկութեան Վիեննայի «Պոլիտիշէ Կորրեսպոնդենց» լրագրի:

Իտալական անխտիր բոլոր թերթերի մօտքը Թիւրքիա արգելեց:

Թիւրք կառավարութիւնը, Ռէյտերի գործակալութեան ասելով, բանակցութիւններ է սկսել հայկական յեղափոխական կոմիտէի հետ՝ դինամիտային գործողութիւնները դադարեցնել տալու նպատակով: Կոմիտէն իբր յայտնել է իւր համաձայնութիւնը այն պայմանով, որ նոր պատրիարք ընտրւի, ընդհանուր ներումն շնորհւի և ռեֆորմներ մտցնեն բոլոր ասիական նահանգներում:

Պետութիւնների գործողութիւններ

Ֆրանսիական դեսպան Կամբոնը սեպտ. 13 (26) ունկնդրութիւն ունեցաւ սուլթանի մօտ, որ տւեց ամբողջ երեք ժամ, որի միջոցին նա հրաւիրեց սուլթանի ուշադրութիւնը վերջին խառնակութիւնների վրայ և խորհուրդ տւեց միջոցների ձեռնարկել, որ նոքա չկրկնեն: Բոլոր եւրոպական դեսպանները յայտնեցին իրենց համերաշխութիւնը Կամբոնի վարմունքի հետ, որը հաւաստիացրել էր սուլթանին թէ պետութիւնների համաձայնութիւնը մեծ ազդեցութիւն է ունեցել Թիւրք կառավարութեան վրայ և որ ապագայում էլ այդ համաձայնութիւնը նշանաւոր կերպով կը մեղմացնի արևելեան խնդրի սուր բնաւորութիւնը: Այդ ունկնդրութեանը մեծ նշանակութիւն արւեց:

Օգոստոսի 14 ի և յաջորդ օրերի անցքերից յետոյ սկսեց մեծ պետութեանց նաւային մի շարժում՝ դէպի Թիւրքական ջրերը: Շարժումը սկսեց Դուալիայից, որը երեք մարտանաւ ուղարկեց

Քեզիկի ծոցը, որոնց վրայ պէտք է աւելանար իտալական թռու-
ցիկ նսւատորմը, երեք մարտանաւ էլ կանգնած է Սալոնիկում: Եւ-
տոյ նկատեց երեք ֆրանսիական մարտանաւերի շարժելը դէպի
Մետելինէ, որոնց պիտի աւելանային չորս այլ մարտանաւեր, անգ-
լիական նսւատորմի երեւոյթը Լեմնոսում և 14 մարտանաւերի խա-
րըսիւելը Սալոնիկում: Գերմանիայի չորս մարտանաւերի հրաման
ստանալը պատրաստել դէպի Միջերկրական ծովը լողալու:

Միացեալ Նահանգների, Իսպանիայի, Հոլլանդիայի և Յունաս-
տանի կառավարութիւնները ցանկութիւն յայտնեցին որ թոյլ տրւի
իրենց մի-մի պահականաւ ուղարկել Թիւրքիայի ջրերը, Բ. Դուռը
մերժեց այդ պահանջը այն հիման վրայ որ այդ իրաւունքը տրւած
է միայն Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւններին:

Միացեալ-Նահանգների, Հոլլանդիայի, Շէդդիա-Նորէգիայի,
Իսպանիայի, Բելգիայի և Ռումինիայի դեսպանները մի բողոքագիր
ներկայացրին Բ. Դրան, որով նոքա բողոքեցին այն վարմունքի դէմ,
որով Բ. Դուռը օգոստոսի 31-ին մեծ պետութեանց դեսպաններին
և յունաց ներկայացուցչին միայն հարկ էր դատել զգուշացնել թէ
հետեւեալ օրը (1 սեպտ.) անկարգութիւններ են սպասուում հայերի
կողմից:

Անգլիայի դիրքը

Անգլիան իրեն հարկադրած է տեսնում ոչ միայն միայնակ
չգործել Թիւրքիայում, այլ և նշոյլ ցոյց չտալ թէ նա կարող է
միայնակ գործել: Ստանդարտ, Թայմս և Իէյլի Տելեգրաֆ յայտնում
են որ Անգլիայի վճռողական գործողութիւնները Թիւրքիայի դէմ
անհնարին են, առանց մեծ պետութիւնների համաձայնութեան:
Լորդ Սէսիլ յայտնեց, թէ Անգլիան պատրաստւած չէ Թիւրքիայի
դէմ՝ պատերազմելու համար: Յայտնի ժուրնալիստ Ստէդ Խորհուրդ
է տալիս մարկիզ Սալսբիւրիին՝ հրաժարւել Կիպրոսից:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Վիլհէլմ կայսրը Պոլսի գերմանական դեսպանի միջոցով յանձ-
նեց սուլթանին մի թանկագին ընծայ և ամբողջ կայսերական ըն-
տանիքի լուսանկար պատկերել: Սուլթանը դորան պատասխանեց՝

ուղարկելով Բերլին թիւրք ծառայութեան մէջ գտնուող թնդանութեան զօրքի տեսուչ Գրումբելով-փաշային՝ Վիլհելմ կայսրին իւր ինքնագիր նամակը յանձնելու համար:

Կիսապաշտօնական Նորդդէյտշէ-Ալգեմայնէ Յէյտունգ, սեպտեմբերի 17-ին հաստատելով հանդերձ, որ իրօք կայսրը ուղարկել է իւր ընտանիքի լուսանկարը, մեկնեց այդ նրանով, որ ներկայ տարւայ գարնանը սուլթանը ցանկութիւն է յայտնել այդ լուսանկարն ունենալ, և ահա Վիլհելմ կայսրը կարգադրեց այժմ ուղարկել, և որ այդ իրողութիւնը ոչ մի կապ չունի օգոստոսին տեղի ունեցած դէպքերի հետ:

Պրոֆ. Թումանեան, Անգլիայից, գերմանական կառավարութեան պահանջմամբ ստիպւեց դադարեցնել Գերմանիայում իւր ազիտացիան և թողեց Գերմանիան սեպտ. 17-ին Շէէցարիա գնալու համար:

Շ է Ե Գ ա Ր Ի ա :

Շէէցարական դաշնակցական խորհուրդը հրաժարւեց հայկական միտինգների որոշումները յանձնել մեծ պետութիւնների կառավարութիւններին:

Գլատստոն եւ Ռոզքերի:

Գլատստոն, որ ժամանակից ի վեր յետ էր քաշւած հրապարակով գործելուց և խօսելուց, այս վերջին ամսում եւանդով ասպարէզ հանեց իւր կարծիքները հայկական խնդրի և Թիւրքիայի մասին. և այդ կատարւեց այնքան ջերմ կերպով, որ անգլիական լիբերալ կուսակցութեան պարագլուխ լորդ Սոզքերի իրեն դրդած տեսաւ հրաժարական տալ կուսակցութեան առաջնորդութեան պաշտօնից, համամիտ չլինելով Գլատստոնին արեւելեան խնդրում:

Դեռ ևս սեպտեմբերի մօտ 10-ին Պարիզի «Միգարօ» լրագրի աշխատակցին, որը դիմել էր Գլատստոնին նորա կարծիքը իմանալու Ֆրանսիայի բռնելիք զիրքի մասին, Գլատստոն յայտնել էր թէ հարկ չկայ Թիւրքիայում ամեն բարիք սպասել եւրոպական կոնցերտից, յիշեցնելով որ 1830 թւականին յաջորդած տարիներում Ֆրանսիան և Անգլիան ձեռք ձեռքի տւած գործում էին յօգուտ ազատութեան երկրագնդիս շատ տեղերում, Գլատստոն, իբր օրինակներ առանձ-

նակի գործողութիւնների, օրինակ բերեց Ֆրանսիան, որը 1840 թւականին իւր ձեռքն առաւ Եգիպտոսի պաշտպանութեան գործը և միայնակ ու յաջողութեամբ գործեց, ուշք չդարձնելով եւրոպական պատերազմի վտանգին. և երկրորդ, Ռուսաստան, որը անմոռանալի փառք վաստակեց ազատելով Բուլղարիոն և նպաստելով բալկանեան պետութիւնների ազատմանը և ապահովութեանը: Վերջապէս Ղլադստոն, յայտնելով որ Թիւրքիայի անկումը անխուսափելի է, նկատեց որ վերջին 20 տարիներում ինչ որ լաւ բան կատարւել է Թիւրքիայում, այդ եղել է ոչ թէ շնորհիւ եւրոպական կոնցերտի, այլ դորա հակառակ: Ղլադստոն ի վերջոյ յորդորեց որ Ֆրանսիան իւր մեծութեան անւանը համապատասխան քաղաքականութեան հետևի:

Ճաստելիներորդ Դար» անգլիական ամսագրի հոկտեմբերի դրքում «Մարդասպանութիւններ Թիւրքիայում» խորագրով տպւած Ռո. ջերսի, լորդ Միտս'ի, Ջոհն Բէօրնս'ի և պրոֆ. Սալոմէի մի շարք յօդւածաւանները կնքւում են Ղլադստոնի վերջաբանով, ուր, յայտնելով որ այդ յօդւածների հեղինակները միօրինակ հաստատում են թէ արեւելքում դրութիւնը անտանելի է և թէ հարկաւոր է առանց չետածգութեան գործել վիճակը բարւոքելու համար, Ղլադստոն չիշեցնում է թէ Կիպրոսի դաշնագրութիւնը Անգլիային իրաւունք է տալիս պնդելու որ Սուլթանը բարեփոխութիւններ հաստատէ ոչ միայն Հայաստանում, այլ և ամբողջ Թիւրքիայում: Ղլադստոնի կարծիքով Անգլիան պարտաւոր է անյապաղ պահանջել սուլթանից, որ սա իւր պարտականութիւնները կատարէ, և եթէ նա հրաժարւի՝ այդ քայլը պաշնագրի խախտում համարւի: «Իսկ եթէ Անգլիան կը սրտաւակէ թէ Կիպրոսի դաշնագրով յանձնառւած պարտականութիւնը կարող է միայն այն դէպքում կատարել, երբ միւս պետութիւններն ևս համաձայն կը լինին, ապա ես, ասում է Ղլադստոն, խոնարհաբար առաջարկում եմ մեր բառարաններից և լեզուից արտաքսել «պարտի» հին բառը:»

Այսպիսով Ղլադստոնը քարոզում է առանձնակի գործողութիւն Անգլիայի կողմից:

Նոյն քաղաքականութիւնը նա պարզեց և Լիւնդպուլում՝ սեպտ. 12-ին կայացած մեծ միտինգում, ուր նա խօսեց 6.000

հոգու առաջ: Մեծ ծերունին նորից յիշեցրեց որ ըստ առաջին ան-
գամը չէ որ Թիւրքխայում գաղանութիւններ են կատարուում ոչ
թէ մահմեդական Ֆանատիկոսների ձեռքով, այլ Թիւրք ոստիկանու-
թեան զրդմամբ. այդպէս էլ, ասաց նա, եղաւ 1876 թ-ին. այն
ժամանակ էլ Թիւրք կառավարութիւնը հերքում էր գաղանութիւն-
ների ֆակտը և ամեն բանում մեղադրում էր բոլղարական ազի-
տատորներին և յեղափոխականներին. բայց այժմ այլ ևս ոչ ոք
չի կասկածում որ բոլղարական գաղանութիւնները պատմութեան
սեփականութիւն են դարձել և նոցա հերքել անկարելի է. այժմ
նոյնպէս Թիւրքաց կառավարութիւնը սնամթոթ կերպով հերքում է
կոտորածները և այդ կը շարունակւի, որքան հաճոյ կը լինի Եւրո-
պային:

Հայկական գաղանութիւնները, ասաց Գլադստոն, իրենց սար-
սափներով գերազանցեցին բոլղարականին. այդ քիչ է. սուլթանը
խրախուսած իւր յաղթութեամբ, եւրոպական միացած զիպլոմա-
տիայի վրայ, այդ սարսափների ասպարէզը փոխադրեց զաւառներից
իւր սեփական մայրաքաղաքը, թէև Կ. Պոլսի կոտորածները զաւա-
ռական կոտորածների միայն զժգոյն սուերն էին. սուլթանը կար-
ծես ցանկացաւ եւրոպացիներին աւելի մօտ ծանօթացնել իւր
ազէնոնների բարբարոսութիւնների հետ:

Գլադստոն սպա յայտնեց. թէ ենթադրենք թէ պետութիւնների
նախօրք համաձայնութիւնը մի անհնարին բան է, այն ժամանակ
Անգլիան իրաւունք կ'ունենայ ստիպողական միջոցներով սպառնալ
Սուլթանին: Չեմ ուզում ասել թէ այդպիսի մի սպառնալիք ան-
պատճառ պատերազմ կ'առաջացնի. ես յուսով եմ որ Անգլիան ստիպ-
ւած չի լինիլ մենակ զործել, և երբէք մտքովս չի անցնիլ որ
Անգլիան ուրանայ իւր իրաւունքը: Այս ուղղութեամբ անելիք առա-
ջին քայլը պիտի լինի յետս կոչել Կ. Պոլսից անգլիական դեսպա-
նին և յանձնել Լոնդոնի Թիւրքաց դեսպանին իւր յանձնագրերը,
ու ապա թէ կարելի կը լինի հանգիստ քննել թէ ինչպէս վարել
այնուհետև: Նս կարծում եմ որ ոչ մի եւրոպական պետութիւն
պատերազմ չի սկսիլ կոտորածի շարունակութիւնը երաշխաւորելու
համար:

Գլադստոնի ասպարէզ գալը և Սրեկեւեան խնդրի մասին իւր

այդ հայեացքների հրապարակական պաշտպանութիւնը դրդեց լորդ Ռոզբերիին հրաժարել ազատամիտ կուսակցութեան պարագլխի դիրքից: Ռոզբերին իւր հայեացքները արտայայտեց Էդինբուրգում, Empire-Palece-Theatre-ում զուսմարած ժողովում, ներկայութեամբ մօտ 4.000 հոգու: Ռոզբերին յայտնեց որ իւր պարտականութիւնն է համարում դորժակցիլ ներկայ կառավարութեանը, և որ Թիւրքիայում կատարած արիւնհեղութիւններից յետոյ խօսքը իսկական արեւելեան խնդրի մասին լինելով՝ մասնաւոր միջոցները անօգուտ են: Նա դէմ է որ Ա. Պոլսի անգլիական դեսպանը ետ կանչի և որ եթէ այդպէս լինի՝ Անգլիան չի ունենալ իւր ներկայացուցիչը եւրոպական կոնցերտում. այդպիսի մի քայլ պատերազմի պատճառ կը դառնար: Ռոզբերին հերքեց թէ Անգլիայի պատիւը կապած լինի Կիպրոսի զաշնագրի հետ նրա համար որ սուլթանը իւր պարտաւորութիւնները չկատարեց: Ռոզբերի դէմ է որ Կիպրոսը վերադարձնւի Թիւրքիային. նա դէմ է այն քաղաքականութեան, որը կարող է եւրոպական պատերազմ և հայերի նոր կոտորած յառաջացնել. բրիտանական պետական տնտիսպետակը սխալ լինի եւրոպական կոնցերտի պաշտպանութիւնը՝ յօգուտ բրիտանական քաղաքականութեան:

Դարանից առաջ ազատամիտ կուսակցութեան պարագլուխ լորդ Ռոզբերի վայր էր դրել կուսակցութեան ղեկավարի պաշտօնը հետեւեալ դրութեամբ, ուղղած պատգամաւոր Ելլիսին, սեպտ. 17 (29).

«Իմ կարծիքը չափոյի կերպով տարբերում է ազատամիտ կուսակցութեան մեծամասնութեան կարծիքից արեւելեան խնդրի վերաբերմամբ, և որոշ տարածաշրջաններ կալ իմ և Ղադստոնի մէջ, որը անպայման միշտ պէտք է ղեկավարող ազդեցութիւն ունենալ կուսակցութեան վրայ: Բացի այդ, ես ոչմիտեղից աջակցութիւն չեմ գտնում: Այդ խնդիրը բարձր է ամեն անձնական հաշիւներից: Եթէ ես խօսեմ այս շարաթի, ես պէտք է խօսեմ ազատ, ուստի աւելի լաւ կը լինի կուսակցութեան և ինձ համար, եթէ ես խօսեմ ոչ իբրեւ կուսակցութեան պարագլուխ, այլ իբրեւ ազատ մարդ: Այդ նկատումով հաղորդում եմ ձեզ, որ կուսակցութեան պարագլխի տեղը թափուր է և ես նորից վերադառնում եմ դէպի ազատ զործանելութիւն»:

Արտայայտութիւններ

Լոնդոնի Բայրոնեան ընկերութիւնը ուղարկեց շնորհակալութեան մի հեռագիր Փրանսիական արտաքին գործերի մինիստր Հանոտոօին այն պաշտպանութեան համար, որ ցոյց տւեց Ֆրանսիան Կ. Պոլսում փնասած հայերին:

Ֆրանսիայի կանաչք, օգտւելով Ռուսաց Կայսերական Զոյդի Ֆրանսիա ալցելելովը, խնդրելով զիմեցին Փրանսիական արտաքին գործերի մինիստր Հանոտոօին, որ սա միջնորդի ռուսաց զեսպանի մօտ Պարիզում թոյլտուութիւն ստանալու համար մի ուղերձ մատուցանել Ռուսաց Թագուհի Կայսրուհուն յօգուտ հայերի:

Կեօնում (Գերմանիա) կաթօլիկական կոմիտէն ժողով գումարեց հայկական խնդիրը քննելու համար: Ժողովի եկան մօտ 3000 հոգի. պրոֆեսոր Ֆոնկ նկարագրեց թիւրքական զազանութիւնները. պատգամաւոր Տրինբորն պայտնելով հանդերձ որ ինքը կատարեալ վստահութեամբ է վերաբերում զէպի Վիլհելմ կայսեր արեւելեան քաղաքականութիւնը, յայտնեց սակայն թէ քրիստոնէական խիղճը իրեն թոյլ չը տալիս հաւանել կայսեր վերաբերմունքը զէպի թիւրքաց զազանութիւնները:

Նոր տոմարով հոկտ. 11 ին Լոնդոնի Հայդ-Պարկում կայացաւ մի վիթխարի միտինգ, բանւորների կողմից, 100.000 հոգու մասնակցութեամբ, յօգուտ հայկական դատի:

Նպաստների գործը:

Վեննայի Միթիթարիանների հանգանակութեան արդիւնքն եղաւ 40.000 Ֆրանկ. այդ առթիւ ասում է Հանդէս Ամսօրեան, թէ (Վիեննայի) «հրէական լրագրաց» բաջաղանքն արգելք չըլլար... կը յուսայինք զոնէ կրկնապատկւած տեսնել այս գումարը:

Նուբար փաշան, եւրոպական լրագիրների ասելով, նորից 400 Փունտ ստերլինգ (մօտ 4000 ռուբլի) է նւիրել հայկական նպաստող ֆոնդին:

Պատրիարքարանի գործողութիւններ:

Կ. Պոլսի 34 թաղական խորհուրդների ատենապետների ստորագրութեամբ Օգոստոսի 30-ին մատուցեց հակասահմանադրական

Բարդուղիմէոս պատրիարքական տեղապահին հանրագիր, որով նոքա շնորհակալութիւն են յայտնում Սամանեան Սուլթաններին 600 տա-
տարիներից ի վեր Հայերին ցոյց տւած խնամքների համար, ալ և խնդրում են իրենց ժողովուրդը Հաւասարեցնել յեղափոխականների հետ, որոնք պէտք է խստիւ պատժւին:

Պատրիարքական ընտրութեան գործը:

Սեպտեմբերի 12-ից հեռագիրը հաղորդեց, թէ արտաքին գոր-
ծերի մինիստրի օգնական հայ Արթին Գադեան փաշա, որը վաղուց
պաշտօն չէր վարում, կրկին սկսեց իւր պաշտօնավարութիւնը.
իւր պաշտօնը ստանձնելուց առաջ, նա կանչեց Բլիզ-Քէօշի՝ նորա
կարծիքը լսելու հայկական գործերի գրութեան մասին. ամենից
առաջ իբր թէ Գադեան կը ձեռնարկի պատրիարքի ընտրութեան
գործին, որ պէտք է կատարւի Պոլսի 83 հայ մեծամեծների կողմից
և որ սպասուում է տյշ մասին սուլթանի իրադէին:

Հոկտ. 10 ի հեռագրի համաձայն, իրօք, լուրեր կային թէ
պատրիարքական ընտրութեան համար իրադէն հրատարակւած է:

Ազգային համաժողով գումարելու իրադէն յետ սակայն է վերցւեց,
որպէս հեռագրեց Ռուսաց Գործակալութիւնը, հայ անւանի քա-
ղաքացիների տւած յիշատակագրի պատճառով:

Սակայն ինչ նշանակութիւն պիտի տալ Կ. Պոլսի պատրիարքական
ընտրութեանը, եթէ լինի Կ. Պոլսը գրեթէ պատերազմական կամ
պաշարման գրութեան մէջ է. բնութեւրը լեցրած հայերով, և ձեռ-
քակալութիւնները դեռ շարունակուում են, տասնեակ հազարներով
հայեր Կ. Պոլսից դուրս քշւած կամ գաղթած, անթիւ մարդիկ
ոստիկանական կասկածի և հսկողութեան տակ. հազարաւոր ընտա-
նիքներ սուգի մէջ օգոստ 14-ի դէպքի պատճառով. գիտակցու-
թիւնը թէ պատրիարքը չպիտի կարողանայ գործել խղճի մոռօք,
չպիտի կարողանայ որևէ դատ պաշտպանել. այս պարագաներում
պատրիարքական ընտրութիւնը ինչպէս կարող է կարգին կատարւել.
Կ. Պոլսի պատրիարքական ընտրութիւնը—սլ և լինի ընտրւածը—
ներկայ հանդամանքներում կարող է լոկ ձեական նշանակութիւն
ունենալ:

Ա. Ա.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Հազարի գաւառի գիւղացիների ներկայ դրուծիւմը. Կոթի գիւղը

ՄԱԴԱԹ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

(Շարունակութիւն 1)

Ասացինք որ աղքատ շուալ ծախսեր դուրս են գալիս օրու հացի կարօտ գիւղացիներից: Միայն պրիստաւի համար մի քանի ամուսն ընթացքում ծախւած է 52 ռուբ. 40 կ.՝ և սակաւ պրիստաները պէտք է իրանց գրպանից ծախսեն. չէ որ դորա համար ստանում են զանձարանից: Ծանրանալ խեղճ գիւղացիների վրա, որոնք առանց ալն էլ չատ դժարութեամբ են հաւաքում հարկը—դա ապօրինի է և անարդար. հաշտել անպատեղ, ծեծել՝ դա սովորական բան է: Երբ որ ետառւները գալիս են գիւղ, աչնտեղ մեռելութիւն է տիրում, շատերը թագնւում են ամբողջ օրերով, բայց դուր, ետառւների և քոխի ձեռքից չեն ազատւում. վաղ նրանց օրին, որ պատրաստած չունեցան իրանց տալիք լատուկ հարկը, սպառնալիքներից չետոջ նրանք ստիպւած են լինում գիմել սրան-նրան, խնդրել ու աղաչել, որ իրան պարտք տան Կոթի իսկ մէկին մէկ, ալսինքն 100%-ով: Բայց ով է լսողը. սորա պէս խեղճին ով կը տալ պարտք, և եթէ ոչ ալն է օգնում, ոչ ալն, մտնում են խեղճի տունը ու աչքի տեսածը դուրս հանում, լինի նա կաթսալ, կուժ, ալիւր, շուր, գործիք, միտլ բանիւ ամեն ինչ որ գին ունի: Եւ սա հազարաւոր դէպք չէ, սա գիւղացիների համար սովորական է, սակաւ թող խօսեն ֆակտերը. 1895 թ.

1) Տես «Մուրճ» 1896 թ. № 7—8.

առաջին կիսամեակին ալրի Զանաճ Տէր-Ստեփանեանից 8 ուռլի հարկի համար ուժով դուրս են հանել մի հատ կապերտ, մի հատ կաթնալ և երկու փեթակ լի միդրաճանճով: Թմաղանց Մամոն ալդ էլ չի ունեցել, ուստի ստիպել են 10 ու մուրհակ տալ Ալէքսի Սարատիկովին աչն պալմանով, որ աչնանը երբ կալերը կը կալսեն, 7 թաղար ¹⁾ գարի վճարի: Ուրեմն Մամոն ստիպւած է նոյն իսկ իւր ցանքը ծախելու որ միակ չոյսն էր իր ընտանիքի ձմեռուայ պաշարի համար: Նա ծանրաբեռնուած է մեծ ընտանիքով, ունի 6 աղջիկ և ոչ մի տղա:

Գնջալւանց Շաքարը նոյնպէս վերցնում է 5 թաղար գարի 1 ուռլ. 60 կոպէկով թաղարը:

Մամանց Ուհանէսը 5 թաղար, 1 ու. 60 կ. թաղարը:

Ալլի խանում խապեանցը 10 ու. հարկի տեղ տալիս է իւր 2 օրավար վարելահողը. և սա 14 տարի է որ զրկւած է ալդ հողից, որը գտնւում է Զալնանց Սերգոյի ձեռքին 10 ու. պարտքի փոխարէն:

Նոյնը 17 ու. հարկի տեղ տալիս է իւր մի ալ 3 օրավար հողը Միշնաց Օսէփին, որը օգտուում է 9 տարուց ի վեր:

Նոյնը 20 ուռլու հարկի տեղ տալիս է մի ալ $1\frac{1}{2}$ օրավար վարելահողը Ստեփան Ղազարովին—9 տարուց ի վեր:

Նոյնը 25 ու. հարկի տեղ տալիս է իւր մի ալ $1\frac{1}{2}$ օրավար վարելահողը Օսէփ Նազարովին: Ուրեմն սա նոյն իսկ վարելահողից էլ է զրկւած: Խէչկանց Ալխանը ներկայ տարուայ առաջին կիսամեակի հարկի ժամանակամիջոցին ստիպւած է լինում պարտք վերցնել Սարգիս Ղարազողովից 5 ու. 50%/օով:

Բագրատ խանաղեանը նոյնպէս նորանից	10 ու. 50%
Ստեփան Վերանովը.	10 » 50%
Սէլրան Բաննահովը.	10 » 50%
Յովհանէս Շահումովը Գաւիգ Գողալովից.	6 » 90%
Արուծիւն Էւիւնովը Մէլիքսէք Բալրամովից.	7 » 100%
Սնակ Նազարովը Գարբնանց Սհակից.	15 » 40%

և ալլն. Ու աւսպէս չատերը, որոնք կամաց-կամաց զրկւում են ամեն ինչից, նոյն իսկ վարելահողից. ապա մնում են միայն սրանց համար պանդը ընտուծան դռները բաց, որին և նրանք դիմում են:

Ի զէպ, այստեղ աւելորդ չեմ համարում գետեղել մի նամակ, բնագրիցն իսկ արտագրելով, որից երևում է աչն, որ Երևանի գաւառն էլ նոյնն է ինչ որ Ղազարիսիւնը և որ աւելի է հաստատում իմ ասածներս: Նամակը

¹⁾ Մի թաղար գարին կշռում է 7— $7\frac{1}{2}$ փութ, ծախւում է 2—4 ուռլ. ալժմ թիֆլիս փութը ծախւում է 48 կոպ., 1895 թ-ին 60 կոպէկ էր:

ուղարկւած է Դարաչիչակի 100 տուն ունեցող Ֆառախ գիւղից Թիֆլիսի պաշտօնակատներին: Տեղատեղ դնում ենք կէտադրութիւն:

1895 ամի, 18 Նոյեմբերի.

Սիրով բարես կը մատուցանեմ քեզ սիրելի հայրիկ Մկրտիչ Օհանեսով, հայրիկ ջան վասն քո Աստուծոյ խաթրու լինեց շուտով քսան մանէթ փող ուղարկէս կալ, թէ չուղարկէս էնքան հաւատա որ մէկ եղբ հինգ մանէթի կը տանեն. խարջն ընթամէնը նաֆարը ¹⁾ 3 մանէթ փող. սաստիկ փետմիս կը հաւաքեն, հաւատացէք նոյեմբերին տառն և 8 վերջանալ մնամ քեզ բարի կամեցող Սարիբէգ և Աբկար Մկրտիչով...

Կարոտով բարես մատուցանեմ սիրելի եղբայր մանուկ ստէփանով, եղբայր ջան աչստեղ մեղ շատ ճեղուծիւն կուտան. վասն քոյ եղբայր խաթրու լինի տասնութ մանէթ փող ուղարկէս, որ իլլաջ չունիմք, նաֆար 3 մանէթ. մնամ քեզի բարի քոյ եղբայր Ներսէս Ստէփանով...

Եղբայր Մանուկ ջան, քեզի համար շոր բեր, թէ որ եկար աչստեղ էլ չես կարող առնել, բայց Խարաբիւն մեկ ջուխտ սապով կը բերես 4 մանէթի. քոյ եղբայրին մէկ ջուխտ զանկալ:

Հայրկապատիւ սիրելի եղբայր Աւետիս Հայրապետով. եղբայր ջան, թէ մեր կողմանից հարցնէք փառք Աստուծոյ ողջիմք և առողջեմք, միալն կը խնդրեմք որ խարճի կողմանէ շատ նեղութիւն կուտան, փող չխարջես, գալու ժամանակ քեզի համար մէկ փափախ, մէկ արխալուղ կառնես, ամեննին փող չփչացնես, խարջի համար շատ նեղութիւն կուտան, նաֆար 2 մնթ. մնամ քոյ եղբայր Վարդան Հայրապետով:

Սիրով բարես մատուցանեմ քեզ, սիրելի որդի ջան, թէ մեր կողմանէ կու հարցանէս փառք Աստուծոյ որդի ջան կը խնդրումեմք որ խարջի կողմանէ շատ անճար դրութեան մեջնեմք, որդի Մուսէս Թաթէոսով կը խնդրումեմք որ հացի և խարջի շատ նեղութեան ենք, ինչքան որ ձեռքիտ կալ փող ուղարկես կալ քո կալտ, որ դու կիտես, բայց ամպատճառ Սուրբ Սարգիսի պատի կուկան օրը պսակիս, մնամ քեզի բարի քոյ հայրիկ Թաթէոս Կարապետով:

Բարես որդիք Բէկօ և Զալիբէկ սիրելի բարես մատուցանեմ ձեզ որդիք ջան վասն ձեր Աստուծոյ խաթրու լինի շուտով 12 ման. փող ուղարկէք խարջն, դարձեալ խարջին, մնամ ձեր մայրիկ Զարդար Կրէով:

Բարես մատուցանեմ որդի Օհանէս Սարգիսով, որդի ջան քոյ կողմ հայրիկին ամեն մեկ ժամանակ կը տանեն ճեղուծիւն կուտան. նըֆար 3 ման. փող մնամ քեզի բարի կամեցող Սարգիս Բաղալով: Բարես իմ եղբայր Բալօ Ներսեսովի, քոյ եղբայր Սարօ Օհանեսովից, բարես եղբայր քոյ ուղարկած փողն քսան վեց մանէթ:

¹⁾ Նաֆար նշանակում է մարդագլուխ:

Եթէ զիւղացիք վճարեն միմիայն տէրունական հարկը՝ թէթն կը լինէր, բայց նրանք կրկնակի, եռապատիկ, նոյն իսկ քառապատիկ աւելի են տալիս, ինչպէս ընթերցողը տեսաւ 1891 թ-ի թովջու հաշից: Այնպէս որ սրանք անքնամ են միշտ ծանր տոկոսաբեր պարտքերի տակ, և ալդարին քրտնքով աշխատած փողերի համար ընթերցողը տեսաւ թէ ինչպիսի շուալ ծախսերի և հաշիւների ցուցակներ են պատրաստում. նոյնիսկ երեակալիւ անկարելի է, որ մի գիւղ, որի մէջ ոչ մի ընդհանրական գործ չէ կատարում լողուտ գիւղի բարելաւութեան, կարող է ունենալ ծախսեր, որոնք տէրունական հարկից 3-4 անգամ աւելի լինեն: Ահաւասիկ ալս հանգամանքների մէջն է գիւղացին, որ քանդու է և քանդում է նրա տունը:

Մի ալ օրինակ գիւղի փողերը շուալելու:

Սորանից 5 տարի առաջ, հրաման է դալիս Ասղախի բոլոր գիւղերի վրայ, որի համաձայն իւրաքանչիւրը նրանցից պարտաւորում է Ղարաղոյնու անւանւած տեղում մի որոշ իրան չատկացրած տարածութեան վրայ խճուղի կառուցանել (իրանց ասելով ալս խճուղին տեղացի մալալեան աղաքնակութեան հաղորդակցութեան համար է): ալդ առիթով գիւղից ընտրում են իրաւասուններ—Պետրոս Օհանով և Արուսթիւն Ջանեւով, որոնք գնալով տեղը, գիւղին չատկացրած մասը կապալով տալիս են Աղլանեցի Սաէփան քոխի տղին 1.100 ռուբլով. ապա ժողովելով գիւղից ալդ փողը ուղեւորում են չանձնելու կապալառուին. թէ որքան ճիշտ են կատարում իրանց պարտքը՝ ալդ Աստուած դէտէ. միայն ալսքանն է պարզ, որ կապալառուն թողնում է գործը կիսատ ու հեռանում: Երկու տարուց չետոյ, կրկին պ. գաւառապետի հրամանով ստիպւում են վերջացնել, որի համար նորից ընտրում են իրաւասուններ՝ Պետրոս Օհանովին և Մովսէս Արովեանցին, որոնք նորից կապալ են հաստատում Հաջի Մամէդ Ստեփան—Օղլու հետ 730 ռ: Իսկոյն հաւաքելով ալդ հաշից 400 ռ., ալդ գումարը տրւում է իրաւասու Պետրոս Օհանովին՝ կապալառուին հասցնելու համար. սա ալդ փողը ուղարկում է Քարաւնսարա փոստի կապարանի միջոցով, ծրարի վրայ մակագրելով «Պետրոս Օհանովից», փոխանակ գրելու «Կոթի գիւղի հատարակութիւնից»: Կապալառուն մնացած 330 ռ. համար դանգատում է դատարանում, որի վճռի համաձայն և տոանում է 484 ռ. 88 կ.: Մի տարուց չետոյ էլ իրաւասու Օհանովը, փոստից ստացած անշորրագրի հիման վցալ, գանգատւում է դատարանին, որից և ստանալով կատարման թերթ՝ ալժմ գիւղից պահանջում է 400 ռ.: Ուրեմն ուղղակի անտէրութիւնից ալս գործը, որ կարելի էր աւարտել 1.100 ռ., կամ աւելի պակասով, ալժմ գիւղին նստում է 2.394 ռ. 88 կ., աւելի քան կրկնակին: Եւ ալսպէս լինում է շատ ղէպքերում: Թէ որքան տղեղ և անտանելի երեւոյթ է դա խեղճ ցիւղացիների համար, ալդ թողնում ևս ընթերցողներին եղրակացնելու:

Մի անտանելի չարիք էլ կալ, որի սուաջը պէտք է առնել, սա փող բաժանելու և փոխարէնը հացհատիկ ստանալու վաղուց հաստատուած սովորութիւնն է, և որքան գնում է՝ աջնքան աւելի ու աւելի էլ ընդարձակուում է: Հէնց որ գիւղում հարկի նախահաշիւը պատրաստուում է, փողատէրերը կարծես մէկ մէկ ծլում են գետնից. «գիւղացու տեղը՝ նեղ է, խոլ մեր մանգաղը սուր» մտածում են փողատէրերը և հնձում խեղճերին: Վիժում է անճարացած գիւղացին խնդրում իրան պարտք ստան, և իրան լաւ չափնի է, որ փոխարէնը հացհատիկով է վճարւելու:

—Աղա ջան խնդրում եմ, աղաչում եմ մի 10—20 մանէթ տուր, խարջին տամ, եախէս թափեմ:

Աղան զեռ շատ նազ է անում, թէ և ներքուստ ուրախ է:

—Մի վերցնի բալամ, վրէտ կը ծընդբանալ, ես քու լաւն եմ ուզում, պարտքը գէշ բանա, մի բան կ'ունենաս, ծախէ՝ տուր խարջիտ:

—Չէ, աղա ջան, գլխիտ դուրբան, իմ իլլաջը դուն ես, էլ իլլաջի դուռը չունիմ, եսաւուրը կալիս պոկում ա:

—Դէ որ տէ՛ս ա, մի երկու օր էլ ընձիւ քոմակ կանես, դէնա որ եկել ես, խու կարալ չեմ ջուղաք անեմ. գնա սանաթ (մուրհալ) գրել տուր, էնա խու գիտես—թաղարը ութաբասով դարին ա, երեք մանէթով ցորենը:

Եւ ալսպէս, աղան նստած փողեր է բաժանում, ստանալով մուրհակներ. մի երեք ամսից չնոց, աչն է օդոստոսի 20 ից սկսած, աղալի մարդիկը խանը ¹⁾ ձեռքերին, չըջում են տնից տուն, հաւաքելով հացահատիկը ըստ մուրհակի: Խեղճ գիւղացին հերկում է, ցանում է, հնձում է, կալսում է, արիւն քրտինք է թափում, ալժմ երբ հասունացած պտուղը ամբարել է հարկաւոր, զեռ համը չտեսած ուղղակի կալից, իր աչքի առաջը, անգթաբար ահագին խանով չափում է ցորենը, որը դուցէ թաղարը ծախւում է 6 ուրբլով. բաւց նա ստիպւած է երեք ուրբլիով վճարել, աչն էլ ոչ թէ իսկական թաղարը, ալ 1 թաղար և 8 խանը: Նա կանգնած է քարացած, տեսնում է թէ ինչպէս իւր սիրելի հատիկները արագ արագ լցւում են խանը, ապա ջալը. կարծես իւր մտիցն են պոկում. նրա աչքերից չորդ-չորդ թափւում են արտասուքի կաթիլներ, թրջելով իւր տանջւած ու աչքւած երեսը. կանգնած են և նորա մօտ նորա կին և երեխաները ցնցոտիների մէջ, որոնք նոյնպէս խեղճ-խեղճ վզները ձկած նաչում են թէ ինչպէս իրանց կալը դարտակւում է, թէ ինչպէս իրանք ամբողջ ձմեռը մնալու են առանց հացի. նրանք իսկ վախենում են, ամբողջ մարմնով դողում են, տիրում է լուռութիւն, որին խանդարում է հաւարողի միակերպ ձայնը՝ մէկ, էրկու, երեք...

¹⁾ Մի խանը=12¹/₂ գրան.քա (ֆունտ) ցորենին. բաւց գրանց խանը=նոյն իսկ 16 գրան.քի (16 ֆունտ):

Այս աղեղ սովորութիւնը, իմ կարծիքով, պէտք է անպաւան վերացնել, նոյն իսկ կալ կարելիութիւն. ինչպէս տեղեկացաւ, Ախալքալաքի գաւառում շնորհիւ իրստ արդելումի տեղական ոստիկանութեան կողմից, ալթմ ալք սովորութիւնը վերացած է:

Վաշխառութիւնը ալտտեղ սարսափելի կերպարանք է ստացել. ալտտեղ ահաղին տոկոսներ են վերցնում և միծ մասամբ սոկոսը հաշւում է հացահատիկով, նոյն իսկ աշխատանքով. օրինակ տոկոսի տեղ պարտապանը պարտաւորում է ծառայել պարտատիրոջ տանը կամ նրա արտը հնձել և ալն: Ընդհանրապէս 10 ռուբլի $\frac{0}{100}$ հաշւում են 15—20—30 խանցորենով, ալն է $20\frac{0}{100}$ — $30\frac{0}{100}$ — $40\frac{0}{100}$, հաշւելով 1 թաղար ցորենը 4 ռուբլի, թէն նա ծախում է 5—7 ռուբլով: Զորենը նոյնպէս տալիս են փոխարինաբար, բայց չաշտնի տոկոսով:—մի թաղար ցորենին ստանում են 10—15 խան, որ աճում է $33\frac{0}{100}$ — $50\frac{0}{100}$:

Այս գիւղում 20 տուն հաղիւ պարտքից դերծ լինի և կալ 3 տուն, որը ունի միջակ կարողութիւն. իսկ մնացածները խրած են պարտքերի մէջ: Եւ իրաւ եթէ մէկը մի անգամ ընկնում է, թէն աճնչան պարտքի տակ, նրան ալ ևս դժւար է ազատել. որովհետեւ նա կարողանում է հաղիւ փոխարինել, որը համարեա թէ գլխին հաւատար է. նա դառնում է պարտատիրոջ ստրուկը, նրա արտը հնձում է, հողը մշակում է, իւր ունեցածը տալիս է, և ալդ բոլորը հաշւում է փողի տոկոսում. և սա ստացել է մի տեսակ նորմալ կերպարանք. գիւղացիք ալ բոլորը բնական են համարում, ոչ մի բողոք տեղի չի ունենում ալթքան անխիղճ տոկոսների առիթով: Աւելի ուրջ գաղափար տալու համար ստորե կը բերեմ 70 մարգկանց ունեցած պարտքի, նրանց տալիք տոկոսների, և ունեցած կարողութեան ցուցակը, կատարելով ալսպիսով «Մուրճ»-ի խմբագրութիւնից ինձ արւած առաջարկը.

1) Կարապետ խանումով (ձոկնանց). սա պարտ է Ուհանէս Զիչիեանցին (դոստուկեցի) 80 ռուբլի. $20\frac{0}{100}$ -ով, գլուխը եղել է 9 ռ., տասը տարւալ ընթացքում աւած է 40 ռուբլի: Ղազար Ոսկանովին (սինտոհանց) 40 ռ. $20\frac{0}{100}$, գլուխը եղել է 15 ռ. վեց տարւալ ընթացքում աւած է 10 ռ. ալս հաշից: Մացակի աղին (ոսկեպարցի) 13 ռ. $20\frac{0}{100}$ -ով: Սարքիս Սահակովին (գաղաբեզցի) 20 ռ. $20\frac{0}{100}$: Լիզա Տէր-Յարութիւնովին 40 ռ. 20 խան ցորենով թումանը, գլուխը—9 ռ. տասնհինգ տարւալ ընթացքում աւած կը լինի 30 ռուբլի: Գիւղի եկեղեցուն 15 խան ցորեն, թաղարը 20 խանով: Ունի երկու գոմէշ, մի ձի, 11 օրավար հող, կին, երկու աղջիկ, մի աղա 2 տարեկան:

2) Սերգի Դանջալով (Դնջալանց) պարտէ Սարքիս Ղարազողովին 20 ռ. $50\frac{0}{100}$ -ով (վերցրել է հարկի համար ալս տարի 1895 թ. մալիսին): Ուհանէս Խումանովին 20 ռ., 10 ռ. 20 խան ցորենով: Ոսկան Օհանեանցին 25 ռ.

նոյնպէս. Եւպոր Զանեւովին 25 ռ. 30% -ով. Աննա Գոգինով (Գոգնանց) 15 ռ. 30%: Բեջան-բէգ Սարատինովին 25 ռ. 30%: գլուխը եղել է 15 ռ. Հաջի-օղլի Ուսուբին (Ստամբուլեցի) 33 ռ. տոկոսի տեղ ծառայում է գիւղի եկեղեցուն, 3 թաղար ցորենը 10 խանով. գլուխը եղել է 1 թաղար: Ունի երկու գոմէշ, 10 ոչխար, ձի, 2 աղջիկ, 4 տղա, մեծը 25 տարեկան:

3) Ակոփ Օսէփանց (Սոսեանց) պարտ է՝

Մարտրոս Բարանգին 20 ռ., 25%: գլուխը եղել է 10 ռ. Խեչօ Տէր-Մկրտչեանին 10 ռ. տոկոսը մի թաղար ցորենով: Խուսնանց Մոսնի որ-բերին 16 ռ., 20%: Մուլալ սէլիզին (ինջալ). տոկոսի տեղ ծառայում են: Ահանէս Թումանովին 12 ռ. տոկոսը 20 խան ցորնով: Սարգիս Գանջա-լովին 20 ռ. 20%: Արուծին Չիլիեանցին 1 թաղար ցորեն, տոկոսը 1/2 թաղարով: Խանանց Ամրին 13 ռ., 25%: Ոսէփանց Սհակի որբերին— 16 ռ. 25%: Ունի երկու եղ, ուրիշ ոչինչ, Կալ կին, 2 երեխա մեծը 10 տար:

4) Քովհանէս Շահիմով պարտ է Տէր-Ներսէս Տէր-Սարգսեանցին (Ղու-խօթանի քահանան) 10 ռ. 20%: Մուքէլ Բարչոնցին (Կունէնցի) 10 ռ. 20%: Խալաթ Սև քարեցի 25 ռ. 25%: գլուխը եղել է 10 ռ.: Գիւղի եկեղեցուն 5 ռ. 20%: Բաբանց Մարտիրոսին 5 ռ. 25%: Արզմանանց Արտեմին 4 ռ. 20%: Գողալանց Գաւիթին 6 ռ. 90%: վերցրել է աթ տարի (1895 թ.) հարկի համար. ոչինչ կալք չունի: Ունի կնիկ, երկու աղ-ջիկ, երկու տղա, մեծը 7 տարեկան:

5) Բաղրատ Խանաղեան պարտ է Ռոկան Ունանեարցին 100 ռ., տո-կոսի տեղ օգնում է նրա գործերին: Բեջան-Բէգ Սարատիկովին 20 ռ. 30%: գլուխը եղել է 15 ռ. երկու տարւալ ընթացքում տւած է 4 ռ. 50 կ.: Սարգիս Ղարաօղեանցին 10 ռ. 50%: վերցրած է ճերկալ տարւալ հարկի համար: Եկեղեցուն 2 թաղար ցորեն 10 խանով: Ունի կնիկ, 4 երեխալ, մեծը 10 տարեկան. 4 գոմէշ, երկու եղը:

6) Նիկողայոս Տէր-Ստէփանեան պարտ է գիւղի եկեղեցուն 30 ռ. 15 խան ցորնով. գլուխը եղել է 10 ռ.: Ուհանէս Թումանովին 20 ռ. տոկոսը 20 խան ցորնով: Մաթոսի կնոջը 5 ռ. 1 թաղար ցորնով: Ղու-լիջանանց Օսէփին 10 ռ., 1 թաղար ցորնով: Սոթնանց Ղահրամանին 10 ռ. 30%: Սարքիս Գանդալովին (որբերի խնամակալ, օսեկուն) 40 ռ. տոկոսի տեղ պահում է որբերին. վալի Ամուղ Օղլուն (ստամբուլեցի) 30 ռ. տոկոսի տեղ աշխատում է: Մէլիքսէթ Բալրամովին (Բղանսեցի) 25 ռ. 25%: գլուխը եղել է 18 ռ. տւած է տասն և ութ տարւալ մէջ 50 ռ. ունի եղբայր, կին երկու տղա, մեծը 9 տարեկան 4 ապրանք, մի ձի:

7) Արուծին Անդրիասով պարտ է Բէջան Բէգին 28 ռ. 25%: հինգ տարի է առկոսը վճարում է: Միխակին 40 ռ. 20 խան ցորնով, 6 տարի է տոկոսը վճարում է: Խէչիկ Ամրխանովին 15 ռ. 20 խան ցորնով: Ալէքսանգր Երաւեանին 110 ռ., որի տեղ, կատարման թեթի ղորու-

թեամբ, վերջինս տարել է երկու վերջին լծկան գոմէշները: Ունի երկու եղբ, երկու կով. ունի կնիկ, 1 երեխայ, երկու փոքր եղբայրներ:

8) Արութիւն Գաւիղով. պարտ է Ուհանէս Թումանովին 7 թաղար ցորեն 10 խանով. էլի նրան 20 ա. 20%: Ոսկան Օնանովին 3 թաղար ցորեն, 10 խանով. Եկեղեցուն 4 թաղար ցորեն, 10 խանով. Բեգլար Զլնդարովին ճիճականցի 2 թաղար ցորեն 10 խանով. Զանւիւնց Նադորին 3 թաղար, 10 խանով. Բաբանց Ղաշրամանին 20 ա., տոկոսի տեղ հերկում է նրա մի օրավար հողը: Տէր-Ուլախիմին (Սեքարի քահանան) 1 թաղար ցորեն, 10 խանով. Մաթոս Արզումանեանցին 6 ա. 20%: Ունի կնիկ, երկու երեխայ. 1 գոմէշ:

9) Օսէփ Ղազարով պարտ է Գրիգոր Երաւեանցին 30 ա. 30%: Ոսկան Օնանեանցին 20 ա. 1 թաղարով. Եկեղեցուն 20 ա. 20 խանով: Ունի կնիկ և մայր, գոլք ունի:

10) Սարքիս Ուհանով պարտ է Բէջան Բէգին 20 ա. 30%: գլուխը 11 ուրբի էր: Արութիւն Սառիկեանց (Սառի գիւղից) 15 ա. 25%: գլուխը 10 ա.: Գարեգին Գազանց 7 ա., 1 1/2 խան ցորենով. Եկեղեցուն 5 ա., 15 խան ցորենով. Նովնափէս Եկեղեցուն 2 թաղար ցորեն, 10 խանով. Եգոր Զլնդարեանցին 1 թաղար ցորեն, 10 խանով. Սահակ Տէրտէրեանցին 1 1/2 թաղար, 15 խանով: Ունի մի տղայ, մի աղջիկ, հարս և զոնքաչ. գոլքն է 4 գոմէշ:

11) Գրիգոր Գարդիլեանց (Համիդեանք) 50 տարեկան, պարտ է Սարքիս Գանջաղովին 25 ա., 25%: Սումբաթ Բէգ Սարատիկեանցին 20 ա. 30%: Աղա Մուրաթիւսեանցին 5 ա. 30%: Բրանցի Վարդանին 15 ա. 30%: Ունի կնիկ, 1 աղջիկ և մի տղա 6 տարեկան. գոլք ունի:

12) Սերգի Ուհանիսեանց (Վերանց) պարտ է Ալէքսի բէկ Սարատիկովին 20 ա., 50%: վերցրած է ներկալ տարւալ հարկի համար: Սումբաթ-Բէկ Սարատիկովին 20 ա., 25%: Ունի մի ձի, 2 լծկան գոմէշ 1 կթի գոմէշ:

13) Գրիգոր Բաշրամանց պարտ է Եկեղեցուն 6 թաղար ցորեն, 10 խանով. գլուխը 1 թաղար: Սարքիս Զանջաղովին 1 1/2 թաղար ցորեն, 15 խանով: Ոսկան Ոնանեանցին 7 ա. 1 թաղար, 12 խանով: Հեպնանց Անտոնին 5 ա., 28 խանով. 6 տարի է որ վճարում է: Ունի 5 երեխայ. գոլքն է մի գոմէշ:

14) Ազէլ Զանւեանց պարտ է Եկեղեցուն 15 ա., 20%: գլուխը 8 ա.: Գարեգին Աբովեանցին 20 ա., 25%: Եգոր Զանւեանցին 6 ա. 20%: Ունի մի գոմէշ, ուրիշ ունի:

15) Ուհանէս Մէջնանց (փոքրը) պարտ է Ոսկան Ոնանեանին 15 ա., 1 թաղար ցորենով. Խէչիկ Ամրխանեանցին 15 ա. 20%: Զէլրան Բաննահեանցին 20 ա., 30%: գլուխը 8 ա. Ուհանէս Թումանեանին 8 ա., 15.

խան ցորնով, Եկեղեցուն 5 թաղար, 10 խանով, գլուխը 1 թաղար, մօտ 7 տարի է: Մէջնանց Օսէփին 1 թաղար, 10 խանով, 8 տարի է որ տուածը վճարում է. Ունի կնիկ, 4 երեխա, մեծը 10 տարեկան: 1 հատ եզր

16) Ուհանէս Մէջնանց պարտ է Ոսկան Սնանեանին 30 ա., 20⁸/₁₀, գլուխը 7 ա., 4 տարի է որ վերցրել է. Իրանց Օսէփին 40 ա., տոկոսի տեղ հերկում է սորա երկու օրավար հողը, 10 տարի է: Ունի կին, 3 աղա, 1 աղջիկ, մեծը 8 տարեկան. գոյք չունի:

(Շարունակելի):

ԹԱՏՐՈՆԻ ՇՈՒՐՋԸ

Հ. Ս Ե Ի Ե Ա Ն Ի

VIII

Դերասանների ամառային ճանապարհորդութիւնները:—Դատարկապորտի մի նոր տիպ:—Կ. Մատինեանցի օդոին ներկայացում:—1896—97 թ. թատերաշրջան:—Սկիզբ եւ վերջ:—Բէթիսորի ընտրութիւն:—Դերասանական խմբի ճանապարհորդութիւնը:

Հալ դերասանական ընկերութեան առաջիկայ 1896—97 թատերաշրջանի առիթով մի քանի խօսք ասելուց առաջ, հարկ եմք համարում մի թեթեակի հալեացք ձգել նրանց ամառնալին զործունէութեան վերաջ գաւառներում: Պ. Աբէլեան իւր մի քանի ընկերներով Բագուում Իքսէնի «Ուրականներ»-ը եւ Սարգսիւսի «Ասլան-Բալասի»-ն ներկայացնելուց չէտով վերադարձաւ Թիֆլիս: Օր. օր. Վարդիթեր, Մարի-Հրանդէ եւ պ. Օհանեան Դանձակից մեկնեցան դէպի Ալէքսանդրապոլ եւ Կարս, իսկ աւնտեղից դէպի Շուշի՝ ուր հաւաքւած էին խմբի մի քանի անդամները: Ալէքսանդրապոլի 6—7 հոգուց բաղկացած խմբի անդամները սկսեցին երկու երեք մասի «Բաժանելով ներկայացումներ ապա, թէ բարոյապէս եւ նիւթապէս վնասելով միմեանց: Առանց խնդրի խորքը մտնելու, Շուշուց մեր առաջած արժանահատ տեղեկութիւնները չանգում են ալն ֆակտին՝ որ խմբի անդամների մէջ ծագած տարաձայնութիւնները հասարակութեան վերաջ շատ վատ տպաւորութիւն են թողել առհասարակ եւ վնասել թատրոնական գործին: Մենք ցաւելով արձանագրումենք ալս տողերը, որ թատրոնի անուընդ ալդպէս ի չարն է գործ դրում, եւ հետզհետէ թատրոնին ընտելացող հասարակութեան դուրս մղում նրա չէմքից:

Պր. Աբէլեան Թիֆլիս վերադառնալուց չէտով Արաքսեանի հետ ուղևորեց դէպի Սղնախ, Զաքարթալա եւ Նուխի, իսկ Ա. Վրոյը՝ Սղնախ, Թէլաւ, Ախալցխա, Ախալքալաք եւ Դիլիջան:

Դերասանները իրանց ճանապարհորդած զանազան քաղաքներում ներկայացրել են ռեպերտուարից հետևեալ պիէսները. «Ղարաբաղի Աստղաղէտը», «Գաղտնի ուժ», «Ասլան-Բալասը», «Ուրականներ», «Մալրական սէր», «Սիւզան Խմբէր», «Դամոկլեան սուր», «Բաղդասար աղբար», «Դոն-Գրիգորիօ» և այլն:

Գուրս է եկել և դատարկապարտի մի նոր տիպ, որ դերասանութեան վերաբերելի մէջ փաթաթեալ և թատրոնը իրան պատրուակ բռնելով ալ թշառ և բազմաչարչար հիմնարկութեան անուշով էլ լինչ շահատակութիւններ է որ չի գործում զաւաններում: Խմելն իւր իղէալն է, իսկ օդին իւր չուշարարը: Ամօթ, պատկառանք նրա համար վերադած են աշխարհից. և ճանապարհորդ դերասանը մի որ և է զաւանական քաղաք հասնելիս իւր առաջին լսածը ստոր և անամօթ քաջագործութիւնների մի ստար շարք է, որ գործել է իրանից առաջ եղած դերասան չորջորջող հրէշը, Կովկասի և Անդրկովկասի համարեա բոլոր քաղաքներում և գիւղաքաղաքներում սփռւած են ալ զոհարներից:

Այս երեւոյթը աւելի քան ցաւալի է, և հատարակութեան է մնում երես դարձնել ալ զցեղերից՝ թատրոնի պատիւը և իւր քսակը պաշտպանելու համար: Ուրիշ միջոց չկայ:

Դարնան չուշարար Կ. Մատինեանցի մահից վետոյ հալ դերասանական ընկերութիւնը հանգուցեալի որբացած ընտանիքի օգտին ներկայացրեց Սունդուկեանցի «Էլի մէկ զոհ» զրաման, որից մօտ 400 ռուբլի հասուցի գոյացաւ: Մատինեանցի օգտին տրեւելու ներկայացման լուրը լրագիրներում տպւելուց չետոյ անհրաժեշտ էր որ դերասանական ընկերութիւնը նոյն մամուլի միջոցով չալտնէր արդիւնքի որքանութիւնը:

Այս տարի էլ դերասանական ընկերութեան անդամները իւր ժամանակին Թիֆլիս հաւաքեցին 1896—97 թատերաշրջանի ներկայացումները սկսելու: Մտածել և որոշել էին ներկայացումներ տալու, բաւց թէ որտեղ ալ մնում էր մի մեծ հարցական նշան. որովհետև նոր արքունական թատրոնում առաջմօ անկարելի էր հաւոց ներկայացումներ տալ հինը քանդում էին. իսկ ազնականները թատրոնի բոլոր ազատ մնացած օրերը (բացի վրաց խմբի վարձած ամսական 6—7 օրերից) վարձել էր ռուս անտրպրենօր Շումիլին իւր խմբի համար: Հալ դերասանական ընկերութիւնը մնացել էր մէջտեղ. վերջապէս հաղար զժառուրթիւնով ընկերութեան համար որոշեց երկուշաբթի օրերը: Թէև իւր ներկայացման օր երկուշաբթին

դանադան անչարմարութիւններ ունէր, բայց աշնուամենայնիւ ընկերութիւնը վճռեց փորձնական երկու ներկայացումն ղենկ երկուշաբթի օրերը, լաջող գնալիս շարունակել, իսկ անլաջողութեան դէպքում դադարեցնել ներկայացումները: Խումբը երկար չափել-ձեւելուց չետոյ (չարմար պիէս չլինելու պատճառով) որոշեց, այս տարի չորրորդ անգամ լինելով իբր առաջին ներկայացում ղենկ «Ասլան-Բալասի» ն: Չնայելով երկուշաբթի օրւան — մի տարւալ ընթացքում չորրորդ անգամ խաղացած լինելուն «Ասլ.-Բալաս»-ին թատ ոնը զրաւել էր բաւականաչափ բազմութիւն: Առաջին ներկայացումից խումբը եթէ չունեցաւ իւր սպասած հասուլթը, բայց դանգատուելու էլ առիթ չունէր: Բ. ներկայացման համար որոշեց Լըվման-Շատրիանի տաղանդաւոր բայց չարաբատտիկ «Բարեկամ Ֆրից»-ը. ասում ենք չարաբատտիկ՝ որովհետեւ ալց պիէսը մի տարւալ ընթացքում խումբը 3 անգամ վճռեց խաղալ: Երկու անգամ էլ աֆիշ տպւեց՝ բայց չխաղացեց. իսկ այս անգամ որ արդէն չաւտարարած էր և կրկնութիւնները սկսած, լանկարծ խմբի մի քանի անդամները ալպիսի մի խնդիր մէջ բերին. «Եթէ այս ներկայացումից ղէֆիցիտ գոյանալ, ով է պատասխանատուն»: Ընականաբար խումբը, ինչպէս եղաւ անցեալ տարի, բայց հարցը աշնպէս դրւեց, և մէջ տեղ էլ ընկան աշնպիսի հանգամանքներ որ ստիպել են խմբին «դադարեցնել իւր գործունէութիւնը մինչև որ թատրոնի վարչութիւնը խմբին տալ իւր Նախկին հինգշաբթի օրերը»: Իսկ այս դէպքից 3—4 օր չետոյ խմբի ցրւիլը համարեա կատարւած իրողութիւն էր:

Մենք ոչ մի պատճառաբանութեամբ չենք կարող խմբի աշն վճիռը արդարացի համարել: Նրանք ամէն կերպ պէտք է աշխատէին ամուր կանգնել իրանց դիրքի վերալ: Առհասարակ էլ չէ երևում անցեալ տարւալ հաստատականութիւնը: Այլապէս չենք կարող բացատրել Նրանց այս տարաժամ դատաւքութիւնը. տրւած էր միայն մի ներկայացումն՝ արդիւնաւոր կերպով. երկրորդի համար ամէն ինչ պատրաստւած էր, և ահա լանկարծ՝ գործը դադարում է: Մինչդեռ անցեալ տարի սկզբի երկու ներկայացումներից չետոյ տրւող երեք ներկայացումներին խումբը ղեֆիցիտ է ունեցել և դարձեալ չէ չուսանաւորել... վերջապէս խումբը իւր գործունէութիւնը դադարեցնելուց առաջ կարող էր դիմել թատրոնի վարչութեան լաւանելով թէ ղէֆիցիտի դէպքում վարչութիւնը պիտի համբերէ (ինչպէս անցեալ տարի) մինչև եկամուտ գոյանալը և ապա ստանալ իւր պահանջը. վերջապէս ընկերութիւնը կարող էր գտնել միանձն որ ղէֆիցիտի դէպքում խմբին 2 — 300 ռուբլու փոխառութիւն անելու պատրաստակամ թիւն չապոնէր... խումբը այս միջոցներից և ոչ մէկին ղիմեց... «գործը պէտք է առ ժամանակ դադարեցնել» եղբակացութիւնով բոլորովին հեռա-

ցաւ ասպարէզից՝ զոնէ աչս տարւալ համար: Էլ ուր մնաց ընկերութեան տոկոսութիւնը և չարքաշութիւնը՝ որով նա ամենաչն իրաւունքով պար- ծենում էր անցեալ տարի: Ասքանք խմբի անդամներ ժամանակ ասելուց լեռնոյ հարկ ենք համարում և չափանել մեր զարմանքը աչն իրողութեան առիթով որ կողկասի նիւթական և բարոյական կենտրոնում, Թիֆլիսում, չեն չափանում մի քանի շատ չափաւոր միջոցների տէր անձինք որ տա- րեկան առաջմ գոնէ 500 ռուբլու չնչին գումարով ապահովէին թատրոնի գոյութիւնը իւր բազմահալու համբ գոված Թիֆլիսում: Ամեն երկրում թատրոնը նիւթական օժանդակութիւն է վաճելում կամ ալդ նպատակով հաստատուած հիմնարկութիւններից և կամ կառավարութիւններից. իսկ բարոյապէս՝ մամուլից և ինտելիգենցիալից. միայն մեր կիսակիրթ չըջան- ներումն է որ կամենում են ամենաչն ինչ զիւթական գաւազանի հարա- ծով զլուխ լերել: Պահանջներ անել մի նիւթապէս բոլորովին անապահով դերասանական խմբից, պահանջել լաւ ներկաւացումներ, պահանջել նո- րանից թարմ, նորանոր սվեթ, պահանջել ամենախիստ էստէթիքական ճաշակի գոհացում, ընտիր պիեսներ—կրկնում ենք շարունակ պահանջել և աչս բոլորը մի խումբ գիշեր ցերեկ իրանց ապրուստի վերաջ մոտածող անձինքներից՝ աւելի քան անտիղի է: Կարծում եմ որ ժամանակ է եր- կրագործիւ վերաջ դառնում միակ—Թիֆլիսի հաջ դերասանական խմբի և հաջ թատրոնի լարատեութեան վերաջ ուշադրութիւն դարձնել, քանի որ ամեն կերպ մեզնից անպաշտ պաշմաններում դառնող վրացիք ունեն իրանց մալերնի թատրոնը՝ որ նախանձելի է մեզ, մեր բոլոր առաւելութիւն- ներով պարծեցող հալերիւ համար:

Հաջ դերասանական ընկերութիւնը աչս տարի որոշել էր գործա- գրել իւր կանոնադրութեան § 2-ը. աչն է՝ ոչ խմբից, ալ զրաից ընտրել իւր համար ըէթիսոր, և ընկերութիւնը իւր սեպտ. 20-ի ժողովում միաժայն ըէթիսոր էր ընտրել նախկին դերասան և թարգմանիչ պ. Ամիրան Ման- գլինեանցին, Վերջինս սիրով ընդունել էր դերասանական խմբի իրան չանձնած սլաշտօնը:

Մի կողմից՝ երբ քանդակց Թիֆլիսի դերասանական ընկերութեան գործը, միւս կողմից կազմեց մի ալ զործ, աչն է. Տ. Մարիամ Աւետեանի կազմած դերասանական խումբը՝ որ պիտի ճանապարհորդէ հիւսիսային կողկասի և Անդրկասպեան երկրի քաղաքները ներկաւացումներ տալու: Գիտաոսանների ուսմանները թատերասէր տիկինը ինքն է ապահովացնում: Անշափ միսթարական կը վնէր եթէ ալդ ձեռնարկութիւնը նիւթական ձեռնարկութիւն վաճելի հասարակութիւնից և միջոց տար չարգելի տիկ- նոջ սերտ կապելու հաջ թատրոնի հետ, որին, ինչպէս լսում ենք, մտա- գիր է իրան նւիրելու: Կաղմակերպւած խմբին մասնակցելու են տ.տ. Աւե- տեան, օր. Ախաշեան, Փառսնձէմ, պ. պ. Աբէլեան, Վրոյլ, Աւետեան, Ստեփանեան, Ալիւսանեան և մի չուշարար:

Յանկանում ենք կատարեալ չաջողութիւն:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՔՐՈՆԻԿ

Վ. ՓԱՓԱԶԵԱՆԻ

Կոնգրէսներ Աւրոպայում, անտրոպոլոգիական, սոցիալիստների, կանանց, խաղաղութեան եւ տղաների — Նանսէնի ծանապարհորդութիւնը դէպի հիւս. բեւեռը:—Փռչող մեքենայ եւ իր առաջին մեծ զոհը:—Աշխարհի շուրջը պտոյտ՝ ոտքով:—Էլի «Նոր-Դար»-ին գովում են:—«Գերմանիա փիլիսոփայութիւն ուսած» հայ գրագէտներ:—

Կուրիոզներ պարսկահայոց թիրթիրից:

Վերջին տաս տարեաց ընթացքում գիտական աշխարհը ամառուազ ամիսներն էլ չէ կամենում պարսպ անցկացնել եւ գործադրում է նրանց զանազան օգտակար կոնգրէսներ կազմեցնելու վրա: Տարեցտարի ամառուազ վերջին ամիսներում կոնգրէսները շատանում են, նրանց մատնակցում են աշխարհահռչակ մասնագէտներ ու գիտնականներ, որոնք միմեանց են հանդիպում մի որոշ կեդրոնում, ծանօթանում միմեանց հետ, հաղորդում իրենց հաւանքները եւ ի մի ամփոփում վիճարանութիւնների նիւթը:

Այս տարի վերջին երկու ամառու ընթացքում, միմեանց ետեւից տեղի ունեցան կանանց իրաւունքների, անտրոպոլոգիական (մարդաբանութիւն), գրականութեան, մանուկների պաշտպանութեան, սոցիալիստների եւ ալլ կոնգրէսներ Բերլինում, Լոնդոնում, Բերնում եւ Ժնէւում:

Նթէ միաշն հաւերէն լեզուով ամռագիր կամ լրագիր կարդացող հալը կամենալ իմանալ թէ ինչ է կատարւում Աւրոպայում, նա ի դուր կը թերթի մեր օրաթերթերը, նրանք եւ ոչ իսկ լաւեղ են անում ալլ կոնգրէսների կամ եւրոպական առաջդիմական շարժման մասին մի քանի բառ ասել: Աւրոպական, ռուսական օրաթերթերը երեսներ են նւիրում նրանց նկարագրութեան, չատուկ թղթակիցներ ուղարկում ալլ կոնգրէսները, իսկ միւրոնք, որ Բերլինում, Ժրնէւում եւ ալլն եղած ուսանողների խնդրելով կարող էին թղթակցութիւններ ունենալ եւ հալ ընթերցողին հազարիւ ալլ կրթիչ կոնգրէսների մասին, իրենց էջերը լցնում են անմոռութիւններով եւ անձնական խնդիրներով եւ ալլպիսով հեռու պահում իրեն-

ցից աչն բոլոր բարեացական գրողներին, որոնք պատրաստ են ճրիագէս անդամ թղթակցել: Դա քրոնիքական է դառնել. մեր հայ օրաթերթերը աւելի քան քաջախել են և երբ մարդ նրանց թերթում է, կարծում է թէ մի հին պատմութիւն, մի անհամ, տիրացուական ժամանակագրութիւն է կարդում... և որ ալը սաւանները ծառայում են միաշն փողոցային սկանդալների և զանազան ճարպացած դրագոնների անձնական հաշիւներին...

Նա տեսնում եմ որ միաշն հաշիւին կարգացող ընթերցողը ինձնից է լսելու առաջին անգամ ալը կոնդրէսների մասին, ուստի և կ'աշխատեմ նրան զոհացում տալ, որքան կարող եմ մանրամասն կանգ առնելով մա. նաւանդ անտրոպոլոգիական (մարդաբանական) կոնդրէսի աշխատութիւնների վրայ, որովհետեւ միւս կոնդրէսները չտուն աչնքան կարեւոր արդիւնքներ, որքան ալը:

Չորրորդ կոնդրէսն էր, որ կապցաւ ժընէլում, օգոստոս 13-ին, համալսարանի մեծ սրահում, նախագահութեամբ Գ-ր Լադամի: Կոնդրէսը զբաղւելու էր ոճրագործական մարդաբանութեան խնդիրներով: Հայ ընթերցողը աչս լուսէիս կ'ըմբռնի թէ խնդիրը ինչու՞ն է: Առաջին նիստը բաց արեց Նէլցարական Գաշնակցութեան նախագահ Լաշէնալը մի ճառով, որում նա համառօտապէս թեւց անցեալ 3 ժողովների աշխատութիւնների մասին: Ժողովին ներկայ էին հոշակաւոր խաւացի ոճրաբան (criminaliste) պրոֆ. Լոմբրոզո'ն և խաւական օրէնսդրական մասի պետ Գարոֆոլոն: Ներկայ էին ալ և շատ ուրիշ գիտնականներ, որպիսիք են Տարդը, Լոմբրոզոյ աշակերտ Ֆէրրի և ալը:

Առաջին նիստից սկսած բացեց մի կարեւոր վիճաբանութիւն «ոճրագործ ծնողների», աչխնքն բնածին ոճրագործների համար: Լնչպէս «Մուրճ»-ի ընթերցողը զիտէ իմ անցեալ քրոնիկից, Լոմբրոզոն և իր խաւական չկողան պնդում են որ կան մարդիկ, որոնք ի ծնողէնէ ոճրագործ են, որ նրանց կազմաւորը, օրգանիզմը ոճրագործական է, աչխնքն կալ անատոմիական մի տիպ ոճրագործների: Ալը թէօրիալին դէմ են գերմանական, ֆրանսական և բելգիական մարդաբանները:

Նա աչա բուռն վիճաբանութիւն էր սկսում աչժմ երկու հակառակորդ բանականների մէջ և չդադարեց, մինչև որ Լոմբրոզոյ աշակերտ (disciple) Ֆէրրին չաւտարարեց թէ իրենք, խօսելով բնածին-ոճրագործի մասին, չեն ասում որ դա բացառապէս անատոմիական տիպ է, ալ որ նա արդիւնք է նաեւ ֆիզիքական և ընկերական շրջանների: Մի մարդ կարող է ծնել ոճրագործական տրամադրութեամբ, մղումով, բալց և կարող է ոչ մի ոճիր չգործել, եթէ հանդիպի ալը բնազդումը ոչնչացնող կամ չեզոքացնող ուժեղ ընդդիմադրութեան աչն շրջանի կողմից, որում նա ապրում է: Նա կարող է նույն իսկ իր նախորդից ժառանգել ուժ՝ դէմ դնելու միջավայրի վատ ազդեցութեան:

Սրա հետ համաձայնեցին շատերը: Յետոյ Բելգիայի պատգամաւորն էր որ կարդաց իր «Ալլասեռումն և ոճրագործութիւն» աշխատութիւնը, որում նա աշխատում էր գիտնականօրէն հաստատել ոճրագործութեան և ալլասեռուման մէջ եղած կապերը:

«Ալլասէս, ասում է նա— սաստիկ իղիօտների մէջ ոճրագործութիւն չկայ, ալլասեռումը ոչնչացրել է ոճիրի տրամադրութիւնը. մի քանի ապուշների մէջ, ընդհակառակն, ալլասեռումը ոչնչացնելով միտքը (l'intellect) թողել է միայն բնածին հակումները, որոնք մղում են նրանց ոճիրների... Մի խօսքով, ալլասեռումն և ոճրագործութիւնը պնդելով բաներ են, որոնք զարգանում են, բնափոխւում, բայց որոնց վրայ մենք կարող ենք ազդել: Բժիշկներին և իրաւաբաններին է մնում ուսումնասիրել պատճառները և ամեն մէկը իր շրջանում հետախուզելուց չետոյ, միացնել իրենց եզրակացութիւնները չօգուտ ալք թշառ արարածներին:

Կոնգրէսի երկրորդ օրը ժողովականները լսեցին հռչակաւոր Ֆրանսացի մարդաբան Տարդի ճառը, որում հետաքրքիր էր սոյն թւահամարը (ստատիստիկան): 10,000 անձի մէջ համեմատական կերպով ոճրագործներ թւում է այսպէս. երկրագործներ—0,84, արհեստաւորներ—1,32, վաճառականներ—1, կղերական—0,71, ուսուցիչներ—1,58, բժիշկ—1,86, դեղագործ—3,79, տատմալներ—8,60, գրականագէտ և գիտնական—4,49, արտիստներ—4,02, փոստի ծառայող—7,45, նոտար, փաստաբան, դատաւոր և ալլը—28,13: Ուրիմն ամենաշատ ոճրագործներ դուրս են գալիս դատաստանական պաշտօնեաներից, տատմալներից և փոստի ծառայողներից: Այս վերջինը հասկանալի չէ:

Տարդի ճառից չետոյ հետաքրքիր էր 'Ի-ր Օբրիի «մամուլի ազդեցութիւնը ոճրագործութեան վերաջ» աշխատութիւնը: 'Իօքտորը գտնում է որ չաճախ մի լրագիր մղում է Կալէնին՝ սպանելու Աբէլներին: Նա ասում է, որ լրագիրների հրատարակած ոճրագործութիւնների մանրամասն և ազդող նկարագրութիւնները ոչ միայն քաջալերում են տրամադրւած ոճրագործներին, այլ մինչև իսկ տրամադրում են ոճրագործութեան:

«Խնդրի մի ալ կողմը կալ—ասում է զօքտորը—որի մասին չեմ կարող լռել: Ահա մի անձ, որ տրամադրւած է ոճիր գործելու և ալս կամ ալն շարժառիթով կամենում է ձեռնարկել. ոճրի կատարելագործութեան տեսակէտով, մամուլը նրան մեծ օգուտ է տալիս: Առհասարակ ոճրագործը շատ հնարագէտ չի լինում և ահա մամուլը, նկարագրելով զանազան ոճիրների գործադրութիւնը մանրամասնութեամբ, հնարագէտ է դարձնում նոր ոճրագործին և սովորեցնում է նրան զանազան միջոցներ... 'Ի հարկէ ալք տեսակետով սաստիկ վնասակար են նաև ոճրագործական վէպերը, օրինակ «Ծերունի Լըքոք»-ները ևալն, որոնք վխտում են Ֆրանսական գրականութեան մէջ:

Էդգար Բէրլինը, զրանից Վետու, կարդաց իր ուսումնասիրութիւնը անգլիտակցական, ակամալ սուտ վկայութիւնների վերաբերութեամբ, իսկ Քուսարիէ Զրանկոթը՝ օղեմոլների (ալքօօլիք) հիւանդոտ վարմունքի և նրանց՝ պատասխանատուութիւնից աղատ կացուցանելու մասին: Ահա նրա ալդ գիտնական ուսումնասիրութեան ամփոփումը: «Վոլութիւն ունին մի տեսակ սոնամբուլիզմի (քնած-արթնութեան) մէջ ընկնող օղեմոլներ, որոնք ալդ զրութեան մէջ են մտնում օղու աղդեցութիւնից և առերևութ ուղորդական կերպարանք ունենալով, ինչ որ ահում են ալդ ժամանակ, լետոյ չեն լիչում: Իսկապէս ալդպիսի անձերի նիստ ու կացի, խօսակցութեան և վարմունքի մէջ լինում են անորմալ (անսովոր) բաներ, քաղց մակերևութապէս նաչողը չէ նկատում: Ալդ զրութիւնը երևում է միայն ալլասերած ալքօօլիկների և կամ ժառանգական օղեմոլների մէջ, ուստի և ալդ զրութեան մէջ նրանց արածները չի կարելի պատասխանատուութեան ենթադրել, ի հարկ է եթէ ալքօօլիկը նախամտածած կերպով արեցած չլինի»:

Վերջապէս Գ. ր Նէկէն, Լէպլիգից, ներկայացրեց ժողովին մի ալլատուութիւն: Այս զոքտորը Լոմբրոզօի հակառակորդն է և կարծում է որ «քնածին—ոճրագործ» չկալ և ոչ էլ ոճրագործի որոշ տիպ, նա չէ հաւատում որ ոճրագործութիւնը կապ ունենալ ատաւիղմի ¹⁾ կամ էպիլէպսիի (վերնոտութիւն, թալիսցումն, լուսնոտութիւն) հետ. մինչև իսկ նա հարց է տալիս թէ զոլութիւն ունի ոճրագործական—մարդաբանութեան գիտութիւնը առանձնապէս իբր գիտութիւն, թէ եղածները պատկանում են հոգեբանութեան, քանի որ ոճրագործի անւտմիական տիպը զոլութիւն չունի: «Լոմբրոզօից առաջ—ասում է նա—գիտէին որ ոճրագործների մէջ շատ են գտնուում հոգեպէս հիւանդներ, վերնոտներ, ապուլներ, անհաւասարակչիւններ... (անշուշտ օղեմոլներ ևս) ևայն. Լոմբրոզօի արժանիքը նրանումն է, որ նա նորանոր հետախուզութիւններով հաստատել է ալդ թէորիան և չաջողել է որոշել ոճրագործների մէջ ալլապիսիներին, որոնք արդիւնք են հիւանդութիւնների և որ նրանք ոչ թէ պատժի և արհամարհանքի են արժանի, ալլ հոգատարութեան, զոլութի և բժշկութեան»:

Նէկէի եզրակացութիւնը ալլ էր, որ բանտերի բժիշկները և իտի լինին փորձած ալլէնիստներ (խելագարների բժիշկ մասնագէտներ) և որ ոճրագործների մեծամասնութիւնը ոչ թէ հիւանդներ են, ալլ պատասխանատու անձնաւորութիւններ, և որ հարկաւոր է նրանց պատժել:

Նէկէի լիովին հակառակն է Լոմբրոզօի վարդապետութիւնը, ինչպէս

¹⁾ Նախնիքների չատկութիւններն ունենալ, օրինակ զաղանակաւ չատկութիւններ:

գիտեն ընթերցողները և զրա համար էլ մեծ վարպետը ժողովի մէջ մի ծառ խօսեց, որը չեսոյ ամիոփեց հետեւեալ խօսքերով:

«Կան ոճրագործ—ծնողներ (բնածին), որոնց անհնար է լինում խնամել, և որոնց համար ոչ մի միջոց օգուտ չունի: Սակաւն քանի որ զրանք վերնոտներ են և աւքօօլիկներ (օղեմոլութիւնից հիւանդներ) ժառանգապէս, կարելի է փորձել նրանց բժշկելու գանդը ծակելով (trépanation crânienne) և զեղ ներմուծելով, եթէ վերնոտութիւնը վիրալից է (traumatique)... հիպնոտիզմով, եթէ երիտասարդ է զեռ... Բայց ամենալաւ միջոցն է ալդպիսի բնածին ոճրագործներին բարոյապէս կրթել, ալսինքն խնամելը սկսել հէնց կեանքի առաջին ամուսնից, մեծացնելով նրան գիւղում, ագարակների սէջ, մի խօսքով հեռու ալնպիսի շրջաններից, ուր տեղի են ունենում սծիրներ»... Լալլն Լալլն: Մի բան միալն մուսնում են (? Խմբ.): Բոլոր ալդ լարդելի մարդաբան գիտնականները, Լալ. կը լինէր ուսումնասիրել ալն թէ ինչու է առաջ գալիս բնածին ոճրագործ, շնորհիւ ինչ հանդամանքի է որ նրանք ժառանգում են ալդ մղումը: Լոմբրոզոն ընդունում է պատահական ոճրագործի գոյութիւնը: Որպէս բոլոր ինստիտուտները անցել են մեղ մեր պապերի մէջ գոլացած պատահական չատկութիւններից, ալնպէս էլ հաւանական է որ ոճրագործութիւնը բնածին է եղել ալդ թշառ անձերի սրտերի մէջ գոլացած պատահական ոճիրներից, ժառանգաբար անցնելով իրենց սրգիրների վրա և ժառանգաբար էլ հետզհետէ ոչնչանալու ընդունակ լինելով: Ուրեմն, ոճրագործութեան, օղեմոլութեան Լալլն հակումները, լինին նրանք ժառանգական կամ պատահականութեան արգիւնք, ծաղել են որոշ կրկնող պատճառներից: Ահա այդ պատճառն է որ մոռանում են քննելու և կամ իրենց մասնագիտութիւնից դուրս են համարում լարդելի մարդաբանները: Ալդ մեծ, սոսկալի արդիւնքներ տող պատճառի ուսումնասիրութիւնը թողւած է ընկ'իւսբաններին, պատմաբաններին, ալդ մեծ պատճառը օրաւ ալրող հարցն է ամբողջ մարդկութեան համար: «Դ՞նչու գողացաւ—ասում է Վ. Հիւգօն իր մի վէպի մէջ.—«գողացաւ, որովհետեւ ուտել կ'ուզէր և չունէր ուտելու Բողդործէր: Բայց գործ չկար»: Եթէ հալ ընթերցողը կարդացել է մեծ քերթողի «Թշառներ» վէպը, նա թող չիշի Ժան-Վալթանը, որ ոճրագործ դարձաւ, թող չիշի նոյն հեղինակի «Վլոդ-Վէռն» որ մարդասպան եղաւ և վերջապէս թող իր շուրջը դիտի և քննի թէ ինչու են մարդիկ գողանում, սպանում, խաբում, սղխոտութեան և կեղտի մէջ փչանում:

Վերաւէք պատճառը—կը վերանալ արդիւնքը...

*
* *

Սոցիալիստները կոնգրէսը մեծ արդիւնք չունեցաւ. նիստերը գործաւ դրեցին վիճելով թէ արդեօք հարկաւոր էր անարխիստներին էլ ընդունել

սոցիալիստներին մէջ և համարել նրանց պաշտօնակիցներ: Այդ որոշ պարզ հարցը հրաւիրեց բուն վէճեր, մինչև իսկ կռիւներ, որովհետև զանազան խմբերի ներկայացուցիչների անուանով՝ ձախի տէր էին եղել շատ անարխիստներ և սոսկալի ազմուկ էին հանում: Բայց անարխիստների պահանջը սուր կերպով տարբերում է սոցիալիստների պահանջներից, և այդ երկու խմբերը միմիանց միանալ երբէք չեն կարող, որովհետև անարխիստները պահանջում են —

1) Ընկերութիւնը աւնպէս կազմակերպել, որ ամեն մարդ իր պահանջի չափ ունենալ: 2) Բացարձակ ինքնիշխանութիւն, ոչ մի կառավարութիւն, ոչ մի ազմիրնատրացիա, ինչ ձևի էլ որ նա լինէր:

Իսկ սոցիալիստների էական պահանջներն են 1) Ամեն մարդու իր աշխատութեան չափ. ով չի գործիլ՝ նա չի ուտիլ: 2) Աշխատանքի գործիքը և հողը ոչ մէկի սեփականութիւնը չլինի, այլ բոլորի, որոնք կը գործեն նրանցով. ոչ մի կուտակումն կապիտալի կամ աւելորդ բաների. ժառանգութեան ոչնչացումն. որոշ ընկերական պարտաւորութիւններ և որոշ կառավարչութիւն, որ կը վարէ հասարակական գործերը:

Այս տարբերութիւնը վաղուց չալանի էր, բայց էլի սկսեց սաստիկ վիճաբանութիւն, և երբ նիստերը փակեցին, վէճը կիսատ իսկ մնաց և թողեց չետագալ տարւալ կոնգրէսին:

Լրագիրները շատ ծաղրեցին նրանց, մինչև իսկ ծաղրանկարներ երևան եկան:

Կանանց կոնգրէսից էլ դեռ ոչ մի արդիւնք. ճառեր են խօսել և բոլորը... Այդ կոնգրէսի մասին կար հաջ թերթերից մէկում բաւական մանրամասն (Արձագանք):

Մնում է ինձ մի քանի խօսք ասել խաղաղութեան կոնգրէսի վերաբերութեամբ, որ կապցաւ Բուդա-Պէշտում և որին ճախագահում էր այդ ընկերութեան հիմնադիր Թիէրթա Ֆոն-Սուտները:

Հաջ ընթերցողը ծանօթ չի լինիլ նրա «Die Waffen nieder» (‘ի բաց զէնքերը) չալանի վէպի հետ, որ ցնցեց ամբողջ Աւրոպան և որը առանց չուզելու ոչ ոք չէր կարող կարդալ: Թարգմանած կալ գրեթէ ամեն լեզուով, բացի հալերէնից: Բայց հալերէն ինչ կալ, որ դա լինի. թարգմանում են ամենաանշան, անմիտ վէպերը, իսկ բոլոր լաւերը թողնում են: Խեղճ գրականութիւն, որ ոչ ինքնուրույն մի բան ունի և ոչ էլ թարգմանական:

Տիկին Բէրթա Ֆոն-Սուտների ճառը միաշն հս կ'ամփոփեմ ալստիլ հաջ ընթերցողի համար, և դա բաւական է ապացուցանելու թէ խաղաղութեան դաշնակցութիւնը որպիսի վսեմ նպատակ ունի:

Նախ պիտի ասել որ քանի դնում է, այդ զաշնադրութիւնը քաղաքացիութիւն և ազգեցութիւն է ձեռք բերում: Այս տարւալ կոնգրէսին

ներկայ էին օրինակ, գեներալ Տիրր, որ խսկական նախագահն էր ժողովի, վեհաժողովի ներքին գործոց նախարարը, Բուդապեշտի վոյս-քաղաքապետը, Ֆրանսական մի սենատոր և այլն:

Տ. Բէրթա Պոն-Սուտենը շնորհակալութիւն լաւտեստով Բուդա-Պէշտին՝ նրա հիւրընկալութեան համար, վերջացրեց իր ճառը հետեւեալ խօսքերով:

«Ահա, — խաղաղութեան բարեկամներս, հալոյնակից ենք, բոլորս մի ազգի անդամներ: Ի՞նչ է ազգ, դա դաշնակցութիւն է աշխարհի անձերի, որոնք կ'ապւած են միմեանց հետ ընդհանուր շահերով, գաղափարներով և ձգտումներով: Արդեօք մեզ ալժամ էին միացնում ընդհանուր շահեր, ձգտումներ և լիշողութիւններ, ալ և մի ընդհանուր զգաւք ու թշնամութիւն դէպի գաղանալին անսիրտ ու տմարդի գործողութիւնները: Բոլոր քաղաքակրթւած մարդիկ եղբայրներ են. նրանք միացած են ընդհանուր սիրով դէպի մարդկութիւնը, ընդհանուր գիտակցութեամբ: Շարունակենք միասին մեր գործը և մենք կը հասնենք մեր նպատակին»:

Եւ սակաւն որքան անհամ կատակ է թուում մեզ — հալերիս՝ ալդ ուռուցիկ խօսքերը աշխարհի տեղից, ուր անվրդով կերպով են վերաբերւում դէպի մեր թշառութիւնները...

*
* *

Այս տարի արտասահմանեան մամուլը երկար զբաղւեց նաև դէպի բեռները ելնող ճանապարհորդութիւններով, որովհետև ամառը չանկարծ լուր հասաւ, որ դէպի հիւսիսային սառուցեալ բեռը դնացող Նանսէնը վերադարձել է: Լուրը ստուգւեց: Օգոստոս 13-ին Նանսէնը և իր մի ընկերը դուրս եկան Նորեգիայի ծալրագոյն հիւսիսում և երբ հալոյնիք իջան, ամբողջ երկիրը դիմաւորեց նրանց մեծ հանդէսներով, չաղթական կամարներով, թագաւորն իսկ հեռագիրներ ուղղեց Նանսէնին:

Բեռնակին միւս արշաւանքը եղաւ օդապարիկով: Անդրէն պատրաստւեց ելնել, բայց պատրաստւած օդապարիկը լաւ չդուրս եկաւ, ալ և եղանակները վատացան, Նա ստիպւեց Շպիցբերգից վերադառնալ:

Յանդուզն հետախուզներից մէկն էր նաև ալն, որ օգոստոս 10-ին զո՞ գնաց իր սեծ նպատակին:

Հաջ ընթերցողը լսած կը լինի ալն փորձերը, որոնցով երկար ժամանակից ի վեր զբաղւում էր Լիլիէնթալը, աշխատելով հնարել թռչելու մեքենան: Նա բաւական բարձրութիւնից ցած ընկաւ և ջախջախեց: Պերմանական և միւս բոլոր թերթերը մեծ ցաւ լաւտեստին և երկար չօղածներ ներքին թռչելու մեծ գաղափարին առաջին զո՞ հերոսի յիշատակին: Լիլիէնթալը երկար ժամանակ էր որ փորձում էր իր հնարած մեծ թևերը, որոնք թռչունի թևերն են լիւեցնում, կրկնակի թևեր: Ազդ թևեր

նա կատում էր բաղուկներին, ապա, մի քիչ քամու գէմ վազելուց փառլու՜
ռեժեղ ուտիւնով բաժանում էր գետնից և առաջ սլանում: Նա լաջողել էր
մինչև 260 մետր (մօտ $1\frac{1}{4}$ վերստ) բարձրանալ:

Լիլիէնթալի դիւտը առաջին քալին է. նա ցոյց տաւ աչն ուղղու-
թիւնը որ հարկաւոր է բռնել, թռչող մեքենան հնարիւր համար: Զար-
մանալի չի լինիլ եթէ քիչ լետու ամերիկական մի հանձար տալ մարդ-
կութեան աչն օդատւաց մեքենան, որով մարդս կարողանալու է սլանալ
օդի մէջ ուղած ուղղութեամբ, ելնել, իջնել, ճանապարհորդել օդի միջով:

Դա մի մեծ, մի շատ մեծ քալ է կը լինի և մի նոր դարադրութիւն կը
բանալ մարդկութեան զարգացմանը: Նրանի նրան ով կը չաջողուի առաջին
անգամ նստել ալդպիսի մի մեքենայի, մի կառքի վրա և սլանալ օդի
մէջ ամեն ուղղութեամբ, որպէս մի թռչուն: Ա կստարեւրու է աչն մար-
դարէութիւնը, որ մարդս, սկսելով սողալուց, վերջացնելու է թռչելով:

Մեծ գալափարի առաջին զոհ Լիլիէնթալը 45 տարեկան էր երբ
մեռաւ: Պատմութիւնը միշտ չարդանքով կը վիշտակի նրա անունը:

*
* *

Յանդուգն ձեռնարկութիւնների տարիներին մէջ ենք. ալդ ձեռնար-
կութիւններից մէկն էլ նոր ի կատար ածեց լաջողութեամբ: Կա աշխարհի
շրջան դործելն էր ոտքով և սնակական աշխատանքով:

Ալդ տաժանելի ճանապարհորդութիւն կատարողը մի ամերիկացի է
Բէնդալ անունով, որ 50,000 Ֆրանկ զրաւ բռնած, ճանապարհ բնկաւ
Նիւ-Յօրքից, առանց մի կոպէկ իսկ վերցնելու իր սեպհական փողերից:
Շատ հետաքրքիր է թէ ինչպէս նա փող դտաւ: Գրաւը սնկպէս էր, որ
երիտասարդը մի քանի բարեկամների հետ պիտի մտնէր մի ծովալին բադ-
նիք, իր շորերը հանէր և միջոց գտնէր ալդպէս մերկ, առանց մի կոպէկ
ունենալու, սկսել իր ճանապարհորդութիւնը: Նա հնալագէտ էր, սկսեց
նոր լողալ սովորողներին վարժեցնել և մի քանի կոպէկ ստացաւ: Երբ
երեկուց եղաւ, ունէր մէկ դոլար: Դա քիչ էր շոր գնելու համար,
բայց ահա թէ ինչ ալանդակ միջոցի դիմեց մերկութիւնը ծածկելու:
Ուղարկեց մէկ Ֆրանկի լրագիր առնել տեց, իր ձեռքով մի տեսակ
լալն շոր չինեց թղթերից և ամբողջապէս ծածկեց և ալդպէս, ալդ
Ռոբինզոնեան հագուստով, զլիարաց ու ոտաբոլիկ՝ փողոց: Գուրս եկաւ
եթէ Ատիպում լինէր, անշուշտ կը շուշացնէին ետևից, իսկ ոստիկանու-
թիւնը նրան կը բռնէր ու իբր խենթ՝ կ'ուղարկէր հիւանդանոց: Ալդպէս
չեղաւ Նիւ-Յօրքում, ամենքը արդէն գիտէին որ դա Բէնդալն է և ինչ
նպատակ ունի: Հարիւր քալ չէ: արել, որ ահալին հարստութեան տէր
եղաւ. մի ատամնաբուժ նրան 20 դոլար տեց աչն պալմանով՝ որ իր
չալտարարութիւնը կպցնի նրա մէջքի վրա, լետու մի զեղազարծ, որ նոր

դեղահատեր էր հնարել, 500 ֆրանկ տալով իր ազգը կախեց Նրա վզից. նրա բազուկներն լվալի ազդերը տւին տիրոջը ահագին զուժարներ, աչն-պէս որ աչդ կենդանի լրագիրը երեկոյեան դէմ ունէր բաւական փող հագուստ և ամեն ինչ առնելու համար. Բաւց երբ ուզեց առաջին անգամ կօշիկ գնել, կօշիկակարը ձրիապէս Նրան 10 զուգ կօշիկ տւաւ աչն պալմա-նով, որ Բէնդալլը տալ մի չալտարարութիւն աչսպէս. «Իմ կօշիկներս գնել եմ պ. X ից, որովհետեւ Նիւ-Նօրքի մէջ նա է միայն կարող աչնպէս կօշիկներ կարել, որոնք կարողանալին ստքով աշխարհի շրջանն անել առանց մաշելու»: Աչդ չալտարարութիւնը իսկույն ապւեց լրագիրներին մէջ:

Նոյն ընդունելութիւնը գտաւ Բէնդալլը դերձակի, չապկազործի, ղլխարկավաճառի և ալն մօտ, իսկ երեկոյեան նա համաձայնեց նորու-թիւնների մի մագաղինում մի քանի ժամ կանգնել ի ցոյց, ժամը 25 ֆր. շոճիկով (10 ուրլի): Մի խօսքով, Բէնդալլը, որ առաւօտեան ժամը 10-ին բոլորովին մերկ էր, երեկոյեան դէմ վատտակել էր 4,600 ֆրանկ, կօշիկներ, ղլխարկներ, հագուստ: Աչն օրը որ նա մեկնեց Նիւ-Նօրքից (որովհետեւ մի քանի չաբաթ մնաց՝ փող աշխատելու համար) նա տանում էր իր հետ 20,000 ֆր. չահած և զանազան լճակների վրալ քաշած, ալ և հարուստ պաշար հագուստաղէնի: Համարձակ, լանդուզն ճանապարհորդի առաջին անգը եղաւ Նիւ-Նօրքից Ս. Ֆրանցիսկօ, որ 750 քիլոմէտր է և նա ու-քով քալելով օրական 40—45 քիլոմէտր դնաց. 1894 թիւ լուլիս 4-ին նա նաւ նստեց Հաւալ անցնելու համար, լետոլ գնաց Սամօա և ոտքով կտրեց Աւստրալիան և Նոր-Չելանդիան: Չինաստան հասնելիս նա առան-ձին տեսալցութիւն ունեցաւ Լի-Հունգ-Չանգ փոխարքալի հետ, որին շատ զարձացրեց լանդուզն ճանապարհորդի ձեռնարկութիւնը: Նա չալտեց Բէնդալլին թէ որքան դժւար էր անցնել երկրի միջով անխառն մահա-ւանդ երբ ամեն տեղ ապստամբութիւն էր և խռովութիւն: Բաւց Բէնդալլը մեթեց, լանձնարարականներ առաւ և մեկնեց, բաւց հազիւ 5—600 քի. լոմետր դնացել էր, որ ստիպեց ետ դառնալ և անցնել Նապոնիա: Նօ-կանամալում նա ընդունեց կոմս Խոթի կողմից և ամեն դիւրութիւններ տրեց, մինչև իսկ ստացաւ աստիճանաւորութիւն զօրքի մէջ և ալդալսով 12 կռիւների էլ մասնակցեց, 5 վէրք ստացաւ, լետոլ անցաւ Սիամ, Բիլման, Լալկաթա և Լէտտան: Պարսկաստանի մէջ նա շատ նեղութիւն-ներ կրեց, բաւց երբ տեսնում էին պարսիկները որ մի եւրոպացի ոտքով է ման գալիս, արդեւ չէին լինում կամ զարմանում, ալ կարծում էին թէ խեղճութիւնն է պտուճառը: Սակաւն ձալնը հասաւ Նասր-էղդին շա-հին, նա ուզեց անձամբ տեսնել Բէնդալլին և անգլիական ղեկաւանի հետ ճանապարհորդը ներկայացաւ պարսից ինքնակալին: Շահը զարմացաւ, որ ճանապարհորդը մի երկասարգ էր, կրթած, և մինչև իսկ մի քանի խօսք պարսկերէն ղլտցող: Նրան ձաշի պահեց, լետոլ 500 ղինուր տւեց որ ու-ղեկցեն մինչև Հալատտանի սահմանները:

Բէնդալլը զժբաղդութիւն ունեցաւ Հալաստանում ականատես լինել Էրզրումի սոսկալի կոտորածին, որի մասին գրած քում նա ահռելի նկարագրութիւններ է անում թիւրքերի զաղանութիւններին:

Այսպէս, լանդուգն ամերիկացին, սեպտեմբեր 3-ին հասաւ Աւրոպա: Չմոռանամ ասել, որ Հալաստանում, ենթարկւելով քիւրդերի չարձակումին, կողոպտւեց և վիրաւորւեց. աւաղակները տարան նրա փողն ու թղթերը: Թղթերը վերջերում ընկան Ամերիկական կոնսուլի ձեռքը. ալղպիսով մի ժամանակ լուր տարածեց որ Բէնդալլը մեռել է, բայց նա մի հալի տուն ընկաւ, բժշկւեց և շարունակեց ճանապարհը մինչև մի ամերիկական կոնսուլի մօտ: Ալղպիսով նրա չարութեան լուրը հասաւ, նա իր թղթերն ստացաւ և ալս տարի սեպտ. 3-ին (նոր տոմար) մտաւ Անգլիա:

Ի դէպ է ասել, որ ալղպիսի մի ձեռնարկութիւն անում է մի ռուսաստանցի գերմանացի ևս, որ ալժմ մինչև Չինաստան է հասել:

Բէնդալլը շուտով իր ճանապարհորդութեան նկարագիրը հրատարակելու է, որը անշուշտ շատ հետաքրքիր է լինելու:

*
* *

Էլի գովում են «Նոր-Վարին» և իր մեծ խմբագրին, անւանելով թերթին «ամենահուշակ, հաւ հալքենասէր երիտասարդութեան օրգան», իսկ նրա խմբագրին «մեծ կրթիկոս և հրապարակախօս...»:

Բայց ալս անգամ ալք անում են թութակօրէն, քաղելով Ֆրանսական «Revue des revues» հանդէսից: Այդ մասին խօսել էի «Մուրճ» № 6-ում: Վաղողներն են ռուսաց երկու համակրելի օրգաններ, „Міръ Божій“ ամսագիրը և „Вѣр. Вѣд.“ օրաթերթը: Առաջինը քաղում է առանց աղբիւրը չիշելու, իսկ երկրորդը վստահում է առաջինին և չէ մտածում անգամ, որ փառաբանում է իր ուղղութեան լիովին հակառակ մի թերթ և նրա խմբագրին: Եթէ նրանք իմանային «Նոր-Վարին» ինչ լինելը՝

Բայց ինչպէս երևում է, «Revue des revues» հանդէսը խաղալիք է դարձել հաւ գրականութեան հետ անձանօթ հոստոների ձեռքը, որոնք չարաչար գործադրելով հանդէսի սիրալիր պատրաստակաւութիւնը, հաղորդում են նրան միմեանցից կեղծ, միմեանցից աւելի սխալ տեղեկութիւններ, երբեմն մինչև իսկ ծիծաղ շարժող անմտութիւններ: Օրինակ ալք հանդէսի օգոստ. 15-ի համարում տալած մի լօղւածն ևս, որ գրել է պ. Տիգրան Նրկաթը (կեղծ անուն) և կրում է «հաւ գրական շարժում» վերնագիրը: Ինչ վերաբերում է թիւրքահայոց և վենետիկեան հաւ գրականութեան, նա սխալներ չէ անում. բայց երբ խօսում է ռուսահայոց գրականութեան մասին—անհեթեթ ստերի մէջ է ընկնում: Նախ որ բոլոր հաւ գրագէտներին, Նալբանդեանին, Աբովեանին, Դուրանի իսկ տէրտէրի որդի Վամառ-Վաթիպային՝ դարձնում է վաճառականների որդիներ. քեռոյ գըտ-

նում է որ Կովկասի նոր հաջ գրազեաները և ֆուկ-լորիստները (ժողովրդական բանաստեղծութիւններ) ուսումնասիրողներ) են Գալանթարն և Մալխասեանը (!)։ Ահա ալի կտորը։

«Գալանթար, Երեցեան (լաւ է որ լաւեղ է արեւ պատկառելի աշխատողի անունը չիլեռ), Մալխասեան և ուրիշ երիտասարդ գրողներ Գերմանիա գնացին և ալետիկ ուսումնասիրեցին եւրոպական փիլիսոփայութիւնը ու, արհամարհելով 5-րդ դարի գրաւորները, անձամբ, մանաւանդ պատմական գրաւորներում, լուս հանեցին տեղն ու տեղը հաւաքած գիտմաններ...»։

Անհեթեթութիւնը նրա մէջն է որ չիւած երեք «Գերմանիա գնացած և եւրոպական փիլիսոփայութիւնը ուսումնասիրած» անձերից և ոչ մէկը Գերմանիա չէ ուսած և ոչ մէկը փիլիսոփայութիւն չէ ուսումնասիրել և նոցանից ոչ մէկը ալն չէ արել, ինչ վերադրել է նրանց փրանսական հանդէսում։

*
* *

Ընթերցողը գուցէ չէ մոռացիլ որ Պարսկաստանում հրատարակուած են երկու հաջ թերթեր։ 5—6 ամիս է որ նրանցից ոչ մի համար չէ ստացուած և իրաւացի է, որ նրանք մոռացած լինեն։ Եւ կարծում էի թէ երկուսն էլ հանգել են 'ի Տէր, բալց ալիպէս չէր. երկուսն էլ քարշ են տալիս իրենց սոսկալի գոյութիւնը։ Բարեկամներինս մէկը թէ նրանից, մտածելով ինձ քիչ զարմացնել, ուղարկել է երկու թերթերից առաջինի—Նուրի—մի քանի համարներ Բաց եմ անում օրինակ № 25-ը։ Տեսնե՛ք բովանդակութիւնը։—Մի առաջնորդող, արտասպաւ արտասահմանեան մի թերթից, չետոյ («Ասող Արեւելեան»)—ի (հակառակորդ թերթին) բարեկամներին ուղղած մի զգուշի, ուղղակի փողոցալին հայհոյանքներով լի բը 3 սիւնակ, մանր տառերով չօղած, գեռ չարունակելի։ Ալի չօղած գրողը և նրան տպողը պատկերացրել են իրենց հոգին իրենց նետած լուտանքների մէջ. բանը ալետիկ են հասցնում, որ հակառակորդին—«Ասող Արեւելեանի» խմբագրի մօրը ուղղակի ամբաստանում են պոռնկութեան մէջ աչսպէս... «ասեմ որ խանձարոտուած եղբայրդ փողոց է նետել, անհարաղատութեան կնիքն 'ի ձակատ և թէ ալի եղբայրդ աչսօր կենդանի, պատկերահանութեամբ է զբաղում Փարիզ քաղաքում»... Կոմենտարիաներ աւելորդ են ալլես։

Բալց մի քանի նմուշներ տամ թերթի մէջ եղած ուրիշ թղթակցութիւնների, որոնցից մէկի հեղինակը առաջնորդող չօղածներ իսկ գրում է։ Ահա նրա թղթակցութիւնից մի կտորը. «Կարդացի՛ք ձեր գրած նամակը աղնի պարոն Զ. Նուրի № 22-ի մէջ, որով ալն եղբայրութեան եկանք, որ դուք վերջին ճիգնէք թափում ձեզ և ձեր խմբին արդարա-

ցնեւու: Միթէ (!)—(բոլոր նշանները և տառասխանները արտագրում եմ առանց իմ կողմից մի բան աւելացնելու): Միթէ (!) բալց ձեզ մեղադրել չի կարելի, որովհետև կողմսի աղաւթ կեանքն է ուսել, որ միշտ արդարացնէք: Ո՞ւմ: Գուք ինքներդ ձեզ: Հիմնալի՞ գործ: Ինձ պատասխանատուութեան և դատի էք ենթարկում: Ո՞ւմ: Ի՞նչ: Բալց դուք սխալւած էք: Անկարելի ոչինչ չկալ, կարող է պատահել: Միթէ (!) ևս Պալուսին եմ, որ ինձ դատի ենթարկէք... ևսլն ևսլն

Այժմ մի ուրիշից մի կտոր, որ լուրջ թղթակցութեան վերջին լուրջ կտորն է... «Բալց չէ, քեռի Աւետիս, աչգալէս չի քո կաշիդ դապախանան ենք ճանաչում, մարդկութիւնը փողի մէջ չի կաշնում, մէկ թումանի համար 50 թուման կորցրեցիր, լաւ ծեծ էլ կերար, աչքդ էլ քեզ լինի խրատ և էլ չցանես կտաւհատ: Հանդուցեալ ԱսողԱրեւելեանի Ռաշտի անկեղծ բարեկամ Աւետիս աղալին, խոստովանաբար ուզում եմ մի բան ասել:

Քեռի Աւետիս, ալելուհա

Փող չատ ունիս, տէր ողորմեա:

Սակալն խօսքը մեր մէջ մնալ՝

Մարդ չես դառնալ, ալելուհա»:

Նւ սա կոչւել է թղթակցութիւն, Նամակ Ռաշտից վերնագրով: Ընթերցողը անշուշտ դեռ չէ մոռացել Ժընէւի անարողողոգների ժողովում օդեմոլների համար ասածը, որ նրանք զառանցում են և որ պատասխանատու չեն կարող լինել իրենց արածների... Միակ հնարը, արդարացի ելու ալթման Շաւիղի ալդ սոսկումները՝ ալդ է:

Այդ թերթը մի տեղ էլ չալտնում է որ Մուրճ № 6-ի արտասահմանեան քլոմնիկից ոչինչ չէ հասկացել: Չեմ զարմանում:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

«ՄՈՒՐՃ»-Ի ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆԸ: Զնայած որ «Մուրճ»-ի բաժանորդագրութիւնը ներկայ 1896 թ. գերազանցում է ըոլոր նախկին եօթ տարիներից, բայց մի հանդամանք ստիպում է մեզ փոխառութեան դիմել: Այդ հանդամանքը նախկին տարիների դեֆիցիտներից զոյացած պարտքերն են, որոնք ամենամեծ մասամբ արդէն ծածկւած են, բայց որոնց համեմատապէս փոքրիկ մասը, սակայն, դեռ. ևս ծանրացած է խմբագրութեան վրայ: Կանոնաւորել այդ մնացած պարտքի հատուցումը—ահա այն հոգսը, որ մեզ հարկադրում է փոխառութեան դիմել: Այդ փոխառութիւնը միակ կարող է մեզ հնարաւորութիւն տալ՝ ժամանակը լրացող վճարումների համար չծանրանալ ամսագրի ներկայ տարւոյ բիւջէի վրայ: Փոխառութեան զումարը խոշոր չլինելով՝ (2500 ուրբլի) մենք յոյս ունինք որ «Մուրճ»-ին համակրող աւելի ունեւորանձինք չեն զլանալ փոխառութեանը մասնակցել, առնւաղն հարիւրական (100) ուրբլիով իւրաքանչիւրը՝ երկու տարւոյ ընթացքում կրկին յետ ստանալու պայմանով: Մասնակցել ցանկացողները թող բարեհաճեն դիմել խմբագրութեանը, որը կը տայ ամեն մի փոխառուին պարտավորակ երկու տարի ժամանակամիջոցով, խմբագիր-հրատարակչի ստորագրութեամբ: (Մտատպած «Մուրճ» № 1-ից 1896 թ.):

ՆՆ. ԿԿ. ՄԵԾՈՒԹ. ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՒՐՈՊԱ, (Սկիզբը տես № 7—8)
Անգլիայում. ՆՆ. ԿԿ. Մեծութիւնները սէպտեմբերի 10-ին երեկոյեան
ժամ 5 1/2-ին հասան Էբբըրլին քաղաքը Շոտլանդիայում. (Էբբըրլին Դ/

գետի գետաբերանի վրայ, Հիւսիսային ծովում, աւելի քան 105.000 բնակիչներով), Դիմաւորեցին իշխանութեան ներկայացուցիչները և ընտիր հասարակութիւն, որոնց թւում շատ կանաչք: Ժամ 7-ին գնացքը հասաւ Բալտէր, ուր ՆՆ. ՄՄ.-երին դիմաւորեցին քաղաքային խորհրդի ներկայացուցիչները: Ուէլսի իշխանի և Կոնստանտինի դքսի ուղեկցութեամբ, ՆՆ. Մեծութիւնները երեկոյեան ժամ 8-ին հասան Բալտայ, ուր տեղափոխուել էր Անգլիայի Վիկտորիա Թագուհին: Բնդ առաջ եկան տեղական իշխանատոնները, կամաւորները, զբաղուն զօրագնդի մի վաչտ, բազմաթիւ լեռնականներ վառած ջահերով: Նաագում էին ազգային եղանակներ. պալատի մուտքի մօտ Կալսերական Զուգլին ընդունեց Թագուհին: Սեպտ. 12-ին ՆՆ. ՄՄ.-ը թագունու հետ կառքով զբօսանք կատարեցին: Երեկոյեան Թագուհու մօտ հացիկերով եղաւ: Սեպտ. 13-ին որս կատարեցին Ուէլսի իշխանի (Անգլիայի թագաժառանգ), Կոնստանտինի դքսի (թագունու 3-րդ որդին) և Բատտենբերգի Ֆրանց իշխանի հետ: Սեպտ. 14-ին Բալմորալ հասաւ Անգլիայի առաջին մինիստր լորդ Սալիսբուրի: Սեպտ. 15-ին առաւօտը Բարձր Հիւրերը, Թագուհին և ալ իշխաններ ճերկալ էին տալիս պատարագին. ճաշից ըտուց զբօսանք: Երեկոյեան ՆՆ. ՄՄ.-երը թէլ վալեկեցին Թագունու մօտ Էրեքլիսի պալատում, որից ըտուց վերադարձան Բալմորալ: Սեպտ. 17-ին Կալսը, Ուէլսի իշխանը, Կոմս Վորոնցով-Վաշկով և իշխ. Գոլիցին որսի էին: Կալսը Թագունու հետ կառքով պտուղ կատարեցին: Ճաշկերովը եղաւ Թագունու մօտ, ուր հրաւիրած էին Նաւ լորդ Սալիսբուրի և ռուսաց զեպան բարոն Ստալ: Նոյն օրը Ուէլսի իշխ. և Նօրկի զուքսը իշխան Գոլիցինի և Կոմս Վորոնցով-Վաշկովի հետ զուրս եկան զէպի Նիւ-Մարկէտ: Պորտսմուտում քաղաքագլուխը բանքէտի հրաւիրեց Կալսերական երկու Նաւերի օֆիցէրներին: Սեպտ. 18-ին լորդ Սալսբուրի զուրս գնաց Բալմորալից և 20-ին Լոնդոնումն էր:

Սեպտ. 21-ին ՆՆ. ՄՄ.-երը զուրս եկան Բալլաթէրից երեկոյեան ժամ 11-ին և Էքսթրիքի վրայով ուղևորեցին Պորտսմուտ (առաջնակարգ զինուորական նաւահանգիստ հարաւային Անգլիայում): Լամանչի նաւախումբը, բաղկացած 31 նաւից երկու շարքով կանգնեց, որի միջով անցաւ Կալսերական եախտը: Սեպտ. 22-ին երեկոյեան 5 ժ. ՆՆ. ՄՄ.-ը հասան Պորտսմուտ, ուր Նոյցա զիմաւորեցին զինուորական և քաղաքացիական իշխանութիւնները: Ճաշկերովը եղաւ Կալսերական եախտի վրայ:

Սեպտ. 23-ին առաւ. 7 ժամին ՆՆ. ՄՄ.-երը «Պրեմարնապ Զէկզոս» (Հիւսիսային Աստղ) նաւով զուրս եկան Պորտսմուտից: զրահակիր նաւերից թաղաւորական ողջոյնի թնդանօթային հարածն

եղաւ. անգլիական էսկադրը (20 նաւ և 12 մինակիրնե) ուղեկցեցին մինչև Լամանշի կէսը ու վերադարձան:

Ֆրանսիայում Անգլիական նաւերին փոխարինեց Լամանշի կէսում Ֆրանսիական-էսկադրը, որը ողջունեց Բարձր Հիւրերին 101 թնդանօթային հարւածով. կալսերական հախտը հասաւ Շերբուրգի ուէջը 1¹/₄ ժամին (Շերբուրգ՝ Ֆրանսիական առաջնակարգ պատերազմական նաւահանգիստ Անգլիայի հանդէպ): Ժամ 4-ին իջան ափ: Կալսրը ծովային զգեստով Ֆրանսիական «պատուաւոր ժապաւէնը» վրեն: Նախագահ Ֆելիքս Ֆոր դիմաւորեց Նոքա: Նախագահի հետ էին մինիստրները, սենատի և դատգամաւորների նախագահներ Լուբէ և Բրիտոն, գլխաւոր շտաբի պետ Բուադլֆր, ծովագետ Ժերէ, ռուսաց դեսպանութիւնը և շքախումբ: Նախագահը՝ Ֆրակով, ս. Անդրէէան ժապաւէնով: Ն. Ս. Մ. Մ., Նախագահը և ալ անձեր անցան Elan (Էլան) նաւը և սկսեց նաւալին տեսութիւնը. Էլանի ամեն նաւի մօտով անցնելիս՝ վերջինից 21 ռումբ էր արձակուում, զինուորները «հռուս» էին կոչում, երաժշտութիւնը նազում էր ռուսաց հիմնը: Հիւրերը աղցնեցին մի մեծ մարտահաւ, ուր «լունչ» ընդունեցին. ապա Ն. Մ.-ը և նախագահը վերադարձան արդէնալ, ժամ 6¹/₂-ին ճաշ. 75 հոգով. նաւի տեղանաւորները լուսաւորւած էր 600 ելեքտրական լամպերով. տեսակի դեկորացիաների մէջ էր Մեծն Կարլոսի սուրը: Դեսերտին Ֆորը ասեց. «Նս բաղդաւոր եմ, որ Դուք զէպի Ֆրանսիան բռնել էք ուղին մեր մեծ զինուորական Շերբուրգ նաւահանգիստի վրայով, իբրև իջման տեղ: Ֆրանսիական նաւատորմը, որ ճանաչում էր Ձեր Օգոստովառ Միտլին, հպարտ է որ Ձեզ իբր ուղեկցող է ծառայում և Ձեզ երախտապարտ է աչն տեսութեան համար, որ Դուք բարեհաճեցիք նորան անելու: Վաղը Պարիզում Դուք կ'զգաք Ֆրանսիայի սրտի բաբախումը: Նս բախտաւոր եմ, որ կարող եմ Ձեզ ողջունել և գոչում եմ կենացը Ն. Մ. Կալսեր և Ն. Մ. Կալսրուհու»: Կայսրը արտասանեց հետեւեալ կենացը. «Նս զգացւած եմ Շերբուրգում Մեզ ցուց տւած ընդունելութեան համար: Նս շատ հիանում էի էսկադրից, որը մեզ ուղեկցում էր, նոյնպէս և ծովագետական «Հոշ» նաւից, Ֆրանսիական կալածները մտնելիս: Նս ինձ վրայ եմ առնում աչն զգացմունքները որը Դուք ինձ պատնէիք, պարոն նախագահ, և բարձրացնում եմ բոկալը ի պատիւ Ֆրանսիական ազգի, Ֆրանսիական նաւատորմի և նորա արթուն նաւագների: Շնորհակալ եմ հանրապետութեան նախագահին Մեզ աչս բուպէին արտաւայտած ողջոյնների համար: Կալսրը նախագահի հետ բոկալով զարկեք արաւ. նազեց «Մարտէլեզ», որ լուսն լոտնիկալ: Ճաշից փտու Ն. Ս. Մ.-երը ժամ 8¹/₂ նստեցին կառախումբ. հրէտանին և

ամրոցները ղինւորական պատիւներ տւին. քառորդ ժամ լետոյ շարժւեց նախագահական զնացքը բոլոր պաշտօնական անձներով: Նրկաթուղու երկաթուղեամբ շարժած էին զօրքերը, որոնք ՆՆ. ՄՄ-րի անցնելիս՝ հրացանները «լուշ» էին բռնում: Նախագահ Ֆորը ուսաց նաւալին անձերին շքանշաններ շնորհեց:

Պարզում: ՆՆ. ՄՄ.-ը և նախագահը հասան Պարիզ, Ռանլա վոքսալը, անթիւ բազմութիւնը ընդունեց Նոցա ողջոյններով: Ողջոյնի 101 անգամ թնդանօթ արձակեց. վոքսալ էին ներկայացել ուսաց զեսպանութեան անդամները, մինիստրները, երկու օրէնս-դրական ժողովների բիւրօները, քաղաքային խորհրդի բիւրօն, Պարիզի արքեպիսկոպոսը, զենեքալ Դաւու, դենեքալ Սոսիէ: Ներկայանալը կատարեց չատուկ ալդ առթով շինած սքանչելի սալոնում: Ֆորը ապա առաջարկեց իւր թեւը կախուհան. կախը նորա աջ թեւից միասին վերադարձան պատշգամ, ուր անցաւ հանրապետականից միասին պահանակի առաջը, որից լետոյ ՆՆ. ՄՄ.-ը նստեցին կառք, որոտածալն հոռաների ուղեկցութեամբ: կառքերը անցան Յաղթական կամարի մօտով. հրապարակը սեպած էր անթիւ մարդկանց գլուխներով, ապա կառքերը անցան Նիսիան դաշտերի ծառուղիով, որոնք զարմանալի տեսարան էին ներկայացնում. զօրքերը պատիւ էին տալիս. կախուհին անաղին ովայիաների առարկայ էր. ծառ ու լապտեր չկար մարդկանցից աղատ «Համաձայնութեան հրապարակը» ամբողջապէս լիքը մարդկանցով. տեսարանը աննկարագրելի: Գնացքը հասաւ ուսաց զեսպանատուն (Գուրնէլ վոդոց) ժամ 11 ին, չափշտակութեան ձայների մէջ: Գնացքը բաշկացած էր 15 կառքից, պահապանութեամբ սպանիաների, աֆրիկեան եգէրներ, կիրասիւնների և հանրապետական զարդակի. առջեւ ձիով գնում էին արաբական շէլիէր: կախը և կախուհին բռնել էին կառքում առջևի տեղերը, Ֆորը նստած էր Նոցա հանդէպ: Գեսպանատուն մտնելիս կախը վերջին պատիւ տուց, կախուհին ողջոյն տուց, Գեսպանատունը հրաշալի կերպով զարդարած և սարքած: կախեր սնձնական դրոշակը բարձրացեց զահական դահլիճի վրայ. երաժշտութիւնը նւագեց ուսաց հիմնը. զեսպան բարոն Մորենէլլ և զեսպանատան անդամները ընդունեցին ՆՆ. ՄՄ-րին և Ֆորին. փոքր զահլիճում Մորենէլլ և կինը աղ ու հաց մատուցին. կախը զուգեց Ֆորի հետ չախուհիով թէ որքան ՆՆ. ՄՄ.-ը զգածած են ջնքով ընդունելութիւնից Ֆրանսիայում և թէ ինչ մեծ տպաւորութիւն արաւ իրենց վրայ ալ ընդունելութիւնը: Ֆորը զեսպանատնից զուրս գնալիս՝ բազմութիւնը նորան ջնքով ովայիա սարքեց: ժամ 1-ին

դեսպանատանը վերջացաւ ընտանեկան նախաճաշը. $1\frac{1}{2}$ ժամին դեսպանատուն եկաւ տիկին Ֆոր իւր աղջկանով, առանց պահապանների: Տեսակցութիւնը տեւց 15 րոպէ: Ապա շքակառքով ՆՆ. ՄՄ-ը գնացին ռուսաց եկեղեցի ժամ 2-ին, պահպանութեամբ կերասիրները մի էսկադրոնի, իսկ շքախմբի կառքերը՝ պահպանում էին դրագուններով: Եկեղեցուց Կալսրուհին վերադարձաւ ժամ $3\frac{1}{2}$ -ին և ընդունեց ալրի տիկին Կարլօ'ին. Կալսրը ալցեւեց նախագահ Ֆորին Նիսեան պալատում: Հետիոտ վաշտը զինւորական պատիւներ տաւ երաժշտութիւնը նւագում էր ռուսաց օրհներգը. Կալսրը դրօշակին պատիւ տւեց. նախագահի տրամադրութեան ներքոյ գտնւած սպաները ընդառաջ ելան Ն. Մեծութեան և ուղեկցելին նախաորահը, ուր սպասում էր Ֆոր, շրջապատւած իւր զինւորական և քաղաքացիական կաբինէտների անդամներով: Կալսրը և Ֆոր խօսակցեցին 20 րոպէ, որից չետոյ Ֆոր ներկայացրեց Կալսրին մինիստրներին: Ապա անցաւ մեծ դահլիճը, ուր սպասում էին սենատի և պատշամ. ժողովի նախագահները, 200 սենատոր (աջ կողմից), 300 պատկաճաւոր (ձախ կողմից) և նախկին մինիստրները (առաջի կարգում): Կալսրը գոհութիւն չաւանեց որ Ֆրանսիայի ընտրեալների մէջն է գտնւում, մտերմաբար խօսակցեց մի քանի սենատորների հետ: Ապա Կալսրը և նախագահը անցան ոսկեղաբդ դահլիճը, ուր Կալսեր ներկայացւեց կարդինալ Ռիչար հոգեւորականութեան հետ, զինւորական բարձր խորհուրդը, արդարադատութեան վարչութիւնը և Ակադեմիայի անդամները: Նախագահը առաջ ներկայացրեց իւր զինւորական և քաղաքացիական կաբինէտները, որից չետոյ ուղեկցեց մինչև սանդուղք: Կալսրը սեղմեց Ֆորի ձեռքը. երաժշտ. նւագում էր Մարսէլէզը: Կալսրը ալցեսոմներ թողեց սենատի եւ պատգամաւ. ժողովի նախագահների մօտ և ժամը $4\frac{1}{2}$ վերադարձաւ դեսպանատուն: Իսկուհն սկսեց ընդունելութիւնը, որի համար եկել էր ամբողջ զիպլոնատիական մարմինը: Լուբէին, Բրիտոնին, Մելինին և Հանստօին շնորհակցին Ս. Ալէքսանդր Նիսկու շքանշանի ադամանդեալ նշանները:—Կալսրուհին ալցեւեց տիկին Ֆորին ժամ 6-ին: Երեկոյեան ժամ 7-ին Կալսրը և Կալսրուհին, ուղեկցութեամբ Վորտնցով-Իաշկովի, ստատուս-սեկրետար Շիշկինի, կոմս Բենկենդորֆի, գեներալ Բուպէֆրի, իշխանուհի Գոլցինի և ծովապետ Ժերէէի, կառքերով գնացին բանքետի, Նիսկան պալատ նախագահ Ֆորի մօտ. անցքի փողոցները շքեղապէս լուսաւորւած էին: Պալատ հասան $7\frac{1}{2}$ -ին: Հրապարակական շէնքերը, մասնաւոր տները, գետի նաւերը, կամուրջները, Նիսեան դաշտերը, Տրոկադէրօն, Էլֆելի աշտարակը հրաշալի կերպով լուսաւորւած էին: Բանքետը սարքւել էր 225

կուէրտով. Կալսրը և Ֆորը բազմել էին սեղանի կենտրոնին, Կալսրուհին Ֆորի կողքին, տիկին Ֆորը՝ Կալսեր կողքին. Կալսրուհին Կալուրտ զգեստով, աղամանդեալ մանեակով և վարսակալով. Պատի սեղանին նստած էին նաև մինիստրներ, ռուսաց շքախմբի անդամներ և մինիստրների կանաչք: Նւադուս էր հանրապետութեան գլարդիալի երաժշտական խումբը: Նախազանք արտասանեց. «Ձեր մեծութեանը մատուցած ընդունելութիւնը արտապատեց Ձեր առաջ աչն զգացմանց անկեղծութիւնը, որ պէտք է բղխէր երբ որ Ձեր Մեծութիւնը ոտք դրաւ հանրապետութեան դետնին. Ձեր Մեծութեան ներկայութիւնը մեր մէջ, ամբողջ ազգի գոչումների հետ միախառնւած՝ ամրացրեց աչն կապիւրը որ երկու երկիրներ միացնում են ներդաշնակ գործունէութեամբ և փոխադարձ հաւատարմութեամբ դէպի իրար կոչումը: Մեծագոր կալսրութեան և աշխատասէր հանրապետութեան միաբանութիւնը արդէն բարերար ազդեցութիւն գործեց տիեզերական խաղաղութեան վրայ: Մասնալիցողների փորձած հաւատարմութեամբ օժտւած՝ աչս միաբանութիւնը աչսուհետ շարունակ կը տարածէ իւր բարերար ազդեցութիւնը: Ի դիմաց ամբողջ ազգի ես կրկնում եմ Ձեր Մեծութեանը և բարեմաղթում եմ՝ մեծութիւն Ձեր թագաւորութեան, երջանկութիւն Ձեր Մեծութեան և Կալսրուհուն, բարօրութիւն ընդարձակ կալսրութեան, որի բաղդը Ձեր Կալսերական Մեծութեան ձեռքին է լանձնւած: Թող ներքի ինձ չարակցել, որ Ֆրանսիան զգածեց աչն լօժարութիւնից, որ Նորին Մեծութիւն Կալսրուհին բարեհաճել է շնորհ ընել մեզ մօտ: Նորա ողորմած գալուստը անջնջելի չիշատակ կը թողնէ մեր երկրում, Բարձրացնում եմ բաժակս Նորին Մեծութիւն Կալսր Նիկոլալի և Նորին Մեծութիւն Կալսրուհի Ալեքսանդրա Ֆէօդորովնալի կենացը»: Կոյսը պատասխանեց. «Խոր զգածւած եմ աչն ընդունելութիւնից, որ Կալսրուհին և Նս գտանք աչս մեծ քաղաք Պարիզի մէջ, որ աղբիւր է աչնքան հանճարների տաղանդների, ճաշակի և լուսաւորութեան: Հաւադարիմ անջնջելի աւանդութեանց՝ Նս եկաք Ֆրանսիա ողջունելու ի դէմս Ձեր, պարոն Նախագահ, աչն ազգի աւագին, որի հետ Մեզ միացնում են, ինչպէս Դուք առացիք, աչնքան անգին կապեր: Աչս բարեկամութիւնը իւր անխախտութեամբ կարող է միաչն բարերար ազդեցութիւն գործել: Նս խնդրում եմ Ձեզնից, պարոն Նախագահ, հաղորդել աչս զգացումները ամբողջ Ֆրանսիալին: Շնորհակալ եմ Կալսրուհուն և ինձ Ձեր չալոնած բարեմաղթութիւնների համար խմում եմ Ֆրանսիալի համար և բոկալը բարձրացնում եմ Ֆրանսիական Հանրապետութեան Նախագահի կենացը»:

Բանքէտից լետոյ Մեծ Օպերայում տրւեց ներկայացում: Հրապարակները սկսեցին հաւաքել ժամ 9-ից: Օպերայի հրապարակը ներկայացնում էր զուգնների ուկրիանոս: ՆՆ. ՄՄ. երբ ներս մտան՝ հանդիսականները տեղներից վեր կացան և չտնկույս լսեցին ռուսաց օրհներգը: Կայսրը դուրս եկաւ պատշգամ: Բալետից լետոյ ռուսաց օրհներգը և Մարսէլէզը կրկնւեցին: Ներկայացորին «Սիգուրդ» օպերայի երկրորդ գործողութիւնը: Անտրակտին Կայսրը ցանկացաւ տեսնել արաբ չէլսերին: Ներկայացման վերջին մասն էր «Կոհրիգան»: Ժամը 12 և 20 բոպէին ՆՆ. ՄՄ. բնկնեցին թատրոնից. Ֆորը ուղեկցեց մինչև դեսպանատուն:

Պարիզը ներկայացնում էր առասպելական տէսարան: Պարիզի ազգաբնակչութիւնը աճել էր 800.000 հոգով, որոնք եկել էին գաւառներից:

Սեպտ. 25-ին ՆՆ. ՄՄ. ալցեկեցին Ինալիդների պալատը, ուր ալցեկեցին Նապոլէոն I ի դամբարանը, որի առաջ Կայսրը լուսկեցաւ մի քանի բոպէ. ապա Կայսրը իջաւ շիրիմի մէջ. ապա ալցեկեց մատուռը, հիւանդանոցը, սեղանատունը և հրէտանու թանգարանը. ապա գաւիթը, ուր շարւել էին գեներալները և ինալիդները: Կէսօրին վերադարձան դեսպանատուն, ուր նախաճաշեցին:

Ապա ՆՆ. ՄՄ. ալցեկեցին Պանթէոնը, ուր Նոցա զիմաւորեց լիթական մինիստր Ռամբո: Իջան շիրիմը, ուր մի բոպէ կանգ առան Կարնոի դամբարանի առաջ: Ապա ալցեկեցին Ս. Աստուածածնայ վանքը և մի քանի նազ կանգնեցին Պաստէօրի դամբարանի առջև:

Կատարեց Ալէքսանդր III կալսեր անւան կամուրջի հիմնադրութեան հանդէսը: Միւսնի-Սիւլլի կարգաց կալսեր նախած մի զրուատ: Նախագահի աջ կողմում տեղ բռնեցին Կայսրը, Լուրէ, Բրիտտոն. ձախ կողմում Կայսրուհին, Մելին: Առետրի մինիստրը ճառարտասանեց: Կամուրջը սլիտի միացնէ Պարիզ 1900 թւականի աշխարհանդէսի հետ: Քարը զնւելուց՝ Կայսրը և Կայսրուհին մուրճով խիեցին, ապա Կայսրը առաւ եղեգնից և ոսկուց շինած գրէշ, 24 սանտիմէտր երկար, որով ստորագրեց «Նիշուա», Կայսրուհին ստորագրեց «Ալէքսանդրա», ապա ստորագրեց Ֆորը: Ներկայացան աշխարհանդէսի վարչութեան անձերը: Հանդիսին ներկայ էին 13.000 հրաւիրածներ վրանների տակ, սենատորներ, պատգամաւորներ և ալն:

Ապա ՆՆ. ՄՄ. Ֆորի հետ ալցեկեցին Փրանսիական Դրամա տունը, ուր Նոցա ընդունեցին ֆինանսների մինիստրը, դրամատան վերատեսուչը և աշխատանքների տեսուչը: Մինիստրի եօթնամեալ որդին ներկայացրեց Կայսրուհուն ծաղիկների մի հիանալի խուրճ:

Դրամատան բոլոր մեքենաները դործի էին: ՆՆ. ՄՄ. կանգ առան՝ աչն դործիքի մօտ, որը պիտի մեղալ կտրէր. նոյն աչք մեքենան 1867 թ-ին մեղալ կտրեց ի պատիւ: Ալեքսանդրի II-ի, երբ նա Պա. րիզ էր: Սալոնում մինիստրը ներկայացրեց կտրած մեղալը արկղում կարմիր կաշուց և վերնագրով՝ „Вълому Царю и Царю“ և Նոյաւ կղքնատառերով:

Ժամը 5¹/₂-ին ՆՆ. ՄՄ. եկան քաղաքային տունը: Նւազախմբերը, իրար հետ միացած ելեքտրական թելերով, միաժամանակ ածեցին ոռոսաց օրհներգը և Մարսէլէզը: Ֆորը, թեւ տւած Վալս-րուհուն, Վալսեր հետ մտաւ պատու մուտքը: Զօրքը պատիւներ տւեց: Փաղաքային խորհրդարանի նախագահ (մէր) Բողէն ողջունի ճառ արտասանեց. մէրերի զահլիճում օպերայի, կոնսերւատորիայի և քաղաքային դարդիայի խորերը նւագեցին ոռոսաց օրհներգը: Դահլիճները և բակը հրաշալի կերպով զարդարւած էին: ՆՆ. ՄՄ. զիտեցին կաշար Ալեքսանդր III-ի Պարիզին նւիրած ծնիքսեայ վաղը: Հանդիսատար զահլիճում 4000 հրաւիրւածներ էին: Կաշայաւ կոնցերտ: Կաշարը շնորհակալութիւն առաւ ջերմ ընդունելութեան համար: Ժամ 6¹/₄ Ֆորի հետ ՆՆ. ՄՄ. վերադարձան դեսպանատուն:

Ժամը 7¹/₂-ին երեկոյեան ոռոսաց դեսպանատանը տրեց Բարձրադոյն ճաշկերոյթ: Հրաւիրւածները փրակներով էին: Ֆորը եկաւ գեներալ Տուրիէի հետ, ուղեկցութեամբ կիրասիրների պատու կոնուլի ձաշին Ֆորը նստած էր Վալսրուհու աջ թիւն, տիկին Ֆոր՝ Վալսեր ձախ թիւն: Ներկա էին ի միջի ալոց Մեկին, բոլոր մինիստրները, ոտատոս-սեկրետար Շիշկին, գեն. Բուադէֆր, բարոն Մորէնհէյմ, կոմս Մոնտերեյլո, իշխանուհի Գոլիցինա, կապիտան Վարնո:

Ձաշկերոյթից վատց ՆՆ. ՄՄ. գնացին Քատրոն, ուր հասան ժամ 10 ին:

Սեպտ. 27-ին ՆՆ. ՄՄ.-ը Ֆորի հետ ժամ 10¹/₂-ին ալցեկեցին Լուրի մուգէը: Կրթական մինիստրը ներկայացրեց Նոյա Պիւլիզը Շաւանին և Լըտալին: Վերադարձ ժամ 11³/₄-ին:

Կէսօրին ՆՆ. ՄՄ.-րի մօտ նախաճաշ էր 60 կուէրտով՝ դեսպանատան անդամների և աչն օֆիցէրների համար, որոնք նշանակւած էին Փրանսիական կառավարութեան կողմից ՆՆ. ՄՄ.-րի մօտ լինելու:

Ժամ 1¹/₂-ին դեսպանատուն եկաւ Ֆոր մի կառքի մէջ, որին լծած էին չորս հիանալի պերշէրոններ: ՆՆ. ՄՄ. իսկոյն տեղ բռնեցին նախագահական կառքում և ուղեորեցին Վերսայլ, կիրասիր պահպանութեամբ: Պարիզ քաղաքի խորհուրդը ուղարկեց ծաղիկների մի հիանալի խուրձ, որ դրեց կառքի մէջ: Հոծ բազմութիւն ՆՆ. ՄՄ. ողջունում էին գլուխ խոնարհելով:

Կալսարը նւիրեց Պարիզի աղքատներին 100.000 Փրանկ և հրամայեց պատրաստել Կարնօի գերեզմանի վրայ դնելու համար ոսկեալ պսակ, մակագրով «Կարնօին Նիկոլայ II-ից»:

Ժամ 2³/₄ ՆՆ. ՄՄ. հասան Սեւըր. քաղաքը գեղեցիկ զարդարւած է: ՆՆ. ՄՄ. ալցիւկցին Ֆարֆորի հռչակաւոր զործարանը: Կալսարը կրակ խառնեց վառարանում: ՆՆ. ՄՄ.-րին նւիրեցին մի քանի առարկաներ: 20 րոպէ անց գնացքը շարժւեց Սէն-Կլուի պարկով: Մինիստր Ռամբօ կառավարութեան անունից ներկայացրեց ՆՆ. ՄՄ.-րին նոր Ֆարֆորից շինած վազ, որը համարւում է կերամիկայի ամենագեղեցիկ գործ. զործարանը նւիրապարհեց կարմիր վազ, որի մեծութիւնը գերազանցում է մինչև ալժմ շինածներին: Պարիզից մինչ Վերսալը ընկած ճամբան ներկայացնում էր չաղթական գնացք:

Կալսարը շքանշաններ շնորհեց քաղաքային գւարդիայի ամբողջ ռոտային որը պատուէ կարաւուն էր կազմում:

Պարիզի ամբողջ ժողովուրդը ողջոյններ էր չղում ՆՆ. ՄՄ.-րին, ցտեսութիւն գոչելով: Մեծ Խլխանուհի Օլլո Նիկոլաեւնա (ՆՆ. ՄՄ.-ի մանկահասակ դուստրը) սպիտակ առլասի տուալէտով, ժամ 3-ին հանդիսաւոր կառքում ղեապանատնից դուրս գնաց վոքսալ՝ բարոնուհի Ֆրեդերիքսի, Կոպլետկինի և Կիրշի հետ. բաղմաթիւ շքախումբ ուղեկցում էր. անգին բազմութիւն կար վոքսալում. ժամ 4-ին Մեծ Խլխանուհու կառախումբը շարժւեց դէպի Վերսալ:

ՆՆ. Մեծութիւնները սեպտ. 27-ին ժամ 3¹/₂-ին եկան Վերսալի պալատը. մուտքի ժամանակ թնդանօթը 21 հարւած տւեց: Ապանալեցին Ֆորի հետ ալգին և պարկը և չետոյ նորից ներս մտան պալատ պատուէ դռնով: ՆՆ. ՄՄ. ապա առանձնացան Խրենց լսողացրած Լուգովիկոս XIV և Լուգովիկոս XV-ի ապարտեմէնտները: Ժամ 6-ից բոլոր հանրային շինութիւնները լուսաւառւած էին. մեծ հրապարակը զլուխների ծով էր. երթեկութիւնը դադարեցրած էր. ոգևորութիւնը աննկարագրելի է: ՆՆ. ՄՄ. դուրս եկան պալատի միջին բալկոնը, և 15.000 հոգի, որոնք բռնել էին պալատի տերրասը, ողևորւած ուղացիա սարքեցին: ՆՆ. ՄՄ.-րին ներկայացւեց լիշատակի համար ոսկէ տախտակ, որի մի կողմում ներկայացրած է հանձարը ամպերում, միւս կողմը՝ պալատ, որի վրայ ծածանում են ռուսաց և Ֆրանսիական դրօշակները: Ժամը 7 ին, պալատի ահն դահլիճում որ կոչւում է «ճակատամարտների գալերէյ», կայացաւ մաշկերոյթ 125 կուէրտով Ֆորի աջ կողմն էր Կալսրուհին, սպիտակ տուալէտով. Ֆորի ձախ կողմներ տիկին Բրիտոն. Կալսրը նստած էր Ֆորի դիմաց, աջ կողմից ունենալով տիկին Ֆորին, ձախ կողմից

տիկին Լուբէին: Ժամ 10-ին սկսեց կոնցերտը. Կալսրը Իւր թեր առաջարկեց տիկին Ֆորին, նախագահը—Կալսրուհուն:

Կոնցերտից չհտոյ ՆՆ. ՄՄ. չարժեցին ղէպի վոքսալ, ուր հասան $11\frac{1}{4}$ -ին. Ֆորը համբուրեց Կալսրուհու ձեռքը, սեղմեց Կալսրի ձեռքը և ուղեկցեց Նոյա վազոնը: Վնացքի մէջ էին Բուադէֆր և Ժերէ: Հինգ բոլէից չհտոյ մօտեցաւ նախագահական կառավարմը որը չարժեց $11\frac{3}{4}$ -ին: ՆՆ. ՄՄ. և Ֆորը ճանապարհուով էին ղէպի Շալոնի բանակը:

Շալոնի բանակում ներկայ էին 3,090 ղեներալներ, շտաբի և աւագ օֆիցերներ, 66.758 հասարակ զինուոր, 18.679 ձի և 1.060 թնդանոթ: Ժամ 10 $\frac{1}{4}$ ՆՆ. ՄՄ. հասան բանակը: Նոյա ընդունեց Ֆորը, շրջապատած Լուբէով, Բրիտոնով և մինիստրներով. Կալսրը կազակալին կարմիր զգեստով և փափախով, Պատուէ Լէգէոնի ժապաւէնով: Կատարեց զօրքի տեսութիւնը. զօրքի շարքերն անշնելը վերջացաւ ժամ 1-ին: ՆՆ. ՄՄ. և Ֆորը ապա վերադարձան տրիբունները, ուր մնացին զօրքերի անցնելու ժամանակ, որը վերջացաւ ժամ 2 $\frac{3}{4}$ -ին: Հեծելազօրի 100 հսկազորն արիւթունների զիմաց չարձակում ներկայացրեց, որով զօրախաղը վերջացաւ: Կալսրը Իւր գոհունակութիւնը չալտեց ղեներալ Բիլլէօլին և տեց նրան Իւր պատկերը, ադամանդներով զարդարած՝ կրծքին կրելու համար: Կալսրացաւ զինուորական բանքետ:

Ֆորը արտասանեց «Ձեր Մեծութիւնը թողնելու էք մեզ մի կացութիւնից չհտոյ, որը մեր երկիրների տարեգրութիւններէ մէջ անջնջելի չիշատակ է թողնելու, որպէս ժպիտ բաղդաւոր նախադատի: Նորին Մեծութիւն Կալսրուհու հմալքը չի ջնջւելու Ֆրանսիական սրտերից. Պարզում Ձեր Մեծութիւններին զիմաւորեց ամբողջ ազգի ցնծութիւնը, Շերբուրգում և Շալոնում Ձեզ զիմաւորեց աջ, ինչ որ ամենից թանգն է Ֆրանսիայի սրտին—նորա զօրքը և նաւատորմը: Այստեղ Ձեզ ողջունում է Ֆրանսիական զօրքը: Փառաւոր անցեալի բաղմաթիւ տարեդարձներից ամեն մէկի առթիւ Ֆրանսիական նաւաղները և զինւորները փոխանակում են իրենց ուսու եղբայրների հետ փոխադարձ զգացմունքների ապացուցներով և իրենց բարեմաղթութիւններով: Այսօրուայ օրս Ֆրանսիական նաւատորմի անունից խնդրում եմ Ձեր Մեծութիւններին ընդունել Ձեր ցամաքային և ծովային ուժերի համար անխախտ բարեկամութեան հանդիսաւոր հաւաստիքը: Խմում եմ ուսաց զօրքի և նաւատորմի համար և բարձրացնում եմ բոկալը ի պատիւ Նոյին Մեծութիւնների Կալսրի և Կալսրուհու:»

Կալսրը պատասխանեց. «Շերբուրգում, Իմ գալստեան բողբոսում, Ես հիանում էի Ֆրանսիական նաւախմբի վրայ. այսօր, զուրս դնա-

Այս ձեռք գեղեցիկ երկրից, Նս բաւականութիւն ունեցաւ ներկալ լի-
նելու ամենափառահեղ զինւորական տեսարանին—տեսութիւն անե-
լու ձեռք պատական զօրքերին նոցա վարժութիւնները սովորական
տեղում: Ֆրանսիան կարող է պարծենալ իւր զօրքով: Դուք իրա-
ւացի էիք, պարոն նախագահ, երբ չափում էիք թէ երկու եր-
կիրները կապած են անխախտելի բարեկամութեամբ, որպէս և եր-
կուսի զօրքերի մէջ կալ զէնքի հղբարութեան խորը զգացմունք:
Բարձրացնում եմ բոկալը ի պատիւ ձեր ցամաքալին և ծովալին
ուժերի և խումբ եմ Հանրապետութեան պ. նախագահի կենացը»:

Ժամ 5¹/₄ Կալսերական խումբը զիմեց զէպի Բուի կալարանը.
5 կիլոմէտր տարածութեան վրալ Նոքա գնացին զօրքերի երկու
շարքի միջով, անընդհատ ուղացիաների առարկալ լինելով: Կալարա-
նում Կալսըր հրաժեշտ տեց մինիստրներին, Լուրէին և Բրիստին.
չափոնեց մինիստր Բարդուին բերկրութիւն ալի կարգի համար,
որի մէջ կատարեցին ցերեմոնիաները: Ներս մտաւ արտաքին գոր-
ծերի մինիստր Հանոտոն, որի հետ Կալսըր խօսակցեց և չնորհեց
նրան իւր պատկերը, որի վրալ աղտեղ և եթ վերնագիր դրեց: Ֆորը
մտաւ վագոն, համբուրեց Կալսըրու ձեռքը. լետով, ընդհանուր
չուզման մէջ, Կալսըր և Ֆորը, իրար ձեռք սեղմելով, համբուրեցին
խորը զգացմունքով: Կառախումբը շարժեց անվերջանալի գոչում-
ների մէջ:

Բուիից դուրս գնալուց առաջ Կալսըր պարգևներ չնորհեց
ուսաց զեսպանատան անդամներին և կումս Մոնտերելլօին:

Պոնիից Կալսըր հեռագրեց Հանրապետութեան նախագահին.
«Նս կը կամենալի մի անգամ ես չափեմ Ձեզ, պարոն նախագահ,
թէ Կալսըրէին և Նս որքան զգածած ենք ալի ջերմ ընդունելու-
թիւնից, որ Մեզ ընծալեց Պարիզում: Մենք զգում էինք Ֆրանսիա
գեղեցիկ երկրի սրտի բաբախումը նորա սքանչելի մալրաքաղաքում,
և ձեր մէջ անցկացրած մի քա՛նի օրերի չիղոցութիւնը խորը դրոշմը-
ւած կը մնալ Մեր սրտերի մէջ: Խնդրում եմ Ձեզ, պարոն նախագահ,
քարեհաճէք Մեր զգացմունքները ամբողջ Ֆրանսիալին չափեմը»:

Դա՛ Ռուսաց Կալսեր վերջին հրամեշտն էր Ֆրանսիալից, ուս-
տից ՆՆ. ՄՄ.-ը ուղևորեցին Դարմշտտ (Կերմանիաում), ուր
Կալսըրու ազգակաճներն են և ուր մնում են մինչև օրս: ՆՆ. ՄՄ.-ը
կացութիւնը Դարմշտտում ընտանեկան բնակութիւն կրելով
զուրկ որ և է քաղաքական նշանակութիւնից՝ մենք ալսքանով վեր-
ջացնում ենք ՆՆ. ՄՄ.-ը ուղևորութեան մանրամասն նկարա-
գրութիւնը:

ՖԶՄԻԱՐՆԻՑ, Գաղտնի խորհրդական Ա. Ն. Մոսով և իշխան Է. Է. Ուն-
տոմսկի, որոնք կարևոր չանձնարարութեամբ դուրս էին եկել Պե-

տերբուրդից սեպտ. 8-ին, Թիֆլիս հասան Նոյն ամսի 13-ին. չաջորդ օրը 14-ին Նոքա ալցելութեան զնացին թեմի առաջնորդ քարձր սրբ. Գէորգ արքեպիսկոպոսին, միասին ալցելեցին վանքի մալր եկեղեցին, Ներսիսեան զպրանոցը, փակած Գալստեան և Յովնանեան զպրոցները: Ներսիսեան զպրանոցում նախ ներկալ եղան ռուսաց լեզւի դասատուութեան, որ ալդ ժամերին դասաւանդում էին պ. պ. Լևոն Մանուէլեանց չորրորդ դաստանը և պ. Ալխազեան— ասորին դասարանում. պ. Մոստովը մեծ գոհունակութեամբ թողեց ալդ դասերը, որից լեռնոց զնացին ալցելելու փակած Գալստեան և Յովնանեան օրիորդաց զպրոցները. վերջինումս բացաջրութիւններ տալիս էր Նորան տեսուչ Փ. Վարդանեանը: Ապա սրբ. առաջնորդը փոխալցելութեան գնալով՝ հիւրերեց հիւրերին ճաշի, որը տրեց կիւրակի 15-ին. ճաշին սեղանակից էին վարչական բարձատիւն անձինք, որոնց մէջ և կառավարչապետի պաշտօնակատար կոմս Տատիշչև, և քաղաքալին խորհրդարանի մի քանի անդամներ: Նոյն օրը երեկոյեան թողնելով Թիֆլիսը՝ 16-ին երեկոյեան հասան Նրեան, ուր Նոքա ընդառաջ էր եկել Վեհ Կաթողիկոսի՝ ուղարկածը Կարապետ կայ. Ալվազեան:

Յաջորդ օրը 17-ին առաւօտեան ժամ 11-ին Նոքա հասան Ս. Էջմիածին. զրաի դարպասի առաջ վեհ. Կաթողիկոսի կողմից ողջունեցին Նոքա Գրիգոր եպ. Գառնակերեան և Նահապետ վարդ. Նահապետեան, որոնց ուղեկցութեամբ հիւրերը մտան Մալր-Տաճարը և ծունկ խոնարհելով համբուրեցին Իջման սեղանը ու գնացին վեհարան: Վեհարանի արտաքին զահլիճում Նոքա ընդունեց ամբողջ եպիսկոպոսական դասը. ապա Նոքա անցան ծաղկեալ աւանը և առան Նորին Օծութեան աջը: Այդ առաջին տեսակցութիւնը տեկց մօտ մի ժամ:

Ա. Ն. Մոստով և իշխ. Ուխտումսկի ապա կարճ ալցելութեամբ եղան Սինոդի նախանդամ Նրեմիա արքեպիսկոպոսի մօտ, որից լեռնոց հիւրերը ալցելեցին Ներսիսեան լիճը, նոր թանգարանը, Ս. Գալստէի վանքը և ապա Գէորգեան ձեմարանը:

ձեմարանի բախում նոքա ընդունեցին տեսուչ Կարապետ կոտանեան, իւր օգնականուի, որոնք առաջնորդեցին Նոքա հանդիսարանը, որի մուտքի առաջ ժողոված էին ուսուցիչները, իսկ ներսը աշակերտները: Հիւրերը հանդիսարանում ռուսերէն հարց ու փորձ արին աշակերտներին: Աշակերտները երգեցին «Տէր պահեա» քառածափն: Ապա մտան խորհրդարանը, աւելի մօտիկ ծանօթացան ուսուցիչներին հետ, զնացին մատենադարանը, դասարանները, ուր Նորից հարց ու փորձ արին աշակերտներին: Ապա դիտեցին ճշմարանը և չառութիւն չափունելով հեռացան:

Հիւրերին Վեհ. Կաթ. Նախաճաշ տւեց, որին Ներկայ էին սի-
նոդի անդամները և բոլոր եպիսկոպոսները: Վեհափառի առանձին
ռեզանսին սպասաւորում էր Կորինն արեղան, իսկ Նահապետ և Աշոտ
խարդապետները լոտնիպոս սպասում էին Կաթողիկոսի հրամաններին:
Վեհափառը խմեց Ն. Մեծ. Կալսեր կենացը, Մատուղը՝ Կաթողիկոսի,
Սուքիաս արքեպոստո՝ Մոստուղի, Սարգիս եպ.՝ իշխ. Ուխտումսկու
և կրկին Մոստուղը՝ սեղանակից հալերի կենացը:

Նոյն օրը հիւրերը գնացին Նրեան, ուր չաջորդ օրը 18-ին աչ-
լիկելով առաջնորդական փոխանորդ Ներսէս եպիսկոպոսին՝ ծանո-
թացան թեմական դպրանոցի հետ, ուր դասերը դեռ չէին սկսած:

Նոյն 18-ին ժամ 2-ին հիւրերը մամանեցին Ս. Էջմիածին և,
տեսնելով Արարատ, «անմիջապէս ընդունելով Նորին Վեհափառու-
թիւնից, խեցին Նորին Օծութեան բոլոր բացատրութիւններն և կտր-
ծիքները կարեւոր խնդիրների մասին: Բացի երկրորդական խնդիր-
ներից բանակցութիւններ տեղի ունեցան երկու շատ կարեւոր խնդիր-
ների մասին. Նորին Վեհափառութեան տաժ բացատրութիւններն
այս առթիւ պարզեցին խնդիրները և պ. Մոստուղը խոստացաւ Նո-
րին Վեհափառութեան հալեացքներն ու ցանկութիւնները հապնել
ուր հարկն է»:

Ապա հիւրերը աչլիկեցին սինոդի չէնքը, տեսնելով թանգարանը
և մասանց խորանը, համբարեցին Ս. Իրիգոր Լուսաւորչի աջը և
դարձան վեհարտն, ուր թէլ վաչլիկուց լետոյ Ն. Վեհափառութեան
օրհնութիւնն առան և ուղեորեցին Նրեանի ու Թիֆլիսի վրայով
Ս. Պետերբուրգ:

— Տպարաւ: Որպէս երեւում է, Մուրճի նկատողութիւնից լետոյ Ս. Էջ-
միածնի ապարանի չատուկ անան մասին, (տես Մուրճ 1896, №
3—4, էջ 535) հրամաւած է տպարանը կոչել միմիայն անուշովս՝
«Տպարան Մայր Աթոռոց» և ոչ նաև ալ անուններով:

Մայր Աթոռի տպարանի գրաշարանոցը փակւած էր օգոստոս-
ից, սեպտեմբերի 23-ին նորից բացւեց: Տպարանի մասի պա-
տասխանատու անձ նշանակւած է Վ. Աբովեան

ԻՍԿԻԼ-ՖՈՆ-ԳԻՂԵՐԲԱՆԻՏ նշանակւած է ռուսաց Ներքին գործոց մի-
նիստրի օգնական:

ՀԱՅԵՐԸ ԿՈՎԿԱՍՍՈՒՄ: «Ռուսական Մըլը» (Русская Мысль) Մոսկւայում
հրատարակող ռուսաց մեծ, տարածւած և չարղւած ամսագրի սեպ-
տեմբերի համարում Ա. Ն. Սաղոնով զետեղել է մի մասը իւր աշխա-
տութեան «Մի քանի թւանշաններ Հալեւրի մասին Կովկասում» խո-
րագրով: Իւր ալդ աշխատութեամբ պ. Սաղոնով ասպարէզ է գալիս
հերքելու այն բոլոր անմիտ բաները, որ վերագրւում է Ռուսիայի

հալ տարրին ռուսաց մեծ օրաթերթերում, ինչպիսին է մանաւանդ Պետերբուրգի «Նովոե Վրեմյա»: Մուրճի ընթերցողները գիտեն թէ հալութեան դիրքը ինչպէս են աշխատում վալը ֆլեյ և ալը մեծ օրաթերթերը. հալերը միայն քաղաքներում են ապրում և բացառապէս առևտրականներ են. իրենց ահագին զրամագլուխներով նոքա գերի են դարձրել ամբողջ Կովկասի թէ բնիկ և թէ ռուս ազգաբնակիւթիւնը. հալերը խորշում են հաղորդակցելու միւս ազգերի հետ, և ալդ նպատակով իրենց որդիքը արտասահման են ուղարկում կրթւելու. հալերը մտածում են հալոց թաղաւորութիւն տեղծելու Ռուսիայում և ալլն և ալլն,—ահա ալս և դոցա նման անհեթեթութիւնները ջրելու համար է, ինչպէս ինքը ասում է լաւաջաբանում, որ նա ձեռնարկել է ալդ աշխատութեան: Նա լինւում է վիճակագրական թւանշանների և պաշտօնական տեղեկութիւնների վրաջ: Ալն թւանշանները, որ հեղինակը առաջ է բերում, օրինակ, ապացուցանելու համար որ հալերը Կովկասում մեծ մասամբ չինականներ են, չալտնի են ոչ միայն մասնագէտներին, ալ և երկրիս բոլոր կառավարչական շրջաններին, և չնայած դորան՝ ռուսաց ազգին և նոցն իսկ ռուսաց մեծ թերթերին հարկաւոր է մեր օրերում, ալսինքն հալկա թրքական նահանգները նւաճելուց մօտ 70 տարի լետոյ՝ դեռ նոր-նոր ապացուցել թւանշաններով, որ հալերի ահալին մեծամասնութիւնը չինականներ են...

Որքան ալդ կողմից գերադանց են ոչ միայն անգլիական, ալ և ֆրանսիական մեծ թերթերը, ուր լաճախ կարելի է գտնել սքանչելի նամակներ օրինակ՝ Ալթիրիալից: Մեզ երբէք չի պատահած ալդ թերթերում կարդալ ալնպիսի չարամիտ և տղէտ նամակներ իրենց նւաճած երկիրների ազգաբնակիւթեան մասին, ինչպիսի նմուշներ ալնքան լաճախ տալիս են ռուսաց մալրաքաղաքների մեծ թերթերը, հինց օրինակ, Հալերի մասին Կովկասում:

Պր. Սազունովի աշխատասիրութիւնը, ոսկալն, իւր անմիջական նպատակից դուրս՝ ունի արժանաւորութիւն նաեւ ինքն ըստ ինքեան, և մենք կ'սպասենք չօղածի վերջին տեսնելու. համար թէ որքան նպատակաւորմար է Մուրճում նորա թարգմանութիւնը տալ «ԱՐՆԻՆԼԻ» ԳԱԳԱՐՈՒՄԻ: Թիւրք կառավարութեան կարկաղուլթեամբ սեպտեմբերի 16-ին դադարեցւեց Արեւելք լրագիրը առմիշտ:

Թիւրքա-հալերը ալսպիսով զրկւելցին իրենց երկու կարեւոր գոյն օրաթերթերից, որոնք էին «Հալբենիք» և «Արեւելք»: ԳԱԼ. ՏԼՐ-ՄԻՐՏՁԵԱՆՅ ԵՒ ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ. Հալիական հետադատութիւնները մէջ համալուար Գալուստ Տէր-Մկրտչեանց, Ս. Էջմիածնի աշխարհական միաբանը, Էջմիածնի «Արարատ» ամսաթերթի մէջ

հրատարակել է մի հետազոտութիւն, ուր նա «Ազաթանդեղոսը» հանդէպ է կացուցանում ասորի Գորիալ և Շմոնալ վկայաբանութեան հալ թարգմանութեան հետ և գալիս է հետեւեալ հղրակացութեանը (երկուսն էլ՝ թէ ասորի վկայութիւնը և թէ Ազաթանդեղոսը՝ խօսում են Ս. Գրիգոր Լուսաւորչի մասին)։

«Ասորին, ասում է Գ. Տէր-Մկրտչեան, ինքն ըստ ինքեան մեծ նշանակութիւն ունեցող մի ճշմարտապատում վկայաբանութիւն է, երեւի չորրորդ դարու գործ, թերեւ նոյն իսկ ականատեսի, զերծ հրաշապատում զարդերից, պարզ, անպաճուճ, վեհ և սրտաշարժ, Քրիստոնէութեան առաջին դարերին իսկ որ արժանի մի վաւերագիր։ Ազաթանդեղոսը մի անվաւերագիր է, հիմնւած աւանդութեան վրայ, պճնւած և ճոխացած հրաշքներով, մանրապատում, քաջ հակաբան աւելորդաբանութիւններով, նպատակաւոր տեսիլներով և վարդապետութեամբ»։

Այս եզրակացութիւնը պ. Տէր-Մկրտչեան դուրս է բերում բաղդատելով ասորի վկայաբանութեան ամբողջ էջեր՝ Ազաթանդեղոսի ամբողջ էջերի հետ, վերից վաւր, միմեանց ետեւից։

Ապա Վալուսա Տէր-Մկրտչեան չարում է աչն կարծիքին թէ Ազաթանդեղոս ոչ ալ ոք է, բայց եթէ Կորիւնը. նա ալք բանի համար հիմնւում է Կորիւնի գրած Մաշթոցի վարքագրութեան և Ազաթանդեղոսի մէջ պատահող ոճերի, բառերի, դարձածների նմանութեան վրայ. նա բերում է դորա համար աչքի ընկնող նոր օրինակներ։

Դորանից զետոյ՝ նա վստահանում է լատնել որ հաւանական է թէ Կորիւնինն ևն ոչ միայն Մաշտոցի (և Ս. Պարթևի) վարքը, Հալոց դարձի պատմութիւնը (Ազաթանդեղոսի), ալ և Վրաց դարձի պատմութիւնը. և որ Կորիւնը, որը վրաց կամ վրահայոց եպիսկոպոս էր, թերեւ վրացի կամ վրահայ էր, ինչպէս որ վրացի ծագում ունէր մատենագիր Զաքարիա Սարկաւազը, որը հալ էր հոգով և գրչով։

Ազաթանդեղոսի (ըստ Գ. Տէր-Մկրտչեանցի՝ Կորիւնի) մի ալք աղբիւր համարում է Գ. Տէր-Մկրտչեան Աբրահամ Խոստովանողի թարգմանութիւնները (Մարութալից)։

Ի վերջոյ Գ. Տէր-Մկրտչեան հին ձեռագրերի մասին խօսելիս հաղորդում է որ հնումը չճշող չ տառի գործածութիւնը չկար և որ գրում էին՝ կա, ծառա, քահանա և ալին. առանց յ-ի։ Նա ալք ուղղագրութիւնը, իբրև աւելի գործնական, նպատակաւարմար է գտնում ընդունել աշխարհարարի մէջ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՅ։ Առաջին միլիսոր (սադրազամ), օգոստոսի 15-ին, Մահմէդի ծննդեան տօնին, ստացաւ Մուզաֆֆար-էզզին շահից պարսից

ամենաբարձր և ներկայ դարումս միայն երկրորդ անգամ տրւած ատորճանը, ալն է «էմիր-աթարէկը Եղգամի», մի շատ թանկագին վերարկուով (ջիւսպա) և շքանշանով միասին:

— Պարսից նախկին շահի սպանութեան լուրի տպաւորութեան ներքո՝ որպէս զրեցին տեղական մի թերթի, որը Հնրքեց, Պարսկաստանում եղան շարժումներ բաբի աղանդաւորների դէմ, իսկ տեղ-տեղ նաև քրիստոնեաների: Թագաւորասպանին կախաղանի վրայ սպանւելուց չետու թուրքաթ քաղաքում խուժանը սրախող արաւ հինգ բարիների և զիւկները նաւթով ալրեց. իշխանութիւնները ոչ մի ընդդիմադրութիւն ցուց չուին: Եւ զօրանից չետու մուշաւաները սկսեցին զրդուել ժողովուրդը քրիստոնեաների դէմ, որոնք ալնտեղ հաստատւած հալ վաճառակոններէից են լաղկացած: Արժանի է ուշադրութեան որ քաղաքապետը, որին զիմեցին հալերը սպաշտպանութիւն հալեցելով, մուլաներից երկնչելով սպաշտպանութիւն ցուց չտեց. հալերը վիակեցին քարանոսարանների մէջ. թումանեանցների հաւատարմասարը հեռագրով զիմեց Թեհրան, ուսասպատակ հալերը՝ Մեշէզի ուսուաց հիւպատոսին:

ԳԻՄՆԱԶ ԲԱՔԻՈՒՄ, Սեպտ. 14-ին Բաքում բացւեց տղաւոց զիմնաղը լանուն Կալսր Ալէքսանդր III-ի. զիմնաղը սպաշտնապէս բացւած է համարում սեպտեմբերի 1-ից: Ընդունւած են մօտ 600 աշակերտ: Այդ միջնակարգ դպրոցը քաղաքից նպատտ պիտի ստանալ տարեկան 12.000 ռուբլի և աշակերտներից թոշակադրամ 50—60 ռուբլի: Գիմնաղի սպաշտնակատարն է Ա. Պրեդոնոսցեւ:

Ի դէպ է նկատել որ Բաքում կալ նաև ուշալ դպրոց նույնպէս մօտ 600 աշակերտներով:

ԳԵՈՐԳ ԲԱՇԵՆՋԱԳԵԱՆ, Պէղաժիստ-նկարիչ Դէորդ Բաշինջաղեան զիտաւորութիւն ունի առաջիկայ նույնների սկզբին իր նկարների ցույցահանդէս բանալ Բաղում: Նկարների թիւը համարում է քսանհինգի: Նոքա իբրեւ վերջի տարւալ արդիւնք ներկայացնում են հետաքրքրական սիւժետներ: Կարելի է տեսնել ի միջի ալլոց վերին աստիճանի զրաւիչ մոմենտներ, օրինակ «Ծիածան», «Մանգլիտի գիշեր» և ալլն, որոնք իբրեւ նորութիւն, մենք առաջին անգամ ենք առիթ ունենում տեսնել: Կալ նույնպէս մի մեծագիր պատկեր, որ ներկայացնում է ամբողջ Արարատեան դաշտը իւր անհուն հեռաւորութեամբ: Առաջի պլանում երևում է Երևանի հին մասը և Զանգու գետը: Առաւօտեան բարակ մշուշը տարածւած է դաշտի երեսին:

Այս պատկերների ընդարձակ նկարագրութիւնը կ'աշխատենք տպել հետեւալ համարում:

ՊԵՏԼՍՏՆՏ, ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԸ Թիֆլիսում, բացւեց հոկտ. 6-ին և լիակեց

հոկտ. 15-ին: Յուցահանդէսը եղաւ գիւղատնտ. ընկերութեան շինութեան մէջ:

ՏԻԳՐԱՆԵԱՆՑԻ ԿՈՆՑԵՐՏՈՐ: Կոյր երաժիշտ պիանիստ պ. Նիկ. Տիգրանեան, մասնակցութեամբ ջութակահար պ. Վիլլաուի, հոկտ. 13-ին մի կոնցէրտ տւեց Թիֆլիսի «Արտիստական ընկերութեան» դահլիճում: Պր. Տիգրանեանի ածած կտորները մեծ մասամբ վերցրած էին նորա նորերս լուս ընծաւած «Հալկական երգերի ժողովածուի» տետրերից: Կատարեցին՝ կլոր պար, հէջարի, ֆաթէն-կի-տամ, տուն-արի, դոչ-դոչ, վեր-վեր, պարսկական բահաթի չիրազ, շարաշուբ, վրացական «Ալի, զիլաւ-զիլաւ»: Պր. Տիգրանեանցի կոնցերտները վրաջ կարելի է երկու տեսակէտով նայել, տեղական կեանքի և ընդ հանուր երաժշտական տեսակէտով: Ընդհանուր երաժշտական տեսակէտով ալդ պիեսները բովանդակութեամբ աղքատ են. նոքա ունին կարևորութիւն որքանով որ նոքա կարող են ժողովրդական մօտիւններ տալ աւելի ընդարձակ կոմպոզիցիաների համար. աչտեղ առաջ է գալիս մօտիւնների ճշգրտութեան, հարադատութեան խնդիրը, որի համար և պիտի չլլանան կարծիք չաչտեղ ալդ եղանակների հետ քաջ ծանօթ երաժշտասէրները: Շատ աւելի ակներև են պ. Տիգրանեանցի տւած ու տալիք օգուտները գուտ հալկական տեսակէտով. հազիւ մի տասնեակ տարի է որ արևելա-հայերը սկսել են ժողովել և ընդհանրացնել իրենց ժողովրդական երգերը և աչժմ նաև պարերը: Յնթարկել նոցա մի աչնպիսի մշակման, որ նոքա, պահպանելով հանդերձ ժողովրդական ծագումը, կարողանան որոշ կատարելութեամբ ազգային բարիք դառնալ (երգերը և պարերը) — ահա լուծելու խնդիրը. աչտեղ կարևորը ոչ միայն հիմնական մոտիւնների հարադատութիւնն է, ալ և մշակումը: Եւ չատկապէս «պարերգ»-ների համար պիտի աւելցնել, որ նոքա գոչութիւն ունին իսկապէս կատարող «պարերի» համար, և չլինէր, օրինակ, կատարելութեան հասցրած «լեզգիկա» պարը — նորա նւագելը չէր կարող ոչ լաւ հասկացել և ոչ գնահատել. ուստի աչժմ նոտանների վերածող պարերգների մշակման հետ գուզնթաց պիտի կատարէր նաև հալկական ժողովրդական պարերի գեղարւեստական մշակումը, նոցա կատարելագործումը, որ պայմանով միայն նոքա կարող կը լինեն ազգայնաւալ, աղգի ընդհանուր բարիք դառնալ: Պր. Տիգրանեանցի ժողովածուները և կոնցերտները չամենայն դէպս ծառայում են ալդ ուղղութեան գարգանալուն, և ալդ պատճառով նորա աշխատութիւնները — գրւածքներով և թէ կոնցերտներով — արժանի են խրախուսանքի չատկապէս հալ հասարակութեան կողմից:

ՅԵՐԳՈՒՄԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ: Սեպտեմբերի 23-ին Թիֆլիսի նահանգական

դատարանում տեղի ունեցաւ մի դէպք, որ չիչեցրեց 1894 թ. լուսինի 12-ին նույն դատարանում եղած ալժամ հանգուց. Գրիգոր Իզմիրեանցի դէպքը, երբ վերջինս չուզեց երդւել ռուսաց լեզուով նախագահի մօտ: Նաև ներկայ սեպտ. 23-ին նախագահի մօտ երդւելը մերժեցին պ. Աբգար Յովհաննիսեան, Գէորգ Չմշկեան, Նազարեթ Տիգրանեան և ալլք, պահանջելով որ երդւեն հայ քահանայի մօտ: Այս գործի հանգամանքները, տեղի և ժամանակի սղութեան պատճառով, լեռա- ձգում ենք ալլ անդամի:

ԱՐՁԱՆԳԱՆՔԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ. Չենք լիչում «Արձագանք»-ի որ հա- մարում և ինչ առթիւ պ. Նշիչէ Մաղաթեանի համար ասում էիք թէ նա լալանի է մեր գրականութեան մէջ իւր քննադատական գը- ւածներով: Ի հարկէ, ալլ ասելով Դուք ի նկատի ունէիք գլխաւորա- պէս «Մուրճ»-ում տպւած նորա քննադատական մեծ չօղւածները Շահապիլի ու Ռաֆ. Վատկանեանի մասին և նորա մանր գրախոս- կանները, և զուցէ նորա մի բրոշիւրը Փաւստոս Բուզանդի մասին: Եւ հէնց Չեր թերթի ընթերցողները գիտեն որ Նշիչէ Մաղաթեան եղած է ուսուցիչ Գէորգեան ձեմարանում և երկու անգամ էլ տեսուչ Շուշալ թեմական դպրանոցի: Այսօր ալլ անձը, լալանի հալոց գրա- կանական անխտիր բոլոր շրջաններին, կուլած է ձեր թերթում «մի ոմն Նշիչէ Մաղաթեան»: Եւ ինչ առթիւ. ալլն առթիւ, որ նա վկայ է կանչւում մի դատաստանական գործում Տարազի խմբագիր պ. Տիգ- րան Նազարեանի կողմից բնդդէմ Արձագանքի խմբագիր պ. Աբգար Յովհաննիսեանի: Դա առիթն է. բալց ինչ հանգամանքն է ընտրել Արձագանքը վերաւորական կերպով ուրանալու գրական և ուսուցչական դործունէութեամբ իւր անունը քաջ լալանի կացուցած մի անձ, որ պիտին է Նշիչէ Մաղաթեան. Արձագանքի խմբագիրը մի ալլպիսի վերաւորանք հասցնելու համար օգտւել է ալլն հանգամանքից, որ Նշիչէ Մաղաթեան, մի տարուց դէս ենթարւած հոգեկան ծանր հի- ւանդութեան՝ հաւանօրէն անկարող է նույն իսկ կարդալ նորա մա- սին որ և է տող: Ալլպիսի վերաւորանք՝ հասցրած հալկական մի օրաթերթի կողմից գրական և ուսուցչական անպարէզներում արժա- նաւորապէս գործած մի հիւանդի՝ վերաւորանք է հալկական ամբողջ գրական դատակարգի համար. և մենք պահանջում ենք Արձագանքից, որ սա, խոստովանելով իւր խօսքի անարժանութիւնը՝ ալլն ետ վերցնի:

ՄՇԱԿԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ. Պարագիտութիւնը և ղովումէստների կեղծելը Չեր թերթի ամեն մի համարում ընթերցողը կը գտնի թէ «Ներքին» և թէ «արտաքին» լուրեր և լաճախ նույն իսկ քաղաքական «չօղւածներ» որոնք ոչ ալլ ինչ են եթէ ոչ թարգմանութիւններ—բալց առանց յիշատակութեան ալլն թերթի անւան, որից դուք օգտւել էք: Դա դա-

տապարտելի է մանաւանդ ալն պատճառով, որ ալդ լուրերից և ջողածններից ոմանց համար դուք վիշատակում էք ձեզ անմիջապէս աղբիւր ծառայած թերթերի անունները, իսկ ոմանց համար չէք վիշում, հասկացնել կամենալով որ ուր աղբիւրը չի վիշած—ուրեմն դա ձեր սեփական լուրն է կամ սեփական ջողածը. չաճախ էլ վիշում էք թերթերի անուններ, որ դուք բնաւ չէք ստանում, լուր-թեան տալով ալն թերթի անունը, որի միջոցով դուք ալդ լուրի կամ ջողածի հետ ծանօթացել էք. ոմանց համար էլ, վերջապէս, դուք գրում էք («Այս ինչ տեղից, դիցուք Լոնգոնից») գրում են»։ Բայց, հարկաւ, Մշակի՛ն չեն գրում, ալ ուրիշ Թերթի, որի անունը դուք թագցնում էք։

Այս բոլորի համար օրինակներ բերել ալժամ չենք ցանկանում միմիայն նրա համար, որ մի քանի օրինակները ալն տպաւորութիւնը կարող էին անել թէ իբր հէնց մեր նկատածը դժբա են. դուք ալդ անում էք ձեր թերթի ամեն մի համարում, և ալդ պատճառով ձեզ ենք թողնում ընտրել ալն ամիսը, որի համարներից դուք կը կամե-նալիք որ մենք օրինակներ առաջ բերենք։

Այսպիսով դուք, պարոններ, ոչ մի ալն պարազիտներ էք հանդի-սանում, ալ և աչքակապներ, քանի որ վերը թւած բոլոր միջոցներով դուք միալն ծածկել էք ուղիւմ ձեր պարազիտութիւնը։

Դորա հակառակ ինչպէս է վարում Մուրճը իւր լուրերի հա-մար։ Ամսագիրը, որը ոչ մի կերպ մրցակից չէ օրաթերթերին լու-րերի համար, չի էլ կարծում թէ որ և է թերթից մի սեփականու-թիւն է խլում, երբ նա հաղորդում է ամսալիւրջին ամբողջ մամուլի սեփականութիւնը դարձած լուրերը, ով էլ որ լինէր ալս կամ ալն լուրի սկզբնական հաղորդողը։ Եւ չաճախ դուար էլ է ձիւղ ուրիշ լուր-սկզբնական հաղորդողը։ Եւ ալս կամ ալն լուրի սկզբնական հաղորդողը ով է եղել։ Մուրճին հետաքրքրողը եղելութիւնն է, և մի հատիկ եղելութիւն ճշգրիտ կերպով հաղորդելու համար Մուրճը չաճախ օգտւում է նոյն իսկ զանազան աղբիւրներից, մէկի տեղեկութեան պակասը լրացնե-լով ալ աղբիւրից քաղած տեղեկութիւնով, երբեմն նաև սեփակա-նով։ Բայց մենք բնաւ չենք գիմում Մշակի աչքակապութեան վերը թւած ձևերից և ոչ մէկին, ուրիշ ապրանքը իբրև սեփականը ծա-խելու համար. երբ մի տեղեկութիւն մեր սեփականն է, մենք սովո-րաբար ալդ մասին չալտնում ենք, երբեմն նոյն իսկ չենք էլ չալտ-նում. բոլոր մնացած լուրերը մենք հաղորդում ենք առանց որ և է երկդիմի ձևերի. և Մուրճի ընթերցողներից հազիւ թէ պատահի մէկը որ սխալւած լինի ալդ մասին։ Նոքա գիտեն, որ աղբիւրը չիշատակելով մենք չաւակնութիւն չունինք կատարեալ նորութիւն

հաղորդելու: Եւ եթէ, աչսու ամենաչնիւ, Մուրճի լուրերը ուրախութեամբ կարդացուամ են, զորա պատճառը ալլուր պիտի որոնել:

Այժմ Մշակը, երկար որոնելուց չետոյ, գտել է, որ Մուրճ-ում տպած լուրերից մէկը կազմւած է Մշակի աղբիւրներից: Բայց Մուրճ-ը ասել է արդեօք թէ ալդ լուրը իւրջանականն է.— ոչ:

Ի՞նչ արժէք ունի արդեօք Մշակի ալդ «գիւտը»: Աչն արժէքը, կ'ասենք մենք, որ Մշակը գալիս է վկայելու որ նա պէտք է ամբողջ ամիսներ և տարիներ որոնի, մինչև որ Մուրճի լուրերի բաժնում հանդիպի մէկին, որի համար Մշակը աղբիւր ծառայած լինի:

Եւ իրօք, քանի որ Մշակ'ը ինքը տեղիք է տալիս որ ալդ մասին վկայութիւն տանք, մենք պէտք է չաշտնենք, որ մեր լուրերի համար Մշակ'ը, իբր աղբիւր, ամենաչետին տեղերից մինն է բռնում: Ալդ թերթը զարմանալի աղքատ է նոյն իսկ լաւ կազմած լուրերով: Մշակի հաղորդած լուրերը վերին աստիճանի կիսատ-պոտատ են և ամեն բանից երևում է որ նոքա, քաղցելով հանդերձ ալ թերթերից՝ կազմում են շատ անխնամ կերպով:

Այս դեռ աչպէս, բայց կազ և մի ծանր հանգամանք Մշակ'ի համար:

Ալդ թերթը, նոյն 113-րդ համարում, ուր իւր արած «գիւտը» է հաղորդում, առանց քաշելու չաշտնում է նաև (և սա առաջին անգամը չէ!) որ նա պաշտոնական ղոկումէնտները տպելիս, սոցա ենթարկում է բազմաթիւ կրճատումների, և գիտէք, նա ալդ անում է առանց որ և է նշանով զգուշացնելու ընթերցողին իւր կատարած կրճատումների մասին: Ով միայն գիտէ թէ ինչ բան է պաշտոնական ղոկումէնտ—նա միայն կարող է հասկանալ թէ ինչ ծառայութիւն է մատուցանում աչն թերթը, որը իւր սեփական կամքով ալլալիսի դոկումէնտներ կրճատումների է ենթարկում, առանց նշանակելու կրճատած տեղը. որովհետեւ դա լրագրական չանցանք է, ուրեմն տեսէք թէ ինչ բարբառական և մտաւոր մարմին պիտի ներկայացնում լինի մի խմբագրութիւն, որը ասպարէզ է գալիս և իւր ալդ լրագրական կեղծիքների մասին պարծենալով ու զուրճանալով պատմում է իւր թերթի ընթերցողներին:

Դեռ ևս միայն մի քանի ամիս է, որ Գալանթար, Մալումնան, Լէօ, Մարկոսեան, Առաքելեան, Մալխասեանց ընկերութիւնը չափնում էր թէ կարելի է վկայութիւն տուող թղթեր ստորագրել՝ առանց վկայւած բանը տեսած լինելու. աչսոր էլ նոյն ալդ պարոնները դեռ զւարճանալով պատմում են իրենց խմբագրական սխաղործութեան

թիւները, չափանելով որ իրենք, կամաքաբար, առանց ալ և ալու-
թեան, առանց զգուշացնելու ընթերցողին, առանց նշան կամ ծա-
նօթութիւն դնելու, բազմաթիւ կրճատումներ են անում ու այլանդակում
պաշտօնական. վկայագրերը, տեղիք տալով ընթերցողներին կար-
ծելու թէ իրենց տպած լիակատար պաշտօնականն է...

ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՀԱՄՐԻԶԸ. Պր. Նիկողոսեան (Նուխ. գաւառից, վարդա-
շէնցի, 60 տարեկանից անց), ներկայանալով Մուրճի խմբագրատունը,
ցոյց տւեց իւր հնարած համրիչը (չոտք), որով խոստացաւ մեզ
մօտ թւաբանական ամեն կարգի հաշիւներ անել շատ աւելի արագ
քան այդ կարելի է անել գրելով կամ սովորական համրիչով: Պր.
Նիկողոսեանի համրիչը նմանում է սովորական համրիչներին, բայց
միայն կողքերից մէկի երկարութեամբ ունի մի չափաւածք, վրէժ
գրած թւանշաններ և մի փոքրիկ տափակ քանոն, որով նա իւր հա-
շիւներին ուղղութիւն է տալիս: Տրւած խնդիրները նա գրում է այդ
բանի վրայ և ապա միայն սկսում հաշուել: Ինքը ծեր և փորձերն էլ
մեզ մօտ երեկոցեան, լամպի լուսաւորութեամբ անելու ստիպւած
լինելով, երբ նա առանց ակնոցի լաւ չի տեսնում, մեզ մօտ արած
փորձերը մի ուրիշը կարող էր նոյն համրիչով աւելի արագ կատա-
րել: Բայց և այնպէս մեր տւած խնդիրները լուծելու ժամանակա-
միջոցները մենք նշանակեցինք, խոստանալով արդիւնքը հաղորդել
Մուրճի միջոցով:

Ահա մեր տւած խնդիրները և ստացւած արդիւնքները.

1) Գումարել.

4.567	Ֆունտ ստերլինգ,	17	շիւ,	6	պէնս և $\frac{1}{2}$	պէնս.
347	"	"	3	"	2	" $\frac{3}{4}$ "
56	"	"	19	"	11	" $\frac{1}{8}$ "
75	"	"	14	"	9	" $\frac{1}{12}$ "
5.417	"	"	5	"	8	" $\frac{1}{64}$ "

Այս հաշիւը՝ համրիչի վերայ գրելով միասին՝ նա կատարեց
ուղիղ 1 բոպէում, չափանելով որ գումարման արդիւնքն է 10.465
Ֆունտ ստերլինգ, 1 շիւլինգ, 1 և $\frac{17}{64}$ պենս:

(Նկատենք որ մի անգլիական ֆունտ ստերլինգ ունի 20 շիւ-
լինգ, 1 շիւլինգը ունի 12 պէնս):

2) Բազմապատկել $567.804 \times 7.456.321$.

Արդիւնքը 4.233.728.889.084. համրիչի վրայ գրելը տևեց 50
վայրկեան (սեկունդ), հաշուելը 1 ր. 20 վ., ընդամենը 2 ր. 10 վ.:

3) Բազմապատկել $7.574.620.452 \times 35.042.826$.

Արդիւնքը ստացւեց 265.436.106.515.477.352. համրիչի վրայ
թէ գրելը և թէ գործողութիւն կատարելը տևեց $3\frac{1}{2}$ բոպէ (որից
70 սեկունդ գրելը):

Ներկայացնելով այս արդիւնքները մեր ընթերցողներին, ցանկացողներին ենք թողնում պ. Նիկողոսեանի ստացած արդիւնքները ստուգել և թէ գնահատել թէ որքան արագ են կատարւում այդ հաշիւները: Համրիչի գտնողը կամենում է պատենտ ստանալ Եւրոպական երկիրներում, ձեռնտութեամբ մի որեւէ կարող անձի:

Այս գործին ծառայութիւն մատուցած կը լինեն մեր արտասահմանեան ընթերցողները, ներկայացնելով այս տողերի թարգմանութիւնը անտեղի խմբագրութիւններին:

Բացի այդ խնդիրներից նա լուծեց մեր առջև հետեւեալ խնդիրները. 13462 ռուբլի, տրւած է տարեկան $7\frac{1}{2}$ տոկոսով, 9 ամիս, 16 օրով: Խնդիրը համրիչի վրա գրել և լուծելը տեւեց 1 րոպէ 18 վայրկեան:

Գնւած է 5.764 փութ, 33 ֆունտ, $65\frac{5}{8}$ զոլոտնիկ թէկ փութը 273 ռուբլով: (Փութը ունի 40 ֆ., ֆունտը 96 զոլոտնիկ):

Խնդիրը համրիչի վրա գրել և լուծելը տեւեց ուղիղ 3 րոպէ:

ԻՏԱԼԱՅԻ ԳԵՐԻՆԵՐԸ ԱՔԻՍԻՆԻԱՅՈՒՄ. Իտալական պատերազմական մի. նիստը ստացաւ Արիսինիայի Շոա երկրում գտնուող իտալացի զորիների ցուցակը: Ցուցակում են գեներալ Ալբերտոնէ, կոմանդանտ Գոմբերրա, 6 կապիտան, 30 պորուչիկ, 11 պորպորուչիկ, մօտ 1000 ունտէր-օֆիցէր և հասարակ զինուոր: Թագաւոր Մենելիկ ներկայումս գործ է զնում այդ զերիների գիտութիւնը և հմտութիւնը երկաթուղի շինելու համար, որը պիտի միացնի Շոաի կենտրոնը Հարարի և ֆրանսիական կալաձների հետ, Արիսինիայի արագ և ուղղակի հարգակցութեան համար Կարմիր ծովի հետ:

ԽՈՒՆԵՐԱՆ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ 20-ն սեպտեմբերից համարւում էր վերջացած: ՄԻՐԱՆՈՅՇ, Հայոց բեմի դերասանուհին, վախճանեց Կ. Պոլսում: Մուրճի թատրոնական քրոնիկի աշխատակից պ. ՍԼեան տաղանդաւոր դերասանուհու մասին ծանօթութիւն կը տալ:

† ՏՐՈՇԻՒՅ, գեներալ վախճանեց ներկայ սեպտ., 82 տարեկան հասակում: Մինչև 1872 թականը նա աչքի ընկնող զինուորական և քաղաքական գործիչ էր. նա առաջ գնաց Ղրիմի պատերազմում, լետոյ Սոֆերինօի ճակատում 1859-ին. բաւց չուտով ընկաւ կապր Նապոլէօն III-ի աչքից մի գրքի համար, ուր նա քննադատեց կապերական զօրքը: Ֆրանս-գերմանական պատերազմին նախ նշանակեց մի կորպուսի հրամանատու, իսկ լետոյ՝ Պարիզի նահանգապետ: Պարիզի պաշարման ժամանակ նա նախագահ էր «ազգային պաշտպանութեան կառավարութեան», եռանդով աշխատեց Պարիզի պաշտպանութեան համար, բաւց նախատեսելով որ քաղաքը պիտի անձնատուր լինի՝ հրաժարական տեւց: Պատերազմից լետոյ ընտրեց

պատգամաւոր, ձեռնարկեց զօրքի վերանորոգման մի ծրագրի, բայց թիէրի հետ ընդհարում ունենալով՝ հո քաշեց քաղաքական կեանքից. հրատարակեց մի քանի տշխատութիւններ, ուր նա պաշտպանւում էր նոցա դէմ, որոնք մեղադրում էին նորան Պարլիզը վատ պաշտպանած լինելուն համար:

ՆՈՐ ՍՏԱՅԻԱԾ ԴՐՔՆԵՐ

- 1) ԱՌԱՔԵԼ վարդապետի Դաւրիժեցուց Պատմութիւն. երրորդ տպագր. վաղարշապատ. տպ. Մալր աթոռուց Էջմիածնի. 1896. գինն է 2 ռ.
- 2) ՊԱՐՈՆԵԱՆ, Յ. Յ.—Ազգային քննարկ (հեղինակի պատկերով). երրորդ տպագրութիւն. Հրատ. Թիֆլ. Հ. Հրատ. Ընկ., 1896. Թիֆլիս, տպ. Մ. Ռոտինեանց, գինն է 1 ռուբլի:
- 3) ՃՈՂՈՒՐՆԱՆ, Յարութ. սարկաւադ.—Մուսացած աշխարհ. երրորդ գիրք. 1896. Թիֆլիս, տպ. Մ. Մարտիրոսեանց, գինն է 40 կոպ.
- 4) ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ, Էմիլ.—Դամոկլեան սուր. դրամա (էգիւղ) երկու արարածով. 1896. Նրեան. տպ. Էմ. Տէր-Գրիգորեանց, գինն է 50 կ.
- 5) ԲԱՅԱՆԱՆԵԱՆ, Յակոբ.—Ներքինապետ Ասլանը. 1896. Թիֆլիս, տպ. Վրաց Հր. Ընկ., գինն է 10 կոպ.
- 6) ՊԱՋՈՒԽԻՆ, Ն.—Սարսափելի վրէժխնդրութիւն կամ սատանայի կամուրջը. (ամերիկական կեանքից). թարգմ. ռուսերենից Լևոն Գէորգեանցի. 1896. Թիֆլ., տպ. Շարաձկ. գինն է 20 կոպ.:
- 7) ՌՈՒԲԱԿԻՆ, Ն.—Ջրուցներ բնութեան մեծ և ահեղ երևոյթներին մասին (10 պատկերով). թարգմ. ռուսերէնից Մ. Տէր-Անդրէասեան. հրատ. Թիֆլ. Հ. Հր. Ընկ. 1896. Թիֆլ. տպ. Մ. Ռոտինեանց, գինն է 15 կոպ.
- 8) ԺՈՂՈՎԱԾՈՒ, —Նրեք վէպիկ. թարգմ. Լևոն Մելիք-Աղամեանց. Թիֆլ., 1896. տպ. Յ. Մարտիրոսեանց, գինն է 20 կոպ.

ՄՈՒՐՃԻ ՊՈՍՏԱՐԿՂ.

Մոսկւա, Պ. Մկրտիչ Բարխուդարեանց: Մենք միայն ուրիշներից ենք իմանում թէ Ձեր Հանդէս'ի վերջին գիրքը աչս օրերս լոյս է տեսել, այսինքն այն գիրքը, որ զեռ Մուրճ'ի 1895 թւականի լուսիսի համարում, Ձեր խնդրանք տպած չափաւարարութեան մէջ, Դուք խոստանում էիք հրատարակել նոյն տարւաչ նոյեմբերին: Նոյն աչգ չափաւարարութիւնը Դուք կրկնած կը տեսնէք Մուրճ'ի 1895 թ. դեկտեմբերի համարում: Աւելին, եթէ եղել է, չենք փշոււմ. և եթէ, մեր սովորութեան հակառակ, աչս հանգամանքը փշատակում ենք, աչգ միայն նրա համար է որ Ձեզ պարզենք հրատարակչական էթիկայի աչս կանոնը. երբ գիմում են մի թերթի ձրիապէս մի գիրք չափաւարարելու խնդիրքով—գոնէ քաղաքավարութիւն են բանե-

ցնում լուս տեսած գլխից մի օրինակ ուղարկելու նույն թերթի խմբագրութեանը:

Պետերբուրգ: Ուսանող Հմայեակ Նաղարեանց: Ձեր նախկին հասցէով ուղարկած Մուրճ № 7—8 չետ ուղարկեց անդտեղի պատասնից, մակագրութեամբ. նոր հասցէի մասին մեզ չէք տեղեկացրել:

Կարս: Հալոց Բարեգ. Ընկ. ճիւղին: Ձեզ ուղարկեցինք 5 ռուբլի, որ ստացւած էր պ. Գէորգ Աստուածատուրեանից:

Իգդիր: Պր. Յովհ. Խօջա-Լչնաթեանց: Ձեր աշխատութիւնը գիւղական խնդիրների մասին, որ մենք ստացել ենք չունիսին, պարունակում է ուշադրութեան արժանի էջեր և նորա լաւագոյն գլուխները կը տպագրեն:

Վ.ՐԻՊԱԿ: Մուրճ № 7—8-ում, չօղւած բժ. Գար. Սարգսեանցի, էջ 1060 տող 13 տպւած է «Բութալիսի Նահանգից 31 (1.4 %/o)» ուղղել 3 (1.4 %/o).

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

I

Ե Ր Կ Ա Թ Ո Ւ Ղ Ի

Թիֆլիսից-Բաքու. ա) ելք—1 ժ. 10 ր. օրւայ, հասնում է Բաքու—7 ժ. 30 ր. առաւ. բ) ելք—10 ժ. 50 ր. երեկ. հասնում է Բաքու—4 ժ. 49 ր. օրւայ:

Բաքուից-Թիֆլիս. ա) ելք—2 ժ. 30 ր. օրւայ, հասնում է Թիֆլիս—8 ժ. 21 ր. առաւօտ. բ) ելք—11 ժ. 5 ր. զիշերւայ հասնում է Թիֆլիս—5 ժ. 50 ր. զիշերւայ:

Թիֆլիսից-Բաթում. ա) ելք—9 ժ. 10 ր. առաւ., հասնում է Բաթում—9 ժ. 45 ր. զիշերւայ. բ) ելք—6 ժ. 50 ր. երեկոյեան, հասնում է Բաթում—8 ժ. 15 ր. առաւօտեան:

Բաթումից-Թիֆլիս. ա) ելք—9 ժ. 40 ր. առաւ., հասնում է Թիֆլիս—9 ժ. 55 ր. երեկոյեան, բ) ելք—11 ժ. 20 ր. զիշերւայ, հասնում է Թիֆլիս—12 ժ. 25 ր. ցերեկւայ:

II

ՌԱԶՄԱՎԻՐԱԿԱՆ ԽՃՈՒՂՈՎ, ԹԻՖԼԻՍԻՅ ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ
ԳՆԱՅՈՂ ԿԱՌՔԵՐ

Թիֆլիսից—Հինգ տեղով կառքեր. ա) Դուրս է գալիս առ. ժամը 7-ին, զիշերում է Մէթում և միւս օրը երեկոյեան ժամը 6-ին հասնում է Վլադիկաւկազ: բ) Դուրս է գնում առաւ. ժամը 9-ին, զիշերում Պասանաուրում և միւս օրը զիշերւայ ժամը 8-ին հասնում է տեղ:

Վեցտեղով հանրակառքեր (օմնիբուս) գնում են երկու անգամ, առանց զիշերելու, ա) 9 ժ. 30 ր. առաւօտ և բ) 7 ժ. երեկոյեան: Հասնում են Վլադիկաւկազ, առաջինը՝ միւս օր 12 ժ. օրւայ և երկրորդը՝ 8 ժ. 50 ր. երեկոյեան:

ՎԼԱԴԻԿԱԽԿԱԶԻՑ—Հինգ տեղով կառք. ա) Գուրս է դալիս առաւ. 7 ժ., զիշերում է Մէթ, հասնում է Թիֆլիզ միւս օրը երեկոցեան 6-ին. բ) Գուրս է դալիս ժամը 9-ին, զիշերում է Գուրաուր, հասնում է Թիֆլիզ միւս օր ժամը 7-ին երեկոցեան:

Վեցտեղով հանրակառք. երկու անգամ, առանց զիշերելու, ա) առ. ժ. 10-ին և բ) երեկ. ժ. 7-ին. հասնում են Թիֆլիզ, առաջինը՝ միւս օրւայ ժամ 11-ին առ., երկրորդը՝ ժամը 8-ին երեկոցեան:

Գնեցն են: Կառքի ներսում իւրաքանչիւր անձի համար 19 ա. 60 կոպէկ: Կառքի կից կաբրիօլետում՝ 13 ա. 20 կ. կառապանի մօտ՝ 5 ա. 40 կոպէկ:

Մէթի կայարանում զտնւում են ամեն կառքի համար մանուկները և կանանց համար առանձին համարներ զիշերելու՝ առանց վարձի, իսկ տղամարդիկ կարող են զիշերել ընդհանուր սենեակում կամ վճարելով՝ մասնաւոր համարներում:

ՓՈՏՈԳՐԱՓԻԱ ՅՈՎ. ԲԱՇԻՆԶԱՂԵԱՆԻ

Բացած է 5-ից մայիսի 1896 թ.

Գալովնակի պրոսպեկտ, տուն Զուբալովի, № 8

Աշխատակիցներ Ս. Պետերբուրգից: Ամենակատարելագործւած ավարատներ ԴԱՄԵՅԵՐԻ և ՐՈՍՍԻ:

ФОТОГРАФИЯ И. БАШИНДЖАГАНЪ

Открыта съ 5-го Мая 1896 г.

На Головинскимъ проспектъ, въ домѣ Зубалова, № 8.

Сотрудники изъ С. Петербурга. Самые усовершенствованные аппараты ДАЛЬМЕЙЕРА И РОССА.

ՀՐԱՏԱՐ ԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՏԱՏՊԻԱԾ „ՄՈՒՐՔ“ ԱՄՍԱԳՐԻՑ

	Բ.	Կ
1. ՊՈՇԵԱՆՅ, ՊԵՐՃ. — «ՅԵՅԵՐ» (վէպ).	1	—
2. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ, ԳՐԻԳՈՐ (ՂՂԼարցի)՝ «Մանուկների մարտդուլթ. դործարանների հիւանդուլթիւնները» . . .	—	05
3. ԱՏՐՊԵՏԵԱՆ, Ս. — «ԽԵԻ-ԿԱՐԱՊԵՏ», վէպ հայ-կաթողիկեների կեանքից	1	—
4. ԼԷՅ. — «ԿՈՐԱԾՆԵՐ» (վէպ).	—	50
5. Մ.-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ, Ս. — «ՀԱՅ ԳԻՒԴԱՅՈՒ ՍԵՒ ՕՐԸ» (Կեանքից պատկեր).	—	40
6. ՍԱՐԳՍԵԱՆՅ, ԼԵՒՈՆ. — «ԱՅՅ ԹԻՒՐՔԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» . . .	—	60
7. ՊՈՇԵԱՆՅ, ՊԵՐՃ. — «ԲՂԴԵ», վէպ	1	20
8. ՓԱՓԱԶԵԱՆՅ, Վ. — «ԽԱԹ-ՍԱՐԱ» (հայ բռնան. կեանքից . . .	—	15
9. ՄԱՐԻՍԵԱՆ, ԽԻԼԻՆ Մ. — «ՀԵՂԻՆԵ» (մեծ վէպ), ա. մասը . . .	—	50
10. » » » » բ. մասը . . .	—	75
11. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆՅ, Յ. — «ՍԵՒ-ԼԵՈՆՅԻՔ» (տոհմագ. պատկ.) . . .	—	15
12. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ. — «ՀԱՐԵԻԱՆՆԵՐ»	—	03
13. » » «ՄԻՆԱՍԻ ԵԶԸ»	—	03
14. » » «ԵԶԻԴ ԱՂԶԻԿԸ»	—	03
15. » » «ԾԱՆՐ ՔԱՐԸ»	—	03
16. » » «ՆԻԱԶԻԱԾ ԿԵԱՆՔԸ»	—	03
17. » » «ՄԵՐ ԻՆԶԸ ԿԸ ՊԱԿՍԻ»	—	03
18. ԲԵՇՄԻՇԵԱՆՅ, ԱԼ. — «ԲՈՅՍԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔԸ»	—	15
19. ԲԱԼԱԴԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ. — «ՄԻԿՐՈՐԵՆԵՐԸ»	—	10
20. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ. — «ԶԱԼԱՐԻՆԵՐԻ ԱՐՇԱԽԱՆՔԸ» . . .	—	10
21. ՏՈՒԷՆ, ՄԱՐԿ. — «ԶԻԱՐՃԱԼԻ ՊԱՏՄԻԱԾՔՆԵՐ»	—	15

22. ՎՐՈՅՐ, Մ.—«ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ»	— 20
23. ԱՐԾՐՈՒՆԻ, Վ. ԲԺՇ.—«ՀԻՊԵՆՈՏԻՍՄ», Մասն ա.	— 50
24. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ.—«ՏԻԴՐԱՆՈՒՀԻ»	— 50
25. ՇԻՐՎԱՆՁԱԴԷ.—«ԱՐՍԷՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ»	1 50
26. ՍԵՆԿԵԻԻՁ, ՀԵՆՐԻԿ.—«ԱՌԱՆՅ ԳԱՒԱՆԱՆՔԻ»	
27. ԱՂԱՅԵԱՆՅ, ՂԱԶԱՐՈՍ.—«ԻՄ ԿԵԱՆՔԻ ԳԼԽԱՌՐ ԴԷՊՔԵՐԸ»	
28. «ԱԴԱՄԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՍԱՆԴՐՈՒՆ», յառաջաբանով և ընտրութեամբ ՎՐՈՅՐԻ	— 20
29. ԱՐԾՐՈՒՆԻ, ԲԺ. Վ.—«ՀԻՊԵՆՈՏԻՍՄ», մասն բ.	— 50
30. ՂԱՐԱՋԵԱՆ, ԴԵՈՐԴ.—«ԲԱՆԻՌՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱՅՈՒՄԸ ԱՐԼՄԵԱՆ ԵՆԴՈՎԱՅՈՒՄԸ և ՌԵՍԻԿԱՅՈՒՄԸ»	— 50
31. ԲԱՀԱԹՐԵԱՆ, ՍԱՐԴ.—«ՀՈՂԱՅԻՆ ԵՒ ԱՆՁՆԱԿ. ԻՐԱՒ. ՀԻՆ-ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»	— 40
32. ՓԱՓԱՋԵԱՆ, Վ.—«ՏՈՒՐԻՍՏԻ ՅԵՇԱՏԱԿԱՐԱՆԻՅ» (պատ- կերներ)	— 40
33. ՇԱՆԹ.-ԴՈՒՐՍԵՅԻՆԵՐ. ՎԷՊ.	— 50

„ՄՈՒՐՇ“ ԱՄՍԱԳՐԻ ԱՆՑԵԱԼ ՏԱՐԻՆԵՐԸ

Վաճառում են հետեւեալ գրքերով

«ՄՈՒՐՇ» 1889 թ. անկազմ	4 ռ. — կ
«ՄՈՒՐՇ» 1890 թ. անկազմ	5 » —
«ՄՈՒՐՇ» 1891 թ. անկազմ	10 » —
«ՄՈՒՐՇ» 1892 թ. անկազմ	9 » —
«ՄՈՒՐՇ» 1893 թ. անկազմ	10 » —
«ՄՈՒՐՇ» 1894 թ. անկազմ	7 » —
«ՄՈՒՐՇ» 1895 թ. անկազմ	8 » —
ԲՈՂՈՐ 7 ՏԱՐԻՆԵՐԸ ՄԻԱՍԻՆ անկազմ	45 » —
» » » » կազմով 14 հատոր	50 ռ. —

Վ Ճ Ա Ր Ը Կ Ա Ն Ի Յ Կ

Ճանապարհաճախքի համար ուղարկուած է մի-մի ուրբ
ամէն տարւոյ համար:

Դ/ի/և/լ՝ Тифлисъ, въ редакцію журнала „Мурчъ“.

20
50
50
50

20
50
50
50
50
50
50

20
50
50
50
50
50
50
50
50

20



ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1896 ԹԻՍՎԱՆԻ ՀԱՍՍԱՐ

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ տարեկան 10 հուլիսի, կամ 30 ֆունկի:
ԴԻՄԵՆ՝ Թիֆլիս, Վեկտորյան փողոց, տուն № 8: Այլ քաղաքնե-
րից՝ ТиФлисѣ. Въ Редакцію журнала „МУРЧУ“,
Արատահմանից՝ Tiflis. Rédaction de la Revue
„MOURTCHU“. և կամ հեռագրական ճեղքին:

ԲԱՔՈՒ — պ. պ. Ֆրիդման Մարգարեանին և Սեդրակ Թառաչեանին:
ԲԱԹՈՒՄ — պ. Սարգիս Մակարեան, Ծովհանեանի բանկ. գրասենեակ:
ԵՐԵՒԱՆ — պ. Գեորգ Ղարաջեանցին. Առևտր. բանկի ճիւղը:
ԿԱՐՍ — պ. Աբէլ Ապրեսեանին, գործակալ «Նաղեժդա» ընկ.
ԱԳՈՒԼԻՍ — պ. պ. Ստեփան Արասխանեանց և Աւետիս Դաւթեանց:
ՆՈՒԻԻ — պ. պ. Աբրահամ Բունիաթեանց և Խաչատուր Խոջամիրեանց:
ՂԱԶԱՐ — պ. Հմայեակ Մաժինեան:
ԵԿԱՏԵՐԻՆՈՒՄ — պ. Արամ Շապովալեան:
ՄՈՍԿՒՍ — պ. Ալեքսանդր Մատուրեան, Մ. Շորշորովի գրասենեակ:
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ — պ. Քր. Բաշինջաղեանին (Гостин. дворъ № 7):